հարցուց Եզոբոսին, թէ ինչ եղաւ։ Պատասխան տուաւ, թէ չգիտեմ. բայց այսչափ գիտեմ, որ դուն տունդ կորսնցուցիր։ Ինչու համար՝ ըսաւ։ Երէկ գինովութեն մէջ պարտաւորեցար, որ ծովը խմես. ասոր համար մատնիդ գրաւ դրիր (*)։ Պատասխանեց Քսանթոս, թէ ինչ ընելու է որ այս բանէս ազատիմ. իրաւ որ մարդու կարողութէ վեր բան է. կաղաչեմ, մէկ խելք մը բանեցուր, ու բոլոր իմաստութիւնդ և փորձովդ ետ առ իմ խօսքս, այս փորձանքէն զիս ազատէ, որպէս զի իմ տուած գրաւս ետ առնեմ առանց անարգանաց։ Իրաւ որ անկարելի է ըսաւ Եզոբոս, որ կարենամ քու խօսքդ ետ առնել, բայց կրնամ դաշինքդ աւրել։

Եթէոր այսօր ամէնքը մէկտեղ կուգաք՝ դուն խօսքիդ վրա կեցիր համարձակ, ամէնուն մի՛ վախնար։ Արբեցութեն մէջ ինչ որ ըսիր, հոն ալ ըսէ բազմութեն մէջ. հրամայէ՛ որ ծովուն քով սեղան դնեն. պատուիրէ՛ ծառաներուդ, որ աման մը ծովու ջուր բերեն քեզի խմելու համար։ Եր տեսնես որ բոլոր ժողովուրդը հոն ժողուած են, հրամայէ՛ քովի եղողներուդ, որ գաւաթը ծովու ջուր լեցընեն՝ տան. ձեռքդ առ, բարձր ձայնով հարցո՛ւր դաշինք ընողին, թէ ինչ էր մեր պայմանը. անալ պիտի ըսէ, թէ բոլոր

(*) Որովհետեւ հին փիլիսոփաները ժողովուրդին մէջ շատ մեծ յարգութիւն և գերազանցութիւն ունէին, անոր համար գինովութեն մէջ եղած խօսքն ալ ընդունելի էր, և ետ առնելը անկարելի։

ծովը խմել։ Այն ատենը դարձեր նաւաստիներուն ըսաւ. Սամոսացիք, դուք գիտէք թէ որչափ գետեր կը լեցուին այս ծովուն մէջ. Իրաւ ես պայմանաւոր եմ միայն ծովուն ջուրը խմելու, չէ թէ գետերուն. ուրեմն պէտք է որ այս մարդս նախ գետերը կապէ, որ ծովը չի վազեն, հապա թէ ես ալ խմեմ ծովը ։

Քսանթոս տեսաւ, թէ այս հնարքս անտարակոյս կրնայ դաշինքին աւրել, և մտածելէն եա առաւ, մեծ յուսով սկսաւ ուրախանալ։ Ասոր երբոր ժողովուրդը ծովուն մօտ դիզւեցաւ, բոլոր քաղաքը հոն լեցուեցաւ. որ այս չի լսուած բանը տեսնեն, թէ ինչպէս Քսանթոս զինքը պիտի այս բանէն փրցընէ։ Բայց Քսանթոս ինչ խօսք որ առաւ Եզոպոսէն՝ կատարեց ըսաւ ժողովուրդին առջին։ Սամոսացիք զարմացան Եզոպոսին խելքին հնարքին վրայ, և մեծապէս գովեցին։ Իսկ դաշինք ընողը Քսանթոսին ոտքն ինկաւ, խոստովանեցաւ, թէ յաղթուեցայ, և աղաչեց, որ դաշինքն աւրէ։ Քսանթոս ժողովուրդին աղաչանքովը յօժարեցաւ աւրել դաշինքն, ու հաշտուեցաւ անոր հետ ։

ԳԼ. ԺԵ.

Աղերսախօսութիւն Քսանթոսի ընդդէմ Եզովբոսի.

Երբոր տուն դարձան, Եզոբոս ըսաց Քսանթոսին. Տէ՛ր իմ, քեզի ըրած այս աղէկութեանս դէմ, արժան չէ՞ որ ես ինչպէս քեզ ազատեցի, դուն ալ զիս ազատես գերութենէս։ Տէրը խոստումը վերջացընելով. կարծես, թէ ես չեմ ուզեր քեզ ազատելու։ Ելի՛ր դուռը նայէ՛ թէ որ երկու ագռաւ միատեղ կեցած են, բարի նշան է. հապա թէ մէկ ագռաւ մը կայ, գէշ նշան է (*)։ Եզոբոս երկուքը միատեղ տեսաւ կեցած ծառին վրայ, եկաւ պատմեց Քսանթոսին. բայց երբոր Քսանթոս ելաւ նայեցաւ, մէկը կար, մէկալը թռեր էր։ Թշուառական ըսաց Ե-

(*) Հին ատենը հաւերուն եւ թռչուններուն կեցուածքը եւ ձայնը դիտելով կախարդութիւն կընէին, ըրած բաները կը գուշակէին կերպ կերպ խաբէութեամբ. որ կըսուի Հաւահմայութիւն. որ հաւերուն ձայնէն եւ շարժմունքէն կըգուշակէին բարիք ըլլայ, թէ գէշ։ Եւ երբեմն փորը բանալով անասուններուն սրտաթոքէն եւ ընդերքէն գուշակութիւն կընէին։ Ահա Քսանթոս ալ ագռաւու նշան դնելով գէշ սեպեց ազատ ընել Եզոբոսը. որ է խաբէութիւն։

զոպոսէն, դուն ինծի երկուք են ըսիր, ուր է ։ Պատասխանեց, թէ ես ճշմարիտն ըսի, բայց մէկը թռաւ ։ Անանկ չէ, հապա գործելի դուն զիս ծաղր ըրիր ։ Բարկութեա̃ պատուիրեց ծառաներուն որ հանուեցընեն Եզոպոսն ու ծեծեն ։ Երբոր կը զարնէին խեղճին, տեղէ մը կանչեցին Քսանթոսն, որ կերակուրի երթայ ։ Սկսաւ Եզոպոս կանչել. վայ անբաղդ ողորմելուս, ես որ երկու ագռաւ տեսայ, ծեծի արժանի եղայ. դուն որ մէկ ագռաւ մը տեսար՝ հարկիք ուտելու կերթաս. ահա իմ փորձս յայտնի ըրաւ, որ ըրած կախարդութիւնդ սուտ է ։ Քսանթոս զարմանալով անոր բարակ մտացը վրայ դադրեցուց ծեծը ։

ԳԼ. ԺԲ.

Փորձէ Եզովբոս զփիլիսոփայսն ։

Անգամ մը որ Քսանթոս կերակուրի հրամցուց շատ փիլիսոփաներ և ճարտասաններ. Եզոպոսէն պատուիրեց, որ դուռը կենայ, և պատիւ ըլլալու համար միայն իմաստուն մարդիկ ներս առնէ. իսկ Եզոպոս դուռը գոցեց, ու ներսը կեցաւ. Նախ հրամցուցած մարդուն մէկն եկաւ դուռը զարկաւ ։ Եզոպոս առանց դուռը բանալու ներսէն հարցուց, թէ շունը ինչ կըշարժէ ։ Անալ դըրսէն կարծեց, թէ իրեն շուն կըսէ, բարկա-

նալով ձգեց գնաց։ Որչափ մարդիկ որ ե-
կան, ասանկ բարկանալով ետ դարձան, կար-
ծելին, թէ զիրենք կընախատէ․ մի՛ զի Եզո-
բոս ամենուն ալ այս հարցմունքը կընէր։
Յետոյ մէկն ալ եկաւ դուռը զարկաւ․ ա-
նոր ալ հարցուց Եզոբոս, թէ շունը ինչ
կըշարժէ։ Անալ դըսէն պատասխան տը-
ւաւ, թէ պոչն ու ականջները։ Եզոբոս
տեսաւ որ յարմար պատասխան տըւաւ, բա-
ցաւ դուռն ու տարաւ ներս տիրոջը քովը,
ըսաւ թէ մէկ փիլիսոփայ մը չեկաւ քու
հարկեքդ ասկէ 'ի զատ։

Քսանթոս սաստիկ բարկացաւ՝ կարծելով,
թէ մէկալոնք զինքը ծաղր ընելու համար
չեն եկած։ Մէկալ օրը բարեկամները եկան
դպրոցը, և երեսը զարկին Քսանթոսին, որ
զիրենք անանկ անարգելով դռնէն ետ ճամ-
բեց․ ինչո՞ւ համար՝ կըսէին այն աստիճանը
մեզ անարգեցիր․ դրեր դռանը քով այլան-
դակ գերիդ, որ մեզ թշնամանելով ետ դար-
ձուց։ Հարցուց Քսանթոս, թէ քո՞ւն էք
ի՞նչ էք․ իրա՞ւ է ըսածնիդ։ Պատասխանե-
ցին ամէնքը մէկ ձայնով․ Ճշմարիտ է քեզի
ըսածնիս։ Շուտ մը կանչեց Եզոբոսն հար-
ցուց բարկանալով, թէ ինչո՞ւ համար ա-
սանկ անարգելով ետ դարձուցիր բարեկամ-
ներս։ Պատասխանեց Եզոբոս, թէ դուն չի
պատուիրեցի՞ր, որ յիմար մարդիկ թող
չիտամ ներս մտնելու․ որ միայն գիտուն
իմաստուն մարդիկ նստին հարկեքդ։ Իրաւ
այդպէս է ըսաւ Քսանթոս․ բայց ասոնք ա-
մէնքը գիտուն չե՞ն։ Պատասխանեց Եզո-
բոս, թէ ես այս գիտեմ, որ դուռը զար-

կած տանիքը, եւ իրենց կըհարցընէի, թէ շունը ի՞նչ կըշարժէ. մէկը չէ կրցաւ հասա-կընալ, և հարցմունքիս պատասխան տալ. ուստի կըննայէի որ տգէտ մարդիկ են, դու-ռը չէի բանար. միայն անոր բացի դուռն, որ լաւ պատասխան տըւաւ:

Եղոբոս խօսքը ըմբռնեցուց, բայց մէկը չէ կրցաւ դէմ խօսիլ. և ամէնքը խոստովանող եղան, թէ ճշմարիտ է ըսածը:

ԳԼ. ԺԹ.

Հնարագիտութիւն Եղոբոսի:

Քսանթոս օր մը Եղոբոսին հետ գերեզ-մաննոցը գնաց, որ գերեզմաններուն վրայէ գովեստները կարդալով կըզըւարճանար: Եղոբոս տեսաւ, որ մէկ գերեզմանի մը վրա գրուած էին այս գրերս Յունաց. α Ա՛ւքա. β Վ՛էրա. δ Տէ՛ւրա. ο Օ՛ւգրն, ε Ե՛փոխըն. θ Թ՛էրա. χ Խսհի: Եղոբոս այս գրերը ցըցուց Քսանթոսին, հարցուց, թէ ասոնք ի՞նչ կը-նշանակեն: Քսանթոս ուշադրութեամբ նայեցաւ քննեց մտմըտաց. չեմ հասկընար ըսաւ ի՞նչ ըսել կուզէ: Անատենը դարձաւ Եղոբոս ը-սաց. Ա՛միրայ եթէ այս գրերուն ուժովը հոս գանձ գտնեմ, ի՞նչ կուտաս ինձի: Անալ սիրտ տալով ըսաւ, թէ կէսը կուտամ և քեզ ալ կազատեմ: Եղոբոս այս խոստմունքս ըսելով չորս քայլ տփըմ հեռացաւ անկէ՝ փո-

քեզ զանձն զատեալ. աստուած Քաղկեդոնին ըն-
սաւ, թէ կատարեալ խոստովանիցիս. զիս ալ
աղօթս ըրէ։ Պատասխանի տուաւ, թէ քեզի
չեմ աղօթեր, մինչեւ որ այն գրերուն զօրու-
թիւնը չի մեկնես ինձի. մէն զի աւելի կուզեմ
անոնց իմաստը հասկընալ, քան թէ ասելն
ժամանակել։

Եղբայրն ալ ըսաց թէ ով որ այս զան-
ձը հաս թաղեր է, իմաստուն մարդ ըլլալով
այս գրերը փորել տուեր է. որ կընշանա-
կեն. α Անօրէն զմնացեալ. β Վիժանեալ քաղա.
δ Դպրանէրս չորս. ο Օրհնութեան փառաբանել. ε Էո-
րհանս զանգես. ϑ Թիւսարօն զանձն. χ Խաչերեխա
ռակեալ։ Քանոնգոս ալ ըսաց. զարմանալ
աղաւաղէր հնարագէտ բանն գիտացող եւ զանձ,
յիմար կըրկնել եւ թէ որ քեզ աղօթեմ։
Կրկնեց Եղբայրս. թէ որ չըմնեմ՝ այս զանձը
չես կընար ժամանակել. մէն զի կերթամ
Թիւսրանդացոց (*) Թագաւորին կիմացը-
նեմ. որ անոր հայրը պահած էր։ Բաւակ՝
զինանս ըսաց Քանոնգոս։ Այս գրերը յայտ-
նի կըցընեն ըսաց. α Անօթօն տուր. β Վա-
ռէլ Թագաւորին. δ Տիրոջ Դիմանէութ-
եան. ο Օն զօր. ε Էո-րէս զանձը. ϑ Թիւսարօն
զանձն. χ Խաչերեխա ռակեալ։ Քանոնգոս այս
բանը լսելով հասկըցաւ որ ձեռքէն ելլած

(*) Թէոդոտիոն կըսուի սոփամզօն՝ Պիղա-
իշխանին անուամբը. որ նախ շինեց զզարէկ քա-
ղաք մը Աղողոնին պարզամուլը. յետոյ հրապան-
դըրանոս նորոգեց Թէոդոսոս։ Հին ատենը հոս Նըր-
սէս Թագաւորը կըհրամայէր մօտ եղած կղզինե-
րուն. Ինչպէս Եղբայր ալ կըյայտնէ։

երթայ․ ո՛ւր ըսաց կ'էան, ու ձայն մի՛ հաներ։
Դուն չես ինծի տըւօղը ըսաւ Եզոբոս․ հա-
պա ոսկին թաղօղը տըւեր է։ Մտի՛կ դիր
նայէ ի՞նչ կը նշանակեն գրերը․ α Անէլօմէ-
նի զառնալն․ β Վատիսանթէս գնացեալ․ δ
Տիէ՛լէօնէ բաժանեցէք․ ο Օ՛ն զոր․ ε Է՛վրէ-
տէ գտէք․ θ Թիսաւրօ՛ն գանձ․ χ Խրիսիու-
ոսկւոյ։

Եկո՛ր տուն երթանք ըսաց Քսանդոս, որ
բաժնենք ոսկիները, և քեզ ալ ազատ ընեմ։
Բայց երբոր եկան՝ վախցաւ Քսանդոս, չըլ-
լայ թէ բանը դուրս հանէ Եզոբոս․ ուստի
բանտը դնել հրամեց խեղճը։ Երբոր բանտը
կը տանէին Եզոբոս կըսէր, թէ փիլիսո-
փաները այսպէս կըպահեն իրենց ըրած
խոստմունքը։ Չէ թէ միայն չազատեցիր զիս
որ խոստացեր էիր, հապա բանտն ալ դնել
կուտաս։ Այս խօսքովս սիրտը շարժեցաւ
Քսանդոսին, շուտ մը պատուիրեց, որ թող
տան ըսելով, անտարակոյս երբոր դուն ա-
զատիս, զիս չարաչար պիտի բամբասես և
ամբաստանես։

Պատասխանեց Եզոբոս․ հիմա ո՛րչափ դէ-
շութին կուզես ինձի ըրէ՛․ բայց գիտնաս որ
օր մը զիս ակամայ պիտի ազատես։

ԳԼ. Ի.

Աղօթութ̃ Եզոպոսի ։

Այս ժամանակս Սամոս կղզին զարմանալի դիպուած մը պատահեցաւ. երբոր մէկ ը̅հանուր երևելի տօն մը կընէին, յանկարծ արծիւ մը ինջաւ բարձրէն խլեց տէրութեան մատանին, տարաւ ծառայի մը ծոց ձգեց ։ Բոլոր ժողովուրդը զարմանալով այս սքանչելեացս վրայ, եկան միաբան աղաչեցին Քսանթոսին, որ իրենց մէջ խիստ երևելի իշխան, և մեծ փիլիսոփայ էր, մեկնէ անոնց, թէ ի՞նչ կընշանակէ այս հրաշալի դիպուածս ։

Քսանթոս չէր գիտեր ի՞նչ պատասխան տայ, ժամանակ ուզեց որ մտածէ ։ Երբոր տունը դարձաւ միշտ անհանգիստ տրտմութ̃ մէջ մնալով սկսաւ մաղձոտիլ ։ Եզոպոս ասաւ թէ իր տ̅րը տրտմութ̃ կը մաշի՝ հարցուց թէ ինչո՞ւ համար սաստիկ տրտում ես. այս բանս ինձի ձգէ՛, և տրտմութիւնդ մէկ դի դէ՛ր, որ քեզ կը տանջէ ։ Գնա՛ վաղը զրուցէ՛ Սամոսացիներուն, թէ իմ բանս չէ հրաշք մեկնել, և գուշակութի՛ն ընել. սակայն ես մէկ ծառայ մը ունիմ տունս, որ սաստիկ բաներու լաւ տեղեակ է, այն կրնայ տալ ձեզի մեկնութիւնը դիպուածին, և ձեր տարակուսանքը քակել ։ Տէ՛ր իմ, թէ որ ես

անոնց տարակոյսը վերցընեմ. բոլոր պատճա-ռը քեզի կըլլայ, որ սաանկ բան գիտցող ծառայ ունիս. Թէ որ չի կըրնամ, միայն ինծի կըլլայ պարսաւանքը:

Քսանդոս մեծապէս ուրախանալով գնաց միւս օրը քաղաքացոց ժողովքը, և անոնց պատմեց Եզոպոսին խօսքերը: Անոնք ալ աղաչեցին. որ շուտով բերել տայ: Երբոր Եզոպոս եկաւ մտաւ Սամոսացոց ժողովքին մէջ, կերպարանքին նայելով սկսան ամէնքը ծիծաղիլ, մինչև ծաղր ընելով ըսին, թէ կըրնա՞յ ըլլալ, որ սաանկ այլանդակերպ կոշտ մարդը այս հրաշքին մեկնութիւնը տայ: Ասանկ ցուցանքաւոր բերնէն ի՞նչպէս աղէկ բարի բան լսենք. ուստի նորէն սկսան կատակելով խնդալ Եզոպոսին վրան:

Իսկ Եզոպոս ձեռքը շարժելով կաղաչէր ժողովքին որ լուռ կենան. ով Սամոսացիք կըսէր, ինչո՞ւ զիս կանարգէք կերպարանքիս տգեղ ըլլալուն համար. հոգին պէտք է նայել, չէ թէ կերպարանքը. բնութիւնը շատ անգամ գեղեցիկ հոգին տգեղ մարմինին մէջ կը դնէ. դուք ամանին ձևի՞ն կընայիք, թէ մէջի եղած պատուական գինիին: Բոլոր ժողովքին մարդիկը այս խօսքերս լսելով ըսին որ, եթէ դուն ունիս մեզի օգտակար բան մը խօսելու, որ կարենայ ամենուս միտքը հանգչեցընել, խօսէ: Ան ատենը մեծ համարձակութիւն մը այսպէս խօսեցաւ Եզոպոս. Ո՛վ Սամոսացիք որովհետև երբոր Բաղդը սիրէ երկպառակութիւն և խռովութիւն ցանել, կը դնէ մէկ առիթ մը փառաւորութեան տիրոջն ու ծառային մէջ. եթէ պատահի որ ծառան

Եւ յետ իշխանութեան առնելը, մէջտեղ կը քաշէ. և թէ անիրաւութեան մէջ ըլլայ, նոյնպէս մէջտեղ կը քաշէ ծեծ կուտայ. անանկ որ բանը մը գլխն դառնայ, ծառան ներողութիւն ալ կը քաշէ: Դուք մինչև որ գլխաւոր չընէք. իմ տէրոջս իշխանութիւնը առնելէն չի հանէք, ես համար-ձակ ձեզի չեմ կրնար յայտնել առանց վախնալու՝ դողին, որուն կը փախուցանէք: Այս կեանքն բո-լոր ժողովուրդը մէկ ձայնով կանչեց Քահա-նային, թէ ազատ ըրէ Եղբայրը, կատարէ Աստուածոյ կամքը. առաւել բոլոր քաղաքը ազատ կընես:

Քահանայս պատասխան չէ տուաւ. Դրանա-տորը մէկէն կանչեց Քահանային. թէ որ դուն ժողովուրդին մէկիկ չընելով ազատ չը-նես քու կամքովդ՝ հիմա ես ազատ կընեմ իմ իշխանութեամբս. որ քեզի համար կըլ-լայ:

Այլ չէր կրցաւ դէմ կենալ Քահանայն՝ ա-կամայ կամքով ազատ ըրաւ. որ փոխելով զօրաւորներով քաղաքին մէջ կըկանչէին, թէ Քահանայս վեհափառին ազատ ըրաւ Եղբար որ Աստուածոյ ազդաչանքին համար: Եւ այս-պէս կատարեցաւ Եղբարին մարգարէու-թիւնը. որ Քահանային ըսեր էր, թէ ակա-մայ գլխս ոտքերի ազատ ընես: Եղբայրս ազատ ըլլալէն ետև սկսաւ առանկ խօսել ժողո-վուրդին:

Ո՞վ Աստուածոյք՝ ինչպէս գիտէք, (*) ար-ծիւն է թագաւորներուն թագաւորը. որ իշ-

(*) Արծիւ, որ է խոյադաւլ թռչունն. յոլով թռչուններու թագաւորը, որ ... ամենէն վերա

խանական մասանքին վերցուց տարաւ ծառայքն ծոցը ձգեց · այս բանս կը նշանակէ՝ որ Հիմակուան Թագաւորներէն մէկը կը մտածէ , որ ձեր ձեռքովը ձեր իշխանութիւնը կործանէ , և ձեզ գերի ընէ եղծանելով ձեր օրէնքը ։ Այս խօսքս ահի գողի մէջ ձգեց բոլոր Սամոսացիք ։

Քանի մը օրէն ետև Սամոսացիք Թուղթ առին Կրեսոս Թագաւորէն (*) Լիւդիայի · որով իրենց կը պատուիրէր , որ ամէն տարի իրեն տուրք տան · եթէ չէ տան՝ պատերազմով վրանին պիտի ելլէ · պատրաստ կենան ։ Այս բանիս վրա ժողովք ըրին որ մտածեն ճամբայ մը գտնեն · վա՜ զի եթէ հնազանդեին , ազատութիւը կը կորսվէր · և կը վախ-

ւոր ու սոսկալի է · ու ամենուն կը յաղթէ · Նաև Դիոսին ընծայ եղած է , ինչպէս պիտի բացատրենք ։

(*) Կրեսոս Լիւդիայի Թագաւորն էր 550 տարի առաջ քան Թուականէն · որ Ասիային մէջ շատ տեղերու տիրելով Բոլոր Յոյները հարկատու ըրաւ · այնչափ գանձ մեծութիւն դիզեց , որ շատ մեծ եղաւ հարստութիւն ։ Իմաստասէրներու հետ խօսիլ շատ կը սիրէր · օր մը մեծութիւնը վրա պարծենալով ըսաց Սողոն փիլիսոփային , թէ ինչի պէս բախտաւոր մարդ տեսած ես ։ Անաւ ըսաց , թէ մինչև 'ի մահ պէտք չէ , որ մարդ իրեն երանի տայ ։ Յետոյ Կիւրոս Թագաւորէն յաղթուելով քաղաքն առին · երբոր մէկ զինուոր մը չգիտնալով սուրը վերցուց պիտի զարնէր Կրեսոսին , իր տղան խուլը գոռըւեցաւ , որ լեզուն կապած էր չէր խօսեր · որդին կսկըծոան լեզուն բացուեցաւ · մի զարներ ըսաց նէ-

նայելն Կրեսոսին իշխանութենը տակն լինել. մինչև հարկ եղաւ խորհուրդ հարցնել Եղո-պտոսին. և անոր տրուած խորհուրդին հե-տևիլ ամէն բանի մէջ։ Անոր պատասխան տրուաւ, թէ Պա՛րսիկներ ձեր իշխանները խոր-հուրդ կուտան, թէ տուրք տանք Կրեսո-սին. և օգտակար է հնազանդիլ անոր, ու-պատերազմին թշուառութենէն ազատիլ. ուս-տի իմ ձեզի տալու խորհուրդս պարապ է. տակայն բաւական է ձեզի մէկ բան մը պատ-մել. որ հասկընաք թէ ի՞նչ պէտք է ընել այս բանիս մէջ։ Այս աշխարհքիս մէջ բաղ-դը երկու ճամբայ յայտներ է մէկզմէկու հակառակ. մէկն է ազատութեան ճամբան. որուն սկիզբն է դժուար և խիստ, և վերջը դիւրին ու զըւարճալի։ Մէկալն է ծառայ-ութեան. որուն սկիզբն է դիւրին և հան-գիստ, բայց ետքը դժուար և խիստ։ Այս բանս որ լսեցին, ամէնքը մէկ ձայնով պօռա-ցին թէ մենք ազատ ենք. ծառայութեան տակ չե՛նք իյնիր։ Եւ այսպէս Թագաւորին խրկած դեսպանը ետ ճամբեցին առանց տուրք տա-լու։ Կրեսոս երբոր բանը հասկըցաւ՝ ուզեց Սամնացոց վրա պատերազմ բանալ. բայց դեսպանն իրեն ըսաւ, թէ տէր իմ, չեմ կար-ծեր թէ կարենաս անոնց յաղթելով վրա ել-

նաւորին. իմ հայրս է Կրեսոս։ Զինուորը բռնեց տարաւ Կիւրոս Թագաւորին առջին, որ հրամեց կրակ վառեն ողջ ողջ երեն. կրակին քովն որ բե-րին՝ միտքն ընկաւ Սողոնին խօսքն ու սկսաւ պօռ-ալ, Սողոն Սողոն։ Թագաւորը հարցուց. եր-բոր ինչու Սողոնին խօսքը, տղաք ըսաւ։

լես որչափ որ Եզոպոս իրենց քովն է. մէկ-մէկ անոր խորհուրդին կը հետևէին, որ ամէնէն բանէն աղէկն կ'ըլլէ. ուստի իմ խորհուրդս այս է, որ ամէն բանէն լաւ կըլլայ. դեսպան խրկէ՛ Սամոսացոցմէ Եզոպոսն ուզէ, և խօսք տուր իրենց հետ հաշտութիւն ընելու. պարգևներ ալ խոստացիր անոնց յղելու. տուրքը՝ ձգէ հինգ պատերազմէն: Երբոր Եզոպոսը ձեռք ձգես ան ատենը անոնց աշխատանաց կը յաղթես անոնց: Կրեսոս հաւնեցաւ այս հնարքին, և դեսպան խրկեց ուզեց Եզոպոսը: Անոնք ալ հաւանեցան խրկելու:

Եզոպոս հասկընալով անոնց միտքը եկաւ ժողովքին մէջ այսպէս խօսեցաւ. Ո՜վ Սամոսացիք ինծի մեծ պատիւ է, որ թագաւորին երթամ ոտքն իյնամ, պատուեմ. սակայն երթալէս առաջ կուզեմ ձեզի առակ մը զրուցել: Հին ատենը երբոր կենդանիները համաձայն էին՝ գայլերը պատերազմ բացին ոչխարներուն դէմ. որ շներուն հետ միաբան ըլլալով անոնց առաջէն կերթային. իսկ շները առաջնորդ ըլլալով կը ծեծկըվէին. անանկ որ գայլերը չէին կրնար մօտենալ ոչխարներուն: Ուստի գայլերը դեսպան խրկեցին ոչխարներուն, որ հաշտուին. բայց իրարու հետ միշտ վարուելու համար ուզեցին, որ շները պատանդ իրենց խրկեն: Ոչխարները յիմարութեամբ հաւանեցան, և խրկեցին անոնց իրենց շները. գայլերը մէկէն պատառեցին շները՝ եկան ոչխարներն ալ կերան.

Սամոսացիք լաւ հասկըցան առակին միտքն ու չուզեցին որ Եզոպոս երթայ իրենց քո_

մէջն· բայց Եզոպոս չուզեց կենալ, ելաւ գեսպանին հետ գնաց Թագաւորին:

ԳԼ. ԻԱ.

Եզովբոս հաշտեցուցանէ զՓարաւոնն :

Երբոր Լիւկղոս քաղաքը հասաւ Եզոպոս ելաւ Թագաւորին առջին· բայց Թագաւորը զայն որ տեսաւ աւելի բարկացաւ: Մեծ ամօթ է ինծի՝ կըսեր, որ ասանկ այլանդակ մարդը զիս արգելէ, և անանկ մեծ կըղզին ձեռքէս հանէ: Պատասխանեց Եզոպոս, թէ ո՛վ մեծ Թագաւոր, ես ոչ բռնութեամբ եկայ հոս, և ոչ վախնալուս· այլ իմ կամքովս եմ եկեր· Ներէ՛ ինծի, որ քիչ մը խօսիմ· անկայն մեր բանին վրայ չի խօսած մէկ առակ մը պատմեմ, Թագաւորութիւն ըրէ: Մէկ մարդ մը մարախ բռնելէ ժողվեր կը մեռցընէր· գիւղացւոց բանից Ճպուռ ճըռ-ճըռօձէխ մը· կենդանին տեսաւ թէ զինքն ալ պիտի մեռցընէ, սկսաւ աղաչել, թէ զիս մի՛ մեռցըներ պարապ տեղը· ինչ զի ես ոչ ցորենի վնաս ունիմ, և ոչ մէկ ուրիշ գէշ մը կընամ տալ· այլ միայն շարժելով (*)

(*) Այս փոքրիկ կենդանիներուն յայտնը օդէն կը ստորինանոյ· Էն եւ Լուսի ծակէն օրը կը ղար-

մանտրըտուկ մաշկերս որ ունիմ վրաս՝ քաղցր ձայն կը հանեմ, որ անցնողները և բանուորները զըւարճանան. ուստի ձայնէս 'ի զատ բան մը չունիմ, և ուրիշ բան չես կրնար վրաս գտնել: Այս բանս որ լսեց, Թողուց որ երթայ:

Ո՞վ մեծ Թագաւոր. ահա ես ալ ոտքդ ընկած կաղաչեմ, զիս փուճ տեղը մի՛ մեռցըներ. ես մարդու գէշութիւն ըրած չեմ. մէկ յանցանք մ' ունիմ, որ համարձակ կը խօսիմ, և մարդու երեսպաշտութիւն չեմ ըներ. Թէպէտ մարմինս է անշնորհք, որ դրսէն անարգ կերևնամ, բայց խօսքս անարգ չէ: Թագաւորը այս խօսքիս վրա անանկ զարմացաւ, որ մեռցընելու մեղքցաւ. ուստի կանչեց. Եզոպոս, ես չէ՛, հապա (*) Ճակատագիրը կեանքդ քեզի բաշխեց. խնդրէ՛ խամ ի՞նչ կուզես, քեզի կը շնորհեմ: Ո՞վ մեծ Թագաւոր, ըսաւ Եզոպոս, կը խնդրեմ որ Սամիացոց հետ հաշտութիւն ընես: Խնա՛ բարեՙ ըսաց Կրեսոս՝ կըհաշտըվիմ: Ան ատենը Եզոպոս ընկաւ Թագաւորին ոտքն ու խոնար-

ներն մաշկեղէն Թուերուն. և այն մաշկերուն Թըր-Թըռուկը՝ որը կը շարժի ասդիէն յայն կը հանէ. շատ մանր կէնդանիներ ասանկ շատ յայն կը հանեն:

(*) Ճակատագիր ըսելով հեթանոս փիլիսոփաները կիմանային ճակատի վրա գրած ամէն մարդուն գալիքը. որ գրուածը հարկաւ պիտի ըլլար, ինչ որ ընես շահ չի կայ կըսէին: Այս գիրը միայն աստուածները կրնային կարդալ, բայց չէին կրնար աւրել. անոր համար կըսէին, Թէ Դիոս Աքիլլէսին մահուանը վրա կուլար. որ ճակատագրած

հութիւն շնորհակալ եղաւ ըրած բարերարութեանը համար :

ԳԼ. ԻԲ.

Եզոպոս գրէ զառակս իւր :

Եզոպոս իր առակները ան ատենը գրեց, երբոր Կրեսոս թագաւորին քովն էր. որ մինչև մեր օրը մնացին : Այս առակները ընծայ ըրաւ թագաւորին, անով մեծ շնորհակալութիւն ընդունեց, և Եզոպոսին մեծութին տալով դեսպան ըրաւ, ու թագաւորական թղթերով խրկեց, որ երթայ Սամոսացոց հետ հաշտութին խօսի թագաւորին կողմանէ, և համոզցընէ, որ իրեն պաշտպանքով Կրեսոս անոնց հետ բարեկամ պիտի մնայ : Անկէ 'ի զատ թագաւորը շատ պարգևներ ընծայ ըրաւ Եզոպոսին, և ճամբուն ամմէն բանը հոգաց : Երբոր Սամոս հասաւ, քաղաքացիք անպատմելի ուրախութիւն լեցուած, թագ պսակ տարին իրեն. և քաղաքական հանդէսներ ըրին, որ մեծ պատիւ ըլլայ Եզոպոսին :

Իսկ Եզոպոս թագաւորին թղթերը կարդաց բոլոր ժողովուրդին առաջը, համոզցընելով թէ անոնք ինչպէս որ իրեն պատու-

էր : Բայց ո՞վ վարդապետներըը չիմանան ածային նախախնամութին՝ որ կը կառավարէ աշխարհս :

թէ շնորհեցին, ինչպէս ալ անոր գրեմ այս բա-նով հաստատուցում ըլլալ. ուստի Թագաւորին միտքը յայտնեց անոնց և հաշտութեան ըլլալ։ Յետոյ ելաւ այս կղզիէն գնաց զանազան քաղաքներ իմաստուն մարդիկ փնտռելով, որ հետևրնին հակաճառութեն ընէ։ Մինչև ելաւ (*) Բաբիլոն գնաց. հոն ալ իր իմաստութիւնը յայտնեց, և Լիգերոս Թագաւորին պալատը մտաւ։

Այն ժամանակի Թագաւորները իմաստութիւն վարժելով կախ չունէին, միշտ խաղաղութեան մէջ էին. և առով շատ անգամ իրարու առակներ, և խորթին բաներ կը գրէին հարցմունք կընէին այս պայմանով, որ երբոր մէկը չէր կրնար պատասխան տալ, կը պարտաւորէր տուրք տալու մէկալին, ինչ կերպ որ դաշինք կընէին (**)։

Եզոբոս ամմէն հարցմունքին և առակներուն գիւտին պատասխան կուտար, որ Լիգերոս Թագաւորին կը գրէին, և առով մեծ համբաւ ունեցաւ Թագաւորը։ Բայց որով հետև մէկալ Թագաւորները չէին կրնար Լիգերոսին խնդիրներուն պատասխան տալ, կը պարտաւորէին դաշնադրութեան համար տուրքեր տալ Թագաւորին։

(*) Բաբիլոն կամ Պաղտատ այն ժամանակը ծաղկած ըլլալով Գիտուններու յարգողմունքն էր, մանաւանդ Լիգերոս Թագաւորին օրը. անոր համար Եզոբոս հոն գնաց։

(**) Այս կերպ հարցմունքս մինչև հիմա կայ Արաբացոց մէջ. որ դրան փաղաքները շատ անգամ Շէյխերը և Տէրվիշները կերթան մէծամէծ-

ԳԼ. ԻԳ.

Եգիպտոս որդեգրէ իւրեան զԵննոս:

Եգիպտոս տեսաւ որ զաւակ չունի. մէկ ազնուականի մը զաւակ Եննոս անունով իրեն որդի ըրաւ, տարաւ թագաւորին յանձնեց իբր իր հարազատ զաւակը. բայց այս ապերախտը շատ չանցաւ մեծ անկարգութիւններ ըրաւ Եգիպտոսին տանը մէջ: Եգիպտոս հասկըցածին պէս տունէն դուրս ըրաւ: Իսկ Եննոս ոխ պահեց, ու Եգիպտոսին վրէժխնդիր ըլլալով թուղթ մը շինեց անոր բերնէն, որ կը գրէ իշխաններուն. որոնք խորթին դաւաճաններ կը խորհէին Եգիպտոսին. և անոնց կը հասկըցնէ, թէ ատեն է եւ ձեռքի հետ մէկ պիտի ըլլան թագաւորին դէմ: Այս թուղթը Եգիպտոսին մատանիովը կնքեց տարաւ թագաւորին ցուցուց:

Թագաւորն որ տեսաւ Եգիպտոսին կնիքը [illegible], կարծեց թէ անտարակոյս Եգիպտոսն է գրեր այն թուղթը իրեն դէմ. ուստի բարկութեանը հետեւելով անանկ տաքցաւ, որ մէկէն հրամեց Հերմիպպոսին (*), որ ա-

ներսէն քան կը հարցընէին. Եթէ չգիտնան, կը պարտաւորէին անոնց քան փոխել:

(*) Հերմիպպոս էր թագաւորին մէջ հասարակ-

ռանց քննելու մեռցընէ Եզրոսը իւր մատ-նիչ . Հերմիպպոս Ճշմարիտ բարեկամ ըլլա-լով Եզրոսին՝ իրեն բարեկամութիւնը յայտ-նի ըրաւ այս կերպովս ։ Առաւ Եզրոսը տարաւ մէկ գերեզմանի մը մէջ պահեց ա-մենևին ծածուկ . և ինքը զգուշութեամբ բան կը տանէր անոր մարդ չիմանալով ։ Իսկ Են-նոս Թագաւորին հրամանովը Եզրոսին ամ-մէն բանը յափշտակեց ։

Ժամանակ անցնելէն ետև Նեքդենաբոս Թագաւորը Եգիպտացոց լսեց որ սպաններ են Եզրոս , Թուղթ մը գրեց Լիգերոս Թա-գաւորին՝ կաղաչէր որ իրեն մէկ քանի սրա-միտ Ճարտարապետ գուցէ խրկէ . որպէս զի շինեն իրեն անանկ մէկ աշտարակ խուց մը , որ ոչ երկինքին դպչի , և ոչ գետնին ։ Նաև խրկէ իրեն անանկ մէկ խելացի բարակ մարդ մը , որ կարենայ պատասխան տալ խրթին առակներուն ։ Թէ որ ըսաց այս բանս կա-րենաս ընել , ես տուրք կուտամ քեզի . թէ չի կրնաս , դուն ինծի պիտի տաս ։ Այս Թուղթն որ կարդաց Թագաւորը տրտմու-թեամբ պաշարուեցաւ . վա̄ զի մէկը չունէր քովը որ կարենայ աշտարակին առակը մեկնել . ուստի սաստիկ ցաւելով Եզրոսին մահուա-նը վրայ՝ կըսէր թէ անոր մեռնելով իմ տէ-րութենս գլխաւոր սիւնը կործանեցաւ ։

Հերմիբբոս տեսաւ թէ Թագաւորին կսկի-ծը սրտանց է , եկաւ աւետիս տըւաւ , թէ Եզրոս կենդանի է . վա̄ զի Թագաւորիս

ըիմ պաշտօնատարներէն Հասասպաշը . անոր հա-մար իրեն պատուիրեց , որ մեռցընէ Եզրոսը ։

օգտին համար չի մեռցուցի . լաւ գիտէի , որ շատ պիտի զղջաս տրուած վճռիդ վրայ : Այս բարի լուրը լսածին պէս Թագաւորը մեծապէս ուրախացաւ : Ուստի շուտով Եզոպոսը գերեզմանէն դուրս հանեցին , վրան գլուխը խեղճ աղտոտ հողոտ , մէկէն Թագաւորին դէմը հանեցին . որ զայն անանկ խեղճ տեսնելով այնպէս սիրտը ցաւեցաւ , որ սկսաւ լալ : Հրամեց որ շուտով լուան հագցընեն և ամմէն պակասութիւնը հոգան : Եզոպոս Եննոսին ըրած անօրէնութիւնը սուտ հանեց , և իր մեծասրտութիւնը յայտնի ընելու համար՝ ներում խնդրեց Թագաւորէն , որ չի մեռցընէ Եննոսը :

Լիգերոս Թագաւորը հանեց եգիպտացւոց Թագաւորին Թուղթը ցըցուց Եզոպոսին , որ հասկընալով առակին միտքը , սկսաւ ծիծաղիլ . ետքը Թագաւորին ըսաց , որ սանկ պատասխան տայ : Երբոր ձմեռն անցնի՝ քեզի բանուորներ կղրկեմ , որ շինեն ըսած աշտարակդ : Նաև կղրկեմ մէկ գիտուն մարդ մը , որ ամէն բանի պատասխան տայ ինչ որ իրեն առաջարկեն : Անատենը Լիգերոս ճամբայ դրաւ եգիպտոսի Թագաւորին դեսպանները , և նորէն տըւաւ Եզոպոսին ամէն մեծութիւնը , իրեն ծառայ տըւաւ Եննոսին ամէն ունեցած բարիքովը :

ԳԼ. ԻԴ.

Անյիշաչարութիւն և խրատք Եղովկէոսի :

Սզօրաւոր նորէն տունին առաւ Ընծոսը. ա-մենեւին անցած բաները չյիշելով իր զաւկին երեսը կը նայէր, և շատ գեղեցիկ խրատներ կուտար, որ բարի ըլլայ: Ո՛րդեակ կըսէր, ամէն բանէն աւելի զգոյշ պաշտէ. թագաւո-րին հնազանդիլ եղիր. թշնամիներուդ առջին երեւելի եղիր, որ քեզ չի նախատեն. իսկ բարեկամներուդ հեզ և խոնարհ, որ միշտ զքեզ աւելի սիրեն: Աղօթք ըրէ՛ թշնամի-ներուդ երբոր խեղճ կըլլան աղքատութիւն և հիւանդութիւն. որ ետքը քեզի տրտմութիւն չի բերեն: Շատ անգամ ալ բարեկամներուդ առողջութեանը համար աղօթք ըրէ՛: Միշտ նայէ՛ որ ընկերոջդ հետ աղէկ սիրով եր-թաս, որ չըլլայ թէ ցանկութիւն ուրիշ մար-դու կնկէն ըլլայ. որովհետև կանայք բնա-պէս փոփոխական և թեթեւամիտ են. երբոր կըշողոքորթին, չար բան չեն մտածեր: Ան-խոհեմութիւն ամէն բանի մէկէն մի՛ հաւա-տար, քիչ խօսէ՛, և միշտ քու լեզուիդ տէր եղիր. մի՛ նախանձիր ուրիշներուն բաղդին. առաւել ուրախացի՛ր ուրիշին յաջողութեանը վրայ. վասն զի նախանձը աւելի վնաս կը բերէ

քու անձիդ, քան թէ ուրիշին (*)։ Հոգաբարձութին ըրէ՛ տանդ. արթուն կեցի՛ր ծառաներուդ վրայ, որ քեզմէ վախնան իբրև իրենց մեծէն, և քեզ սիրեն իբրև իրենց բարերար։ Մի՛ անփութար միշտ աղէկ բաներ սորվելու. մի՛ յայտներ կնոջդ քու ծածուկ բաներդ. մի զի անդադար կըջանայ պատճառ գտնել, որ վրադ ելլէ, և քեզի հրամմէ։ Այնչափ որ բան ժողվէ քեզի վաղուան համար. զի շատ աղէկ է ունեցած բարիդ թշնամուդ ձգել մեռնելէդ ետև, քան թէ ողջութեան ատենդ բարեկամի կարօտ ըլլալ։

Որու որ հանդիպիս բարեւէ՛ պատուով և քաղաքավարութե. շունը պոչը շարժելով երբ կը շողոքորթէ տէրը, պատրաստական կընէ որ իրեն հաց տայ։ Մի՛ զղջար բարեպաշտ ըլլալու. բամբասող մարդը տունդ մի՛ հանդիպցըներ. մի զի դուրս կը հանէ տանդ բանը, և ամէն զուրցածներդ։ Անտանկ բան չըներս որ քեզ անպարգանք և ապաշաւութեն բերէ։ Մի՛ խռովիր աշխարհքիս պատահմունքներուն վրայ։ Ուրիշին չար խորհուրդ չը տաս. և անօրէն մարդկանց չար վարքին չը հետևիս։

Այս խրատներս առնանկ դպրան Ենովքին, որ ներանի օգէր այնս սիրտը խոցեցին. մինչև խիղճմտանքերնին խայթելովը, և Ենովքսին

(*) Այս Ենովքսին խրատը առնէլի յարմար կուգայ մեր լեզուին ոպանագաբանութենը. իրր ալ նախանդ բառը այսպէս կըրդարագաբանէ նախ անձին կուտէ. մի ալ օրերը մաշելով նախ իրեն կուտ կուտայ։

սուր խրատները մոմռալով շատ չանցաւ մեռաւ :

ԳԼ. ԻԵ.

Եզովբոս կրթէ ձագն արծուոյ :

Եզոբոս կանչեց բոլոր հաւորսները և պատուիրեց՝ որ չորս հատ արծուի ձագ բռնեն իրեն բերեն : Առաւ զանոնք զարմանալի կերպով անանկ կրթեց, որ մարդու հաւատալիք չէր գար (*) : Վասն զի կը պատմեն, թէ թռչուններուն սորվեցուց. որ երբ ազատ թռչէին՝ վիզերէն. կախեց չուանով մէյմէկ զամբիւղ ղէնջին մէջը դրաւ պզտի տղաք. անանկ սորվեցուցեր էր ձագերուն, որ տղաքը ուր ուզեն, հոն երթան. վերվար կը թռչէին տղոցը ուզածին պէս : Երբոր ձմեռն անցաւ, գարնան ատենը Եզոբոս ամէն հարկաւոր պատրաստութիւնը տեսաւ Ճամբայ ելաւ. արծիւներն ալ տղաքներով հետը առաւ և Եգիպտոս գնաց : Անանկ զարմանալի բաներ ըրաւ Եգիպտացւոց առջին, որ տեսնողին խելքը կերթար :

(*) Բլանուդ կը փարաքոսէ այս պատմութեանս վրայ. վասն զի դժուար բան է. բայց հիմա Եւրոպայ կէնդանիներուն անանկ կրթութիւն կուտան, որ մարդ կըզարմանայ, մինչեւ հաւատալիք չի գար. Թէպէտ այս պատմութիւնս ալ շատ դժուար բան է :

Բայց Նեքտենաբոս թագաւորը երբոր լսեց Եգիպտոսին գալը մէկ քարեկամէն, ըսաւ, թէ, դուն կը խաբէս. ես լսեր եմ թէ շատոնց մեռած է : Միւս օրը պատուիրեց իր պալատի մեծամեծներուն, որ ամէնքն ալ ձերմակ հագնին. ինքը կարմիրներ հագաւ, գլուխն ալ դրաւ թագ մը անգին քարերով զարդարած, և այսպէս մեծութեն փառքով նստեր էր աթոռը՝ հրամեց որ Եգիպտոսը բերեն. որ ներս մտածքին պէս յանկարծ հարցուց թագաւորը, թէ դիս ի՞նչ բանի կրնաս նմանցըներ, և քովիններս ի՞նչ բանի : Պատասխանեց Եգիպտոս. քեզ կը նմանցընեմ գարնան արեւու. և քովի իշխաններդ հասած ցորենի : Թագաւորը զուարձանալով այս պատասխանիս վրա մեծամեծ պարգևներ տուաւ Եգիպտոսին:

Մէկալ օրը թագաւորը հագաւ ձերմակ լաթեր. և իշխաններուն ալ պատուիրեց, որ կարմիր հագնին. բերել տուաւ Եգիպտոս մէկէն հարցուց : Ան ալ պատասխան տուաւ թէ դուն կըլմանիս արեգական, և իշխաններդ՝ ճառագայթին : Յետոյ ըսաւ Նեքտենաբոս, թէ իմ տրուեէս աւելին Լիգերոս թագաւորը բան մը չեմ սեպեր : Եգիպտոս խնդալով պատասխանեց. Ով մեծ թագաւոր ասանկ դիւրին դատաստան մի՛ կտրեր Լիգերոսին վրան. թէ դուն քեզ քու ժողովուրդիդ հետ բաղդատես, կրնաս արև ըսուիլ. բայց թէ որ Լիգերոս թագաւորին հետ բաղդատես, քու լոյսդ անոր աւելին խաւար կըլլայ :

Նեքտենաբոս զարմանալով ասոր համարձակ պատասխանին վրայ, հարցուց թէ՝ բերի՞ր մեզի ճարտարապետներն, որ ուզեցի

աշտարակ շինելու համար ։ Պատրաստ է ըսաւ Եզոպոս . միայն պէտք է որ տեղը ցուցտաս որ սկըսինք շինել ։ Ան ատենը Թագաւորը քաղքէն դուրս ելաւ տարաւ մէկ մեծ դաշտի մը մէջ՝ ցըցուց տեղն , որ պատրաստաւեր էր աշտարակին համար ։

Եզոպոս հան տարաւ արծիւները , և չորս տղաքը դրաւ զամբիւղներուն մէջ գործէքները տալ միատեղ . Թռուց Թռչունները . երբոր այս տղաքը վեր բարձրացան , սկսան մեքերան պոռալ , Թէ բերէք մեզի քար ու կիր , և փայտ , որ շինենք աշտարակը ։

Նեքդենաբոս երբոր տեսաւ տղաքներն օդին մէջ կըպօռան , արծիւներն անոնց հնազանդ՝ ուր ուզեն տղաքը , հոն կերթան . հարցուց Եզոպոսին , Թէ ո՞ր աշխարհքէն այս Թևաւոր տղաքը բերիր ։ Պատասխանեց Եզոբոս . Եգիպտոս շատ ունի ասանկ տղաք . հապա դուն ի՞նչպէս բաղդատեցիր անոր , որ ձիներուն հաւասար մարդ է ։

Ցաղթըւեցայ ըսաւ Նեքդենաբոս . ուստի այլ բան չունիմ ընելու . բայց եթէ մէկ քանի տաւակ զրուցեմ . նայինք կրնա՞ս շուտով քակել ։ Ես մէկ զարմանալի էգ ձի մը ունիմ , որ երբ կըլսէ բաբելոնին տրու ձիերուն ձայնը , հոս կըսկսի շուտով յղանալ ։ Թէ որ այդ կարգէ դուրս դիպուածին պատճառը կարենաս տալ , իմաստութիւդ մեզի կը յայտնես ։ Ո՞վ մեծ Թագաւոր ըսաւ Եզոպոս . մինչև վաղը ինծի ժամանակ տուր , պատասխան կուտամ հարցմունքիդ ։ Երբոր տեղը դարձաւ Եզոպոս բռնեց մէկ կատու մը որւաւ ծառաներուն , որ բոլոր քաղաքին մէջ

ծեծելով կը պտըտցընէին։ Բայց եգիպտա-
ցիք որովհետեւ տեսան կենդանիները կըպաշ-
տէին (*), տեսան որ կատուն կըծեծեն
վրանին Թափեցան բազմութիւ քաշեցին ա-
ռին կատուն ձեռքերնուն որ չի ծեծեն. և
գացին Թագաւորին յայտնեցին այս տեսակա-
լի մեղքը։ Թագաւորը կանչեց Եզրասն
ըսաւ, Թէ չըյտէ՞ր որ մենք աստուծու պէս
կըպատուենք կատուն. ինչու համար այս
բանս ըրիր։ Պատասխանեց Եզրաս, Թէ ես
անոր համար ըրի, վասնզի անիրաւութիւն
ըրաւ Լիգերոս Թագաւորին. ու այս գիշեր
խեղդեց անոր աքաղաղը, որուն ձայնովը գի-
շերուան ժամանակը յայտնի կըլլար. և խոսա
արթուն կորիզ աքաղաղ էր։ Կրկնեց Թա-
գաւորը. ի՞նչ կըխօսիս Եզրաս. չէ՞ս անիշ-
նար չինած տուածերէդ. ի՞նչպէս կըհնայ ըլ-
լալ, որ կատուն մեկ գիշերուան մէջ Եգիպ-
տոսէն Բաբելոն երթայ։

Եզրաս ծիծաղելով ըսաւ. եթէ քու ձիերդ
Բաբելոնին ձիերուն ձայնը առնելով կը յղա-
նան, այս բանս ինչու ըլլայ անհնարին։ Թա-
գաւորը բանը հասկընալով շատ զարմացաւ
Եզրասին գտուածին, և խելքին վրայ։

(*) Ամէն չորքոտանի կենդանիները հաստատա-
կօրէն մեծ պատիւ ունէին Եգիպտոսի մէջ. մա-
նաւանդ կովը, ոչխարը, կատուն, և այլն. անոր
համար Եգիպտացիք ծծմբառք կոտրէին. ասոնց
Փոր չէին կրնար ուտել։

ԳԼ. ԺԶ.

Իմաստութիւն Եզոպոսի :

Քիչմը ժամանակէն ետև Թագաւորը բե-րել տուաւ (*) Արեգ քաղքէն շատ իմաս-տուններ, և վիճաբանող գիտուններ, որ Եզոպոսին հետ հակաճառութի ընեն. ուստի ամէնքը միատեղ Եզոպոսն ալ հետերնին կե-րակրի հրամցուց: Երբոր սեղան նստան, այն գիտուններուն մէկը դարձաւ Եզոպոսին ըսաւ, ով օտարական՝ ածն որ ես կը պաշ-տեմ, զիս խրկեց որ մէկ խնդիր մը զուրցեմ, որ քակես: Պատասխանեց Եզոպոս թէ դուն գէշ կը խօսիս. վասն զի ած ամէն բան գիտէ և իրմէ ծածուկ բան չի կայ. ուստի մարդէ բան սորվելու կարօտ չէ, քեզի ինչու պի-տի խրկէ. այս խօսքով չէ թէ միայն դուն քեզ կանարգես, այլև ածդ ալ յիմար կը-նես:

Մէկ ուրիշն ալ ըսաց, թէ մէկ մեծ տաճար մը կար, մէջը մէկ սիւն մը տասներկու քա-

(*) Արեգ քաղաք՝ այսինքն արեգական քաղա-քը յունարէն կըսուի Հէլիոպոլիս. հին ատենը ա-րեգակին տաճարն հոն կըլլար, անոր համար այս-պէս կոչուեցաւ: Այս քաղաքը Նեղոս գետին ու Արաբիային մէջն է. որուն բնակիչները բոլոր քուրմերն էին և գիտուններըն՝ որ Իսրայելացիք շինեցին փարաւոնին հրամանովը,

ղաքով. ամէն մէկը երեսուն գերան փըրէն ունէր, որ երկու կնիկ կըպտըտէին չորս դին։ Պատասխանեց Եզոբոս, թէ այս ինչ գեղեցիկ խնդիր է, որ մեր տղաքն ալ գիտեն մեկնել։ Այս տաճարն աշխարհքս է. սիւնը տարի է. քաղաքները՝ ամիսներն են. գերանները ամսուն օրերն են. երկու կնիկներն ալ, որ սիւնին չորս դին կըպտըտէին, գիշեր ցորեկն է, որ փոխփոխ կըդառնան։

Միւս օրը Նեքտենաբոս պատուիրեց, որ իրեն իշխանները հոն գան. եւ շատ կըվախնամ կըսէր, չըլլա՞յ թէ պարտաւորինք տուրք տալու Լիւկերոսին Եզոբոսին պատճառաւը։ Խորհուրդ ըրին, մէկը իշխաններէն ըսաւ. Թէ պէտք է մենք ալ պարտաւորենք Եզոբոսն, որ մեզի անանկ խնդիր մը առաջարկէ, որ ոչ պատճառ ունենայ և ոչ ցուցում. մինչև մտքերնուս անցած չըլլայ, ու լսած ալ չըլլանք (*)։ Եզոբոս խօսք տուաւ, որ վաղը հարցմունքը կընեմ։ Եղաւ տուն գնաց մէկ թուղթ մը շինեց. որուն մէջ գրած էր որ Նեքտենաբոս խօսք կուտայ թէ հազար տաղանդ Լիւկերոսի տալիք եմ (**)։ Հետև-

(*) Որոշհեցին կարգն էջան որ Եզոբոս ալ իրենց խնդիր հարցընէ, և գիտէին որ անոր խնդիրը չի կրնան պէտք հասկընալ, անանկ խնդիր մը առաջեցին, որ չի կրնայ հասկըցնել, և լսած քաներնին չըլլայ։ Ասով ինչ խնդիր որ ըլլար պէտի ըսէին. թէ մենք այդ քանը լսած ենք, և գիտենք, անպատճառ քան չէ. ահա այս ճամբով պէտի յաղթէին Եզոբոսին։

(**) Եզոբոս ալ անոնց միտքը հասկընալով ա-

եալ օրը բերաւ. Թուղթը Թագաւորին իշխանները և խորհրդականները ուրիշ բան կարծելով՝ Թուղթը չի բացած միաբերան կանչեցին, Թէ մենք գիտենք, և շատոնց համկըցած ենք. այս բանը մեզի նոր չէ։ Որովհետև գիտենք կըսէք, ըսաւ Եզոբոս, ես ալ ձեզի մեծապէս շնորհակալ կըլլամ և խոնարհութ զիս պարտական կըհամարիմ ձեզի։

Բայց Նեքդենաբոս երբոր կարդաց Թուղթը, շատ նեղացաւ սիրտը պարտքին համար որ գրած էր. մինչև չի համբերելով կանչեց, Թէ ես Լիկերոսին պարտք մը չունիմ. վըկայեցէք ամէնքնիդ ես անոր պարտական եմ։ Ան ատենը փոխեցին իրենց միտքն ու ըսին Թէ մենք ասանկ բան ոչ լսած ենք և ոչ գիտենք։ Կըկնեց Եզոբոս, Թէ ահա այս էր իմ խնդիրս, որ մեկնեցիք։

Նանի խնդիր մը դրաւ, որ հարկաւ պիտի պարտաւորին. վասն զի եթէ ըսեն իրաւ է, և չի գիտեն, պիտի պարտաւորին. եթէ վկայութի սուտ հանեն Թուղթը, դարձեալ կը պարտաւորին. որովհետև իրենց բերնովը վկայեցին, Թէ այս բանը չէին լսած։ Այս կերպ ձեռնարկութիւնը երկայնաբանութեն կըսուի. ինչպէս հին ատենը մանուկ մը ճարտասանի մը քով աշկերտ մտաւ, և շատ բան խոստացաւ, Թէ որ անանկ սորվի, մինչև կարենայ յաղթել ամէն դատաստանին մէջ որ խօսի։ Ամէն բան սորվելէն ետև չուզեց վարձքին բան մը տալ. և իր զին դարձաւ նէ վաստըկեցաւ. վասն զի եթէ յաղթէր վարձքին՝ կը վաստըկէր. եթէ յաղթըւէր, նոյնպէս դաշինքին ուժովը կը վաստըկէր։ Ասոր նման է Եզոբոսին առակութիւնն ալ։

Նեքտենաբոս անանկ զարմացաւ Եզոբո-սին այս ըրած բանին վրայ, որ չզիմացաւ կան-չեց թէ պէտք է խոստովանինք որ երջանիկ է Լիգերոս. որ այսպիսի իմաստուն մարդ ունի իր տէրութեանը մէջ. որ է իբր անհատա-նում աղբիւր մը գիտութեան։ Այս խօսքես ետև հանեց տուաւ հազար տաղանդը Եզո-բոսին, որ դաշինք ըրեր էին. և մեծ բարե-կամական սիրով Բաբիլոն խրկեց։ Եզոբոս Բաբիլոն հասաւ պատմեց Լիգերոս թագա-ւորին ամեն բանն որ ըրաւ Եգիպտոս և տը-ւաւ ոսկիներն, որ Նեքտենաբոսէն առեր էր։ Լիգերոս այս ըրած երախտեացը համար մէկ ոսկիէ արձան մը կանգնել տուաւ ՚ի պատիւ Եզոբոսին (*)։

(*) Հին ատենը շատ մեծ պատիւ էր էթէ մէ-կին անուանը արձան մը կանգնէին. իսկ ոսկիէ ար-ձան կանգնելը շատ գերազանց պատիւ էր։ Միլ-տիադէս զօրավարը աթէնացւոց փրկութիւնը ազա-տեց, բայց ոսկիէ արձան չի տըրին. առաւել կիմացուի Եզոբոսին մեծ համարումն որ ունէր Բաբիլոն։

ԳԼ. ԻԵ.

Եզոպոս գնայ ՚ի Յոյնս, և ՚ի Դեղոս:

Եզոպոս Բաբիլոն դառնալէն ետև՝ շատ չանցաւ միտքը դրաւ որ յունաստան երթայ ժուռ գալ Թագաւորին հրամանովը. բայց մինչև որ երդում չըրաւ նորէն ետ դառնա-լու՝ Թագաւորը հրաման չէր տուաւ. ուստի խօսք տուաւ Եզոպոս թէ կը դառնամ մին-չև ՚ի մահ Բաբիլոն կըմնամ: Գնաց շատ երևելի քաղաքներ յունաստանին մէջ քալեց, և ամէն տեղ իրեն իմաստութեան փորձերն ը-րաւ. յետոյ ուզեց երթալ Դեղոս կղզին (*): Այս քաղաքացիք երբ անոր խօսակցութիւնը կըլսէին, ուրախ կըլլային. սակայն իրենց անշնորհք ըլլալովը մէկ յարգութիւն մը չը-րին Եզոպոսին:

Իսկ Եզոպոս նայելով անոնց ամարդութեը զուրցեց. ով դեղոսացիք ես ձեզ փայտէ կը-տորի մը կընմանցընեմ, որ ծովուն վրայ կեր-թայ կուգայ. որոնք որ հեռուէն կըտեսնեն, կարծեն թէ երևելի մեծ բան է. բայց

(*) Դեղոս կամ Դելոս կղզին հին ժամանակը շատ երևելի տեղ էր. որ Ապողոնի կռոցին շինած տեղն ըլլալով՝ ժողովուրդը հոն շինած էր շատ ջառատուր, ամէն աշխարհէ հոն կերթար:

երբոր ցամաքին կուգայ կըմօտենայ, կը հասկըցվի ինչ ըլլալը ։ Ես երբոր ձեր քաղաքէն հեռու էի, շատ կըզարմանայի ձեր վըրայ, մինչև իմ համարմանս արժանի դրեր էի ձզեզ ։ բայց երբոր հոս եկայ, շուտով հասկըցայ թէ սխալ է եղեր իմ կարծիքս ։ ուստի ես ալ միտքս փոխեցի ։ և հիմա ձեզ կըտեսնեմ ամենէն անպիտան մարդիկ ։

Դեղփացիք այս խօսքերս լսելով վախցան որ չըլլայ թէ ամէն գացած քաղաքները պատմէ, ուզեցին զրպարտելով մեռցընեն ։ Այս բանը պատահով գլուխ տանելու համար (*), Ապողոնին երևելի տաճարէն գողցան մէկ ոսկիէ աման մը, և բերին գաղտուկ պահեցին Եզոպոսին բաներուն մէջ ։ իսկ Եզոպոս ամենևին բան մը չգիտնալով միամիտ ելաւ Դեղփոս կղզիէն Ֆօքիդա երթալու ։ Մէկէն դեղփացիք վրան թափեցան արգիլեցին, ամբաստանութին ընելով թէ դուն սրբապղծութին ըրիր ։ Եզոպոս զինքն արդարացընելով համարձակ կըսէր, թէ այդպիսի բան չեմ ըրած ։ Անոնք ալ բռնութ̃ փընտըռեցին բաներուն մէջ գտան ոսկիէ ամանը, որ իրենք դրեր էին հոն ։ Առին ամանը ձեռքերնին մեծ աղաղակով տարին բոլոր ժողովուրդին ցըցուցին ։ Եզոպոս հասկըցաւ

(*) Ապողոն էր Դիոսին որդին, ա̃ծ երաժըշտութեան և բանաստեղծութ̃ ։ որ ամենեւին յարգելի էր հեթանոսաց, մինչև ամէնքը անոր տաճարը կերթային, որ խիստ ճոխաւոր շինած էր Դելփոս կղզին ։ թագաւորներ այս տաճարովն կըպարծէին, և իրենք անպիտան մարդիկ էին ։

անոնց անօրէնութիւնը և յայտնելով իրեն անմեղութիւնը աղաչեց որ Թող տան իրեն երԹալ: Իսկ անօրէն ժողովուրդը բանտը գընել տրուաւ զայն, և դատաւորները վճռեցին, որ դատապարտութեամբ մեռնի Եզոբոս իբր օրինազանց: Եզոբոս տեսաւ որ տեղէ մը ճար չի կայ, անանկ վտանգի մէջ ընկեր էր որ ազատում չունէր այն Թշուառութենէն, սկսաւ իր անբաղդութիւնը լալ բանտին մէջ:

Դամաս անուանով մէկ բարեկամը բանտը գնաց. տեսնելով Եզոբոսին խեղճութիւնը սիրտը ցաւեցաւ, և հարցուց, Թէ ինչո՞ւ համար կըվշտանաս կուլաս: Պատասխան տըւաւ Եզոբոս, Թէ մէկ կին մը նոր Թաղեր էր երիկը գնաց գերեզմանին վրա բոլոր օրը լաց կըլաէր. հոն մօտ տեղը երկրագործ մը կաշխատէր, որ տեսնելով ատոր լացը՝ Թողուց եզներն ու եկաւ ինքն ալ գերեզմանին քով կուլար: Կինը հարցուց, Թէ ինչո՞ւ համար կուլաս. անալ ըսաւ, Թէ ես ալ իմ կինս Թաղեցի, եկայ որ լալով սիրտս պաղի: Ինծի ալ ըսաց կնիկը, այս խեղճութիւնը պատահեցաւ: Կրկնեց երկրագործը. ուրեմն երբոր երկուքիս պատահածն ալ նոյն է ինչո՞ւ համար մէկզմէկ չենք առներ, որ երկուքիս կսկիծն ալ անցնի, ես ինչ սէր ունէի ընկերոջս վրա, քեզի կըդարձընեմ, դուն ալ անանկ ըրէ՝ կըլմընայ կերԹայ: Երբոր մէկմէկու հաւանութեն տալով ատանկ կըխօսէին, գող մը եկաւ եզները գողցաւ. երկրագործը արտն որ դարձաւ տեսաւ Թէ եզները չի կան. սկսաւ անանկ դառն լալ,

որ չի կրնար ըլլալ։ Իսկ կնիկը գերեզմանա-նոցէն դարձաւ տունը՝ նայեցաւ որ մարդը կուլայ. ո՞հ ըսաւ հիմա՛յ ալ կուլաս։ Պա-տասխանեց մարդը, թէ ահա հիմա ունիմ ճշմարիտ պատճառ լալու։

Այսոր նման է կըսէր Եզոպոս, իմ խեղ-ճութիս և վիճակիս. վասն զի շատ վտանգ-ներէ ազատելէս ետև եկայ հոս ինկայ. հի-մա ճար մը չեմ կրնար գտնել, որ՝ մեռնելէս ազատիմ, որով դատապարտեցին զիս. ահա այս է պատճառն որ կուլամ։

ԳԼ. ԻԸ.

Մահ Եզովբոսի։

Դեղփացիք բազմութեամբ եկան բանտը մը-տան բռնութեամբ քաշեցին դուրս հանեցին Եզոպոսն, որ տանին մէկ բարձր ապառաժ լեռան մը վրայ հանեն, ու անկէ վար նե-տեն։ Եզոպոս սկսաւ առակներ զրուցել այսպէս։ Երբոր կենդանիները խրարու հետ կը խօսէին, մուկը գորտին հետ բարեկամ եղաւ. աղաչեց, որ երթայ հետը կերակուր ուտէ. ու առի առաւ տարաւ ամբարանոց մը տունը, ուր լեցուն բարիք ըլլալով համբա-րանոցը [illegible], կըսէր թէ ո՜վ բարեկամ գորտ՝ հրամմէ։ Գորտը լաւ մը կշտանալէն ետև հրամցուց մուկին, որ անոր հայրենիքն երթայ. բայց ճամբան չի յոգնելու համար ուզեց որ ոտքը թելով մը անոր ոտքին կա-

պէ . որպէս զի գորտին հետ լողալով անցնի ջրէն երկթայ հօն : Ասանկ կապուելէն ետև գորտը ցատկեց ջրին մէջ սկսաւ լողալ . խեղճ մուկը ջրին մէջ խղդըվեցաւ . որ մեռնելու ատենը կըսէր գորտին, թէ դուն եղար իմ մահուանս պատճառը, բայց դուն ալ օր մը պիտի գտնես քեզմէ մեծէն : Այս խօսքս շատ չանցաւ կատարվեցաւ . վն̃ զի մէկ արծիւ մը տեսաւ որ ջրին երեսը սատկած մուկ մը կայ, վրան իջնաւ խլեց . բայց գորտն ալ անոր հետ կապած ըլլալով միասնեղ յափըշտակեց երկուքն ալ կերաւ :

Այսպէս դուք որ զիս անիրաւութ՟ կը մեռցընէք, սատանի ոտքի տակ առնելով, օր կուգայ որ կը գտնէք, և ձեզմէ իմ վրէժս առնող մը կըլլայ : Բաբելոն և բոլոր յունաստան իմ արիւնիս վրէժը ձեզմէ պիտի հանեն : Այսչափ խօսքերը ամենևին անոնց սիրտը չէ շարժեց, որ ողորմին իրեն :

Տեսաւ որ այլ ճար չէ կայ, փախաւ Ապողոնին (*) տաճարը . բայց բռնութ՟ անկէ ալ հանեցին . և կատաղութ՟ կը տանէին

(*) Այն ազգի և կրօնի մէջ տաճարին պատիւ ըլլալու համար, հոն փախչողը խաղաղէր կէն ափէնքէն 'ի վեր . ինչպէս Աղարդայի հայրենեաց մարդիկը տաճարէն չէին կըցան հանել, դուռը փակցուցին : Աղաղայ ազգն, որ ծառա կըղաղայէ, այն ծառին փակը փախչող գերին աղօթ կըռնէր : Բայց Պեղոսայի որոշնէտը Եղուբուր որբադիրքը համարեցան, որ տաճարին անիրաւութ՟ ըրած կըոնէին, անոր համար բռնութ՟ կըցան դուրս հանել :

բարձր լեռան ծայրը: Երթալու ատենը կը-սէր Եզոպոս. մտիկ ըրէք ինծի ով ժողո-վուրդ Դեղոսի: Մէկ նապաստակ մը ար-ծիւէն փախչելով չգիտեր թէ ուր պահուի, որ թշնամւոյն ձեռքը չիյնայ. գնաց բզէզին ծակը մտաւ, աղաչեց որ իրեն տեղ տայ. բզէզն ալ աղաչեց արծիւին, որ խնայէ խեղճ նապաստակին՝ չի մեռցընէ. երդում ըրաւ Դիոսին անուանը վրան, որ իր փոքր մար-մինին չի նայի, աղաչանքին ընդունի: Իսկ արծիւը անոր խօսքը բանի մը տեղ չի սեպե-լով թեւովը զարկաւ բզէզին, և յափշտակեց նապաստակը կերաւ:

Բզէզը բարկանալով անոր անարգանացը վրայ՝ թռաւ ետևէն գնաց գտաւ արծիւին բունը. մտաւ մէջն ու ծակ մը բացաւ. յե-տոյ արծիւին հաւկիթները վար թափեց կո-տրեց: Արծիւը տաքնալով այս յանդըգ-նութեանը վրայ ուզեց աւելի բարձր տեղ մը շինել իր բունը: Բզէզը հոն ալ ելաւ, և առջինին պէս միւս ըրաւ: Արծիւը չգի-տեր թէ ինչ ընէ, որ այս անծանօթ թշնա-մուն ձեռքէն ազատի, գնաց Դիոսին (*) ո-րովհետև այս թռչունը անոր նուիրած ըլ-լալով իրեն պաշտպանութեանը տակն է. ուստի դրաւ Դիոսին գոգը իր հաւկիթները, և անոր յանձնելով աղաչեց, որ հոգ տանի:

(*) Որովհետև Դիոս էր չաստուածներուն թագաւո-րը, և արծիւն է թռչուններուն թագաւորը. ուստի հեթանոսները կըսէին, թէ արծիւը Դիո-սին նուիրած է. անոր համար Դիոսին աթոռին տակը արծիւ մը կը դնէին:

Բայց բզէզը աղբը առաւ կտորանկներ շինեց, ու թռաւ երկինքը տարաւ Դիոսին գոգը ձգեց ։ Դիոս երբոր հոտն առաւ նեղանա-լով վեր ելաւ, որ վար ձգէ . բայց թոթուե-լովը հաւկիթներն ալ վար թափեցան կտոր կտոր եղան ։

Իսկ Դիոս հասկըցաւ բզէզէն, թէ այս բանս արծուէն վրէժ առնելու համար կը-ներ . որ ոչ միայն բզէզին վրայ անիրաւու-թին, այլ և Դիոսին, որ երդումը չընդունե-ցաւ երբոր բզէզն ըրաւ Դիոսին անուանը վրայ ։

Արծուին որ դարձաւ եկաւ, Դիոս անար-գելով զայն երեսը զարկաւ, թէ ահա բզէ-զը վրէժխնդիր ըլլալով քեզ կորսնցընէ . և իրաւունք ունի քեզի այսպէս վրէժխնդիր ըլլալու ։ Սակայն Դիոս չի կամեցաւ, որ արծուին ցեղը կորսուի . համոզեց խօսք հաս-կըցուց բզէզին որ հետը հաշտուի ։ Բզէզը չուզեց ամենևին հաշտուիլ ։ Ուստի Դիոս խելք բանեցընելով փոխեց ժամանակն, որ երբ բզէզը չէ ելած դուրս, ամառուընը հաւ-կիթ կածէ արծուը ։

Ո՛վ ժողովուրդ Դեղոսի, մի՛ անարգէք տաճարը, ուր ես ապաւինեցայ . թէպէտ և անոր մեծութենը նայելով ես ոչինչ եմ, բայց գիտնայք Աստուածութիւն որ հարկաւ կըպատ-ժէ չարագործներուն անօրէնութիւնը ։ Դե-ղոսացիք իրենց կատաղութենն ամենևին ետ չի կեցան . այլ միշտ առաջ կըտանէին Եզո-պոսը, մեռցընելու տեղը, որ պատրաստեր էին ։

Եզոպոս տեսաւ թէ ինչ բան որ խօսեցաւ,

ամէնուն անոնց ակռաները չի մնար, և հա-
րող չեղաւ մօրքերնին փոխելու, սկսաւ այս-
պէս խօսիլ: Մտիկ ըրէք ով անօրէն խառնա-
կոյտ ժողովուրդ. մէկ երկրագործ գեղացի
մը գեղը ծերացեր էր, և ամէնուն քաղաքը
ոտք չէր կոխած. աղաչեց մարդիկներուն,
որ զինքը քաղաք տանին տեսնելու համար:
Անոնք ալ էշերը սայլին կապեցին, և ծերը
վրան դրին, թող տուին, որ քաղաք երթայ
մինակ: Քիչ մը անցաւ մէկ սաստիկ փոթո-
րիկ մը ելաւ. որ անանկ օդը մթնեցուց հո-
վով անձրևով, մինչև էշերը ճամբան կորսն-
ցուցին մոլորեցան չիյտէին, թէ ուր կերթան.
խեղճ ծերը տարին լեռանը ծայրը հանեցին,
որ վար պիտի ձգէին. ողորմելին զինքն այն
մեծ վտանգին մէջ տեսնելով, վա՜յ տափա՜
ինձի, կըկանչէր Դիոսին. աղաչեմ քու մե-
ծութենդ դէմ ինչ ըրած ունեի, որ զիս ա-
սանկ ողորմելի մահուամբ կըմեռցընես. զօ-
րաւոր ձիերէ, և կտրիճ ջորիներէ չեմ մեռ-
նիր, հապա անարգ էշերէն ահա կըկորսը-
վիմ, որ ամէն կենդանիներէն ցած են:

Ահա իմ վիճակս ալ այս խեղճ ծերուն
նման է. որ շատ կըցաւիմ իմ անբաղդու-
թենս վրայ. վն զի չէ թէ իմաստուն և երևե-
լի մարդկանց դատապարտուեցայ մեռնելու,
այլ անպիտան անարժան չարագործներէն:
Երբոր վար պիտի նետէին զինքը լեռանը
վրայէն, այս երգի առակս ըսաւ: Մէկ մարդ
մը ուզեց անխրատութիւն ընել իր զաւկին.
խեղճ զաւակը լալով կըկանչէր, թէ շատ ա-
ւելի կուզէի այս անխրատութիւնը քաշել
ուրիշ մարդիկներէն, քան թէ քեզմէ, որ իմ

ծնօղս ես ։ Ահա ես ալ նոյն բանը կըսեմ ձեզի ով անօրէններ․ շատ աւելի կուզէի իյնալ խորխորատը Սկիւղայի (*) կամ Գարիպտեսի, և կամ աւազուտը Աֆրիկէին․ քան թէ ձեր անօրէն ձեռքովը մեռնիլ ։ Անիծած ըլլայ ձեր հայրենիքը․ վկայ կըկանչեմ աստուածներին, որ իմ մահուանս համար վրէժխնդիր ըլլան ձեզի, և պատուհասեն, որ զիս այսպէս անպարտ կը մեռցընէք ։

Իսկ Դեղփացիք առանց ուշացընելու ապառաժին ծայրէն վարնետեցին՝ խեղճ Եզոբոսը մեռաւ ։ Քիչ ատենէն ետև բոլոր քաղաքը անպատմելի զարկաւ ժանտամահէն․ մինչև գացին հարցուցին պատճառը Պատգամատունին․ (**) որ պատասխան տըւաւ թէ այս պատիժս իրենց անօրէնութեանը համար եղաւ, որ ըրին Եզոբոսին․ և պէտք է այս յանցանքը ջնջել, պատիժէն ալ ազատիլ․

(*) Բանաստեղծները կըսէին, թէ Սկիւղա էր մեծ գաղան մը Սիկիլիայ ծովուն մէջ, որ առաջ յաւերժահարս էր․ երբոր մարդս աւազանը լուացեր՝ ջուրը դեղած ըլլալով, փոխուեցաւ գաղան եղաւ, որ իր այլանդակ կերպարանքէն սարսափելով՝ բարձր ժայռին կատարէն վիհը ծովը նետեց․ ահա այս է խորխորատը Սկիւղայի ։ Այսպէս է խորխորատը Գարիպդեսին, կամ աւազուտը Աֆրիկէին ։

(**) Այս պատգամատունն էր Ապողոնին տաճարը կամ քրմուհին․ երբոր գային կուռքին հարցուցին ժանտամահին պատճառը, քուրմը կուռքին բերնէն պատասխան տըւաւ, ինչպէս սովորութիւն էր կռապաշտներուն ։

որ անոր մահուանը համար կըքաշէին ։ Իրենց խիղճմտանքն ալ ստիպեց զիրենք, որ մէկ արձան մը կանգնեցին Եզոբոսին համար ։

Երբոր Յունաստանի երևելի մարդիկ և մեծամեծ փիլիսոփաները լսեցին այս անօրէնութին որ եղաւ Եզոբոսին · շուտ մը Դելոս կղզին եկան, քննեցին գտան Եզոբոս մեռցընողները, և բոլորը չարաչար պատուհասեցին ։



ԱՌԱԿՔ

Ն. ՕՈՎՐՈՍԻ

ԱՔԱՂԱՂ ԵՒ ՄԱՐԳԱՐԻՏ

Զանարգ վաստակ այր անիմաստ
Յարգոյ գնէ քան զպէրճ իմաստ ։

Ով որ բանի արժէք չգիտէ
Գէշն ու լաւը մէկ կընէ ։

Ա. *Աքաղաղ մը աղբանոցը փորելով յանկարծ կըգտնէ մարգըրիտ մը, մէկ դի կը նետէ ըսելով, թէ որ մարգարտածախը այս բաղդիս հանդիպէր՝ փառք կուտար Տէր. բայց իմ առջիս անանկ ոչինչ է, որ աւելի երջանիկ կըլլայի եթէ հատ մը գարի գտնէի, քան թէ զայս մարգըրիտը ։*

Աքաղաղ կըսուի *խօսքը*, որ աղբանոցին մէջ ծնած գալով միշտ ոտքերուն բան կըճանաչէ, ու երբ գործը գտնէ՝ ամէն բանէն աւելի առնել կը

զուարճանայ. որ օրինաւ է ամէն մարդկանց, որոնց առջին գիտութիւնը յարգ չունի, և գիտուն մարդն ու անխելք մարդը մէկ է. Եթէ անխելքէն շատ մըտենանէն, հազար իմաստութեան հետ չեն ծախեր:

Ահա անիմաստ բերմունք անբանի,
Զակինթ 'ի գարւոյ որոշել չունի.
Դու մարդ բանական ընտրեա զբարի,
Զառաքինութիւն նման մարգարտի:
Բարին յանարգէ այնչափ տարբերի,
Որչափ բանականն յոգւոյ անբանի.
Մարդոյ է ընտրել զիմաստ գանձ բանին,
Իսկ աքաղաղին զկեր անարգ գարին:

ԳԱՅԼ ԵՒ ԳԱՌՆ

Ցանգութ դաժան սիրտ գազանին
Ոչինչ ազդէ ձայն անմեղին:

Անիրաւ մարդն երբ չար կընէ
Սուտ մուտ պատճառ շուտ կըգտնէ:

ը̃. Գայլն ու գառը վազած ջրէ մը ջուր կըխըմէին. բայց գայլը շատ վերն էր քան զգառը, և պատճառ կըփնտըռէր որ կերպով մը յարձակէ զգառը. ուստի տեսածին պէս մէկէն քովը վազեց, ու սկսաւ մեղադրել, թէ ինչու համար իմ ջուրս պղտոր

րեցիր։ Պատասխան տըւաւ գայլը դողա֊
լով. ես ի՞նչպէս քու ջուրդ կրնամ պղտո֊
րել՝ որ խմած տեղէդ շատ վարէն կըխմեմ.
Հաւատացի՛ր, մինչեւ ալ չէ անցած որ քեզի
ամենեւին վնաս մը տամ։ Կրկնեց գայլը, թէ
երէկ քու հայրդ տեսայ, որ իր ձայնովը կը֊
յորդորէր շները որ զիս հալածեն ։

Գառն ալ ըսաւ թէ ամիսէն աւելի է, որ
զիմ հայրս մորթեց մսածախը ։ Ուրեմն այն
քու մայրդ էր, ըսաւ գազանը։ Պատասխա֊
նեց, թէ իմ մայրս զիս ծնած ատենը մե֊
ռաւ։ Գայլը ակռաները կրճտելով ըսաց.
մեռաւ չի մեռաւ ես գիտեմ գառն և քու
ազգդ ի՞նչպէս կատէք զիս. արժան է որ ես
ալ վրէժխնդիր ըլլամ։ Զայս ըսելով յարձ֊
կեց գառին վրա, ու պատառեց կերաւ ։

Գայլը վայրենի գազան ըլլալով չարագործ
մարդոց պէս միշտ նեղութե և հալածանաց մէջ է.
ու անիրաւութե կը ջանայ յափշտակել անմեղ
գառները. ասոր օրինակն է իշխօղ բռնաւորաց,
որոնք սուտ պատճառներով խաղքն ընեն ան֊
մեղները ։

Բարք է այս անգութ պատառօղ գայլի,
Պատառել զանմեղն՝ չլսել ձայնի.
Հզօր չարագործք զարդարն և խոնարհ,
Խոշտանգեալ ճնշեն նման գազանի ։
Սակայն հատուցումն 'ի դատաստանի,
Արդարոց չարաց կշռի և պահի.
Մարդ քաղաքական մի՛ զերթ ամեհին,
Խածատեր զընկերն ատեր զբարին ։

ԳՈՐՏ ԵՒ ՄՈՒԿՆ

Ըղվրէժ քինու կռուասիրաց
Լուծցեն արագ ձեռք թշնամեաց :

Կախ՝ ուրօղ խառով հերթայ ,
Ինչ որ ընէ զայն կրէպէայ :

Է. Գորտն ու մուկը հակառակութիւն կը-
նէին. գորտը կըսէր՝ թէ իրաւունք է որ
ջրոտ տեղերը ես ժառանգեմ, և ընդհակա-
ռակն՝ մուկն ալ ասոր կըկռուէր, թէ ինձի
կըվայլէ ժառանգել. այնչափ որ գորտը
աղէտի ելլէր ժառանգութէ, և բան չուզեց
անոր ընել : Բայց վիճաբանութիւնը շատ մը
տարցաւ, անանկ որ աղէտի սկըսեցին կռուիլ :
Ատկայն շատ լաւ կըլլար թէ որ իրենց մէջ
միաբանէին. վն զի երբոր տարցած կըծեծ-
կըռէին, ու ամենևին թշնամին չէին մտա-
ծեր. անձ ուրուրը շոյլոնը հեռուէն դի-
տելով յանկարծ վրա հասաւ, բռնեց կռուող-
ները երկուսն ալ յափշտակեց :

Օրինակ է խռովարար մարդկանց. որ հակառա-
կութէ ընելով զիրենք կըքանդեցընեն, և անոնք ու-
րիշը կըշահի. ինչպէս որ Թէոդոսիոսի մը դատան
վրայ գրած էր, թէ մարդ մարդու հետ միաբա-
նութէ չընելուն համար՝ փառք ու հիւրը հոն մա-
քանեցան :

Այսպէս և փոքրիկ իշխանաց դիպի,
Երբ կռուին վիճեն 'ի վերայ գետնի.
Բայց հզօրագոյնն որ մերձ գտանի,
Յափշտակէ զայն, կռիւն եղերի։
Այս արդար օրէնք է դատաստանի,
Երկուքին կռուին երրորդըն շահի.
Որչափ դատախազք 'ի պայքար մատչին,
Այնչափ դատաւորք փաստաբանք հրճուին։

ԵՂՋԵՐՈՒ ԵՒ ՈՉԽԱՐ

Որ ոք ընկեր լինի չարին,
Փոյթ ուսանի զգործըս նորին։

Ով որ ընկեր չարին կըլլայ,
Շուտով աշկերտ իրեն կըլլայ։

Դ. Եղնիկն ընկեր ըլլալով գայլին կըպահանջէ ոչխարէն, թէ ինծի չափ մը գարի տալիք ես, որ փոխ տըւի քեզի՝ տուր. իսկ ոչխարը դայլին առջին վախնալուն չուրացաւ. պարտքս է ըսաց կուտամ, թէպէտ անկէ բան մը չէր առած. և ժամանակ ուզեց հատուցանելու։ Ժամանակն որ եկաւ՝ եղնիկը կերթար անպատկառ ոչխարէն կուզէր գարին, որ ինչպէս խօսք տըւաւ վճարէ պարտքը։ Բայց ոչխարը երբոր տեսաւ զայն մինակ, սկսաւ ծաղր ընելով ըսել. ես չեմ պարտական խոստմունքս պահելու. որով հետև նեղը մնալուս, և գայլին վախուն

խօսք տըւի, որ քեզ ընկեր էր եղեր. գնամ բանդ քեզի պարտք չունիմ:

Եղնիկն է կերեւ ; օրինակ՝ չար օրինակ տանու-ղին. այս խրատական դէպք է անզգամներէն հե-ռու փախչելու. վասն զի առնէ դերեւ է բարի մարդը չար օրինակով գէշ ըլլայ, բայց թէ գէշ մարդը բարի օրինակով լաւ ըլլայ:

Ահա՛ անխրատ պատանեկութիւնք եղին,
Որ զրկէ գոչխարն ահիւ գազանին.
Այսպէս անխրատք ցասմամբ իշխանաց
Կողոպտեն զարդարն զրկեն անմանկին:
Արդ մի՛ նմանիք մի՛ անխրատին,
Մի՛ ընկերանար ակնատու չարին.
Բարիք ՚ի չարաց ՚ի չար փոխարկին,
Եւ բարք անմեղաց վայլթ ապականին:

ՇՈՒՆ ԵՒ ՍՏՈՒԵՐ

Արդար պատիժ է ագահին
Անյագ վազել զհետս ոչնչին:

Ագահն ուրիշ շահին ցանկայ,
Այնչափ աղքատ խնդրէ՛ իր ձիոյ:

Է. Շուն մը լողալով գետէն կանցնէր՝ կը-տոր մը միս բերանը. ջրին մէջ կըտեսնէ միսին շուքը կարծէ թէ ուրիշ միս է. շուն

մը կը ձգէ բերնէն միսն ու կը վազէ շքին ետեւէն, որ իրեն մէկ պատուական կերակուր մը կերեւնար․ բայց ի՜նչպէս յուսահատեցաւ, երբոր տեսաւ թէ իր ագահութիւնը փուճ ելաւ։ Վա՜յ ինձ կը կանչէր ցաւելով իր ձգած մսին վրայ․ ես չգիտցայ պահել զայն որ ունէի, ահա ունեցածս ալ կորսնցուցի։

Շունը [illegible] կենդանի ըլլալով [illegible] կը [illegible], որ օրինակ է շահասէր մարդոց․ որ կա[illegible] [illegible] մէկ բանը կը ձգէ մէկալին ետեւէն կը վազէ․ և անով [illegible] եղածն ալ կը կորսնցընէ։ Հարցուցին Բիաս փիլիսոփային, թէ ո՞վ է մեծատուն․ պատասխանեց թէ այն՝ որ բանի մը չը ցանկար։

Քանի՞ շահասէրք նման են ասին,
Թողուն զբաւականն յանչափս ձկանն․
Կա՛լ զոր ինչ ունիս, շատ է քո՛ւմ անձին;
Մի՛ իբրև զանբան ցանկար ստուերին։
Ախտ է մոլեկան այս ախտ ագահին,
Յոչինչ շատանալ, ոչ հանգչիլ սրտին․
Յանկայ հանապազ նորանոր որսին,
Ձգէ զոր ունի, մնայ առ վշտին։

ԱՌԻՒԾ ԵՒ ԿԵՆԴԱՆԻՔ

Մի՛ յաճախեր առ պետս իշխան,
Ցաւչս նորա լինիս խոտան :

Թէ ճարտարն թող շատ երթաս ,
Անարգ և չած առաջին նըլլաս :

Զ. Առիւծն ու ոչխարը , և այլ կենդանիները միաբան կերթան որս ընելու . առիւծն երդում կընէ , թէ դառնալու ատեննիս ամեննուդ հաւասար կըբաժնեմ ով որ ինչ բըռնէ : Նայիս որ ոչխարին որոգայթին մէջ ընկաւ եղնիկ մը , վազեց ոչխարը շուտով իմացուց առիւծին , որ մէկէն հասաւ բըռնեց եղնիկը չորս բաժին ըրաւ ընկերներուն առջին : Առջի բաժինն ըսաց ինծի կիյնի , վասն զի ես առիւծ կըկոչվիմ . երկրորդ բաժինն ալ ինծի կըվայլէ , վասն զի ամմենէն քաջասիրտ ես եմ . երրորդ բաժինն ալ պէտք է որ ես առնեմ , որովհետև ամմենէն զօրաւոր եմ . իսկ չորրորդ բաժինին համար ով որ ձեզմէ ինծի հետ հակառակութիւն կընէ , մէկէն կըխղդեմ : Եւ այսպէս առիւծը բոլոր եղնիկը յափշտակեց , ու մէկը ընկերներէն չի համարձակեցաւ տրտունջ մը ընելու :

Շատ մարդիկ երեսպաշտութեամբ ընելով ծածկած-ներուն երեւէն կերթան, որ օգուտ մը քաղեն. Բայց անոնց միջէն որ բաներնին լմննայ՝ անկէ ե-տեւ երեսնին ալ չեն նայիր։ Դիոգինէս փիլիսո-փան կ'ըսէր, թէ իշխանները կրակի նման են. ոչ շատ պէտք է մօտենալ, և ոչ հեռանալ։

Իշխանք մեծատունք նման արծուին,
Ինքեանց դրանէն վշտան օտարին.
Իսկ ռամիկք նոցուն ընկերել կամին,
Կարծեն թէ ինքեանց ելանէ բաժին։
Մի՛ լինիր ընկեր հզօրագունին,
Մի՛ շողոքորթեր զաղքատս նորին.
Զի երբեք գործի լինիս 'ի ձեռին,
Եւ յաւարտ գործոյն մնաս անբաժին։

ԳԱՅԼ ԵՒ ԿՌՈՒՆԿՆ

Մի՛ նպաստեր գործոց չարին,
Զի մի՛ չարիք 'ի քեզ հասցին։

Ինչ որ ընես ապերախտին,
Բան չըրնար իր ծոյլ ոչէն։

Է. Գայլը երբեմն ոչխար մը կուլ տալէ անմիտ որկրամոլութեամբ, որ մէկ ոսկոր մը որկորին կոկորդին մէջ կըմնայ. շատ ջանք ըրաւ որ օգնութեամբ մը դուրս հանէ, չէր կրցաւ. ուս-տի սրտաչափ որ ազատեց ուրիշ կենդանիներուն մտուց ելաւ. վասն զի ամէնքը կըթողուին անանկ՝ որ կանչէ, և մէկը ցաւակից չըեղաւ

իրեն ցաւէն . օխ եղաւ կըսէին , Թող տան-
ջըվի իր անյագութեը : Միայն կռունկը ա-
նոր անոյշ խօսքերուն խաբուելով ուզեց օգ-
նութին ընել . և իր երկան կտուցքը խօթեց
գայլին բերանն , ու ոսկորին մէջէն քաշեց
հանեց ոսկորը , որ կըխեղդէր գէշ գայլը : Յե-
տոյ կռունկը հատուցում ուզեց այս մեծ
բարերարութենս , որ գայլը իրեն խոստացեր
էր հատուցանելու : Այս բանիս պատաս-
խան տըւաւ գայլը խնդալով . բարեկամ
դուն չե՞ս մոռներ ինձի հատուցում ընելու,
որովհետև կեանքդ ինձի պարտական ես .
երբոր կտուցքդ իմ բերանս էր՝ կրնայի վի-
զըդ փրցընել : Գնա՛ ապերախտ , շատ երա-
խտապարտ ես , որ իմ բերնէս դուրս հանեցիր
կտուցքդ :

Առակիս նշխարքն անզգամ մարդէն հեռու կե-
նալ, և չարութեը օգնութի չընել . ինչ գի ինչ
որ ընես այնին երախտիք . ու մեծը անորհակալ
ըլլալու փոխը տեղն անորհակալութի կուտայ :

Տեսե՞ր նողոտկալի գործ զապերախտին ,
Որ չարիս խորհի ի վր բարերարին .
Զի փոխան բարեաց՝ որ պարտ է նմին ,
Անոր պահանջէ զգարձ փոխարինին :
Անմտութի է նպաստել չարին ,
Կամ յապերախտէն յուսալ զբարին .
Ըստ՞ է անմիտ մնալ կռունկան ,
Յորժամ նպաստեաց ապերատ գայլին :

ԵՐԿՐԱԳՈՐԾ ԵՒ ՕՁ

Բարերարին խորհիլ ըղձար,
  Է դառն օձի բարք չարաչար ։

Ով չար կուզէ բարերարին,
  Վնաս ընէ իր չար անձին ։

Ը. Երկրագործ մը կըգտնէ ձիւնին մէջ պաղած օձ մը երբ կիսամեռ, կըխղճայ վրան ու կառնէ կըտանի իր խուցը, կըտակ վառէ կըտաքցընէ օձը, և այնչափ կըխնամէ, որ քիչ քիչ օձը հոգի կառնէ, և իւր բնական ուժը կըստանայ ։ Բայց առջի բանը այս կըլլայ, որ իր բարերարին դէմ կելլէ, և կըցաթկէ որ խայթէ ։ Զարմանալով ասոր ապերախտութենը վրայ կըսէ երկրագործը. ով ապերախտ, այս է երախտիք ճանչնալդ, որ քեզի ըրի. ես քու կեանքդ քեզի տըւի. դուն կուզես իմս առնուլ չարագործ ։ Զայս ըսաց, և զարկաւ փայտով մեռցուց ։

Որչափ աղէկութիւն ընես օձին՝ փէշին որ գայ կը. խայթէ իր բարերարը. ասանկ ալ ապերախտ մարդուն ինչ որ ընես, շուտ մը կըմոռնայ, և չար հատուցում ընելու կը ջանայ ։

Այս է գծնգակ բերմունք ժանտ օձի,
  Կեայ 'ի վնասել երախտաւորի.

Չածէ զմտաւ գործս հիանալը ,
Բառնալ՚ի կենաց զնա նկրտի :
Արդար հատուցումն է ապերախտին ,
Զրկել՚ի կենաց վտանգել յանձին .
Որ ոք չկամի վայելել բարին ,
Արդ առաջիկայ հանդիպիլ չարին :

ԽՈԶ ԵՒ ԷՇ

Քաջ յաղթանակ է վեհանձին ,
Մերժել խոտել զբան վատին :

Մեծամեծաց վայելչն այս է ,
Որ ցած մարդէն վրէժ չառնէ :

Թ. ( )րմը էշն արհամարհելով ծաղր կընէ զխոզը . իսկ խոզը անանկ կըբարկանայ , որ մէկէն ակռի պատուհասէր զայն . բայց եր բարկութիւնը բանեց , ու խոժոռ աչքով ըսաւ . չարագործ՝ ինձի դժուար չէ սովեցընել քեզի քու անխելքութիւնդ , բայց հաճոյ բան չէ , որ ես մէկ ծոյլ անշահ անասունի մը հետ կռուիմ . վասն զի աշխատանքս չաժեր :

Մեծ խոհեմութիւն է պատասխան չի տալ ցած մարդոց խօսքին ու պարծելու . վասն զի ազնուականութիւն չի վայլեր , որ իրենց անանկին հետ : Սոկրատ ֆիլիսոփան լսեց որ մէկը իրեն գէշ խօսեր կանի-ծէր , միայն այսչափ ըսաց , թէ որովհետեւ օրհնել չէ սորված , անոր համար կանիծէ :

Չէ վեհանձնութիւն չար առնել վատին,
Եւ պատասխանել անխիմաստ բանին.
Առաքինեաց է չլսել ձայնին,
Եւ վրէժառու լինել տկարին:
Քանի՞ անխորհուրդ բան աւանակին,
Թողեալ զիւր հեզգ անձն անգոանէ խողջին.
Յիմար է այն որ ընդ հզօրին,
Եւ ընդ վեհ.քան զինքն 'ի պայքար մատչին:

ԸՆՏԱՆԻ ՄՈՒԿՆ ԵՒ ԴԱՇՏԱՅԻՆ ՄՈՒԿՆ

Խորտակաճաշին կայ 'ի սեղան,
Խառն ընդ խորտիկ երկիւղ մահուան:

Անվախ ոսպէն է լաւ համով,
Քան մեծ հարկիքն ահով դողով:

Ժ. Մերթեմն քաղաքացի մուկն ու գեղացի մուկը՝ իրարու հարկեք կըլլեն. գեղացին կըսկըսի իր հարկեքը դուրսն ընել հեռու տեղ մը. և ծակէն դուրս կըհանէ իր պատրաստական կերակուրները. քիչ մը բակլայ, կըտոր մը պանիր, և քիչ մը խոզի եղ. մէ զի աղքատ ըլլալով որչափ որ ձեռքէն եկաւ՝ այնչափ ըրաւ ծառայելու համար իր բարեկամին. որ աւելի գոհ եղաւ անոր լաւ-մեծարանքին վրայ, քան թէ անհամ պաղ կերակուրներուն. ուստի քաղաքացի մուկը զըւարճանալով միայն ակռային ծայրովը կը

գաղջէր կերակուրներուն, և չէր կրնար ու֊
տել: Ինչ իցէ՝ և կերակուրը լմընցաւ. անոր
հրաւիրեց զգեղացի մանուկն, որ մէկալ օրը
երթայ իրեն տունը կերակուր ուտելու. և
պարծեցաւ, թէ շատ փափուկ կերակուր֊
ներ անոր համար ըրեր է քաղաքին մէջ. ու֊
տի գեղացին քաղաք գնաց անոր հարկիքը.
և մէկ գեւլեցին սրահի մը մէջ տեսաւ պատ֊
րաստած՝ պաստառի վրայ լեցուն պատուա֊
կան մսեղէն կերակուրներ. բայց հազիւ թէ
սկսաւ ուտել յանկարծ մէկ ծառայ մը բա֊
ցաւ սաստիկ դուռը այն տեղին, ուր որ ա֊
նոնք էին, և վերիվար ըրաւ ուրախութիւն
այս երկու բարեկամներուն. որ բոլորովին
վախցած փախան մէկը ասդին մէկալն ան֊
դին: Ծառան գնաց անկէ. քաղաքացի մու֊
կը իր ընկերը կերակրի կանչեց, որ կիսա֊
մեռ կըդողար վախուն. և հարցուց անոր
գեղացին, թէ շատ անգամ քեզի կըպատա֊
հի՞ սաստիկ վախեր: Անոր պատասխան տը֊
ւաւ թէ ամէն անգամ կըհանդիպի, վն զի
առանց նեղութեան ուրախութիւն չըլլար: Գե֊
ղացի մուկը ետ դարձաւ ըսաւ. քու կիններդ
ինչ որ ըլլան, հանդիստ վայելում չունին,
և անոր համար նորէն զիս փորձութեան մէջ չեն
կրնար ձգել: Մնաս բարով, ես յառաջ նա֊
խանձեցայ քու հարուստ կերակրիդ. բայց
գիտնաս որ հիմա շատ մեծ կըհամարիմ իմ
աղքատութիւս, քան թէ քու բոլոր մեծու֊
թիւնդ:

Օրինակ է հարուստ ու միջակ մարդկանց. մէկը ամէն մեծութիւն ունի՝ հանգստութիւն չունի, մէկալը հանգստութիւն ունի մեծութիւն չունի. բայց ասոր վիճակը մէկալէն շատ լաւ է. որովհետև մարդուս սիրտը թագաւորն է մարմնին. երբոր հանգիստ կըլլայ առանց սրտադողի, անկէ աւելի մեծութիւն ըլլար:

Զի՞նչ օգուտ գործեաց մեծութեն ճաշկին,
Երբ երկիւղ կասկած նման ըծակցին.
Եւ քանի՞ բերկրանք առաքաստ կերակրին,
Երբ անհոգ զուարթ ուտեն 'ի դաշտին:
Մի՛ ցանկար ընչից մի՛ խորտկաճաշին,
Եւ մի՛ երաներ զբաղդ ընչեղին.
Զի տագնապ և վիշտ յամէն վայրկենի,
Ուտեն և մաշեն զսիրտ և հոգի:

ԱՐԾԻՒ ԵՒ ԱԳՌԱՒ

Դիւրահաւան միտք զաղփաղփուն,
Յամէն հովմոց կայ երերուն:

Անխելք մարդիկ փոփոխական,
Ամէն հովէն կ'երթան կուգան:

ժա. Արծիւն իր ճանկին մէջ մէկ ոստրէ ոպըռիփէայ մը բռներ կըխածէր որ կեղևը կոտրէ, մէջի միսն ուտէ. բայց ճար չեղաւ կոտրելու. զայն տեսնելով ագռաւ մը կըմարէր որ ձեռքէն առնու անոր որսը. ուստի ըսաց

խորամանկութե՟բ : Ահա շատ աշխատած կը տեսնեմ զքեզ. թո՛ղ բարձրացի՛ր երկինքը որչափ որ կրնաս, և վերէն ձգէ վար սատրէն այս քարերուն վրայ. որչափ ամուր ըլլայ՝ կըկոտրի կեղևը : Արծիւը մէկ զարմանալի դիւրութիւն մը գտնելով հետևեցաւ ագռաւին խորհուրդին, ու ըրաւ : Բայց խորհուրդ տուողը միայն իր շահին համար կըսէր զայն. վասն զի սատրէն վար ընկածին պէս կոտրեցաւ և ագռաւը մէջի միսը հանեց կերաւ, ու խնդալով անոր դիւրահաւանութենը վրայ փախաւ :

Ագռաւը խորամանկ մարդու օրինակ է, որ միայն իր օգուտը կընայի. ասոր զգուշ կենալու է անանկ խաբեբայէն, և խօսքին հաւատալու չէ. վա՛սն զի ուզածն ընելէն ետև ծաղր կընէ : Դիոգինէս փիլիսոփային հարցուցին, թէ ո՞ր գազանը շատ վնասակար է. պատասխան տուաւ, թէ վայրենիներէն օձը. և ընտանիներէն խաբեբայ մարդը :

Երբ խորամանկ ոք քեզ խորհրդակցի,
Մի՛ կարծեր թէ նա սակս քո խորհի.
Զամենայն օգուտ յինքեան վերբերեալ,
Կերակուր նովաւ ծաղրէ զկնի :
Արդ մի՛ հեշտալուր լինիր խարդախին,
Որ մթին գունով ծածկէ զնենգ սրտին.
Որչափ շողոմէ 'ի սկզբան իւրին,
Այնչափ զղջանաս ծաղրեալ զերթ արծուին :

ԱՂՈՒԷՍ ԵՒ ԱԳՌԱՒ

Ունայնամտէրն բանիւ ունայն ;
Խաբէ ծաղրէ միշտ է ունայն :

Փառասէր մարդն երբոր գովի,
Շողոքորթ կապուայ ամէն խօսքի :

ԺԹ. Ագռաւը բերանն ունէր կտոր մը պա-
նիր. աղուէսը հոտն որ առաւ վազեց ագ-
ռաւին առջեւն եւ ըսաւ զարմանալով. Ինչ
բան է որ կը տեսնեմ. ես լսեր էի թէ քու
փետուրներդ սեւ են. բայց որ ամծ, այս ինչ-
պէս ձերմակ են, որ կարապայ իսկ թռչունը
քեզմէ ձերմակ չի կրնար ըլլալ : Կաղաչեմ
պարոն ագռաւ ինծի ներէ որ քիչմը վրադ-
նայիմ ուզածիս պէս. Ճշմարիտ կըսեմ, որ
դուն ինծի անանկ աղւոր կերեւնաս, որ չեմ
գիտեր ինչպէս զմայլիմ քու վրադ : Նորէն
կըսէր աւելի անոյշ խօսքերով. ես հաւա-
նէր եմ թէ միայն գեղեցկութիւնը չէ քու յա-
տուկ կատարելութիւնդ. այլ բնութիւն որ
կամեցաւ զքեզ ուրիշ թռչուններէն աւելի
կատարեալ ընել, առանց կարծեաց քեզի
տըւաւ հրեշտակային ձայն մը. երդում կը-
նեմ, որ այնպէս գեղեցիկ երգօղ չի կայ մեր
անտառներուն մէջ, ինչպէս դուն եւ սոխա-
կը դիւղդիւրը : Այս խօսքերովս բոլորովին
զուարճացաւ ագռաւը, եւ ուզեց իմացընել,
թէ աղուէսին ըսածը սուտ չէր, բացաւ

թերանն որ երգէ, բանալովը ձգեց բերնէն պանիրը ։ Իսկ աղուէսը յափշտակեց զայն, ու շուտմը երթալու հրաման ուզեց ագռաւէն, և ծաղր ընելով ըսաւ. շատ համ առի պանիրիդ անուշութենէն, քան թէ ձայնիդ գեղեցկութէ̃ն ։

Առակս օրինակ է ունայնասիրութե̃ն, որ անանկ կը խաւարացընէ մարդուս միտքն, որ սուտ գովասանքով խաբուիլն կը հպարտանայ, մինչև ամէնքը վրան կը խնդան ։

Ահա կուրութի̃ն ունայնասէրի,
’Ի պատիր բանից այլ յայլմէ լինի.
Որով յիմարեալ ձգէ զոր ունի,
Սին պաճուճանօք հրճուի զոր չունի ։
Միտք փառասիրաց հեշտութե̃ պատրի,
Մինչ չասել զանձնէ զինչ եմ զինչ էի.
Կարծէ թէ բանիւ բնութի̃ն փոփոխի,
Անդէն յերբ յատկէ փոյթ խայտառակի։

ԱՂՈՒԷՍ ԵՒ ԱՐԾԻՒ

Ով որ առնէ բան անօրէն,
Փոյթ գտանէ յԵրկնաւորէն ։

Ով անօրէն բան որ ընէ,
Երկնաւորէն շուտ կը գտնէ ։

ԺԴ. Արծիւն իր բունը շիներ էր կաղնի մեծէ ծառին վրայ. ծառին տակն ալ աղուէս մը իր ձագերը կընայէր. այս երկուքը իրարու հետ սիրական կերևնային ։ Օր մը աղուէսը գնաց կերակուր գտնելու. արծիւն իջաւ յանկարծ յափշտակեց աղուէսին ձագերն ու տարաւ բունը իր ձագերուն կերցուց ։ Երբոր աղուէսը դարձաւ բունը, և հասկընալով դրացիներին ըրած անօրէնութիւնը՝ շատ սաստիկ բարկացաւ. բայց որովհետև յոյս չունէր հասնելու իր թշնամուն, որ կարենայ վրէժխնդիր ըլլալ, ինչ որ կրցաւ զայն ըրաւ. իբր զի՝ իր բոլոր վրէժխնդրութէ հոգը ԱՅ թողուց. իսկ ԱԾ շատ չանցաւ անոր չարագործութիւնը պատժեց. վասն զի քանի մը օրէն ետև արծիւը կըդիտէր, որ երկրագործները զոհ ղուրբան կընէին մէկ այծ մը իրենց կուռքին սեղանին վրայ. վազեց եկաւ կտոր մը միս յափշտակեց. որուն վրայ մէկ քանի կրակ փակած էին, և անանկ տարաւ իր բունը ։ Եւ որովհետև բունը շինած

էր յարդով ստմանով. և ուրիշ դիւրավառ բաներով, մէկէն բռընկեցաւ. և արծիւին ձագերը վար Թափեցան: Անասունը աղուէսն, որ կըսպասէր ծառին տակը՝ ընկաւ ձագերուն վրայ. և ինչպէս որ արծիւն իրեն ըրաւ, ինքն ալ անոր անանկ ըրաւ, մէկիկ մէկիկ զամմէնը կերաւ:

Աղուէսն է Թիւլքի, և արծիւն է խարդաւ օրինակ անիրաւ մարդոց. որ միտքը կըդնէ թէ օտարին չար ընելը իրեն չգար. բայց Աստուած արդար դատելովը աւրիշին ինչ որ ընէ, նոյն կը գտնէ, թէ բարի և թէ չար:

Ցանէ՛ր պատուհաս նենգամիտ արծուին,
Որ ոչ խնայէ իւր մերձաւորին.
Զածէ զմտաւ վճիռ տէրունին,
Թէ որով չափես չափի քեզ նովին:
Արդ մի՛ ստահակող լինիր ընկերին,
Թէ և 'ի բարձունս ճախրես յեթերին.
Քանզի վրէժխնդիր լինի քեզ երկին,
Հուրբ հատուցանէ պատուհաս կրկին:

ԾԵՐ ԱՌԻՒԾ

Ծանր է և դառն հզօր ալեւորաց,
Անկեալ խոնարհել՝ ի վատթարաց :

Շատ դժուար է ծերանալոյ,
Երբ ջանարգէին յանարգ մարդկանց :

Ժդ. Առիւծը ծերութեն խաւթելով այլև մաղարայի մէջ ընկած կըտանջըլվէր. անանկ որ հոգին բերանն եկեր էր. իսկ անասունները որովհետև այն աստիճանին մէջ չէին վախնար անկէ, ամէն կողմէն վազեցին եկան. որ սիրտը ծակելով նախատեն զայն. ուստի էշն ալ եկաւ, և խորոտալով կից ընքրէ նետեց, որ զարնէ անոր : Ան ատենը ոհ ըրաւ առիւծն ու դարձաւ գայլին և խոզին ըսաւ. Ձեր ամէն նախատինքը որչափ կծու ըլլան համբերութեամբ կըքաշէմ. բայց էշն ալ կը համարձակի զիս նախատել՝ ոհ ահա աստոր չեմ կրնար դիմանալ :

Ծեր առիւծը՝ օրինակ է թշուառութէ ընկած և ծերացած մարդու, որ իր ծառաներէն և բարեկամներէն նախատինք կըլսէ ծերութէ պատճառաւ. բայց ան ատենը պէտք է աւելի պատիւ ընել և օգնութիւն տալու, չէ թէ նախատելով ծաղր ընել :

Այս է տարացոյց հզօր իշխանին,
Երբ թափի յուժոյ ու՛ի փառաց նախկին.
Ոչ ոք ակնածէ յերեսաց վեհին,
Բնաւ կենդանիք նախատել բերին։
Ցորչափ զօրութին ունիս 'ի ձեռին,
Մի՛ թշնամանօք լինիր օտարին.
Զի գայ ժամանակ տեղի տալ բաղդին,
Քեզ ամենեքեան նախատիչ լինին։

ԷՇ ԵՒ ՓՈՔՐԻԿ ՇՈՒՆ

Իւրաքանչիւր յատուկ բնութե,
Են պատշաճեալ իրք զանազան։

Ամէն մարդու մէյ մէկ բան կայ,
Որ ուրիշին անով ըլլայ։

ԺԵ. Պարոն մը երբեմն իր պզտի շունը սիրելով հետը կըխաղար իշուն առջին. Էշը զայն տեսնելով նախանձեցաւ անոր երջանկութեը վրայ, և ինքիրեն ըսաց. ի՞նչ կընէ այս շունս, որ մեր տիրոջը այսչափ սիրելուն արժանի եղած է. բայց քծնելով երբեմն թաթիկներն անոր կուտայ. հէ՞ թէ որ ասով սիրելի եղած է, ես ալ կընեմ ու քան զայն պզտի անասունը շատ սիրելի կընամ ըլլալ։ Զայս ըսելով ելաւ ետքի երկու ոտքին վրայ կեցաւ, և տիրոջն առջին կոշտութք անոր պէս ըրաւ։ Իսկ տէրը շատ զարմանալով մերժեց անոր կոշտ սէրը. և կան-

չեց ծառաներուն, որ վազեցին եկան աղէկ փայտ մը քաշելով հատուցում ըրին քաղաքավարութեը աւանակին :

Ած ամէնին մարդու մէյմէկ բնութի̃ և վիճակ որոշեր է իրենց յարմար. Եւ որ մէկին վիճակը վերնար մէկալին երեար, այն մարդն աղէկ չէր ըլլար. ապա ամէնքն ալ պէտք է իրենց ստեղծածին վրա գոհ ըլլան, և իրարու չեն նախանձին, չէ նէ իշուն Ջրուէլը կը ըլլայցվին :

Մի՛ ցանկար փոխել վիճակ բնածին
Գործեալ 'ի քեզ անստեղծ մտաւքն.
Քանզի և բնութի անցնէր էակաց
Ետ զանազան գործս ըստ կերպանց յատկին
Իսկ քեզ որ տեսող ես անասնոց սեռին,
Ետ 'ի կատարել վիճակ քո նախնեին.
Զի ոչ 'ի բնութի բնութեն փոխարկել,
Ոչ յատկութեն շան յէշ այլափոխի :

ԱՌԻՒԾ ԵՒ ՄՈՒԿՆ

Որչափ փոքրիկ առնես բարի,
Գտցես յետոյ զայն պտղալի ։

Եթէ պզտի բարիք մ՚ ընես,
Շնորհակալ մեծցած զայն կըգտնես ։

Ժզ. Երբեմն առիւծը պառկեր կըքնանար. մուկ մը մօտեցաւ քթին ու հարիւր անգամ բոլորէն անցաւ դարձաւ. յետոյ համարձակեցաւ մինչեւ ցատկել գլխուն վրայէն ։ Առիւծը արթնցաւ բռնեց մուկը. քիչ մնաց պիտի սպաններ. բայց այս բանս անարժան սեպելով իր թագաւորութեանը, թողուց որ երթայ. իսկ մուկն որ անոր պարտական էր իր կեանքը, շատ չանցաւ միջոց մը գտաւ փոխարէնն ընելու իրեն. վասն զի քանի մը օրէն ետեւ առիւծն ինկաւ որսորդներուն ցանցը փողանը. եւ անոր մռընչալէն պօռալուն ձայնէն բոլոր անտառը թնդաց. մուկը լսածին պէս այս ձայնս վազեց եկաւ սկսաւ կրծել ցանցին օղակները, որով փաթթըւած էր իր բարերարը. եւ այսպէս դիւրին մը ազատեց զառիւծը ։

Որչափ մեծ մարդ ըլլաս, ջանա որ ամէնուն հետ անոյշ վարուիս ու պզտիկին մեծին աղէկութիւն ը-

նէս․ Վասն զի օր չըլլար որ պզտի աղէկութիւն մը
ձեզ ճան նընէ ։

Չէ՛ փոքր փոքրուն տանել զըլսոյն,
Երբ հարկն բերէ նպաստել այլում․
Թէ և թագաւոր լինես յաշխարհի,
Կարօտիս երբեմն նպաստից փոքուն ։
Քան զառիւծ հզօր զի՞նչ հզօրագոյն,
Եւ զինչ-չքան զմուկն անզօր փանաքի․
Այդ հզօրն ահա կապի անգադոյն,
Ազատէ անզօրն զհզօր անձնի ։

ԾԻԾԱՌՆ ԵՒ ԹՌՉՈՒՆ

Ա՛ռ քեզ խրատ խորհուրդ ծիծռան,
Կշռեա՛ զանցեալն և զապագայն ։

Յաւէժականն խօսք մէ՛,
Երբ տէր բարի խրատ նըւէ ։

ԺԷ․ Ծիծեռնիկը տեսաւ որ երկրագործ
մը կանեփ կամ քթանի հունտ կըցանէր,
վաղէց գնաց ուրիշ թռչուններուն իմացընե-
լու ։ Օր կուգայ որ կըսէր այս ցանած հա-
տերը ձեր գլխուն բան կըբանան․ վասն զի
կանեփը կըհասնի, և հաւորսը կերպ կերպ
որոգայթներ կըշինէ ու պամենքդ կըբռնէ ։
Իմ խօսքս մտիկ ըրէք․ ամէնքդ այս արտին
վըրայէն թռչելով կերէք բոլոր հունտերը ։
Փուճ տեղը խրատ կուտար անոնց, որ ամե-
նևին չուզեցին լսել․ և մանաւանդ մէկ ան-

պէտ ձայն մը եկաւ իրենց, և ոչ թէ խոհեմ նախագիտութիւն: Ինչևիցէ՝ կանեփը բուսաւ ծիծեռնիկը նորէն ըսաւ անոնց. թէ եկէք հանեցէք այս գէշ խոտը. թէ որ թողուք զասոնք, շատ պիտի զղջաք: Պատասխան տուին թէ կուզես դուն հանէ. մենք ատեն չունինք հանելու: Վերջապէս կանեփը հասաւ. նորէն վազեց ծիծեռնիկն բաց թռչուններուն, թէ ինչ մարգարէութիւն որ ձեզի ըրի, շատ չանցնիր պիտի կատարուի. եթէ կուզէք ձեր ազատութիւնը, փախէք այս կողմէն հեռացիք: Անոնք ալ ըսին. գնա՛ բանդշատախօս. գլուխնիս ճաթեցուցիր, երբ պիտի ըլլայ որ ձայնդ կտրես, գնա՛ մենք բանէ մը վախ չունինք: Չայս որ լսեց ծիծեռնիկը թողուց անոնց ընկերութիւնը ու հեռացաւ. իսկ թռչուններն անոր խօսքին չաւատալնուն համար շատ զղջացան. բայց ինչ օգուտ՝ բանը բանէն անցաւ. վասն զի քիչ մը ատենէն ետև հաւորսը հանեց իր կանեփը, և ոլորեց որոգայթ շինեց, ու լարեց՝ զամէնը բռնեց:

Օրինակ է խոհեմութեան, որ եթէ փոքրները մտածելով բարեկամի խօսքին մտիկ ընելու պէտք է արթուն կենալ ամենով յետոյ եկածն ընել վտանգէն փախչելու. թէ չէ նոյն վտանգին մէջ կը կորսուին այն թռչուններուն պէս՝ որ խոհեմ բարեկամին մտիկ չըրին ու կորան:

Նախատես լինել ապագայ չարին,
Մեծ իմաստութիւն յիմաստնոց գտանի.

Քանզի Նախատեան հանապազ շահի,
Արտաքոյ եղեալ չարեաց ընաւին ։
Զի՛նչ մեծագոյն գանձ գիտունք ստացին
Քան հաւատարիմ խորհուրդ մտերմի .
Արդ մի՛ լքաներ զխորատ պիտանի
Նման անիմաստ Թռչնոց երամին ։

ԳՈՐՏՔ ԹԱԳԱՒՈՐ ԽՆԴՐԵՆ

Տրանջողին ոչ պակասին
Ցաւք և վտանգք զոր տայ երկին։

Տծգոհ մարդու ինչ որ ընէն ,
Միշտ կը գանգտի անէցածէն ։

ԺԷ. Գորտերը կըձանձրանան անանկ մնալ առանց Թագաւորէ . օր մը միաձայն կըգոռան , Թէ մե՛զ Դի՛ոս , տուն մեզի Թագաւոր մը տուր , որ գիտնայ մեզ կառավարել ։ Իսկ Դի՛ոս խնդաց անոնց անխոհեմութեանը վրայ , և երկար ժամանակ չի կատարեց իրենց խընդիրքը . բայց հուսկ յետոյ ձանձրանալով անոնց աղաղակէն , որոշեց ակամայ կամքով կամքերնին կատարելու . և ձգեց իրենց լճին մէջ գերան մը . անանկ մեծ ձայն ելաւ գերանին իյնալուն , որ գորտերը ահերնուն զարհուրեցան , և ջրին տակը մտան , կիսամեռ կըդողային ։ Բայց քիչ մը ժամանակէն ետև իրենց մէջէն մէկ աւելի սրտոտ մը գլուխը ջրէն դուրս հանեց , և առջի բերա

նը չի համարձակելուն հեռուէն նայեցաւ նոր Թագաւորին. յետոյ այնչափ զօրացաւ որ մօտեցաւ գերանին, և ապա տեսնելով թէ անշարժ է՝ սկսաւ ցատկել վրան ելլալ իջնել: Աստ հետևեցաւ ուրիշ գորտ մը. անոր ալ ուրիշը հետևեցաւ. և այսպէս բոլոր գորտերն ելան Թագաւորին վրայ. բայց շատ տրտնջացին այս իրենց անշարժ իշխանին համար, մինչև բողոքեցին Դիոսին, որ ուրիշ Թագաւոր մը տայ, որ կարենայ շարժիլ. իսկ Դիոս խրկեց անոնց Թագաւոր արագիլը ճերմակը. որ քիչ ժամանակին մէջ կէսը հատցուց ուտելով: Իսկ գորտերը աղօթացին կանչեցին ահագին ձայնով, և խնդրեցին որ զիրենք այն բռնաւորէն ազատէ: Բայց Դիոս այլ չուզեց լսել՝ ըսելով թէ որովհետև դուք չուզեցիք քաշել ձեր բարի Թագաւորը, հիմա համբերեցէք չարագործին, և վախցէք որ աւելի գէշը չի գայ ձեզի:

Դիոս մեր Գրոց մէջ Աստուածը կըսուի, որ կառավարէ մարդիկը երկինքէն մեծ է՛ն կը խօսիմ. որպէս ադէքուէ որ կըլլայ, բոլորը Դիոս կապաւոյ կըսէին. անոր համար Գորտերն ալ ասոր կաղաչէին որ իրենց Թագաւոր տայ. սակայն երբոր Գորտերը Գիտէին կը զգան՝ հիներ կըսէին թէ իրենց Թագաւորէն գանգատ կընէին Դիոսին: Օրինակ է գանգատ ընողներուն, որ ինչ ըլլալ կը փնտռեն, և ետք ձանձրանալ չեն ըլլար. անոր համար գէշ կըլլայ իրենց բանը:

Երբ զինչ տա և տէր տայ ուժերք երկին,
Չէ պարտ տրտնջալ փոխել ըստ կամի.

Վանդի պատուհաս է տրտմնջողին,
Թողուլ զպարին հանդիպակ չարի։
Արդ մի՛ տրտնջար ըստ աւաղողին,
Երբ առաջնորդիս 'ի կամաց վերին.
Որ ինչ անհաճոյ 'ի քեն դատեսցի,
Ցօգուտ ու'ի խրատ այն քեզ պատրաստի։

ԱՂԱՒՆԻՔ ԵՒ ՈՒՐՈՒՐ

Համբերողին անձնայն փուշ
Լինի անխայթ բանջար անուշ։

Համբերօղ սիրտին ամէն մեղի,
Անոյշ կըլնէ նման մեղրի։

ԺԹ. Ուրուրը տասկալիք պատերազմ կընէր աղաւնիներուն հետ, որ իրեն դրացի էին։ Իսկ աղաւնիներն այս թշնամութենէն ազատ ըլլալու համար կարծեցին թէ ուրիշ ճար չէ կըրնայ ըլլալ. բայց եթէ թռչուններուն մէջէն թագաւոր մ' ընտրել, որ կարենայ իրենց թշնամուն դէմ դնել. բազէն շահինը եղաւ թագաւոր. որ մտաւ աղաւնոցին մէջ պատճառաւ հասկընալու անոնց միաբանութեան ուժը. և մէկէն ցատկեց աղաւնիներուն վրա բոլորը խողխեց։

Շատ անգամ մարդ անհամբերութեան մէջ նեղութէն ազատելու համար անանկ բան մը կըլնէ. որ ա-

ունիմ մեծ նեղութիւն մեր կենին. նաեւ թշնամեաց ձեռքէն ազատելու համար, ունիմ չարին ձեռքը համբուրելու:

Այս է վատ բնութիւն գժնեայ ուրուրին,
Ցանգ թշնամանել զիւր հեզ դրացին.
Որչափ քաղցրակեաց լինի աղաւնին,
Այնչափ գառնանայ գազան թշնամին:
Սակայն համբերել է գարման նորին,
Ոչ մատնիլ 'ի ձեռս հզօրագունին.
Զի սակաւ վնաս ուրուրն գործէ,
Քան արեանարբու սատակիչ բազէ:

ԳՈՂ ԵՒ ՇՈՒՆ

Եթէ լիցես հաւատարիմ,
Հաց նենգողաց քեզ ոչ հաճին:

Բարի ծառան հաւատարիմ
Չի խաբուէր արծաթն ոսկին:

Է. Գող մը կըջանար մէկ տուն մը մտնել գիշերվան մէջ, որ բաները թալլէ. բայց պահապան շունը թող չէր տար, անդադար կըհաչէր. իսկ գողը կտոր մը հաց ցըցուց շանը՝ կարծելով թէ անով կըպարտաւորէ զշունն որ լռէ: Բայց շունը մերժելով ըսաւ գողին. ով չարագործ ես կըխաբուէի, ու կառնէի քու տուածդ, թէ որ չգիտնայի թէ ինչ մտքով կուտաս ինծի: Գնա կորի

տալէ. վ՛զի բան մը չի կրնար առնել զիմ հաւատարմութիւնս։

Օրինակ է հաւատարիմ ծառաներուն, որ չունին համար հաւատարմութէ դէմ բան չեն ըներ իրենց տէրոջը. վասն զի կոչուած կը կարծեն մարդուս սէրը։

Արդ ո՛ւր են ծառայք պաշտպան մանկութին,
Խորհեմ մտերիմ շան հետեւեցին.
Տե՛ս զիա՛րդ մերժէ զկաշառ նենգողին,
Յանապատ պահել զիւր դանձ բնածին։
Քանի՛ անարգանք նենգող ծառայի,
Երբ քան զօրինակն վատթար գտանի.
Անբանն 'ի սէր տեառն ինքնադրաւ մրցի,
Բանականն անփոյթ խորդայ 'ի մահճի։

ԻԳ ԽՈԶ ԵՒ ԳԱՅԼ

Խորհուրդ և կամք նենգաւորին,
Ի չար առնել մերձաւորին։

Չարն երբ ցեղի խորհուրդ կուտայ,
Վախճէր գլխուդ բան կըլլայ։

իա. Գայլը կը տեսնէ քած խոզ մը ծոցուոր և ծանրած, մօտենալով քովը քաղաքավարձանով մը կըսէ։ Մայրի՛կ թէ որ կամենաս՝ ես քեզի օգնութիւն կընեմ, որ ձագուկ-

ներդ ծնիս . եթէ կուզես ձագերուդ ալ հոգը ինծի յանձնէ որ պահեմ . գիտեսս որ իմ քովս շատ ապահով կըլլան ։ Պատասխան տըւաւ խոզը . կնքահայր՝ ես լաւ գիտեմ զայդ . բայց թէ որ դուն իմ եղած տեղէս ուզենայիր շատ հեռուն երթալ , ինծի կերեւնայ թէ ձագերս ալ մայրն ալ ասանկ խիստ ապահով կըլլային ։

Հարկ է միշտ հեռու փախչիլ անզգամ բարէն՝ զի չարութիւն սորվող մարդը ուղղութիւն չի կըրնար ընել . ինչ որ ընէ՝ իր շահուն համար կընէ , և անոյշ ընկերով բարեկամին փառքը կաւրէ ։

Զ՚ խարդ աձրագործն խորհի ըղձալից ,
Ո՛չ մերձաւորի այլ յատուկ անձին .
Մանկածու լինել տենչայ ընկերին ,
Զի մանկունքն ինքեան կերակուր լիցին ։
Գայլակերպ նենգօղք որչափ քեզ մերձին ,
Ջանա հեռանալ ՚ի ստուերէ նոցին .
Զի խորհուրդք նոցա ՚ի չարիս բերին ,
Թէ և բարեկամ քեզ երեւեսցին ։

ՈՐՍՈՐԴ ԵՒ ՇՈՒՆ

Ոչինչ յանցանք ծեր զինուորի,
Երբ բնական յուժոյ թափի։

Թէ շողոքորթ ժէր ծեր ծառան,
Յանցանքն իր չէ այլ ծերութէ։

ԻԲ. Որսորդ մը վազեց եղնիկին վրայ, և վը-
ռնար թէ իր ձայնովը, և թէ փողին որո-
տուքին ձայնովը սիրտ տալ շանը, որ ծերու-
թեան թօշնած անկար էր։ Իսկ շունն որ ա-
ւելի ուժէ ընկած էր, քան թէ քաջութէ.
ետքի ջանքն ըրաւ, ու անանկ արագութեամբ
վազեց, որ հասաւ եղնիկին, և խածա-
ւ զայն. բայց պակասութիւնը ակռաներուն ե-
ղաւ, որ չի կրցաւ բռնել արգելել։ Անա-
տենը որսորդը տեսաւ, թէ որսը ձեռքէն
ելաւ փախաւ, վազեց շանը վրան և սկսաւ
զարնել նախատել. թէ բանի մը պէտք չես։
Պատասխան տուաւ շունը, թէ ես որ առ-
ջինը չեմ, պատճառը ծերութիւնս է։ Այդ
ես կը խոստովանիմ որ հիմա զօրութիւն չու-
նիմ. բայց աներախտ, դուն ալ միտքդ բեր
զիմ քաջութիւններս որ կորիճութեան ատենս
ըրեր եմ։

Մեծ անիրաւութիւն է ծեր աշխատաւորներուն

երեւէ չգէեւ, ու չի կրնար աշխատելու համար նախատել. վասն զի անոնք ապենողներէն պարգեւ ըրեր են. անոնցմէ միայն բան ոսրկելու է, ու առջի ըրած աշխատանքնին մոռնալու չէ։

Քանի՞ վշտաբեր փորձառու ծերոյն,
Երբ թափեալ յուժոյ նախատի յայլոց.
Կամքն 'ի նա ամբողջ և միտքն է արթուն,
Իբրև անպիտան ծաղրի 'ի յեանց։
Արդ զի՞նչ վրիպանք զի՞նչ յանցանք նորուն,
Զի տայ և բառնայ երբ կամի բնութիւն.
Լաւ է զոր արար յառոյգ հասակի։
Այժմեան զօրութեն 'ի խելսն պահէ։

ՆԱՊԱՍՏԱԿՔ

Երկիւղ կասկած զգոյշ ընչին,
Ահեղ գործեն հանգոյն փղին։

Վախն ամէն բան ահեղ կ'ընէ,
Լեռն ու ջուրերն այն կը պահէ։

իզ. Անտառ մը սաստիկ շարժելով հովէն՝ սովորականէն աւելի ձայն կը հանէր. իսկ հոն եղած նապաստակները վախերնուն դող կելլէն. անանկ՝ որ մէկը անոնցմէ կըսէ. փախչինք ազատինք ահա կըլսեմ սոսկալի ձայն, և շներու ոռնալ։ Ուստի բոլորը մէկէն ամէն կողմէն շուտ մը սկսան փախչիլ։ Ասոնց առջին ելաւ ջրոտ տեղ մը, որ զի-

րենք արգիլեց փախչելու. մի՛ զի գորտերը դրաէն ջրին մէջ ցատկեցին. և այս ձայնով այնչափ աւելցաւ նապաստակներուն առաջնորդին վախը, մինչև չի կրցաւ առաջ վազել, և չի համարձակեցաւ աղ ետ դառնալ. ուստի անանկ պաշարվեցաւ մնաց, որ չէր գիտեր ի՛նչ ընէ: Բայց անոնց մէջէն մէկը սկսաւ մռմռալ այս վախուն վրա, որ զիրենք այնպէս սաստիկ դողցուցեր էր. և մէկալոնց ըսաւ թէ ահա կըփախչինք հովէն, ու գորտերուն վախէն. ամօթ մեզի: Այս խօսքովս նապաստակները սիրտ առին, դարձան իրենց անտառը:

Նապաստակին է թաւշան. որ սաստիկ վախկոտ ըլլալով օրինակ է անզէն մարդկանց, որ փուճ բանը մեծ բանի տեղ դնելով աշխարհք բանոտ կը հանեն:

Զի՛նչ բանական կիրք ևբրև երկիւղին,
Վի՛թխարի գործէ զառարկայս չնչին.
Զի՛նուոր ցուցանէ զոչխարս 'ի դաշտին,
Լերինք ծով անտառ այնու պահպանին:
Արդ մի՛ հետևիր վատ նապաստակին,
Որում անցնիւր գորտք որսորդ երևին.
Մի՛ յետս ընկրկիր 'ի տես ստուերին,
Զի միշտ երկնչիլ է պատիժ վատին:

ՈՒԼ ԵՒ ԳԱՅԼ

Չարն 'ի բարին կերպարանս,
Ցորսալ զանմեղն յիւր ծուղակի:

Չարը չարէ կը ցուանայ,
Որ զանմեղներն իրեն որսայ:

իք. Այծը կըփակէ իր ուլը կամ ձագը գոմին մէջ, և կերթայ դաշտը արծելու. իսկ գայլը կիմանայ, ու մայրը գացածէն պէս կըվազէ կուգայ գոմին դուռը կը զարնէ. ձայնը փոխելով այծու պէս կըսէ ուլին: Զաւակս երթալու ատենս մոռցայ քեզ սիրելու. շուտ ըրէ դուռը բաց որ իմ սէրս քեզի յայտնեմ. բաց դուռը սիրական մօրդ: Իսկ ուլը դռանը ծակէն նայելով ճանչցաւ, ու պատասխան տուաւ, թէ չեմ կրնար բանալ. իրաւ դուն այծու ձայն ունիս, բայց չարն այն է որ ես քու մօրմէնդ բոլորովին գայլ կըտեսնեմ:

Այս առակէս Թող սորվին ծնողք, որ իրենց զաւակը չար ընկերէ հետ չի թողուն, և իրենցմէ չի զատեն. իսկ զաւակներն ալ Թշնամեաց ձայնէն չի խաբուին, ու չարաչար կորսուին:

Տեսէ՞ր զօրինակ ոճրագործ չարին,
Խնդրէ միայնակ զծնունդ այծին.

Ցեղջերդէ զձայն երբ յուշկապարիկն ,
Խարդախել զանմեղն ծածկել յորկորին :
Մանկի՛կ խոհական մի՛ լսեր ձայնին ,
Մի՛ քեզ քաղցրացի՛ բան անզգամին .
Փախի՛ր ՚ի նմանէ զի գայլ է ներքին ,
Քոյ քաղցր ծնողաց հանգի՛ր ՚ի բազկին :

ՈՉԽԱՐ ԵՒ ՇՈՒՆ

Դ

Զրպարտողին մերձ գտանին ,
Կաշառակուրծ վկայք կրկին :

Չարին ձեռով լարէր կոգան ,
Որ չար գործքին օգնիւ ըլլան :

ԻՆ . Շունը դատաստան կըկանչէ զոչխարը մէկ քանի կենդանիներու առջին, որ իրեն հաց մը տալիք է սայ , և անիրաւութ̅ե կըհաստատէր , թէ փոխ՝ եմ տուեր : Իսկ ոչխարը դատաւորներուն ցըցուց հաստատեց , թէ շունը անիրաւութ̅ կը պահանջէր զայն . զի ինքը ամենևին անկէ բան մը չէր առած . բայց որչափ ջանաց հաստատել . կորսընցուց իր իրաւունքը . վասն զի շունը վըկայ բերաւ անգղը աղուէսն և ագռաւը . անոնանց որ անոնց վկայութ̅ այն կենդանին ոչխարը պարտաւորեցաւ հատուցանելու զայն , որ ոչ երբեք անկէ բան առած էր :

Անիրաւ մարդու հետ Գլուխ ընկերներ · դէպ է ուզածը փառ, եւ հետոյ ջախջախուիլուանկէ · որ ու-րիշ բան մ' ալ չի հանէ :

Վկայք անիրաւ անիրաւ դատին,
Մատչին 'ի հանդէս առ դատաւորին.
Որով զպատճառ Թիւրենալ արդարոյն,
Վճռեն հաստատեն բան զրպարտողին :
Վա՜յ որ ստութի փոխան ճշմարտին,
Դնեն և պնդեն լոյս ընդ խաւարին.
Խաւարն է այս մութ նոցա բաժին,
Ծնունդ ստութեան ժառանգ գեհենին :

ՕՁ ԵՒ ԵՐԿՐԱԳՈՐԾ

Տարապարտուց բարկացողի,
Ձեզ ապաշաւ կայ առաջին :

Ով որ քուած փէշ կըբարկանայ,
Ըրած բանէն շուտ կամըչնայ :

իզ· Երկրագործ մը կըբարկանայ օձիմը վրայ, որ իր տանը քով կը բնակէր, և այնչափ կը տաքնայ, որ կացինը ձեռքը վրան կը վազէ, որ սպաննէ : Բայց օձը կըփախչի մօտաւոր անտառին մէջ անանկ արագութեամբ, որ մարդը չի կրնար հասնիլ : Ժամանակէ մը ետև երկրագործը կըտեսնէ, որ կարկուտը բոլոր իր ցորենը ջարդուփշուր ըրեր է, կըհաս-կընայ թէ օձին իր ըրած չարութեանը պա-

տուժն է, որ ձեռ զայն փոթորիկը խորկեց երկ-րին վրայ ։ Ուստի այս պատիժս հանդարտե-ցընելու համար սկսաւ փնտռելու օձն, որ հետը հաշտուվի. և երբոր գտաւ՝ խօսք տը-ւաւ, թէ անկէ ետև ամենևին անորմէ վախ մը չունենայ, և աղաչեց որ դառնայ իր տու-ջի բունը ։ Բայց փուճ տեղը կաղաչէր, ու կըստիպէր զայն. վն զի օձն ամենևին մտիկ չըրաւ, և շուտ մը անկէ հեռանալով՝ կան-չեց, թէ մեծ սիրով կըդառնայի քու տունդ, թէ որ չգիտնայի, թէ դուն դեռ կացինդ պահեր ես, և թէ որ կարենայի մոռանալ թէ դուն ինչ մտքով օր մը զայն ինձի դէմ վերցուցիր ։

Բարկութիւն է իբր մէկ բոց մը, որ երևակայու-թեամբ փափկանալով կըլլայ բարկացողին սրտը, որ վրէժխնդիր ըլլայ. ուստի դիմոց կըբոցոնէ, և բոլորովին կայլայլի ըրածը չնայէ. ասոր հա-մար Պղատոն կըխրատէր որ բարկացող մարդը՝ հայելին նայի, բարկութիւնէ բան չըլլէ. որ ետքը չի զղջայ ինչպէս երկրագործին եղաւ ։

Ահա ապաժոյժ կերպ գազանային,
Որ զհուր բարկութեան վառէ 'ի սրտին.
Նեղէ զմերձաւորն այլ և զընտանին,
'Ի տանէ 'ի տուն վարէ զդըրացին ։
Արդ մի՛ հաւատար դու բարկասրտին,
Թէ և դառն անմեղ քեզ երևեսցի.
Եթէ մի անգամ վշտացուցար անտի,
Փախի՛ր 'ի նմանէ, շատ է փորձառութին ։

ԱՂՈՒԷՍ ԵՒ ԱՐԱԳԻԼ

Որչափ խաբօղն է խորամանկ,
Խորամանկին լինի կատակ։

Դուն որչափ որ խարդախ ըլլաս,
Քեզմէ ցածին ծաղր կըլլաս։

ԻՀ. Մէկ օր մը աղուէսը կըհրամցընէ զարագիլը թէ իմ տունս հրամմէ՛ կերակուր ուտելու. կըփափաքիմ որ քեզի լաւ հաւնիքըմ' ընեմ։ Արագիլը դէմ չի կեցաւ սիրով ընդունեց անոր պատիւն, ու խօսք դըրած ատենը գնաց։ Բայց պատիւը շատ քաղաքավար եղաւ և հարկիքը անքաղաքավար. վասն զի բոլոր կերակուրներուն որ առաջ բերաւ՝ կամ թէ չինած ջրի ապուր էին՝ տափակ ամանի մէջ լեցած. անանկ որ արագիլը սեղանին վրայ ուրիշ բան չի կրցաւ ընել, բայց եթէ ամանը քըցըցելով գրեթէ բան մը չէ կերաւ. հազիւ թէ կերակրին համն առաւ։ Իսկ աղուէսը բոլորը լափելով բան չի թողուց. ու կը խնդար արագիլին վրայ, որ իր բարկութիւնը բանելով չէր յայտներ. որովհետև աւելի նեղացած էր, քան թէ անօթի։ Այս ուրախութիւնը աղուէսին շատ չի քշեց. վասն զի այն օրը արագիլն ալ հրամցուց զաղուէսն, որ երթայ անոր տունը կերակուր ուտելու. և իրեն հանեց մէկ՝ աման մը երկան ու նեղ վիզով, և մէջը մանրած միս

լեցուն. Ինքը գիւղին կերպով երկան բարակ կտուցքը ամանին մէջ երկընցուց ըսկըսաւ ուտել հանդստաւ, և խնդալ խաբող աղուէսին վրայ անոր ըրածին դէմ. որ բոլոր հարկէքին մէջ ուրիշ բան չի կրցաւ ընել, միայն թէ ամանը լզեց։ Այս Թողուց հարկէքն, ու անօթի մնացած դարձաւ ամըչնալով գնաց։

Աղուէսը խորամանկ ըլլալով օրինակ է խաբեբայ մարդուն, որ միշտ կընայի ուրիշը խաբել. բայց [illegible] թէ ինչ որ ընէ, նոյն կըգտնէ։

Զիա՛րդ անվայել քաղաքավարականին
Խարդախել զընկերն ըստ խորամանկին.
Որպիսի պատրաստեա նիւթէ օտարի,
Նոյնին պատասխանք փոյթ խայտառակի։
Աղուէսն է բարք ոչ բանականի,
Խաբել և ծաղրել զընկեր բարեկամ.
Կեղծաւորելով իբրև սիրելի,
Զրկել և լափել զօտարին սեղան։

ԳԱՅԼ ԵՒ ԿԻՍԱՐՁԱՆ

Գեղեցկութեն բանականին,
Ո՛չ մարմնականն այլ է ներքին։

Ի՞նչ շահ եթէ դէմքն է աղուոր,
Գլուխն անխելք պարապ կլոր։

Լի՛ր. Օր մը գայլը կը մտնէ արձանի շինողին խանութը, և կը տեսնէ հոն մէկ կիսարձան մը շատ գեղեցիկ շինած. առջին երթալը կը զարմանայ անոր աղուորութեան վրայ. բայց երբոր կը տեսնէ ու կը հասկընայ, թէ քարէ շինած անզգայ գլուխ մ' է, և բան չիմանար, Ո՜հ ինչ գեղեցիկ գլուխ է. կըսէր, բայց մէջը ոչ խելք չունի։

Իմացողութիւն ըղեղովն կըլլայ, թէ որ ըղեղին բարակ երակները, և ոգիները լաւ ըլլան, խելացի կըլլայ։ Ասոր համար միշտ պէտք է մարդուս խելքին նայիլ, չէ թէ դրսի կերպարանքին։

Զի՞նչ գեղեցկութեն՝ անիմաստ գլխոյն,
Երբ զուրկ 'ի խելաց պանծայ գերագոյն.
Իմաստութիւնք միայն գեղով գլխաւութեան,
Հրճուելին գեղապանծ ըստ ներքին մարդոյն։
Քանի՞ք կան պարծին իբր անզգայ սատուն,
Այլ զուրկ յիմաստից են զերթ անասուն.

Արտաքուստ միայն գեղեցիկ վառուն,
Բայց անխել յաւէտ արժանընտանեկընոյն։

ԿԱՉԱՂԱԿ ԵՒ ՍԻՐԱՄԱՐԳ

Որ ոչ գիտէ զչափ անձին,
Նախատանօք չափ տան նմին ։

Նայէ՛ ըսլա սիրան խէյտոլ,
Չէս տըլուըրնաբ օտար դուրդոլ։

ԻԹ. Սիրամարգ մը փետուր փոխելու ատենը՝ իր փետուրները կը թափէ. իսկ կաչաղակը ատփաղանը զանոնք կը ժողվէ, ու վըրան կառնէ կը զարդարուի. և զինքը գեղեցկութի՛ շատ աւելի կը դնէ քան զսիրամարգը. մինչև հպարտութի՛ փքանալով կը թողու իր ընկերները, ու կուգայ սիրամարգներուն ընկեր կըլլայ։ Բայց այս հպարտութիւնը շուտ մը խայտառակ եղաւ. վասն զի սիրամարգները ճանչցան անոր կեղծաւորութիւնը, ու ասոր փետուրները վըայէն փեթթեցին, և շատ քըցըցելով վռընտեցին իրենց ընկերութենէն։ Իսկ կաչաղակը փեթթուած և ծեծը կերած՝ չէր կրնար մէկալ կաչաղակներէն ալ ցաւակցութեան արժանի ըլլալ, որովհետև զանոնք անարգեր էր առաջուց։

Առտուն ծրինալ է խառնաձայնին․ որ առոքիչին բանակը կըհրդարպանայ, և կըզարթի․ մեր կը-նայի որ դրսէն զարդարուած ըլլայ․ բայց ներսի ինչ եղածը շուտով կըճանչնան առոքիչները։

Ահա՛ անտառական պճնօղ հովանոցին,
Գծնի զարդարի զարդու օտարին,
Որով թեւկն ածէ համգոյն չքնաղին,
Գանձուալ զընկերօք անցեալ՛ի կարգին։
Այդ զի՞նչ շահ բերէ այն փառաւորին,
Օտարին է զարդ ո՛չ յատուկ անձին․
Երբ խուզանչեր զիւրն առանու՛ի բաց,
Մնայ խայտառակ մերժեալ յընկերաց։

ՃԱՆՃ ԵՒ ԿԱՌՈՒՔ

Ցիմնար ճանճիկն կարծէ զինքն ինչ,
Սակայն յինքեան է անն ոչինչ։

Գայի մարդին մեծ կըխօսին,
Կարծէն փառներն իրենց ըլլին։

Է․ Սատանալ մը երբեմն իր կառքը արշաւան կընտանէր մէկ աւազոտ տեղ մը, որ երկու գորգաւոր ձիեր կըքաշէին աշխատութեամբ․ Ճանճ մը կըհանդիպէ դէմն, և թռչելով կառքին կը-նստի կառաքին վրայ, ու միտքը կըդնէ թէ ինքը մինակ կըքաշքշընէ զայն․ հօ անուէք, կըսէր, որչափ փոշի կըհանեմ ահա։

Շատ մարդիկ կան որ յետադարձեան բան չեն գտնր, ու մեծ մեծ կըխօսին . և ուրիշին ըրած բանը իրենն ըրածի պէս կըդատապետեն ծանծաղին նման . ու-ռանիկներուն կըսեն , որ դժար մարդիկ մեծ երազ կըփետեանեն : Ա բըռնդադեր փեսաս հացաբր փղայ մը որ մեծ կըխօսէր՝ ըսաց . երանի թէ մօտէդ ան-ցած բաներըն ես ամենայն :

Ցե՛ս զանձինդ արգարս անպատեհ անկարգին ,
Պանծայ թէ իցէ կատարելոր մեկին .
Աչ ինչ հայելով յիւր անձն չնչին ,
Հոլովել կարծէ զանիւս աշխարհին :
Ա՛ռ քեզ 'ի խրատ զառակին իմաստ ,
Ծանիր զքեզ կշռեալ զինչ ես և ու՛ր կաս .
Մի համեմատեր զքեզ կարողաց ,
Զի մի՛ ծաղրեսցիս յաչս ամենողաց :

ՃԱՆՃ ԵՒ ՄՐՋԻՒՆ

Որ զինքն վեհ գնէ այլոց ,
Մերժի խոտի և 'ի փառացն :

Քեզ մի՛ դներ կարգը մեծին ,
Ծաղր կըլլաս մեծին քովըին :

լա . Ճանճը կըղձանար մեծութեն խրատունը ունենալ , որ իր ստամոքսանը մրջունէն շատ վեր գնէ . ուստի հպարտութեամբ կըսեր մըր-ջիւնին , թէ ես ասպանց պատմանաւ չեմ ու-զեր քեզի վեր ըլլալ : Մատեր ինչ վեճմո-

կը տրեմ ես. ո՞ր ստեղծուած ինծի պէս ազ-նուական է։ Ո՛չ երբէք կ՚աշխատիմ. ո՛ւր որ ուզեմ կը մտնեմ պալատներու մէջ ըլլայ՝ տաճարներու մէջ ըլլայ. և թէ ինչպիսի՞ կերակուրներով ես կը սնանիմ, տէրը գի-տէ. ի՛նչ սակուենքներու և գէմքերու վրայ կը հանգչիմ։ Իսկ դուն, ողորմելի, զատանք տեսնելով կրնա՞ս զքեզ ինծի նմանցըներ, դուն որ ծակի մը մէջ կը բնակիս, ուրիշ ապրուստ մը չունիս, բայց հողին թէ փըլթ-տած հատիկներով կապրիս. Եւ անալ ուրիշ կերպ չես կրնար ունենալ, բայց եթէ մեծ աշխատանքով և յոգնելով։ Պատասխան տը-ւաւ մրջիւնը. Ճշմարիտ է թէ դուն պա-լատներուն մէջ կը բնակիս. բայց ճանճրա-ցուցիչ ես ամէնուն աչքին։ Այն գեղեց-կուհիները՝ որոնցմէ իբր թէ անուշութիւն կը գողնաս, քեզ կը հալածեն և կանիծեն։ Ես կընդունիմ թէ դուն ամառը քան զիս լաւ կեանք կը վարես. բայց ձմեռն ի՞նչպէս կապրիս գիտե՞ս։ Երբոր ցրտէն հալածուած պատին մէջ խեղճ կը սատկիս անօթի ծա-րաւ, ես հողին տակը իմ կերակուրներովս կապրիմ. և այն դժուար եղանակին մէջ իմ աշխատանքիս պտուղը կը վայլեմ ու կուրա-խանամ։ Ուրեմն պապանձէ՛ ծո՛յլ, այլ զիս մի՛ անարգեր. թէ որ քու ապրելուդ կեր-պը ազնուական է, իմինս ալ առանց ծան-րութեն շատ ապահով է։

Անփորձ մեծատուններն իրենց հարստութեանը նայե-լով խոնարհները մարդու տեղ չեն դներ. սակայն

մարդոց ճշմարտութիւնը հոգւոյն կրա ընկալուլ շատ աղէտք չէ, որ ճշմարտանքէն շատ մեր է մարդկութիւն։

Ամպարիշտ պարծանք սնապարծ վառքին,
Գանձայ իբր ունակ բարեաց բոլորին.
Ծգնի վերադաս լինել ընկերին,
Եւ դատարկութիւն ուտէ զօտարին։
Գնամ առ մրջիւնն աստ 'ի գրին,
Ուսի՛ր անանձնել զպխտոյս անձին.
Մի՛ պերթ ճանճն անմիտ ստվամահ լինիր,
Մի՛ անմտութիւն զծոյլն երանիր։

ԿԱՊԻԿ ԵՒ ԱՂՈՒԵՍ

Թագաւորաց ոյժ զօրութիւն,
Արուեստ հանճար իմաստութիւն։

Խեղճն է իմաստ թէ որ չունիս,
Արծւոյ ընկաս ոչինչ ունիս։

ԼԷ. Օր մը կենդանիները ժողվեցան, որ իրենց մէջէն թագաւոր ընտրեն. կապիկը կըմարծէր որ ինքն ըլլայ թագաւոր. ուստի անոնց առջին մէկ զուարճանալի խաղ մ' ըրաւ, և անանկ թեթեւութիւն ցատկըռտեց խաղաց, որ իր ճարտարութիւնը բոլոր ժողովքին սիրտը շահեցին եւ վիճակն ալ իրեն եղաւ, թագաւոր կոչվեցաւ։ Սակայն աղուէսը չի քաշեց, որ խաբեբայ հնարքով արժանի եղաւ կապիկն այս մեծութեան. ուզեց որ-

դայթ մը լարել կապկին, և անոր ցըցուց մէկ փոս մը, որուն մէջ որոգայթ մը պատրաստեր էր, վրան ալ տերևներով գոցեր էր։ Տէ՛ր լսաւ՝ դուն գիտես որ անցած օրեր այս ծառին մէջ մէկ անպատմելի գանձ մը գտայ։ Արդ ինչպէս տէրութեդ լաւ գիտէ, օրէնքով ամէն գանձ թագաւորին կիյնի. դուն ես մեր թագաւորը. այս գանձին տէր որ ըլլաս ամենևին բան մը չի պակսիր քու կին մեծնալուն։ Ասանկ խօսքերով կապիկը խաբուեցաւ. ցատկեց փոսին մէջ. բայց չէ թէ միայն չի տեսաւ դայն՝ որ կը խնդրէր, այլ և աղուէսին որոգայթին մէջ բռնուեցաւ։ Իսկ աղուէսը ծիծաղելով կանչեց անոր. խենդ՜ յիմար ինչ խելքով միտքդ դրիր որ ուրիշները կառավարես, երբոր դուն ըզքեզ չգիտես կառավարել։

Օրինակ է անմիտ մարդկանց, որ թագաւորի պէս հանգստութեան ունին, ու գանձ գտնելու եղանակ կըլլան, և անոնց ծուլութիւն կորսնցընելէն ետև խեղճ խայտառակ կըլլան։

Իմաստութիւն է տիրող աշխարհաց,
Եւ ո՛չ արութիւն իշխանաց զօրաց.
Ուսի՛ր զիմաստից դատանել զգանձ,
Եւ մի՛ աղուէսուն թակարդին ի ցանց։
Ոչինչ շահ գործէ մեծութիւն փառաց,
Երբ անթառանկից չեն համձար իմաստ.
Զի իմաստնոց է նախ տիրել ինքեանց,
Ապա թագաւոր գոլ այլոց ազանց։

ԳՈՐՏ ԵՒ ԿՈՎ

Որչափ հազարան ուռնուլ ջանայ,
Պայթի հողմով մէջ մեծամաց :

Մեծ ըլլալու շատ մի ջանար,
Թէ չէ պարապ-ես ու չես մեծնար :

ԼԹ. Գորտը երբեմն կով մը տեսաւ, որ խոտ կուտէր ջրոտ տեղի մը, սկսաւ ուռենալ բոլոր ուժովը, և ուռելով կանչեց ձագերն, թէ որդեակ այս բանը չի կրնար ըլլալ, և չեմ կրնար քաշել, որ ես կովէն պզտիկ մը-նամ. լաւ նայէ՛ մէկմի կըլլար ես ինչպէս կը կարծեմ, ահա անոր պէսի հաստատութիւն մե-ծութիւն : Պատասխանեց ձագը, թէ դուն անոր չես կրնար հասնիր, համբերէ կեցիր : Ուրեմն ըսաւ ահա տե՛ս ի՞նչպէս կըլլամ : Անօգուտ ըսաւ. պարապ տեղը կաշխատիս: Նորէն գորտը մէկալ ուռելով կըսէր. ո՛հ հիմա անոր կը հասնիմ. կամ թէ... Անխելք գորտը այս խօսքը չի կրցաւ լմնցնելու. վասն զի ուռելով այնչափ մեծցաւ, որ մէջտեղէն ճաթե-ցաւ :

Ով որ իրմէ մեծին նայելով կուզէ նմանիլ ծոյլոէն, և մեծերուն նմանիլ՝ կարողին պէս ըլլա-լու ելլէ ով ամբողջ իրեն յարմար նմանիլ պէտք է տայ :

Քանի՛ այլանդակ, գիտունք ասացին,
Հոգի փքացեալ 'ի փոքրիկ մարմին.
Որ ջանայ լինել նման վիթխարին,
Ոչինչ խորհելով թէ գորտ է չնչին:
Այս դժնդակ կիրք ոգւոյ հպարտին,
Խորհի հանապազ մեծ լինել յանձին.
Արքայից պետաց նմանիլ տենչայ,
Սակայն պայթուցեալ նանրանայ ինքնին:

ՉՂՋԻԿԱՆ ԵՒ ԹՌՉՈՒՆՔ

Այր անհաւատ՝ զերթ չղջիկան,
Զուրկ 'ի լուսոյ կայ 'ի մթան:

Թէ չէս մեծիդ՝ հաւատարիմ,
Անարգ կըլլաս՝ ամէն աչքին:

ԼԴ. Թռչուններն ու չորքոտանիները իրա-րու հետ կռիւ ունենալով՝ պատերազմ բա-ցին, երբոր երկու դաս բաժնըվեցան, և սկսան ծեծկըռտիլ. չղջիկը կամ գիշերահա-ւը ինձէ գուշին անոնց կողմէն ելաւ, թշնա-միներուն կողմն անցաւ, որ թռչունները տը-կար մնան. վասն զի անոնց կորուստը կու-զէր: Բայց երբոր տեսաւ, թէ յաղթութիւնը թռչուններուն ըլլին, որ զանոնք թողուցեր էր, շատ զղջացաւ: Իսկ յաղթօղ թռչունները, և յաղթըված կենդանիները իրաւամք բար-կացան անոր անշահ անհաւատարմութեանը վրայ, ու հալածելով պատուիրեցին որ կէ-

նայը մէջ անոնց առջին չերևնայ ։ Այնէ ե-գաւ որ չղջիկը չի համարձակիր ցորեկին ե-րևնալու, գիշերը միայն կըթռչի ։

Խրատ Բոզ տանէն անհաւատարիմ ծառայէն, ու դիրենէ շանէն. վասն զի տանիները մէկուն փոխ հաւատարմութեան լուծին, և ամենէն նըխա-խափքին ։

Տեսա՞ր զօրինակ խաւարասիրաց,
Որ տեսան զլոյս գնան խարխափած.
Չի չեն արժանի անհաւատարիմք,
Վայելել'ի լոյս ընդ առաքինեաց ։
Արդ չքնաղ զաշխարհս զի՞նչ ինչ տապալեաց.
Անհաւատարիմ այր ընկերատեաց.
Որ տանեայ զիւր աղջ խառնի ընդ օտարաց,
Ցօտարաց մերժեալ մնայ խաւարած ։

ԱՂԱՒՆԻ ԵՒ ԲԱԶԷ

Որ արդարոյն չարիս խորհի,
Չարագոյնին ինքն հանդիպի ։

Երբ անմեղին դաւն լար կամիս,
Քեզմէ լարին ձեռքը կիյնիս ։

ԺԵ. Բազէն երկար ժամանակ աղաւնիին ետևէն ընկաւ, բայց չի կրցաւ բռնել. վեր-ջապէս խելքը դարձած եկաւ ընկաւ հա-ւորսին որոգայթին մէջ. իսկ հաւորսն բըռ-

Նածրին պէս պատրաստուեցաւ որ սպաննանէ ։ Բաղէն կըսէր անոր . ո՞վ անօրէնդ ես քեզի ի՞նչ գէշութիւն ըրած եմ, որ զիս մեռցընել կուզես ։ Պատասխան տուաւ հաւուրը . Թէ ի՞նչ գէշութիւն ըրեր էր քեզի այն աղաւնին, որ այնչափ ատենէն ընկեր . և անոնց որ կը հալածէիր . մեռնելու արժանի ես դուն ըսելով խեղդեց ։

Երբեմն Ած թոյլ կու տայ անզգամաց, որ անմեղը հալածեն . Բայց չէ թողուր անանց վրէժն ալ ետքը կը հանէ, որ անզգամները անզգամաբար կը կորսուին . Այս անմեղին համբերութիւնը կը պսակուի ։

Այս առակիցս է անզգամ չարին,
Փոքրի համառօտ ըմբռնէ անմեղին .
՚Ի կեղեքել զայն յանկարծ ձիրանին,
Ինքն կեղեքի ձեռամբ որսողին ։
Մի անիրաւէր երբ Թոյլ տայ երկինն,
Եւ մի՛ հանդուրժել քեզ լեցի չարին .
Քանզի չարըն յաւէտ չարաւ կորնչին,
Եւ անօրինօք անօրէնք պատժին ։

ԱՂՈՒԷՍ ԵՒ ԳԱՅԼ

Որ խորհրդատու փորձէ այլում,
Ինքն անձկանի չարեօք 'ի նոյն :

Ո՛վ որ մտածէ կորուստ եղբօր,
Իրեն գերեզման կը փորէ ան ալ :

Ը․Վ․ Գայլ մը բունին մէջ նստած իրեն կերակուրներովը կ'ապրէր, որ հոն ժողվեր պահեր էր: Իսկ աղուէսն իմացաւ, վազեց եկաւ անոր հետ անուշութիւն ընելու․ այս մտքով որ սատանութեամբ ձեռքէն կերակուրը յափշտակէ: Բայց գայլը շատ զգուշութիւն նայելուն համար, աղուէսը չի կրցաւ բան մը ձեռք ձգել: Մտմտաց որ այս չեղաւ նէ, ուրիշ ճամբայ մը գտնէ: Գնաց հովիւին տունը, և անոր իմացուց գայլին կեցած տեղն ու առաջն ընկաւ տարաւ հոն․ խորհուրդ տուաւ որ այն չար գազանը մեռցընէ․ վասն զի կ'ըսէր շատ անգամ քու լաւ ոչխարներդ կերեր է: Իսկ հովիւը հետևեցաւ աղուէսին խորհուրդին, ու գնաց հոն․ նախ զարկաւ գայլը մեռցուց, յետոյ աղուէսն ալ սպաննեց․ որ իր չարին համար ուրիշին մահուանիչ եղաւ :

Հովիւն արժանապէս պատժեց մատնիչը․
որ ուրիշը մատնելով կարծեց թէ ջնջուր քան զինք

տի ելնէ։ Ասանկ ալ օր մը ստրական ոխտէն ընկ-
մտրնուելներէն. որ ուրիշը մէկզմէկ յղելով մե-
ղաց պատճառ կըլլան։

Աղուխաւարոյ ննջասամիտ քնուն,
Տքնի խայդախնել զընկերին զատուն.
Խռովէ ձգէ զեղբայր ընդ եղբօր,
Ջի կերակրեցէ ՚ի նոցունց զիւր փոր։
Արդ մի՛ խարգախին լսեր ձայն քաղցրիկ.
Թէ և զերթ Թովմէչ սուլեցէ հեզիկ.
Քանզի նա միայն սակս իւր խորհի,
Մատնէ զմերձաւորն ՚ի սեր գոյզն օգտի։

ԳԱՅԼ ԵՒ ՈՉԽԱՐՔ

Թէ հաւատաս ոխակալին,
Փոյթ ՚ի ժանեաց ծախիս չարին։

Մէկ փոր կենէրեր լորէն յետոյը,
Քեզ կըյգէ մահին ճանկը։

ըէ. Շներն անասնոց լաւ պահպանութիւն կընէին ոչխարներուն բոլորակեն, որ գայլերը չէին համարձակեր մօտենալ անոնց. որոնք ուրիշ բան չէին մտածեր, բայց թէ ինչպէս կըլլայ որ ուտեն զանոնք։ Որովհետև առանց մեծ վտանգի չէին կրնար գայլերը յայտնի բռնութեամբ գլուխ ածնելյանը, պէտք եղաւ որ խորամանկութեամբ ընեն. ան՛ս թէ ինչ սատանութեան բանեցուցին։ Ոչխար-

ներուն առջին դրին որ հաշտութիւն ընեն ի-
րարու հետ. անոնք ալ ընդունեցան. և ամ-
մենուն ապահովութեան համար կամեցան որ
երկու կողմէն ալ պատանդ բռնէին տան ի-
րարու ։ Շները պատանդ գացին գայլերուն
գին. և գայլին լակոտներն ալ ոչխարներուն
գին գացին ։ Ոչխարները կարծեցին թէ ա-
սանկ խիստ ապահով եղան. բայց շատ դէշ
եղաւ իրենց բանը. վն զի քանի մը օրէն ե-
տև գայլերը լսեցին լակոտներուն աղաղա-
կը, որ իրենց մօրմէն զատուելնուն համար
կը ոռնային. այս բանն իրենց պատճառ ա-
ռին, ու խղդեցին շները քներնուն մէջ.
յետոյ վազեցին եկան ոչխարներուն վրան
ընկան պատճառելով, թէ ինչու համար դա-
շինքն աւրեցիք, ու մեր լակոտներուն նեղու-
թիւն տուիք ։ Եւ որովհետև շները չի կային
որ պաշտպանեն ոչխարները. թշնամիներուն ձեռ-
քը մատնըւեցան, որ դիւրութեամբ յափշտա-
կեցին զամէնքը ։

Օրինակ է սոսկ մարդկանց, որ թշնամուն խօսքին հաւատալով բարեկամներէն հեռու կեցե-նան, և իրենց պէտքը անոնց կուտան, ու շարա-շար կը մատնըւին անզգամներուն ձեռքը. սանկ-ներէն մէջս հեռուն փախչելու է, և ոչ թէ բա-րեկամութ ընել ։

Ահա բանութեան անգութ գազանին
Ճգնի կլանել զերամս ոչխարին.
Զխորդ քաղցրութեամբ դաշնակցի նոցին,
Մինչև որսասցէ զսիրտ անմեղին ։

Եւ զի՞ պիտոյ էր հաւատալ նոցին,
Կամ զի՞ ապահով հաշտիլ ընդ գայլին.
Քանզի թշնամին գայլ է մարդախանձ,
Դժնեայ քանասար գժրող անմեղաց:

ՓԱՅՏԱՀԱՏ ԵՒ ԱՆՏԱՌ

Զոր ինչ գործես կշռեա զվախճան,
Զունի ինչ շահ զեղջն անապան:

Ո՛չ տար լարին յաջողութիւնն,
Քեղի՛ նէնէ նախ լարութիւն:

ԼԸ. Մէկ փայտ կտրօղ մը աղաչեց անտառուին, որ իր փայտերէն անոր փայտ մը տայ կացինին կոթը շինելու համար. իսկ անտառը խիստ աղէկ ըսաց գլխուս վրայ. բայց յետոյ շատ զղջացաւ երբոր հասկըցաւ թէ այս ըրած բարերարութիւնը իրեն կործանմանը պատճառ պիտի ըլլայ: Որովհետեւ փայտ կտրօղը կացինին կոթն անցուցածին պէս սկսաւ անտառին ծառերը ջարդել. օր մը մէկը կտրեց օր մը մէկալը. եւ այսպէս բոլոր անտառը կործանեց:

Պէտք է միշտ զգոյշ կենալ չար եղած բաներէն, եւ չար մարդուն յետոյը զինք չի տալ, որ տան աւրէյուս եփնէ է, քանզի մարդուն ով որ օգնութ

ընկերակցութենէն հեռացաւ՝ իր փառքին ու պատ-
ճառ ըլլալուն :

Այսպէս անխոհեմք յիման անտարբեր
Նպատակին չարեաց զէն տան 'ի ձեռին.
Որով և ինքեանք ինքեանց կործանման,
Օտարաց համայն պատճառ լինին :
Սակայն իմաստունք դիտող վախճանին,
Զոր ինչ գործեսցեն կշռեն նախ խորհին.
Զգաստ գոլ ընդդէմ մտաստաբերին,
Զգեն զամենայն յօգուտ շահ անձին :

ԱՂՈՒԷՍ ԵՒ ԽԱՂՈՂ .

Յորժամ չունի վատն զբարին,
Անգոսնէ զայն իբրև չնչին :

Ցած մարդն երբ լաւ բան սորված չէ,
Անոր բարին վար կը զարնէ :

ՃԹ. Աղուէս մը երբոր անօթի կըմնայր, կը տեսնէ խաղողին կուժերը կախուած բարձր փայտերու վրայ, և բոլորը հասած. խորագէտը կըջանայ որ ձեռք ձգէ. բայց որչափ որ վեր կը ցատկէ, չի կրնար հասնիլ որ ուտէ : Ուստի տեսաւ թէ իր կարողութիւնը չպիտի հասնի, եա դառնալով գլուխը վերցուց ըսաց. Այս խաղողները եա ուզենայի՝ հեշտ կրնայի առնել ուտել. բայց ինծի անամիկ կանանչ չի հասած կերևնան, որ չեն

արժէր այնչափ աշխատանք ինծի տալով զա-
նոնք փրցընեմ։

Նախանձոտ մարդը երբոր բան մը կը փնտռէ, ու չի կրնար առնել, կըսկըսի վար զարնելու այն բանը. բայց թէ որ ձեռք ձգէր, ինչպէս կուրախանար։ Այսպէս են չիմար տամիկները, որոնց խելքը կարճ ըլլալով գիտութեան չի հասնիր. անոր համար գիտութիւնը և գիտուն մարդը վար կըզարնեն։

Իմաստ առակիս խօսէ զնոսին,
  Որոց այլ է միտք այլ ինչ 'ի լեզուին.
  Տենչան 'ի սրտէ ունել զբարին,
  Ապա զայն մերժեն երբ յուսահատին։
Մի՛ ատեր զլաւն հանգոյն խարդախին,
  Ցորժամ չէ 'ի քեզ այլ կայ յօտարին.
  Նախանձու է բերք այս ախտ մոլեգին,
  Երբ չունի մերժէ զամէն ցանկալին։

ԳԱՅԼ ԵՒ ՇՈՒՆ

Ազատութիւնն է ձիրք բնութեան,
  Նա և անբանք այնու պանծան։

Ազատութիւնն է գանձ ընական,
  Մի՛ շուտ ծախեր զայն դու աժան։

Խ. Գայլը խօսակցութիւն կընէր շան մը
հետ աղէկ ապրելու վրայ, և անոր երանի

կուտար գիրութենը համար։ Բարեկամ, կը-
սէր, քեզ ասանկ գէր և գեղեցիկ տեսնելով
պէտք է ըսել թէ քու կին վիճակն իմինէն
շատ վեր է։ Պատասխան տըւաւ շունը, թէ
ամենևին մի՛ տարակուսիր ատոր վրան։ Ի-
րաւունք, սիրելի՛ երբոր միտքս կըբերեմ, թէ
դուն ուրիշ տեղ չես պտուկիր, բայց միայն
անտառի մէջ միշտ բաց տեղեր, և շատ ան-
գամ ալ անօթի կըմեռնիս, ամէն աշխարհք
քեզ կատեն կըվռընտեն ու կըհալածեն,
իմ միտքս չի՛ հասնիր թէ դուն ի՞նչպէս կը
տանիս ասանկ խեղճ կեանքը։ Իսկ ես ամե-
նէն լաւ կերպով կապրիմ. աղէկ կըպառ-
կիմ. աղէկ կուտեմ պարոնի մը տուն, որ
զիս շատ անգամ կըսիրէ։ Ուրեմն դուն
մտմըտամ իրաւունք չունի՞մ որ զիս ամենէն
երջանիկ համարիմ։ Սակայն հաւատամ ին-
ծի, և որոշէ որ հիմա իմ հետս գաս, ես
ինչոր ընեմ՝ դուն ալ ըրէ գացած տեղս. ա-
հա առանց դժուարութեն իմ երջանկութեա
մասնակից կըլլաս։ Պատասխանեց գայլը թէ
ի՞նչ բան պէտք է ընել. գըրեթէ ոչինչ, ըսաւ,
շունը. միայն թէ աւազակութիւն մէկ դի
դի՛ր, և ատեն ատեն շողոքորթէ զմեր տէ-
րը. այլ ուրիշ բան չի մնար քեզի ընելու,
բայց եթէ ուտել խմել հանգիստ քնանալ։
Կրկնեց գայլը բոլորովին զըւարճանալով,
բարեկամ, թէ որ ուրիշ բան չի կայ, միայն
այս բաներով երջանիկ կրնամ ըլլալ, բոլորը
կընեմ քեզմէ լաւ։ Զայս ըսաց ու գնաց
շանը ետևէն. ճամբան երթալու ատենը գայ-
լը տեսաւ որ շանը վզին մազերը թափած
էին, հարցուց պատճառը։ Պատասխանեց

շունը թէ այդ տեսածդ կըպատճառի օդա-
կէն Եառամայէն, որ զիս կըկապէ ։ Կըկապէ՞
ըսաւ գայլը․ ուրեմն դուն ուր որ ուզես
չես կրնար երթալ ։ Միշտ չէ՛ ըսաց, բայց
գրեթէ ամմէն ուզածս ունիմ․ Շէ՛ն մնաս
ըսաւ գայլը՝ ճամբայէն ետ դառնալով․ ես
քու վիճակիդ այլ չեմ ցանկար․ զի իմ ա-
խորժակս այն է, որ քիչ բարիք ունենամ
ու շատ ազատութի ։ Զայս ըսելով առաւ
քալեց ։

Բնական է, որ ամէն կենդանի կուզէ ազատ
ըլլալ․ բայց բուն մարդու ազատութիւնն է ինքն
իր բնութենը հրամեն, ու անկարգ բան չընեն, և
միշտ ազատ ըլլալ'ն կրեյ ։

Ուսի՛ր յառաջկէս չթողուլ հեշտին,
Զի՛ս ազատութեն օժիտ բնածին․
Ազատ կալ յախտէ ազատ 'ի կրից,
Բուն ազատութիւն է բանականին ։
Մի՛ փոխանակեր զայն ընդ ուտելին․
Մի՛ ընդ հեշտութեան դներ 'ի կշռին․
Զի զազատութիւնն 'ի կշիռ եդին,
Համայն գանձք երկրի ոչինչ կշռեցին ։

ԱՆԴԱՄՔ ԵՒ ՈՐՈՎԱՅՆ

Որ անհնազանդ է իւր պետին,
Վաղ նանրանայ ջնջի ինքնին ։

Շատ մեծ վնաս կընէ իրէն,
Որ կը քաշէ գլուխ մեծէն ։

իմն . Օր մը մարմնին անդամները բարկանալով որովայնին կամ փորին դէմ ըսին . մենք միշտ աշխատանքով կըտանջըվինք որո՞ւն համար, բայց եթէ մէկ որկրամոլի մը համար, որ ամենևին մեր աշխատանքին ձեռք չի զարներ, ու բոլոր պտուղը մինակ ինքը կուտէ ։ Ասկէ ետև Թող գտնէ իր ապրուստըն ու տալը՝ կըսէր ձեռքը . ես այլ բան մը չպիտի տամ անոր ։ Ոտքը կըսէր՝ Թէ ես այն ծուլին համար ո՞րչափ քալեր աշխատեր եմ, և անանկ յոգնած եմ որ այլ պիտի հանգչիմ ։ Սրունքն ալ մէկալ դիէն կըսէր . ինչ կուզէ ըլլայ, ես այլ չեմ կրնար տեղէս շարժիլ ։ Եւ այսպէս որովայնը երեսէ ընկած շուտմը սկսաւ տկարանալ . երբոր որովայնը ուժը կորսընցուց, ամէն անդամներն ալ իրենց ուժը կորսընցուցին . և մէկէն հալեցան մաշեցան, ու ետքը անոր հետ ոչնչացան ։

Այս գեղեցիկ առակէս պէտք է սորվինք հնազանդ ըլլալ մեծերնուս, որոնք միշտ մեր օգուտը

նը մօտծէն․ որ լաւ կառավարէին։ Ով որ մեծին հնազանդ չուզեր ըլլալ՝ չափով կը նեղուի։

Քանի՞ գեղեցիկ խրատ պիտանի,
Խրատէ զմարդ պատկառ կալ պետին.
Ցորչափ է հնազանդ իւրում իշխանին,
Պայծառ 'ի լաւ անդր կայ անդրդուելի։
Չքնաղ զարդ հոգւոյ է բանականի,
Այս ունակութիւն ըստ որում ասի.
Քանզի այր հնազանդ պատմէ զյաղթութիւն,
Հնազանդեալ իւր տ̃ն յաղթէ աշխարհի։

ԿԱՊԻԿ ԵՒ ԱՂՈՒԷՍ

Ցիմարութիւն է ցանկալ յինչ,
Որ կարեւոր ինքեան չէ ինչ։

Ան բանն որ տեղ չէ պիտոյական,
Ինչո՞ւ խնդրես որ տեղն փան։

խբ․ Կապիկը կաղաչէր աղուէսին, որ իր պոչէն քիչ մը տայ անոր։ Ա՛ղբարիկ, կըսէր․ ահա տես ես ամենեւին չունիմ ու դուն շատ ունիս։ Իսկ աղուէսը այս անոյշ խօսակցութեան վրայ սկսաւ բոլոր ուժովը ծիծաղել, և ապա պատասխան տուաւ, թէ որ ունենայի հարիւր անգամ աւելի շատ պոչ, առաւել կախորժէի գետինն աւլել, քան թէ մէկ կապիկի մը ետին գոցել։

Օրինակ է անոնց, որ իրենց պէտք չեղած բա-
նին ետեւէն կ'իյնին. եւ երբեմն ամէնները կու-
զեն իմանալ անանկ խորթին բաներ, որ ոչ խելքեր-
նին կըհասնի, եւ ոչ իրենց պէտք է:

Խրատէ՛ առակս ոչ ցանկալ այլում,
Ըստանալ այնու զոր ինչ եւ բնութիւն.
Զի ի իւրաքանչիւր կատարելութիւն,
Իւրաքանչիւրում չէ յարմարագոյն:
Կապիկն է այս բարք եւ ոչ իմաստնոյն,
Ցանկալ զոր ետես օտարին բարւոյն.
Որով եւ լսէ զոր ինչ ոչ կարծէ,
Զանարգանաց բան ծաղրող յընկերէ:

ՁԻ ԵՒ ԻՇ

Թշնամանօղն ամբարտաւան,
Դժբաղդութեանց լինի արժան:

Որչափ գոռոզն հպարտանայ,
Այնչափ անարգ ոչինչ կըլլայ:

Խտ. Ձի մը գլուխը վեր բռնած հանդէ-
սով կերթար, եւ վրան ծանրագին զարդա-
րանքներ լեցուն ըլլալով հպարտ կը շար-
ժէր: Մէկ էշ մը անզգուշութեամբ անկէ անց-
նելով ձիուն ճամբան կարգիլէ: Իսկ ձին
գոռոզութեամբ կըսէր անոր. ով անպիտան՝
գմնն մնացիր իմ ճամբաս արգիլող. կորսը-
ւէ՛ ասկէ, չէնէ վրադ կոխելով կանցնիմ:

Սաստիկ վախնալուն էշը շուտամը մէկ դի կը փախչի։ Այն ատենը ձին ուզեց իր զօրութիւնը յայտնել թէ որչափ վեր է էշէն. սկսաւ բոլոր ուժովը վազել. բայց վազելուն ա-նանկ չարաչար աշխատեցաւ, որ մարմինը վտանգեցաւ, և անկէ ետև անշահ անպիտան եղաւ. մինչև տէրը տեսաւ որ բանի չի գար հանեց երկրագործի մը ծախեց։ Երբոր էշը դարձաւ ջաղացքը, քանի մը օրէն ետև տե-սաւ ձին որ արօրը կը քաշէր գետինը փո-րելու համար, շատ զարմացաւ. և անոր ը-րած անարգանքին դէմ կրնար ինքն ալ ը-նել. բայց մարդավարութեան համար ամե-նևին բան չըսաց, ու մեծապէս ցաւակից եղաւ անոր։

Օր մը Եղբօրն հարցուցին, թէ Ած ինչ կ'ընէ. անալ պատասխան տըւաւ, թէ խոնարհ-ները կը բարձրացընէ, և հպարտները կը խոնարհե-ցընէ։ Ահա այս կը ցցընէ առակիս միտքը։

Խրատ պիտանի 'ի բանէս ուսի՛ր,
Մի՛ հպարտանար այլ յաւէտ երկի՛ր.
Բաղձելին է այն ձիրք այնպիս զաղփաղփուն,
Որ տայ և բառնայ ըստ շարժիլ հողմոյն։
Զիա՛րդ նայելով ձեմէր չքնաղ ձին,
Քանի՞ անարգանս ձգէր օտարին.
Ո՛վ ահա ձգէ զարօր 'ի գետին,
Արժանի եղեալ թշուառ վիճակին։

ԵՂՆ ՆԿԱՏԻ ԶԻՆՔՆ 'Ի ՋՐԻ

Միշտ սխալ է ինքնահաւանն,
Եւ ոչ գիտէ զինչ կայ յինքեան։

Շատ մի հաւնիր ունեցածիդ,
Որ շատ ձեռ չի գայ անձիդ։

Խտ. Եղնիկ մը մաքուր ջրին մէջ իրեն նայելով անանկ կը հաւնի եղջիւրներուն բարձրութեանը, մինչև կըսկըսի սրունքները պաճառնելը անարգել. որ խիստ բարակ ըլլալով իրեն անհամեմատ կերևնային։ Երբոր սիրտը կոտրած ասանկ կընայէր ոտքերուն վրան, ահա որսորդ մը հասաւ հոն, և շները ձգեց անոր ետևէն։ Եղնիկը մէկէն սկսաւ վազել դէպ 'ի անտառը, ուր տեղ սովոր էր փախչելու. և երբոր թեթև սրունքներուն վազելովը պիտի ազատէր, եղջիւրները խառնըվեցան խիտ ուռի ծառերուն մէջ, անանկ որ արգիլվեցաւ մնաց։ Ան ատենը եղնիկը տեսաւ որ շները զինքը պիտի բռնեն, միտքը փոխեց ու սկսաւ անարգած սրունքները գովել, և գոված եղջիւրներն անարգել։

Ինքնահաւան հպարտ մարդը իրեն ձեռ բերելու բանին վրա կուրախանայ, ու իր գեղեցկութիւնը կը գովէ. բայց շատ մարդու իրոփեան պատ-

ճառ եղեր է գեղեցկութիւնը. Ես ալ մարդուն գեղեցկութիւնն է խելքը, իսկ կնկան գեղեցկութիւն է պարկեշտութիւնը:

Խրատ է այս գործ անխմաստ եղին,
 Կ'անացի բնութ͞ե յիմար պճնողին.
 Որ թողեալ զիւր գործ կայ առ հայելին,
 Պշնու 'նդ գեղ մարմնոյն ոչ ը̃ գեղ բանին:
Սակայն մի միայն չքնաղ զարդ ներքին,
 Ի գեղեցկութիւն բանեղէն մասին.
 Քանզի գեղ մարմնոյ առիթ կործանման,
 Բազմիցս լինի ինքնահաւանին:

ՕՁ ԵՒ ԽԱՐՏՈՑ

Որ հարկանի ընդ հզօրին,
 'Ի հզօրէն փշրի հեշտին:

Շատ մի դողէր ամէն բանին,
 Կը հանդիպի մէկ ուժովին:

խն. Մէկ օձ մը կը մտնէ դարբնին խա-նութը, և հոն կը գտնէ խարտոցը փէօրէնին ու կըսկսի կրծել: Խե՛ղճ յիմար, կըսէ խար-տոցը, գիտես ինչ է կրծածդ. չես տես-ներ որ ակռաներդ զիս չեն կրնար մաշել. ընդհակառակ ես երկաթը կը մաշեմ, դուն զիս ինչպես պիտի մաշես:

Օձէն անասունին փառքը թոյն ըլլալով ալ ըլլայ կարգէ թուանաւորէլ. որ օրէնով է լար ընդրու բան

Բառողաց, որոնք շամբինքը խածնելով վար կը զարնէին. Բայց օր մը մէկ զօրաւորին հանդիպելով անոր ձեռա փալըս փեղը ըրէնք կը ձգային։

Քանի՞ յանդգնութիւնք յար նման սմին,
Հարեալ ընդ վիմաց փշրեալ նկուտին.
Եւ զայն ոչ գիտեն, թէ ինքեանք մաշին,
Նոքա անձնասպան կան յուրեանց կայծին։
Արդ մի՛ յիմարեալ կազեր ընդ վեհին,
Կամ 'ի վէգ մտաչիր ընդ առաքինին.
Յաւի՛ր յառաջեա գիտել չափ անձին,
Զի մի՛ հասցես յերեսաց նոցին։

ԱՔԻՍ ԵՒ ԱՂՈՒԷՍ

Ո՛ր քան զչափն ուտէ մոլի,
Սովալլլուկ անդէն տուժի։

Ագահութեամբ ով որ մոլէ,
Ծոմ պահելով պէտք է ելնէ։

Խղ. Մէկ վատուժ աղուէս մը խիստ նեղ ծակէ մը կը մտնէ ցորենին ամբարին մէջն, ուհան մեծ ուրախութեամբ շատ օր կը նստի կուտէ. և այնչափ կախորժէ որ քիչ ատենին մէջ շատ կը գիրնայ. անանկ որ երբոր ուզեց եղաւ անկէ դուրս ելլել, անկարելի եղաւ որ ծակէն կարենայ անցնիլ, ուր առջէն որ ներս էր մտեր. մինչև մեծ տարակուսանքի մէջ ընկաւ չգիտէր թէ ի՞նչ ընէ։

Երբոր տասանկ մէկ դիէն մէկալ դին կը վազէր, չէր գիտեր ինչ պիտի պատահի իրեն, աքիս նէւէնծին մը դիմացը կելլէ, ու այս խորհուրդը կուտայ: Բարեկամ կըսէր խնդալով մինչեւ որ ծոմ պահելով առաջուան պէս վատուժ չըլլաս ինչպէս հոս մտեր էիր, անկարելի է որ կարենաս ազատիլ աստէ. չէ նէ պարապ տեղը կաշխատիս:

Ինչ մոլութիւն որ ունի մարդ, պէտք է անոր պատիժը քաշէ որ ազատի. Եթէ հպարտ է, պէտք է խոնարհութիւն ընէ. Եթէ որկրամոլ է, պէտք է պաս պահէ ծոմ բռնէ, որ մարմինն ալ ազատի, հոգին ալ:

Տե՛ս զարդարացի պատիժ անյագին,
Անյագ խածողի կերակրով արտին:
Ոչ գիտէ թէ այն կորուստ է անձին,
Եթէ ոչ պահօք հիւծեսցի մարմին:
Ահա՛ իրաւունք օրինաց վերին,
Որով ոք գործէ նովին իսկ պատժին.
Եթէ կերակրօք, եթէ հեշտութեամբ,
Եւ եթէ բերմամբ զանազան ախտին:

ՍԻՐԱՄԱՐԳ ԵՒ ՍՈԽԱԿ

Սիրա նախանձոտ փառասէրին,
Այրի մաշի 'նդ փառս ընկերին։

Նախանձոտին լերդ հոգին
Երբ կը տեսնէ այլոց բարին։

խէ. Սիրամարգը կը տրտունջար Հերայէն, թէ ինչո՞ւ համար ա̃ծներն ինծի տուէն կոշտ և անհամ ձայն մը, իսկ սոխակին տուէն անոյշ ձայն։ Այս քաղցր ձայնը կըսէր՝ այն պզտիկ թռչունէն առաւել ես արժանի էի ունենալ. ես որ աւելի գեղեցիկ եմ ամէն թռչուններէն, որ օդին մէջ կը թռչին։ Պատասխան տուաւ դիցուհին, թէ ճշմարիտ է ըսածդ, որ դուն ամէն թռչուններէն գեղեցիկ ես և ամենէն գէշ դուն կերգես. բայց սոխակը՝ որուն ձայնին կը նախանձիս դուն անիրաւութիւն, ամենևին չի ցանկար քու փետուրներուդ. վ̃ զի գիտէ թէ ա̃ծ իր պարգևը ամենուն ալ բաժներ է, և ինչ որ կամեցեր է տալ՝ ամէնքը պարտական են որ իրենց ունեցածին վրայ գոհ ըլլան։ Ուրեմն լուէ՛, այլ մի՛ տրտունջար. վախցի՛ր որ քու հպարտութեանդ պատժելու համար չըլլայ թէ փետուրներդ ալ առնէ, որով այսչափ ամբարտաւան ես եղեր։

Կապապաշտները կըսէին, թէ Հերայ Դիոսին կինը ըլլալով բոլոր լուծներուն մայրն էր. և աշխարհքիս աղէկութեան առատութեան կառավար։ Այս պատճառաւ սիրամարգն ալ անոր կըսրբընծայ. որ օրինակ է փքացող կնկան, որ ուրիշին վրա ինչ որ տեսնէ կուզէ ունենալ։

Ահա՛ տարացոյց տժգոհ հպարտին,
Յանդգնի ընդդէմ կալ ճակատագրին,
Զամենայն զփառս զոր գիտէ յայլում,
Տրտնջայ թէ հի՞մ ինքեան ոչ ետուն։
Արդ զի՞ փառասէրք ինքնատանջ ծփին,
Անիրաւ զրկանս ի՛ տարար նոցին.
Հաշին և մաշին ոչ զի զուրկ ինքեանք,
Այլ թէ զի՞ օտարք հրճուին 'ի բարին։

ՓԱՅՏԱՀԱՏ ԵՒ ԳԱՅԼ

Ոչինչ ապշեն խօսք ցնդական,
Երբ ընդ գործոց ոչ միանան։

Ի՞նչ շահ լեզուով բարի ուզել,
Գործքով անոր ներհակն ընել։

խմ. Որսորդները գայլի մը ետևէ կիյնէին որ բռնեն. իսկ գայլը կը փախչի փայտ կտրողի մը խուց կը պահուի, և կաղաչէ որ զինքը մարդու չի յայտնէ. ան ալ խօսք կուտայ անոր։ Նայիս մէկէն որսորդները հոն հասան ու հարցուցին փայտ կտրողին, թէ ո՞ւր է գայլը՝ քու խուցդ չի պահուի՞։ Մէկ հա-

մարձակ ձանով մը ուրացաւ փայտ կտրողը, թէ հոս չէ՛. բայց միանգամայն մատովն ալ ցըցուց գայլին պահուած տեղը ։ Վազեցին հոն որսորդները, բայց զինքը հոն չի գտան միայն տեղը տեսան. վն զի գայլը երբ տեսաւ թէ փայտ կտրողին մատնութիւնը յայտնըվեցաւ, շուտով փախաւ գնաց իր տեղը ։ Քանի մը օրէն ետև փայտ կտրողը հանդիպեցաւ գայլին, ու երեսը զարկաւ, թէ իրեն ըրած բարերարութենը համար ինչպէս շնորհակալութիւն մը չըրած փախեր գացեր էր խուցէն ։ Պատասխանեց գայլը, թէ ես ամենեւին չէի պակսեր այս պարտքէս, պիտի ընէի քեզի շատ շնորհակալութիւն, թէ որ չի տեսնէի, թէ խօսքդ շատ լաւ էր, բայց գործքդ մեծ չար ։

Օրինակ է մեր ժամանակի մարդկանց, որ խօսք կուտան ու խօսքերնին չեն պահեր. և շատ խաբեբաներ ալ կան, որ խօսքերնին ուրիշ է, գործքերնին ուրիշ. այնպիսի մարդուն ինչպէս մարդուս խօսքն ըլլալով՝ շատ մեծ ամօթ է մարդուս որէս խօսք տալ, և անհաստատունի որէս խօսքին վրա չի կենալ։

Իրաւամբք մերժի մատնիչ խաբեբայն,
Ցորժամ խոստմանց ոչ պահէ զիւր բան.
Զի լաւ բանք ոչինչ գիտեն վճարել,
Գործով պսակի ամենայն վախճան ։
Խոստանալ պահել մարդոյ է պատկան,
Ոչ ասել մերժել զիւր խօսս իբր անբան.
Քանզի անասունք զեղջերաց կապին,
Լեզուաւ և բանիւ մարդ կապի միայն ։

ՍԱՐԵԱԿ ԵՒ ՀԱՒՈՐՍ

Հետաքրքիրն ընդ այլոց բան,
Զիւր կործանումն ածէ ինքեան ։

Շատ մի՛ փնտրեր ուրիշին բան,
Թէ չէ կիյնիս մահին բերան ։

խլթ․ Սարեակ մը կը տեսնէ հաւորսը, որ իր որոգայթը կը լարէր․ հոդ ի՞նչ կընես ըսաց ։ Պատասխանեց հաւորսը, թէ քաղաք կը շինեմ ։ Այս խօսքովս հետաքրքրութիւն մը ունեցաւ սարեակն ու եկաւ որոգայթին քով, և անմանկ մօտեցաւ որ տեսնէ․ բայց մէկէն բռնուեցաւ որոգայթին մէջ ։ Ան ատենը կանչեց հաւորսին․ ո՜վ անօրէն, եթէ միշտ ասանկ քաղաքներ որ շինես՝ դուն ամենևին քաղաքացի չպիտի տեսնես անոնց մէջ ։

Շատերը կան որ իրենց բանը գործը կը ձգեն՝ ուրիշին բանին ետևէ կիյնին, և մէկին ըրածը մէկալին առջին դատելով սատանային յետոյ կիյնին սևագոյն սարեակին պէս․ որ է *խարաթաւուխ* ։ Եւկլիդեսին հարցուցին թէ Ած ինչ բանով կը զբաղձանայ․ ան ալ ըսաւ թէ զայս միայն գիտեմ որ հպարտները մարդը կատէ ու չի ուզեր ։

Մի՛ հետաքններ զարարս օտարին ,
Խրատէ առակս կալ զգոյշ յանձին .
Քանզի որոգայթ լարեալ խարդախին ,
Կախարդէ զքեզ ձգել 'ի նմին ։
Զի՞նչ օգուտ գործէ գիտել զընկերին ,
Երբ ոչինչ գիտէ զի՛նչ ունի յանձին .
Լաւ է հետամուտ ելանել ինքեան ,
Քննել զիւր գնացս ուղղել զնոսին ։

ԱՌԻՒԾ ԷՇ ԵՒ ԱՔԱՂԱՂ

Որ խիղախէ ընդդէմ վեհին ,
Անդէն լինի կոխան ոտին ։

Մի՛ դէմ ելլեր քեզմէ մեծին ,
Կոխան կըլլաս ներքեւ ոտքին ։

Ծ . Առիւծը կը վախնայ կըսեն աքաղաղին ձայնէն . օր մը աքաղաղը երբոր սկսաւ երգել առիւծ մը կանցնէր անկէ , առիւծը ձայնը լսածին պէս անանկ սաստիկ վախցաւ , որ շուտմը սկսաւ փախչիլ . ան ատենը մէկ էշ մը տեսաւ ասոր փախչիլը , որ իր ճամբան կերթար ։ Անխելք էշը տեսնելով առիւծին անանկ վազելը , կարծեց թէ իրմէ վախնալուն կը փախչի , սկսաւ ետեւէն իյնիլ ։ Բայց առիւծը նայեցաւ որ աքաղաղին ձայնը այլ չի գար՝ մէկէն դարձաւ բըռնեց էշը փարատեց ։ Իսկ էշը մեռնելու ատենը սկսաւ պոռալ . վա՜յ ինձ կըսէր ես

Ի՞նչ անխելք եմ եղեր. ինձի պէ՛տք էր որ քաջութիւն ցցնելու համար յիմարութեան գամ սափրիչի մը հետ ըլնիմ։

Ով որ իր չափը չի ճանչնար, և իրմէ մեծին հետ կռուի՝ շատ անխելք է. Ես ալ կարծեմ թէ երբոր մէկն իրեն լաւուէր գէշութիւն ընէ՛, իրմէ կը զանխնայ. չիյտէ թէ շատ մարդ շատ բան կրնայ ընել՝ թէ որ ուզենայ։

Տեսէ՞ր պատուհաս յիմար տկարին,
Որ իբրև հզօր 'ի ճակատ մարտչի.
Դառնայ ընդ կրունկն հզօր ամեհին,
Գիշատէ զնա անդ 'ի ճակատի։
Ուսի՛ր ճանաչել զոյժ և չափ անձին,
Եւ մի՛ խրոխտանար ընդդէմ առիւծին.
Բազումք յիւրեանց տան խնդախնեն'ի սուր,
Անդէն կորանան 'ի տես հզօրին։

ԷՇ ՀԻՒԱՆԴ

Գիշակերաց խորհուրդ և կամք,
Է պատրաստել այլոց մահուամբ։

Շահասէրին Թող շահ ըլլայ,
Հոգ չէ այլոց վնաս ըլլայ։

Ծն. Էշը վտանգաւոր հիւանդութեն մէջ էր. բայց երբոր սկսաւ առողջութեն դին

դառնալ, ձայն մը տարածվեցաւ գայլերուն և շներուն մէջ, թէ էշը հոգեվարք է։ Շնե-րը մէկէն վազեցին որ մեռածին պէս կաշին յափշտակեն. երբոր կըսպասէին անհամբե-րութեամբ թէ ինչ ձայն կայ, և իշուն պառ-կած տեղին դրանը ծակէն ներս կը նայէին, տեսան հոն իշուն ձագը. կանչեցին անոր այս բարեկամներս, թէ որդեակ կաղաչենք մեզի իմացուր ինչպէս է մայրդ. գիտնաս որ մեծ ցաւ ունինք անոր համար։ Պատաս-խանեց ձագը խստութեամբ. շատ լաւ է՝ ձեր չտեսածէն աւելի։

Որկրամոլ անշահ մարդիկ կը նային, որ իրենց փորը կշտանայ ուրիշին ինչ կըլլայ ըլլայ՝ չեն հոգար ամենևին։ Մարդ մարդու օգնութիւն ընե-լու համար ծնած է. կըսէ փիլիսոփան։

Այս գատապարկակերաց բարք պորտաբուծին,
 Տզրուկ կերպարանել մարմնոյ տկարին.
 Իբրև բարեկամ ցաւակցի նմին,
 Պատառել զնա մինչ առ անձին։
Մարդ ընկերական, մի՛ ըստ գազանին
 Խոշտանգեր զընկերն առ օգուտ անձին.
 Կարեկից լինել ուսար 'ի բնութեան,
 Բնութենակից վշտաց ստորին։

ԿԱՏՈՒ ԵՒ ՄԿՈՒՆՔ

Մի՛ մերձենար նենգամտին,
Մանրիս ծախիս 'ի ձիրանին։

Մի՛ հաւատար դրուժէն սուրբէին,
Նայէ՛ ինչե՛ր որփէն կանչնին։

ծբ. Կատու մը գըրեթէ մկներուն ցեղը ջընջեր էր. կարծեցաւ որ մնացածներն ալ ջարդէ հատցընէ։ Բայց կատուին անբաղդութը̄ը մկներն աւելի խորագէտ էին. ուստի կատուն մեծ զգուշութիւն կընայէր որ ձեռք ձգէ, և չէր յաջողէր որ զանոնք բռնէ։ Սակայն ես զանոնք պիտոր բռնեմ ըսաց կատուն՝ ուզէն չուզէն։ Զայս ըսաւ ու վրան ալիւր ցանեց, կծկեցաւ մտաւ խմորին տաշտին մէջ։ Մէկ մուկ մը տեսաւ այն կլոր ճերմակ բանը, կարծեց թէ մսի կտոր է, մօտեցաւ քովը. իսկ կատուն թաթիկներուն վրայ զայն գամելով բռնեց ճանկերովը. և ուրիշ մուկ մ' ալ մօտեցաւ հոն. և ասոր ետևէն բոլոր մկները հոն ժողվեցան. բայց ասոնցմէ մէկը ետ չի դարձաւ, բոլորը հոգաց։ Ամէնէն ետև մէկ խուֆած ծեր մուկ մը գլուխը ծակէն դուրս հանեց, ու մէկէն չորս դին նայելով առանց առաջ երթալու սկսաւ այն ալըրոտ գունտին վրայ մտմըտալ։ Հուսկ յետոյ գլուխը շարժելով ը-

սաց ․ բարեկամ քուկին տասանկ ձեռնընկալդ-իմ առջևս բան մը չարժեր ․ կուզես ալաւր եղիր , կուզես պարկ կմ առաջ եղիր , ինչ որ կուզես եղիր , հազար տարի անցնի մէկ անդամ մը չեմ մոռնար քեզի ։

Կեղծաւոր և խաբեբայ մարդէն միշտ պէտք է հեռու փախչիլ․ Թէպէտ դրսէն սուրբ երևնայ ։ Փորձ և խոհեմ մարդիկ լաւ կը ճանչնան տասանկ մարդը ․ պէտք է անոնց խօսքին հեռանիլ ։

Տեսանե՞ս հնար հնարագիտին ,
　Որոգայթ լարէ ընդդէմ ստախին ․
　Որչափ խորագէտ եղէ թշնամին ,
　Այնքան դառնանայ ծախել զնտախին ։
Ուսի՛ր 'ի ծէրոյն չմերձիլ չարին ,
　Թէ և լուսազգեաց եղէ արտաքինն ․
　Արտաքուստ բարուէք պայծառ երևին ;
　Այլ ներքին նոցա չար և խաւարին ։

ԱՌԻՒԾ ԵՒ ՈՒՂ

Խորամանկ հեռուստ դէմ առիւծին ,
　Է անխոհեմ գործ տկարին ։

　Հեռուէն դէմ խօսիլ մեծին
　　Անխելք գործ է յիմար փղշին ։

ծդ․ Ուղտին ձագը մէկ բարձր պատուհանէ մը նայելով կը տեսնէ առիւծ մը , որ

կանոններ վարէն ։ Բայց բաղդ ունեցաւ, որ բարձր տեղը զինքն ազատեց անոր ձեռքէն ։ Ուստի սկսաւ կծու խօսքերով անարգել զառիւծը և թշնամութեամբ նախատել ։ Իսկ առիւծը տեսաւ որ չի կրնար հասնիլ՝ խոժոռ նայելով ըսաց . Ո՛վ անզգամ չար, դուն զիս չէիր կրնար նախատել, աղօթք ըրէ կեցած տեղիդ, որ զքեզ իմ ձեռքէս ազատեց . թէ որ քեզ ձեռք ձգէի, շատ տարբեր պիտոր խօսէիր ։

—

Տէր մարդը մէկը հեռուէն շատ բան կը խօսի և մեծաբաններով ուրիշը կարհամարհէ . բայց երբոր մօտ կուգայ մէջին կը պատռի վախնալէն ։ Չի խածնող շունը հեռուէն կը հաչէ, կըսեն ։

Այս յիմարական գործ է անփորձին,
Որ փափկեալ 'ի տան գրգռի ընդ վեհին .
Բայց երբև առաջքս ելանէ անոր,
Զի՞նչ ունի առնել առաջի նորին ։
Մի՛ հակառակիր ընդդէմ հզօրին,
Մի՛ զբարկութիւնն ածեր քում անձին,
Քանզի մեծարանք պատիւ 'ի փոքուէ,
Եւ ո՛չ անարգանք մեծայ պատաշաճին ։

ՄԱՐԴ ԵՒ ԱՌԻՒԾ

Անիրաւ է պարծիլ ընդ գործ,
Զոր այլքն պաճեն, ինքն է անգործ:

Ի՞նչ շահ պարծիլ նախնեաց վրան,
Երբ ինքն անխելք չի գէ մէկ բան:

ԾԳ. Մարդն ու առիւծը միատեղ ճամբորդութիւն կընէին. եղաւ որ ճամբուն վրայ տեսան արձան մը, որ կը ներկայընէր կորիճ ըմբիշ ֆէհլիվան մը, որ կըսպաննէր մէկ առիւծ մը: Զայս որ կը տեսնեն՝ ըսաւ մարդն առիւծին, քեզ կիմացընէ, թէ մենք ձեզմէ շատ աւելի կորիճ, և աւելի սրտոտ ենք: Պատասխանեց առիւծն անոյշ ձայնով մը. թէ որ մեր մէջն ալ գտնըվէր քարտակոփ, կը՞ արձան շինօղ ինչպէս ձեր մէջ կայ, դուք ալ պիտի տեսնէիք շատ աւելի մարդիկ առիւծէ մեռած, քան թէ առիւծ մարդէ սպաննըված:

Հին ատենը Հերքիւլէս անուանով կորիճը առիւծ մը մեռցուցեր էր. ասոր քարէ շինած արձանը շատ տեղ դրած կար, որ տեսնօղները սիրտ առնէին: Օրինակ է անանց որ իրենց նախնեացը մեծութէ՛ն վրա կըպարծին, և իրենք բանի մը շահ չունին:

8

Զի՞նչ օգուտ պարծիլը գործ դիւցազանց,
Պանծալ'ի վերայ նախնեաց և ազանց.
Յորժամ ինքն է զուրկ յառաքինութենց,
Աննման նոցին քաջութեանց խելաց :
Յամօթ սերնդոց անմիտ անարեաց,
Որ նախնեաց զարարս համարին ինքեանց.
Որով և լինին վեհափառ զարմին,
Վախճան և աւարտ ազնիւ պերճութենց :

ՄԱՐԴ ԵՒ ԼՈՒ

Փոքր մըսաս տալիկարին
Մեծ համարի ընդդէմ մեծին :

Թէ՛ շաբ բան գար յէօքէն քօքրին,
Տէօ թէ իւնւէ՛ր նէնէր մէծին :

ծե. Լուն մարդու մը թև խածաւ. ցաւն որ իմացաւ մարդը անանկ անհանգիստ եղաւ, որ ուզեց բռնել և մէկէն ճզմել. ուտի ձեռքն երկնցուցածին պէս բռնեց, ալիտի ճզմէր. լուն ըսաւ, թէ մոմըրտա՛մ, որ ես քեզ միայն խածայ, դուն կուզես զիս մեռցընել. ափսո՛ս ինձի. ան ատենը եա այս բանիս արժանի կըլլայի, թէ որ ուզէնայի քու կեանքդ վերցընել : Պատասխան տըւաւ մարդը. եթէ ունենայիր կարողութին ընելու, անտարակոյս կընէիր : Զայս ըսելով սխմեց մեռցուց :

Որչափ քաջ յանցանք մը մարդն ընէ այս դէմ.
Մեծ կը սեպվի. հա՛ ղի այս Թծուածին կը լուծվի
Վերջը. Թէ որ խարողութէ՛ ամենուր ապերծողին
դէմ ածելի չարութի՛ ընելու՝ կընէր. Թէպէտ գոր-
ծողը ովինչ է, անոր համար օրինադրութիւնները կը
պատժելին չարաչար :

Ահա՛ հաստատացուածն արդար օրէնքին,
Որ մահու պատժէ խայթիչ փանաքին.
Փանաքի մարմնով այլ խայթն է ուժգին,
Եթէ էր կարող զրաւէր զմարմին :
Օրինակ է այս օրինապահացին,
Մարդոյն ընդդէմ կայ օրինաց մերին.
Որչափ այն է մեծ և մարդն է չնչին,
Այնչափ մեծ յանցանք 'ի գործոց չարին:

ԿԱՔԱՒ ԵՒ ԱՔԱՂԱՂ

Թէ խիստ ինչ է անտանելի,
Համբերութեամբ է տանելի :

Որչափ դժուար խիստ բան ըլլայ,
Համբերողին կը կակղնայ :

ԾԷ. Մարդու տէրը մէկ կաքաւ մը գնէ կը դնէ տանը բակին մէջ. ղայն որ տեսան աքաղաղները, որոնք չեն քաշեր տանիկ օտարականները, վազեցին վրան ու կտուցներով ծեծեցին. անկէ ետև ամէն օր տանիկ կը նեղէին խեղճը: Ուստի կաքաւը քաշվեցաւ հաւնոցին

մէկ կողմը տրտմած երբոր կուլար, տեսաւ որ աքաղաղներն իրենց նախանձին համար իրարու հետ կը ծեծկըռուէին՝ ըսաց կաքաւը. ահա ես ալ միտքս դրի որ ասկէ ետեւ համբերեմ. որովհետեւ ասանկ կռուարարներն երբոր իրարու միս կուտեն այնչափ կատղելով, ինչպէս կրնամ ինձի հետ անուշութեամբ վարվիլ:

Կաքաւն է քէքլիկ թուրքերը. խոնարհ ըլլալով օրինակ է համբերողին. որ ուրիշներուն նայելով իրենց չինէք կը մխիթարէ գիտնալով, թէ ամէն մարդ մէկ փորձանք մը ունի ունենայ:

Ձմրոտ դժնդակ բարք կռուասիրաց,
Կոփեն հարկանեն զընկեր բարեկեաց.
Երբ ոչ գտանեն զայլ ոք յօտարաց.
Անհամբոյր դահիճ լինին իրերաց:
Իսկ յաղթօղ նոցին սիրտ համբերողաց,
Որ զերթ ապառաժ անբեկ կայ յալեաց.
Որչափ հարկանեն կոհակք եզերաց,
Անդէն ընկըրկեալ դառնան խորտակած:

ՃՊՈՒՌՆ ԵՒ ՄՐՋԻՒՆ

Որ ոչ գործէ յամառայնի,
'Ի ձմերան սովու նքթի ։

Թէ տքնէնքն բան չի հոգաս,
Ցէրոյ աղքատ խեղճ կը մնաս ։

ծէ. Ճպուռը բոլոր ամառուան մէջ ուրիշ բան չէր մտածեր, միայն թէ ձայնովը միշտ կը զըւարճանար. այս կենդանոյն ձմեռուան մօտ մեծ նեղութեան մէջ գտնըւեցաւ, որ բան մը չունէր ուտելու ։ Ուստի մտմըտալով, թէ ձմեռն ի՞նչպէս պիտի անցրի. գնաց մրջու_նին աղաչեց որ իրեն քիչ մը ցորեն փոխ տայ. թէ որ ըսաց ինծի բան չի տաս, գիտնաս որ իմ անօթի մեռնելս կուզես. մէն զի երդում կընեմ որ ամենևին ապրուստ մը չունիմ պա_հած ։ Պատասխան տըւաւ մրջիւնը, թէ շատ գէշ բան է ըրածդ. զի պէտք էր գալիքը մտածելով ինծի պէս ընել. տանելով աշխա_տիլ, և կերակրով համբարները լեցընել. հապա դուք ի՞նչ կընէք ամառուան այն գե_ղեցիկ եղանակին մէջ ։ Ես գիշեր ցորեկ կեր_գեմ ըսաւ Ճպուռը ։ Ծաղր ընելով ըսաց մրջիւնը. իրաւ է որ դուք ուրիշ լաւ բան մը չէք կրնար մտածել, բայց միայն ուրա_խանալ. ուրեմն ինծի մտիկ ըրէ, ինչպէս որ սկսար՝ կատարէ այս տարին. ողամձեռն ժա_

մանկիդ կեար ծախեր ես երգելու համար ․ և մեկալ կեան ալ քեզ կը մնայ որ պարը խաղաս ։

Ճպուռն է ճռուճռա պէօծէրին ․ որ օրինակ է դատարկ ու շռայլ մարդկանց, որ առտըին անդէին ժամանակնին կանցընեն փուճ քաներով ․ յետոյ ծերութեան օրերներուն գլխացաւութիւն կըլ-նէն, որ պահէն չըրէին ։ Ով որ շնէշ գործէ, շատ քան գործէ կըլոէն ։

Վայելուչ խրատ է անգործ ծուլին,
Որ դատարկ ծախէ զիւր կենաց քարին․
Այլ գայ ժամանակ դառն եղանակին,
Կարօտի այլոց ծառը՝ եղեալ նոցին ։
Զի՞նչ շահ սին ձայնիւ լնուլ զխայր օդին․
Եւ դատարկ թողուլ զիւր տուն զիւր անդին
Զանամ ՚ի ժամուն գործել զպիտանին,
Ամբարել պիտոյս վասն ապագային ։

ԱԳՌԱՒ ԵՒ ՈՉԽԱՐ

Զուարճութիւն անխրատին,
Է մշտագնել զհեղգահողին ։

Անպքամը հաւրախանայ,
Երբ խոնարհին վնաս հասնոյ ։

ԾԲ. Ագռաւ մը խաղալով կը թռչտէր ոչ-խարին բոլորտիքը․ և շատ անգամ կուտէնց

քովտալ զարնելով կը զուարճանար : Ես քեզ զուարճացընելու համար եղեր եմ ըսաւ ոչխարը . ինչու համար միշտ իմ վրաս կուգաս ու այս շանը վրայ չես երթար, որ կը նայի՛ ոչխարները : Անոր համար ըսաւ ագռաւը ատանկ կընեմ, որ քեզմէ շատ՝ անկէ կը վախնամ . գիտնաս որ ես աւելի աղէկ կը վարվիմ չարերուն հետ, քան չարերը բարիներուն հետ :

Օրինակ է անզգամ մարդկանց, որ հեզահոգի մարդուն վրայ կը խնդան ու ծաղր կընեն . բայց շատ անգամ ըրածնին կը գտնեն : Ով որ ա̃յմէ կը վախնայ, դուն անկէ մի վախնար . կընէ ծեւն-ոտքան :

Ահա այս է գործ չար անխրատին,
Որ չարիս գործէ ընդդէմ խոնարհին .
Քանզի միշտ հարուած տանել անմեղաց,
Միակ զբօսանք է չարասիրաց :
Արդ մի՛ նմանիր դու անզգամաց,
Մի՛ վնասակար լինիր անմեղաց .
Ջանա՛ հետեւիլ բարուց խոնարհին,
Որ խոնարհութեամբ տանի իւր նեղչին :

ԿԱՂՆԻ ԵՒ ԵՂԷԳՆ

Մեծաբանին փոյթ հասանէ ,
Ծաղր լինել յիւր մեծ բանէ :

Մէ շատ պարծիր թէ ուժովես ,
Հողմ մը կուգայ խեղճ կընէ քեզ :

ԾԹ. Կաղնի ծառը կըխնդար եղէգին վրայ. և նախատելով կըսէր , թէ պզտիկ հովէ մը կըշարժիս . ես շատ կըխղճամ քու վրադ . երբոր կը տեսնեմ ջրին քով տնկած . ուր տեղ ուրիշ կերպ չես կրնար կենալ, բայց եթէ գլուխդ ծռած տկար հովերուն առջին: Ինծի նայէ՛ տես ուր եմ բարձրացեր . և ինչպէս հաստատ է իմ բունս և արմատս , որ սաստիկ հովերու փոթորիկներու դէմ կըդնեմ: Երբոր այսպէս կըպարծենար, յանկարծ փոթորիկ մը ելաւ եկաւ կաղնիին և եղէգին զարկաւ: Այս հովը որչափ որ փչեց չի կրցաւ վնասել եղէգին. որովհետև հովին առջին խոնարհելով, ուրիշ բան չեղաւ միայն թէ շարժեցաւ: Իսկ բոլոր վնասը կաղնիին եղաւ. վասն զի երբոր խիստ դէմ կեցաւ հովին , ու կարծեց հաստատուն մնալ փոթորիկին դէմ, մէկ կատաղած հովմը զարկաւ անոր , և անանկ ցնցեց , որ շրջեց պառկեցուց ծառը: Եւ այսպէս ահա այս հպարտ ծառը եղէգին ոտքն ընկաւ, որ այնչափ նախատէր էր զայն :

Խորապ է մեծամեծ ծառուտիներուն, որ հովար-տութէ կանաչագէն ողջափները. Բայց շատ ան-գամ ատենէ իրենց կենակով հանգիստ կը ճռան, և ծառուտիները աշխարհէին հովերովը կը կոր-ծանին կիյնին ։

Այս է պատուհաս ամբարտաւանին,
 Որ խայտառակի յետ հպարտ բանին.
 Այն մեծաբանող ամբարձեալն յերկին,
 Ցե՛ս իբր 'ի հողմոյ շեղի 'ի գետին ։
Քանի՛ մեծատունք նման են ծառին,
 Անարգեն զաղքատն պանծան 'ի բաղդին.
 Բայց 'ի գալ հողմոց հոլովեալ անուէին,
 Խոնարհք կամ կենդանի ինքեանք կործանին ։

ՋՈՐԻ ԵՒ ԳԱՅԼ

Որ' դուք փորձել այլոց ջանայ,
 Ինքն սահեալ 'ի նոյն մնայ ։

Ո՛Վ որ փորէ փոս ուրիշին,
 Ինքը կիյնի մէջը փոսին ։

կ. Գայլը կը տեսնէ մէկ ջորի մը, որ խոտ կուտէր դաշտին մէջ. մէկէն պիտի յարձակէր զայն. բայց երբոր տեսաւ ջորիին զգուշութիւնը, և հասակին զօրութիւնն որ կըրնար ինք զինք պաշտպանելու՝ միտքը դրաւ, թէ ող լաւ կըլլայ խորամանկութեամբ ձեռք ձգել, քան թէ ուժով ։ Ուստի շուտով մօտե-

ցաւ անոր, և զինքը խիստ վարպետ բժիշկ Հաւատացընելով ուզեց իրեն դեղ ընել: Ես ըսաւ անանկ վարպետ եմ, որ եթէ ունիս հիւանդութիւն՝ մէկէն կառողջացընեմ: Իսկ ջորին, որ վախ ունէր անկէ, պատասխանեց թէ դուն զիս մեծապէս կամըչցընեիր, թէ որ կամենայիր հանել խամէ մէկ փուշ մը, որ խոցոտեր է ոտքս: Զայս ըսելով վերցուց ետևի ոտքը ցըցուց գայլին. իսկ գայլը որովհետև ուրիշ բան չէր ուզեր, միայն յարմար ժամանակ կըփնտռէր, որ ջորիին վրայ ցատկէ, մօտեցաւ անոր, և երբոր սկսաւ նայել, ջորին անանկ կից մը զարկաւ գայլին, որ քիթը բերանը ճզմեց փախաւ: Ան ատենը գայլը բոլորովին տրտմած ըսաւ ինքիրեն. արժանապէս այս բանն ինձի եղաւ. պէտք էր որ բժշկութիւն ընէի ես, որ ուրիշ բան չեմ, բայց միայն մսագործ:

Արժան կեցէր որ անզգամ մարդոց յետեւ չիյնիս. և թէ ընէր, նայէ՛ որ խելք մը բանեցընելով անզգամին յետեւէն ազատիս. վասն զի մարդոց զէնքն է իրեն խելքը:

Քանի՜ դիպաւոր այն անզգամին,
Կրել զայս չարիս զոր նիւթէր նմին.
Քանզի մրխպանք խորամանկ չարին,
Զարաչար լինի՝ ըստ առակողին:
Այս դաժան բնութեան է քանսատորին,
Պնդիլ զհետ այլոց պատառել մարմին.
Որչափ ոք ցանկայ զայլս կեղեքել,
Այնչափ և յայլոց կրէ զարժանին:

ՎԻՇԱՊՔ

Բազում գլուխք և տանուտեարք,
Են երկրաց խափանարարք :

Թէ տան մը մէջ շատ գլուխ կայ,
Տանը բանը շատ գէշ կըլլայ :

կա . Երկու վիշապ կուզէին ցանկէ մը կամ փշոտ տեղէ մը անդիին անցնիլ, որ աւելի խիտ ալ ըլլալով արգիլեր էր անոնց ճամբան : Մէկ վիշապն ունէր մէկ գլուխ մը և շատ պոչ . մէկալը մէկ պոչ մ' ունէր , և շատ գլուխ : Այս երկուքինը բոլոր ուժովը ջանալով՝ չի կրցաւ անցնելու . վասն զի շատ գլուխ ըլլալով մէկմէկու արգելք կուտային . ուստի ուրիշ բան չի կրցաւ ընել, բայց եթէ մէկ ծակ մը բացաւ , որ մինակ մարմինը հազիւ կրնար անցնիլ : Իսկ մէկալ վիշապը քիչ աշխատանքով բացաւ իր ճամբան . վասն զի մինակ գլուխը բացաւ ծակմը համեմատութե̃ անցաւ , ու քաշեց պոչերն ալ անկէ անցուց . և անանկ լաւ ըրաւ որ անցան անկէ գլուխը , պոչերը և բոլոր մարմինը :

Խրատ ըլլայ ամենուն , որ փնտրնուն մէջ Երկու Թէծ , և շատ Գլուխ ըլլին , որ Երարու չէ համեմնող կառքէն փառը . Թէ որ մէկ բանին Գլ-

լուխը մէկ մարդ ըլլայ ամէն բան կարգի դնելով, բոլորն իրեն հնազանդ ըլլան, ու դիւրին բանը յառաջ կերթայ :

Տես զխմորդ բազում գլուխք մի մարմնոյն,
Են արգելք միմեանց 'ի գործ աշխատանքին.
Զի իւրաքանչիւրք են ինքնագլուխ,
Ոչինչ վճարեն՝ միայն անգլուխ :
Այս օրինակ է իշխանաց պետաց,
Որ տիրել կարծեն անկախ յերկրաց.
Բայց երբ չեն կարգեալ ընդ միով գլխով,
Են բազմագլուխ անբաժ 'ի բարեաց :

ԿՐԻԱՅ ԵՒ ՆԱՊԱՍՏԱԿ

Աշխատութեան միշտ շարունակ ;
Յաղթէ առնու ըզյաղթանակ :

Թէ անհանգիստ ջանաս յոգնիս,
Ամէնէն շատ դուն կը շահիս :

կը. Օր մը նապաստակը կը խնդար կրիային վրայ, ու երեսը կը զարնէր անոր խոշոր ծանրաշարժութիւնը : Եկուր ըսաւ կրիան դաշինք ո՞չ բռնենք. ես քեզմէ շուտ կը հասնիմ այն ծառին, որ անկած կը տեսնես առաջին ծայրը : Պատասխանեց նապաստակը թէ մէկ կրիայ մը ի՞նչպէս պիտի նապաստակին հետ վազելու ելլէ, քու խելքդ դարձեր է եղբայր, գնա՛ բանդ : Այս կարգէ դուրս բանին զիս հրամցընելէդ առաջ պէտք էր մտմըտալ, թէ ես չորս անգամ ցատկեմ այն

չափ ճամբայ կ՚ընէր, որ գոնէ չորս շաբթը_ վան մէջ չես կրնար ընել: Հոգ չէ, ըսաւ կրի_ ան. և ատեն չի կորսնցընելով սկսաւ եր_ թալ: Իսկ նապաստակն առանց հոգալու թողուց որ կրիան առաջ անցնի, երբեմն խաղ կ՚ընէր, երբեմն ալ կը դառնար, և խոտ ու_ տելով կը զըւարճանար. ինքնիրեն կ՚ըսէր թէ ես այսպահով ալ, որ կորսնցուցած ժամա_ նակս՝ շուտով կրնամ շահիլ. սակայն կրիան մինչև առաջ կ՚երթար: Երբոր տեսաւ նապաս_ տակը թէ երկու մաս մնացեր է, որ կրիան հասնի ի ծառին, շուտով ցատկեց ու կայծա_ կի պէս վազեց. բայց բանը բանէն անցեր էր. վասն զի կրիան հոն հասնելու վրայ էր. և ինչ որ ըրաւ նապաստակը չկրցաւ, կրիան առաջ հասեր էր. և այսպէս կորսնցուց իր գաշինքը:

Կրիան այսինքն Թոսպաղին օրինակ է աշխա_ տասէր մարդուն, որ միշտ աշխատելով որչափ խեղճ ըլլայ յառաջ կուգայ: Իսկ նապաստակն է օրինակ անհոգ մարդուն. որ ծոյլ ատենն անցըն_ նելով՝ ուրիշները կուգան զինքը կանցնին՝ ինքն անանկ կը մնայ: Ամէն բանի յաղթող է աշխա_ տութիւնը, կ՚ըսէ ժողովուրդն:

Ահա տեսարան ինքնահաւան հեղգին
Ինքնապանծ խոստէ գնացս օտարին.
Բայց նա անձնվստահ գոլով յիւր ուղին,
Յաղթէ հասանէ իւր նպատակին:
Քանի պատահանանք այն գանդպարկոտին,
Երբ ինքն է մեղկեալ, այլք յառաջ ձգին.

Զի՞նչ օգուտ ստանալ լեառնէ 'ի լերինս,
Զի աշխատասէրն հասանէ կեանքին :

ՈԶՆԻ ԵՒ ԳԱՅԼ

Ոչ վայրապար բաշխէ բնութիւն
Իւրաքանչիւր զէն զօրութիւն :

Ինչ որ ունիս աղէկ պահէ՛,
Որ Գործածես երբոր պէտք է :

կէ. Մէկ գայլ մը կը հանդիպի ոզնիին, և շատ անօթի ըլլալով տալաւ կ'ուզէ որ ուտէ : Իսկ ոզնին տեսածին պէս զայն՝ վրայի փուշե-րը մէկէն շտկեցուց : Գայլը կասկածելով չէր գիտեր ուր տեղէն բռնէ. ուստի խորամանկութեամբ ըսաւ անոր, եթէ կամենաս քեզմէ հանել բոլոր այս փուշերը՝ շատ աղուոր կ'ըլլաս. վասն զի ատոնք զքեզ խիստ գէշ կերևցընեն. ինծի մտի՛կ ըրէ՛ ու ասկէ ետև նետէ՛ զատոնք: Ա՛ծ չընէ, ըսաւ ոզնին, աւելի շտկեցընելով փուշերը. բարեկամ, թէպէտ այս փուշերս զիս գէշ կերևցընեն, բայց շատ լաւ կը պաշտպա-նեն քու ձեռքէդ :

Ոզնին է քիփրի. տարր մէկ փխակը կայ շան շանի, որ ծծերը կը նեղէ կըռէն թշնամին կը չոր-նէ նեփի պէս : Օրինակ է. խոհեմ մարդուն, որ միայն իր պաշտպանութիւնը կը նայի, և ամենևին

ուրիշին խօսք մտիկ չընէր, որ քիչ մը չի գայ իրեն ։

Խրատուէ տուածս զգոյշ կեցիր յանձնին,
Չթափելու զպէնս բանիւ խարդախին.
Զի նենգել ուսել է խորհուրդ նորին,
Ոչ թէ կարեկցիլ երբէք մտերմին ։
Այդ մի՛ ապահովել կար ընդ թշնամին,
Եւ մի՛ հնազանդիր խորհրդոց նորին.
Զինեալ համաձայնութեամբ ընդդէմ ոսոխին ;
Զի զէն մարդոյն է համաձայնք ընտանին ։

ԱՂՈՒԷՍ ԵՒ ԱՔԱՂԱՂ

Ով ոչ ուտէք բարի տանէ,
Ցայլոց բարիս ոչ տեսանէ ։

Մէկն որ մարդու բարիք չընէ,
Ուրկէց բարիք պիտի գտնէ ։

կզ. Աղուէս մը շատ հաւեր յափշտակելէն ետև վերջապէս ընկաւ որոգայթին մէջ. որ հողագործ մը լարեր էր անոր համար աւանը բակին մէջը ։ Երբոր անօգուտ կաշխատէր և կը ջանար որ ազատի, տեսաւ աքաղաղ մը ։ Ե՛ղբայր ըսաւ զգո՛յշ կեցի՛ր, կերդումնեմ քեզ որ զիս չես յայտներ. Թէ որ կուզես ինձի հարկաւոր և մեծ ծառայութիւն ընելու, վազէ՛ շուտով գնա՛ խնայցուր աղուէսներուն՝ իմ գլխուս եկած վտանգը. և ըսէ՛ իրենց որ

կառավարչէ՛մ գան զիս տանկէ ազատեն : Իսկ ա-
քաղաղը գոցեց իր սրտին մէջի եղած ուրա-
խութեն որ կարենայ վրէժ առնել անկէ •
երդում ըրաւ անոր խորհուրդը լաւ պահե-
լու, և ամէն կերպով դրած պարտքը կատա-
րելու • բայց շատ հեռու էր խօսքը պահե-
լէն • վասն զի վազեց գնաց շիտակ տանտի-
կոջը պատմեց բոլորը • անալ մէկէն եկաւ
բռնեց սպաննեց աղուէսը, որ մեռնելու ատե-
նը լալով կըսէր • վա՜յ գլխուս ափսո՜ս, էր որ
ես օգնութեն խնդրէի աքաղաղէն, որուն այն-
չափ հաւերը խղդեր եմ :

Պէտք է յաջողութէ մէջ բարեկամ ունենալ՝ ա-
մենայն բարերարութէ ընելով, որ ձախորդութէ
մէջ ինքն ալ գտնէ : Անոր համար Աղէքսանդր
Թագաւորը կըսէր թէ ամէն բանէն վեր հաւատա-
րիմ բարեկամն է :

Ահա՛ գեղեցիկ պատուհաս չարին,
Որ գործն է լարել թակարդ ընկերին •
Հուսկ յետոյ և ինքն 'ի նոյն թակարթի,
Աղաչէ զնա գալ օգնել նմին :
Քանի՜ լրբութե̄ ժանէ խօսնակին,
Որ ծծէր զարիւն թէ էր 'ի ձեռին •
Որպէս յօտարէն նպաստ ոչ յուսայ,
Երբ այլոց բարի չարար բնաւին :

ԱՂՈՒԷՍ ԵՒ ԿԱՏՈՒ

Գաղտնիք հանճար խորագիտին
Ոչինչ զօրէ օգնել նմին ։

Շատգէտ մարդիկ շատ բան գիտեն,
Բայց տէղ կուգայ որ բան չգիտեն ։

կն. Աղուէսն ու կատուն միատեղ ճամբորդութիւն կընէին. երթալու ատենը սկսան խօսիլ զանազան բաներու վրայ. վերջապէս աղուէսն ըսաւ մէկալին թէ բարեկամ քուկին քիչ մտածելուդ համար պարտական ես, որ յայտնի խոստովանիս թէ իմ միտքս բարակութ̃ որչափ գերազանց է, և խելքս քուկինէն շատ վեր է ։ Պատասխանեց կատուն թէ ես կաւատամ. բայց կաղաչեմ՝ նայինք ի՞նչ օգուտ այն քեզի կրնայ ընել հիմա. կը տեսնե՞ս որսորդին երկու շներն որ շիտակ մեր վրայ կուգան, ինչպէս ինծի կերևնայ ։ Ահա թէ որ չեմ սխալիր, քու խորամանկութեդ ատենն է ցուցնելու. ինծի որ հարցընես՝ ահա՛ իմինս. իմ ունեցածս միայն այս է, որ բոլոր քուկին ունեցածներէդ լաւ կը բռնեմ ։ Զայս ըսելով ցատկեց ծառին ծայրըն ելաւ. իսկ աղուէսն որ այնչափ յաջող էր, այս բանը չգիտցաւ ընելու, թէպէտ շատ անգամ իր հնարքներովը խաղցուց սըգիլեց շները, և քանի անգամ առաջներնուն

փախաւ . բայց փուշ եղաւ . մն զի մերձաւորս չի կրցաւ աղաւնել , բռնեցին զինքը պատառեցին ։

Միւս ջանան որ չիտայ ճամբայէն ընելնո . կըն ըլ որբնոց խորամանկ ըլլալ , թէպէտ խորամանկը հայ , և ամէն կըլլայ որ շահգիտութեր թէ շահ մը մի կրնար ընել ։ Կըսեն գիտուններ , թէ շատ ձեռն յիմարութէ և պարծենալ խօսքին կ՚ըլլայ ։

Զիարդ անիրաւ պարծանք հպարտին ,
Որ ազատ պանծայ ընդ համձայն անձին .
Բայց երբ ժամանէ արկած իւր բաղդին ,
Անդէն նուաղան այն պանծանք չնչին ։
Պանծալի իմաստ գոյ յառաքինին ,
Որ իմաստութբ փայլէ ՚ի բանին .
Ոչինչ յեղյեղեալ յարկածից բաղդին ,
Ոչ նսեմացեալ ՚ի մահու անուին ։

ԱՔԱՂԱՂ ԵՒ ՀՆԴԿԱՀԱՒ

Սիրտ նախանձոտ տանջէ համայն ,
Է իւր ինքեան տանջանարան ։

Թէ չես փանիր օյլոց գործքին ,
Նայէ՛ չընես դուռն աւելին ։

կզ . Աքաղաղը բնութեամբ նախանձոտ է . բայց Հինտու աքաղաղին հետ բակին մէջ

միատեղ կը վարուէին. օր մը տեսաւ որ վեր-ցուց փետուրներն ուռեցաւ մեկալը հաւե-րուն ազգին. այս բանէն աքաղաղը կասկած գնաց ու ըսաւ անոր. Նենգաւոր՝ պարապ բան չէ, որ դուն իմ հաւերուս ազգին փե-տուրներդ վերցուցիր. ատանց կարծեաց կուզես խաբենց հաւձոյ ըլլալ, և իմին դանոնք հանել: Անալ պատասխան տուաւ թէ բան մը կըսես, որ ամենևին մտքես ալ չէ ան-ցած, և անմտութեամբ ամբաստանես. ինչու՞ հա-մար չես կրնար քաշել, որ ես հաւերուդ ազգին փետուրներս ուռեցընեմ. հապա ես կը համբերեմ որ դուն երբոր կուզես իմին հաւերուս ազգին միշտ կերդես:

Նախանձը անանկ անարգ ախտ է, որ իր թոյ-նը թափէ ուրիշին երջանկութեանը վրայ. նախանձո-տը չէ կրնար տանիլ ուրիշին գեղեցկութեանը գի-տութեանը և ամէն բանը. կուզէր որ իրեն հաւա-սար ըլլան, և ասոր համար ալ իր իրեն քանդ կործանիչներով աքաղաղին պէս:

Անյագ է նախանձ ըստ անասուն վշտաց,
Որ բունեալ՝ ի սիրտ սպառէ զոգի.
Մաշէ ընդ յաճախ բաղդիւրս ընկերին,
Զի պատիժ նորա է այլոց բարին:
Ուսի՛ր կենակցել քաղցր ընդ ընկերին,
Եւ մի՛ նախանձիր ընդ գործս նորին.
Զի առնել մեծ է թողուլ զխեռ դերան,
Ընդ օտարս կապել զշնորհս ակնան:

ԿՈՎ ԵՒ ՇՈՒՆ

Չարակն հիւծի ընդ բասա մարդկան,
Ցոր ինչ հայի սիրան է գաժան:

Ծախալուն այլոց բան չի խանդը,
Թէպէտ իւրեն բան չի պախնիր:

ԿԷ. Շուն մը պառկեր էր խոտի դէզին երդըկին վրայ, կովն ալ եկաւ քիչ մը խոտ ուտելու որ անօթի կըմարէր. բայց շունն արգիլեց ու ակռաները կըծըմտելով կովին դէմ ցատկեց: Ո՞վ Նախանձոտ կենդանի ըսաւ կովը, ի՞նչ ես կատղեր ու չես կըներ քաշել որ քիչ մը խոտ ուտեմ, որովհետեւ քեզի ամենեւին հարկաւոր չէ:

Օրինակ է չարախնութեան, որ ուրիշին աղէկութիւնը չուզեր, ու գէշ աչքով կը նայի ուրիշին: Փիլիսոփայ մը տեսնելով մէկը տրտմած, ըսաւ. թէ այս մարդուս կամ գէշ բան մը պատահած է, կամ թէ ուրիշին աղէկութիւն մը եղած է:

Ով զեխնորգ չարակն զախս զերեկաւն,
Առ չար նախանձու կազկանձէ անքուն.
Զի երբ տեսանէ զընկերն 'ի բարիս,
Իւր մաղձ զառնութեան զեղանի յարիւն:
Մի՛ ուտեր զհաց սակս իմաստունն,
Ընդ վասն չարակնին բարեաց թշնամւոյն.

Զի հաճոյք նորա զիկել քոյդ սեղան
Թէ և լինքն յաղթեալ մնջէ խար 'ի քաւն :

ԲՈՒ ԵՒ ԹՌՉՈՒՆՔ

Որ զայլս ատէ յայլոց ատի,
Իբրև զբու ընդ մութ շրջի :

Դուն ուրիշին ինչ որ ընես,
Ուրիշներէն զայն կը գտնես :

կը . Բու թռչունը կ՚ըսայի, որ ընդհանրապէս բոլոր թռչունները զինքը կատեն . սաստիկ նեղութենէն կ՚ըզբաղի կայնի ծառին խոռոչին խօղուխին մէջ կը նստի, ու ալ չի համարձակիր ցորեկը դուրս ելլելու, միայն գիշերը կելլէ : Մէկ անգամ մը դիպուածը բերելով ցորեկին անկէ դուրս ելաւ . բայց բանը շատ գէշ եղաւ . վասն զի թռչունները զայն տեսածնուն պէս ամմէն կողմէն վրանէ ցին վրան թափեցան, և չնայ մեծ կեն մինչև աղուոր եկն սկսան զբուարձանալով ծեծել զայն կտուցքով . և այնպէս հալածեցին :

Բուն այսինքն պայղուշը մինչ հիմա մութ տեղը կը Բոյնի . ու գիշերը բան կորսայ կուտէ . ասոր խօսարաներ ըսելով նման է ապերօղ մարդուն, որ մէյ ուրիշը ատելով ամմէնքնուն զինքը կատեն :

Այս օրինակ է տանելի անձին,
Որ զանխուլ կրծէ զսիրտ ընկերին,
Որով յամենից կրէ զարժանին,
Զրկեալ՚ի լուսոյ՝ շրջի խաւարին։
Քանի՞ վայելուչ սիրել և սիրիլ,
Օտարաց համայն ցանկալի լինիլ.
Զի՞նչ հանգիստ չարաց ատել և ատիլ,
Հալածեալ խայտառ՚ի մթան Թաքչիլ։

ԳԱՅԼ ԵՒ ՇՈՒՆՔ

Որկրաժեալին միայն Թակարդ
Է կերակուրն եղեալ՚ի կարթ։

Ով որ զուրիշն տոփել ցանկայ,
Ինք կերակուր անոր կըլլայ։

կԹ. Գայլ մը հեռուէն կըտեսանէ երկու շուն որ իրարու հետ կռիւ կընէին. կռիւն որ աւելի տաքցաւ՝ մտմտաց, որ երթայ մօտենայ անոնց և երբոր իրարու վրայ ելլեն՝ դիւրութեամբ զանոնք յաղթահարէ։ Այս խորհրդով շիտակ անոնց քով վազեց. բայց հակառակին եղաւ. վասն զի շուներն այն կէտին հաշտըվեր էին. գայլն որ մօտեցած տեսան՝ շատ ուրախացան, և յետոյ երկուքը միաբան վազեցին ընկան գայլին վրայ պատռեցին։

Որերամոլին յորսատար միշտ ներալերին ներւայ.
Չի՞ մի շատ սակէլը շատ հիւանդութեան պատճառ
ըլլալէն 'ի շատ, շատ քուրջուան մեղ յաղեստ ներ-
շտել գլուխը յաւտէ փայլին եղածին պես.
այսպես ներւան ուրիշ ախորժ եփեմ է զուանէրը այս

Ահա՛ անհամբոյր բարք զաւակացին,
Ցայլոց գիտութեանց համէ զիւր բաժին.
Քանի՞ շահաւէտք համանման սմին,
Կուտուողաց բարիս գրաւեն հեշտին։
Բայց արդարութիւն չթողու նոցին,
Փութով համանէ կշիռ 'ի ձեռին.
Տոկոսիս արդար պահանջէ կրկին,
Եւ անգին մնանէ ժանեաց ատամին։

ԱՐԾՈՒՈՅ ԵՒ ԱԳՌԱՒ

Որ յանդգնի գործել մեծ ինչ,
Նշաւակի լինի ոչինչ։

Ձեռք մ՚ զարնէր մեծ բաներու,
Կը պատահիս սև օրերու։

Է. Արծուին ինջաւ ոչխարի մը վրայ, ու ա-
ռաւ վեր հանեց. զայն որ տեսաւ ագռաւը
ինքիրեն ըսաց. մինթէ ես ալ չե՞մ կրնար ը-
նել սատանկ մէկ բան մը։ Զայս ըսելով թը-
ռաւ գնաց մէկ գէր ոչխարի մը վրայ. բայց
շատ հեռու մնաց արծուին ըրածէն. վասն
զի անանկ ոչխարին բրդերուն փաթթաուեց-

ցաւ, որ չէր կրցաւ ազատել. մնաց անանկ ոչխարին վրայ։ Երբոր կըշարժէր, որ ազա- տի՝ հովիւն իմացաւ, վազեց եկաւ բռնեց դրաւ վանդակին կափէզին մէջ. տուաւ տղացն որ խաղան։

Օրինակ է յանդուգն մարդու. որ զինքը չի ճանչնալով ինչ որ տեսնէ՝ կարծէ թէ ինքն ալ կրնայ ընել. բայց երբոր վտանգի մէջ կիյնի, ան- տարբէնը կըմնայ ինչ ընելուն։

Խրատ է այս գործ յանդգնացն յիմարին,
Որ ոչ ճանաչէ զոյժ և չափ անձին.
Ի գործ մեծագործ մխել յանդգնի,
Մինչև 'ի ներքոյ ճմլի ծանրոցին։
Պիտանի յաւէտ իմացականին,
Ճանաչել զիւր կար և ոչ հզօրին.
Քանզի հզօրաց գործն է մեծագործ,
Ընչին և թեթև է գործ տկարին։

ԿԱՏՈՒ ԵՒ ԱՔԱՂԱՂ

Զրկողութիւնք անզգամին,
Սուտ պատճառք արդար դատին։

Զօրաւոր մարդն ինչ որ ընէ,
Զինքը ստուգով արդար կ'ընէ։

Հա. Կատուն բակը կը մտնէ, և հոն տեսնելով աքաղաղ մը վրան կը ցատքէ, ճանկովը կը բռնէ որ իրեն ընէ մէկ լաւ կերակուր մը։ Ինչու համար սաստիկ կը նեղես ինծի ըսաւ աքաղաղը. ամենեւին չեմ յիշեր թէ քեզի օր մը գէշութիւն ըրած եմ, որ արժանի ըլլամ սաստիկ սպաննուելու քու ձեռքդ։ Պատասխան տուաւ կատուն հանգիստ ձայնով մը. թէ որ օրինաւոր բան մը չեմ գտներ քեզմէ տրտունջալու, և չեմ պատմեր քուկին գողութիւններդ որ տեսած եմ, պարտական կը մնամ ես աւելին. ով անօրէն դուն չես որ ամէն օր կ'երթաս տիրոջդ ագարակին մէջ կը պտտըտիս, որ ցանած ցորենն ուտես. մահու արժանի ես դուն ըսելով խեղդեց կերաւ։

Զրկողութիւն ընողը միշտ մէկ սուտ պատճառ մը կը գտնէ, որ ըրած բանը արդար երեւնայ. և որչափ աղաչանք ընես, օրէնքը չի խոնարհիր. վա՜յ այն մարդն կը ընկնայ, որ ուրիշը ոչնչացնել իրեն շահ համարէ, ու թէ յանցանքը փնտռէ։

194

Այսպէս և գեղօղք զենքեանս համարին,
Արդար դատաւոր լինել անձանկին.
Սուտ պատճառանօք խաբէն զմարդիկ,
Սակայն չէք խաբել յանխաբ [illegible]:
Ո՞ւր յայտնեցաւ երկար պատմութիւնք բանին,
Եւ նորքին պատճառ փոխանց [illegible].
Արդ ճշմարտութիւն անցնելով 'ի բեմին,
Գոհանան է համար գործոց զեկողին:

ՀԱՒ ԵՒ ԱՐՏԱՎԱՐ

Գործ խոհականն հատուցն մտաց,
Ջիգեցըն ընտրէ յերկուց չարեաց:

Բարէ ծնողք զաւկին սիրուն,
Գերէ ներելն օտարներուն:

ՀԷ. Հաւու մը նոր հանած ձագուկները [illegible] [illegible] տղաներուն մէջը, և իր [illegible] շատ [illegible]. երբոր անհոգ [illegible], ա- հա [illegible] հոն երթալու, և մէկ կէն [illegible] մեկցաւ, որ ինչ ինքն ձագերուն վրայ: Անասնա- նը հաւուն ինչպէս կրնար ընել ըսաւ, որ աղո- ւէ ձագերը. մինչև փախաւ [illegible] մէկ ապաւինով գոց տեղ մը, որ մօտ էր, և հոն գտաւ մէկ վանդակ խաւլեռ մը, մնաց ձա- գերուն անոր [illegible] պահպանեցաւ: [illegible] երկ- րորդը տեսանելով զայն՝ շատ մը [illegible] [illegible] հաւը ձագերուն առատ առաքաւ: Բայց հաւին [illegible] այն էր որ գտնէ ձա-

գերը աղջամուղջի կըլլայ անհաղորդ թշնամութեան ձանձրէն ։

Ինչպէս որ հաւը տառապէր խաթցած գէրի ըն-
թող, ձան ինչ յափշտակել բաղձէին յետոյ մէկ. ա-
ռանց որ ծնողք անէք է իրենց զաւկըներուն անձինք
նային որ թշնամեաց, և չար ընկերներուն յետոյ
ներքին խորհուրդին չարութեր ։

Այս օրինակ է խոհեմ ծնողին,
Որ պահէ զորդիս ՚ի ձեռաց չարին.
Յաւէտ առնու զերն լինել օտարին,
Զի մի՛ այն անմեղք մահու մատնեսցին ։
Եղո՛ւկ ծնողաց որ անհոգ նստին,
Մանկանցն մատնեալ կամս առ չար ընկերին
Զորս ՚ի խոր խուցեալ զամբարտակ ախտին,
Կորուսանել առնէ անյայտ դառնութեան ։

ԿԱՊԻԿ ԵՒ ԹՈՒԹԱԿ

Որչափ ձաղանքն խաղացն լինի,
Մտաւոր անձինն վնասն յայտնի առնէ ։

Ծերոց և ծնողաց կարգադրութեան,
Հաւանիլ ներքին գործ լինի ։

ՀԴ. ( )ր մը կապիկին ու թութակը մէյմա-
ծեցին որ բանակաւ ըլլան, և խելքերնին
դրին որ ընկերնիք մարդ ձեռացնեն ։ Կապիկը

կարծէր թէ մարդու լաթ որ հագնի՝ մարդ կըլլայ , թութակն ալ կարծէր թէ մարդու պէս որ խօսի կըլլայ մարդ ։ Ուստի կապիկը լաթը հագաւ . իսկ թութակն ալ քանի մը խօսք սորվեցաւ . յետոյ երկուքը միատեղ ելան իրենց բունէն գացին բազմութե̃ մէջ Քաղաքը երևցան ։ Տեսնօղը մէկէն կըխաբվէր . բայց որովհետև կապիկը բան չէր կըրնար խօսիլ , և թութակն ալ միշտ մէկ բան մը կըսէր , շուտ մը խաբէութի̃ը յայտնի եղաւ ։ Եւ այսպէս որոնք առաջուց իրաւ մարդ կարծեցին զանոնք , քիչ ատենէն ետև ինչ ըլլալնին հասկըցան ։

Յիմար և ծոյլ մարդը կարծէ , թէ հագուստով և մարդու մէջ մտնելով երևելի կըլլայ , չգիտէ թէ իր շարժուածքն ու խօսքը մէկէն ինչ ըլլալը կիմացընեն ։

Խրատէ՛ առակս զոհ քննել յոգին ,
Մի՛ խաբէութե̃ նմանիլ վեհին .
Զոր ինչ ետ բնութի̃ այն է բուն անձին ,
Որ ոչինչ իւիք փոխի բնաւին ։
Զի՞նչ շահ զգեստուք ծածկել զարտաքին ,
Բարեձև կեղծիլ՝ի զարդ օտարին ։
Երբ ներքին նորա անկիրթ իցէ անբան ,
Վաղ խայտառակէ զանիմաստ հոգին ։

ԳԱՅԼ ԱՂՈՒԷՍ ԵՒ ԿԱՊԻԿ

Ցաւջողամիտք յանհնարինս ,
Զեղլու խրաց հեշտ հնարին ։

Գիտուն մարդը երբոր սուղէ ,
Այն բանին ճար կը գտնէ ։

Հզ. Գայլն ու աղուէսը կապիկին առջին հակաճառութիւն կընէին իրարու դէմ ։ Գայլն ամբաստանութիւն կընէր, թէ աղուէսը գողցեր է իմ կերակուրս ։ Անալ կուրանար թէ սուտ է ։ Իսկ կապիկն՝ որ կը ճանչնար երկուսին ալ բնութիւնը, մեծ տարակուսանքի մէջ ընկաւ, թէ որուն հաւատայ . ուստի միայն այսանկ պատասխանեց ։ Երկու կողմն ալ շատ հակառակութիւն ընելէն ետև, պարտք դըրաւ իրենց որ չի խօսին, և այսանկ պատուիրեց անոնց ։ Ո՞վ գայլ կը պարտաւորեմ քեզ, որ հատուցում ընես . որովհետև դուն աղուէսէն կը պահանջես զայն, որ քեզմէ բան մը չէ առած . և դուն ալ ո՞վ աղուէս պէտք է որ հատուցում ընես . վասն զի կուրանաս պարտքդ գայլին որ գողցեր ես ։

Անխելք են անոնք որ Գիտութիւնը բանի տեղ չի դնելով կէն աշխարհիս զաւակներուն բան սոր-

վերջնելու. Վա՜ որ գիտուն մարդը ամէն բանէն ճամբան գտնելով անօթի չի մնար, և ամէնուն առջին յարգութեն ունի ։ Իմաստութիւն է նմանութեն այ, կըսէ իմաստուն մը ։

Այս իմաստանոց է և ոչ անգիտականին,
Գտանել հնարս յանհնարս դատերին.
Զի երբ խորամանկք ընդ միմեանց վիճին,
Գործ է գտանել անշուշտ զվիճելին ։
Ահա աստ յայտնի միտք համաձայնեցելին,
Որ շահի զսերտ վիճողաց կրկին.
Ուսիր ընդ գիտնոց նստել կենակցել,
Հանճարոյ նոցին բաժանորդ լինել ։

ԱՂՈՒԷՍ ԵՒ ՄՈՐԵՆԻ

Ի ազգային օրէնք բնական՝,
Պատուել զհիւր զօտարական ։

Մարդկութեն դէմ չար գէշ բան է,
Որ հիւր օտար չի գթարէ ։

ՀԸ. Մէկ մարդ մը աղուէսին ետևէն ընկած որսալու համար. անալ փախաւ գնաց մորմենիին մէջ մտաւ պահուեցաւ, որպէս զի կարենայ աներևոյթ ըլլալ հալածողին տեսութենէն. բայց նայեցաւ որ մորմենիին փշերը վրան գլուխը պատռեր են՝ ըսաւ ինքիրեն. այս ինչ անխելքութիւն է իմին ըրածս, որ այս անզգամին ապաւինեցայ.

մ՚ն այնչափ արուն Թափեցի հոս, որ չէր կրնար որսորդն այնչափ համնել խմել։

Մորթինին օրինակ է անհամբեր մարդկանց, որ օգտակարանին չեն ուզեր պտուղ ընել. բայց ամենէն առաջ մեզ օրէնք է, պտղել հերուր մտաւորութիւնը, և յետոյ էական օգնութիւն ընել։

Խոհեմ առ ամենայն խորհուրդ դնողին,
Պատուել պէտք օտար իր ընկերաց անունն Թէին.
Քանզի խրատուանք օրէնք ազգայոյն,
Զայս ուսուցանեն անձնային աղքն։
Զինչ շահ ընդ յարկաւ լինել ընկերին,
Եւ պատսպարել՚ի ձեռաց գայլին.
Ցորժամ տանուտէրն գտանիցէ յանձին,
Մերժէ հալածէ նման գազանին։

ՄԱՐԴ ԵՒ ԿՈՒՌՔ

Զայնես մաղթես հի՞մ զանազանն,
Զի լսել չունի յինքեան։

Խոսափորքին խօսք չի դպչի,
Ինչ որ ըսես քար կը կորչի։

ՀԶ. Մէկ մարդ մը չէր հեռանար իր կուռքին առջեւէն. և միշտ կը շողոքորթէր կաղաչէր ու կաղօթէր. որ մը խունկ կը ծխէր, որ մը զոհ կընէր անոր համար որ կուռքը

իրեն ոսկի և գանձ տայ . բայց փուճ տեղը կաշխատէր . մն զի կուռքն անանկ խլացեր էր, որ սատակ մը չէր տրուար խեղճին : Ուստի մարդը հարստանալու տեղը՝ աղքատցաւ : Բայց և այնպէս ետ չի կեցաւ, այլ աւելի սկսաւ աղօթք ընել, և պաշտօն մատուցանել կուռքին . բայց բան մը չի հասաւ ձեռքը : Ժամանակ մը շարունակեց այս բաներն ը-նելու, սակայն պարապ ելաւ : Վերջապէս համբերութիւնը հատաւ, օր մը յուսահա-տելով առաւ կացինը զարկաւ կուռքը կտոր կտոր ըրաւ . մէյմէնալ տեսաւ որ կուռքին մէջէն ոսկիի կտորվանք թափեցան . ո՜հ ո՜հ կըսէր ժպտելով ինչ է այս, այս ի՞նչ-պէս բան է . ուրախութենէն խելքը գլխէն գնաց : Ահա կըսէր իրաւի մէկ անձոռնի էծ մը . ես կրնայի՞ հաւատալ թէ աւելի պիտի վաստըկիմ եղեր զայն ծեծելովս, քան թէ աղաչելովս :

Խոփաւորք անգութ մարդը աղաչանօքով չէ կակըղնար, այլ բռնութե . ինչպէս արծաթասէր մարդը ոսկին անանկ սրտին մէջ կը պահէ որ մար-դու օգնութե մը չըներ . բայց մահին բռնութեը այնպէս կընէ, որ ժառանգացն կուլլան պահած ոս-կիները :

Տե՛ս զիմա՛րգ ձայնէ անլուր արձանին,
Ում լսել ոչ ետ մատ քանդակողին .
Միայն 'ի պատիւ եդ 'ի լանջս ոսկին,
Զոր և տալ չունի թէ ոչ փշրեսցին :
Այս օրինակ է անգութ ագահին,
Որ ամուր փակէ զոսկիս 'ի սրտին .

Բանք տղոցանաց ոչ աղդէ նմին ,
Արկածիւք ևեթ հանէ զայն ուսմին ։

ՄԱՐԴ ԵՒ ԵՐԿՈՒ ԿԱՆԱՅՔ

Վայ որ մատնէ զինքն կանանց ,
Համեն յիւրմէ խելս ընդ հերաց ։

Թէ որ պէնդ ֆիքրոց մարնէո ,
Խնէշէ մոփէ շաափոլ կէշլէո ։

հէ. Երեկ մարդ մը սկըսեր էր հալևորնալ. և կընայեր որ հաճոյ ըլլայ՝ իրեն երկու սիրելի կնիկներուն. որոնց մէկը պզտիկ էր, ու տարիքը քիչ. իսկ մէկալը տարիքն առած տեղքն ալ գացած էր ։ Ասոնք կախորժէին որ երիկնին իրենց յարմարցընեն. և երկուքն ալ իրենց ախորժակին հետևելով մեծ հոգ ունէին որ փոփոխ սանտրեն անոր գլուխը ։ Բայց մարդուն բանը շատ գէշ եղաւ. վասն զի պզտի կնիկը երբոր անոր գլխուն վրայ կը տեսնէր ծերութեան նշան ճերմակ մազ, բառը հանելով կը փետթտէր որչափ որ գտնէր ։ Մեծկալ կնիկն ալ երբոր կը տեսնէր սև մազ բոլորը կը փետթտէր ։ Եւ այսպէս քիչ ժամանակին մէջ մարդուն գլուխն եղաւ կընտակ տաղ ։

Արխադաշըն ֆիլխոսֆան կըսէր , թէ մէկ չար կին մը կարօղ է խնըշացըներն ու կորուծընէու.

հայոց երկրորդ Ներսէսը մէկ որ ըլլան էին մէն նոր-նոր ըրէր. անոր համար Զօրաւարներ Ամառան-նութիւն ըրաւ, Եւ ինչէն գործառ ?ան ըն ?այ աշխարհէին մէջ:

Ո՜վ քանի՜ սպառուշ մեղկ կնամարդիկն,
Մտանեալ կայ՚ի ձեռս վատ կանանց կրկին.
Զգի՛ ընդ առասպելս ուր նորա կամին,
Թափեալ՚ի խելաց զերթ խելագարին:
Ուսի՛ր արթուն կալ՚ի վերայ անձին,
Զմտանել՚ի ձեռս քաղցր յուշկապարկին.
Որ այնչափ է կար շրթանց և լեզուին,
Ցաղթել իմաստնոց արքայից բազկին:

ՀԱՅՐ ԵՒ ՈՐԴԻՔ

Քան բերդ ամուր զի՜նչ հաստատուն,
Բայց միաբան եղբայրութիւն:

Որչափ եղբարք միաբան են,
Անոնք թշնամի միշտ կը յաղթեն:

ՃԶ. Մ՛էկ մարդ մը ծեր շատ որդիք ունէր. երբոր հասաւ վերջին ծերութեան, և տեսաւ թէ մօտ է վախճանին, կանչեց քովը բոլոր որդիքը. Նայեցաւ որ ամենքը քովը են ժողված, բերել տուաւ մանաւոր ցուպեր [illegible]-նէր, և բոլորը միասնեղ կապեց ու տուաւ մեծ որդուն, հրամեց որ կոտրէ: Անալ յանձն առաւ. բայց որչափ որ ջանաց՝ և շատ անգամ ուժ տուաւ որ կոտրէ, չէ

կրցաւ կտրէր էր։ Այսպէս տրուաւ զայն երկրորդին. անալ տրուաւ երրորդին. ոչ մէկը ոչ մէկալը կրցան կտրել զայն կապոցը։ Անանկ որ եղաւ ծերն առաւ զայն կապը քակեց, ու զատեց. ամմէն մէկին մէյմէկ հատ տրուաւ, և հրամեց որ երկրորդ անգամ փորձեն, ու կտրեն. բայց անոնք առանց դժուարութեն մէկէն բոլորը կտրեցին։ Անատենը դարձաւ ծերն ըսաւ. Ո՛րդեակ, երբոր ես այս աշխարհքէս ելլեմ, անանկ պիտի ըլլայ ձեզի. որչափ որ դուք ամմէնքնիդ միաբան մնաք, այնպէս զօրաւոր կըլլաք որ մէկը չի կրնար ձեզի շարժել. բայց անմիաբան եղածնուդ պէս, անանկ պիտի տկարանաք, որ պզտի փորձանք մը ձեզ կրնայ կործանել։

Ուրիշ թագաւորութիւններ կան աշխարհիս մէջ՝ որ միաբանութեամբ կեցած են, անմիաբանութեամբ ալ կործանեցին։ Հայոց թագաւորութիւնը տեսէք որ միաբանութիւն կար՝ այնչափ մեծցաւ որ աշխարհքի տիրեց. բայց անմիաբանութեամբ քիչ ժամանակին մէջ ոչնչացաւ։

Զի՞նչ հաստատութիւն գոյ երկրի երկնից,
Որ քակել զօրէ զկապ միաբանից.
Զի երբ միաբան եղբարք գտանին,
Դիմամարտեն ուժոյ բոլոր աշխարհին։
Ցե՛ր վերայ կանգնի գունտ տիեզերին,
Բայց 'ի միաբան տարերց չորեքին.
Ի քակել սոցա քակի և աշխարհ,
Ի քակել եղբարց քակի տունն ամենքին։

ՀՈՎԻՒ ՍՏԱԽՕՍ

Զի՞նչ զբօսանք ստախօսին․
Երբ հաւատայ ոչ ոք նմին ։

Այն է վարձանք սուտ խօսողին,
Որ ճարդ լսուար Իրեն խօսքին ։

ՀԹ․ Հովիւ մը իրեն զբօսանք էր ըրեր, որ ատեն ատեն կը պոռար գայլին դէմ, թէպէտ բան մը չէր տեսներ ։ Այս ձայնը երբոր կառնէին գիւղացիները վազելին կու գային ։ Իսկ հովիւը շնորհակալ ըլլալով անոնց աշխատանքին համար՝ կը խնդար զուարճանալով, և շատ անգամ այսպէս ընելով կը խաղար ։ Սակայն եղաւ որ օր մը իրաւ եկաւ գայլը մտաւ ոչխարներուն մէջ․ սկսաւ կանչել պոռալ հովիւը որչափ որ ձայն և ուժ ունէր․ բայց որչափ իրեն օգնութիւն կանչեց պարապ եղաւ․ վն՟ զի գիւղացիները կարծելով, թէ սուտ կը պոռայ չուզեցին երթալ անոր օգնութիւն ընելու ։ Ուստի յաջողեցաւ գայլին, որ բոլոր ոչխարները պատառեց ։

Ստախօսի ճարդոտն շահը, այն է որ շիտակ խօսքին ալ ճարդ լսուար, և մէկէն քով հաստատարմութիւն լսանի․ որովհետև սուտը՝ մէյ ճշմարտութենը հակառակ է ։ Ուստի հին ատենը սուտ երդում ընողին լեզուն կը կտրէին ։

Այս շահ պատրող խաբող սուտ ըղձերուն ,
Որ 'ի սուտ փոխէ զերջանկութիւն իրեն .
Հաւատալով գալով անխոհեմ ճշմարտութեան ,
Անհաւատարիմ լինի բոլորին :
Արդ մի՛ հետևիր դու սնոտիութեան ,
Որ զերկին նշմարելի զերթ սուտ բանին .
Զի որ միանգամ ստելով է խաբել ,
Բնաւ բանք և գործք անհաւատալի լինին :

ՈՒՐՈՒՐ ԵՒ ԼՈՒՍԻՆԵԱԿ

Երգ և նուագ չեն ընդունակ
Ի կերակրել զորովայն դատարկ :

Աճըն քարնըն օւէնը նէյ .
Աւէնք տուրքս մըշտ կէլ կէլէյ :

Ճ . Ուրուր մը շատ անօթի ըլլալով կը բռնէ ճամբէն մէջ մէկ լուսնթեւակ աղուոր մը : Ո՛վ ուրուր, կըսէ, լուսնթեւակը իմ կենալս խնձի բաշխէ , ես քեզի մէկ բան մը երգեմ որ զմայլիս . վա՛յ զի իմ ձայնս դուռն զիրանս որ անծանօթն ալ կրցած ըլլայ : Գոռոզաբար նայելով , եւ սաստիկ կարծելով յօժար աղաւնոյ կը ըսէ քու ձայնդ , թէ որ չերժանեալ ներքինն , թէ հիմա ամէն կատարութեան ուժով կերակուրի , բան թէ երգեանաք : Զայս ըսելով կերաւ .

Ամէն քան ծառայող ամէն, ապերախտ եղած էա-նը միշտ յառ կըլլայ. չար մարդ կայ որ գործէն ապերախտ բաներու հետ ըլլալով համբաւաւոր էա-նէն եւ կը մայ ու խեղճ կըլլայ :

Ուսի՛ր չլինել թոյլ 'ի պատմութիւն,
Գնալ 'ի զբօսնուլ յերգս ընդ նուագին.
Ա՛յլ է ժամանակ վաստակել շահել,
Եւ այլ ժամանակ խօսել և հրճուել :
Քանզի հեզգ 'ի գործս զնան զժայլին
Ի լուր քաղցր երգոց ձայնի հնչառութեան.
Թողուն լքք դատարկ զերեկանց արօտայն,
Լնուն զպետս բազմանաց լով օգին :

ԱՌԻՒԾ ԵՒ ԱՂՈՒԷՍ

Բնութիւն շողոմոգ նման ձիթոյ
Ցանզ ելանէ յերես ջրոյ :

Կեղծաւորները եղի նման,
Կըլլեն կըլլան երես կելլան :

Տես. Առիւծ մը թագաւոր ամէնայն անասնոց՝ ծառայութեամբ ըրաւ ամենուն կենդանեաց նեղութիւն, թէ ով է որ զան ինձի հնազանդութիւն, և ծառայութեան ցուցնէ. ու ամէն անասունք առ փառքերին եկան, ու խոստովանեցան որ հնազանդին միշտ : Մինակ աղուէսն ուշա-ցաւ, և ամենեքեան եկան երկրպագութեան առիւծին : Իսկ առիւծը երբոր բարկութիւն կը մարե-

չէր՝ աղուեսը խոնարհ ձայնովմը ըսաւ ։ Տէ՛ր իմ, ժամանակ չունեցայ երեւնալու տէրութեանդ առջին. վասն զի ուխտ՝ որ ունէի քու վըրադ մը միայն պատահմաւ եղաւ խելքն ուշանալուս. որովհետեւ լսածիս պէս Թագաւորիդ վաղեցի գնացի կուռքերն աղաչելու, Թէ որչա՛փ ալ ատեն Թագաւորդ կը ։ Իսկ կուռքըր՝ որոնց ամենն օր քեզի համար կաղաչէի ով Թագաւոր՝ ինծի վկայեց ուրախութիւն, որ սրտիս մէջ ունէի. վասն զի հաստատեց, Թէ առիւծներուն մէջ մէկ Թագաւոր մը չէ եղած, և չպիտի ըլլայ անանկ երջանիկ և երկայն ժամանակ Թագաւորութիւն ընող, ինչպէս դուն ։ Ու ահա այս լուրս ժամ մը առաջ տէրութեանդ ուղեցի հասցընել. բայց կուռքերն քով ուշանալս Թող չի տուաւ ընելու ։ Այս անմեղադրելի խօսքս անանկ-շատ հաճելի եղաւ առիւծին, որ չէ Թէ միայն չի բարկացաւ, այլև շնորհակալ եւ եղաւ անոր ազնուականացը վրա, և ամենէն աւելի սիրով ընդունեց զայն ։

Առիւծը օրինակ է անանց իշխաններուն, որ երեսպաշտօղ կեղծաւոր մարդուն խօսքին աւելի կապուած ու կը դառնան, քան թէ համարձակ բարեկամին, որ անոնց շահուն համար կը խօսի. վասն զի անանքները ամէն բան կ'ուզեն, ու սէրին երեսն ալ կեղծեն ։

Զխաղող հեշտաւոր ձայն փաղաքշական,
Ի լուր ընդունող ազգաց մեհեկ.

Զի յաւէտ նոցա պատուիւ յաղթութիւն ,
Եւ ոչ իմաստնոց տան աւանդութիւն ։
Այս է գեղեցիկ վախճանք նոցին ,
Որ շողոմոգ բանիւ խաբեն և հաճեն .
Եւ զայն ոչ գիտեն թէ բանիւ միայն ,
Ի միտս ծիծաղելի լինին շողոմոգին ։

ՄՐՋԻՒՆ ԵՒ ԱՂԱՒՆԻ

Բարերարողն երախտագոյն ,
Գտցէ բարիս ըստ իւր չափուն ։

Բարին ըրէ ծովը նետէ՛ ,
Շատ անգամ կուգայ քեզ կը գտնէ ։

ձբ . Մէկ մրջիւն մը անզգուշութեամբ կիյնի պզտիկ գետի մը մէջ . երբոր կը խեղդուէր հոն՝ աղաւնի մը կը տեսնէ զայն , և ծառի ճիւղիկ մը կը ձգէ ջրին մէջ , որուն վրայ կայնած էր ինքը . և այն կըլլայ մրջիւնին իբր նաւ մը , որ ցամաքը հանելով կազատէ զայն ։ Ցամաքին ելլելու ատենը որսորդ մը կը լարէր աղեղն ու աղաւնիին կը նայէր . երբոր պիտի նետէր զարնէր , մրջիւնը հասկըցաւ իր բարերարին վտանգը , շուտով վազեց եկաւ որսորդին ոտքը խածաւ ։ Իսկ որսորդը վիրաւոր ըլլալով ձայն ելաւ , աղաւնին իմացաւ թռաւ ։ Եւ այսպէս մրջիւնն որ պարտական էր իր կեանքը աղաւնիին , փրկեց զայն փոխադարձ . և այս մի-

ջոջով հաստատուած ըլլալ անոր բարերարու-
թեը , որ առատր էր անկէ ։

Օրինակ է խոնարհաց արդարութե , որ մէկը ինչ ողջկութե ըրաւ մեկալին , անաւ անոր վայն ըրաւ իրեն մեծութեը լսփոան նայելով . կը չի ամէն գործը՝ ընողին արտնճանեն կը լսփէի ։ Ուոփի ամէն մարդ պէտք է ըստ իւր լսփոան և բախոփիտ ճանձնալով հատուցում ընել ։

Այս է սեպանել պատուած ակրոււնւոյն ,
Որ կշուէ բարիս ըստ արդար չափուն ․
Թէ արար՝ յորմէ չունէր ակն առնուլ ,
Յանձնիաղ գանձէն կշռի չափ նոյուն ։
Եթէ բաժակաւ ջուր չափեա փոքուն ,
Անդրէն քեզ ջամբին թաթաղուն գետոցն ․
Եթէ նպաստ ինչ առնես կարօտին ,
Անկարօտ մնաս ՚ի մեծակ կրկին ։

ՄԱՅՐ ԵՒ ԳՈՂ ՈՐԴԻՆ

Որ մշ զորդւոյն չար գործ պատժէ ,
Դարշ ոճրագործ զնա առնէ ։

Ողէր պատկին աղէկ կուզէ ,
Ամէն պակաս միշտ կը շակէ ։

ձգ ․ Մայր մը իր որդին չէր պատժէր բնաւ պզտիկ գողութեն համար ․ որ մանկութենն

սկսաւ ընել, և իրեն սովորութիւն եղաւ։ Ուստի որչափ որ հասակին աճեցաւ, այս չարութիւն ալ հետը աճեցաւ։ Տղայութեն ատենը խնձոր մը առաւ, և մէկը չի մտածեց զինքը պատժելու։ Երբոր գնաց դպրատուն ընկերներուն գրքերը կը գողնար ու կը տանէր մօրը ցոյց կուտար. իսկ մայրը խնդալէն 'ի դատ ուրիշ բան չէր ըներ։ Աւելի որ մեծցաւ՝ սկսաւ դրացիներուն տուները թալլել, և ծանրագին բաները գողնալ. սակայն խրատ մը կամ նախատինք մը չի լսեց մէկէն։ Շատ չանցաւ, գէշէն գէշ եղաւ. և անանկ չարացաւ, որ սկսաւ քաղաքներուն մէջ և մեծ ճամբաներուն վրայ աւազակութիւն ընել. մինչև դատաւորը բռնեց զինքը, ու արդարութեամբ դատապարտեց, որ կախուելով մեռնի։ Երբոր վեր պիտի հանէին կախաղանէն, աղաչեց քանի եղողներուն, որ մայրը բերել տան, ու՛ր է նէ չը-նորհք ընեն զանեն իրեն համար, որ ետքի անգամին ալ տեսնէ։ Մայրն որ եկաւ խընդրեց որ իրեն մօտենայ, և ձևացուց թէ կուզէ գրկելով բարևել։ Բայց ականջներումը բռնեց անոր ականջին ու քաշեց փրցուց. յետոյ դարձաւ ժողովուրդին ըսաւ։ Գու՛րաններ, թէ որ այս թշուառականը զիս պատժէր խրատէր մանկութեան ատենը, որչափ անգամ որ այս չարութիւնը կընէի; հիմա ես ասանկ դարշելի մահուամբ չէի մեռնէր. ուրեմն դադարեցէք ալ մի՛ զաւակնուդ ըրած բանին վրայ. վ̄ն զի ես մայր չեմ ճանչնար ինծի ասիկա, այլ մեծ թշնամի։

Խրատ ըլլա՛յ ծնողաց, որ փղձկանքին մանկութէ ապէնը չեն նայիր ու զաւածեն երբոր մէկ քան մը կրակին կը փետեն. Հա՛ չի մոմ կըլլային ա-նաւք, քանի որ կակուղ են՝ ինչ որ ստորագրես զայն կ'ընեն. երբոր մեծնան անանկ կը մնան: Ով որ զաւկները խրատել չուզեր՝ կարէ իր զաւակը. Ով որ կը սիրէ՝ կը խրատէ, կըսէ Սողոմոն:

Ահա զառանողէտ ուսուլ ահագին,
Մայրն է գժնդակ գահէն զաւակին.
Գառամի և պառաւէ զիւր ծնօղ որդին,
Հատուցանէ ոանէ մահապէր կայծին:
Ո՛վ քանի՛ պատրանք են խոհեմ ծնողին,
Ուզէլ խրատել զիւր անսաստ մանկունին.
Եթէ միանգամ խնայէ նմին,
Որդայ զայն ապա առ կախաղանին:

ՃԱՆՃ

Ըստանակերգին կասող է խեր յագ,
Ուտէ պայթի մեռնի անյագ:

Ծակաչք մարդիկ են ծակ կարաս,
Որչափ լեցնես միշտ է պակաս:

Մկն. Մ՚էկ ատուակել շատակեր ճանճ մը կը մտնէ կերակուր եփելու տեղն ու հոն շատեր զուլոս ուտելու համար պտուկին մէջ կը խըխտբոտէ, և այնչափ շատ կուտէ կը խեղ-շատերուցը, որ մինչև ճաթի հոն կը մեռնի:

Օրինակ է գինեմոլ և շատակեր մարդկանց, որ ուտելով խմելով կեանքերնին կուտեն, և հոգւով մարմնով կը կորսուին. մանաւանդ եթէ որ ուրիշին բանը գտնեն ուտելով ալ չեն կշտանար. Ըսեն թէ մարդկային ախորժակը կրակին նման է, որչափ շատ փայտ, այնչափ աւելի կը բորբոքի, մինչև որ հատնի։

Ապաժոյժ անյագ կերօք շատակերին,
Ցանկայ զծով ըմպել յորովայն ճանճին.
Որչափ շատ է կերն այնչափ խղձք ածին,
Մինչ անյագութեամբ պայթիլ գլխովին։
Ուտէ՛ր չափ դնել անյագ որկորին,
Մի՛ պայթուցանէր զայն 'ի յուտելին.
Զի բազումք աստ բարձան 'ի միջոյ,
Կերակուր եղեալ որդանց զազրագին։

ՀԵՐՄԷՍ ԵՒ ՓԱՅՏԱՀԱՏ

Ճշմարտախօսն առ դիւցազանց,
Եւ առ մարդկան միշտ գերազանց։

Շիտակ մարդը միշտ կը շահի,
Եւ ամենուն է սիրելի։

ձէ. Փայտ կտրող մը կը կորսընցընէ կացինը, և որովհետև անով իր հացը կը վաստըկէր, աղքատ մարդն սկսաւ յուսահատելով աղաչել Հերմէս (չածին)։ Իսկ Հերմէս խղճալով անոր աղաղակին վրայ կերևնայ իրեն, ու մէկ արծըթէ կացին մը ցըցընելով կըսէ. այս

չըլլայ կորսնցուցած կացինդ ։ Պատասխանեց մարդը առանց տարակուսի, թէ չէ ։ Դարձեալ՝ ծերը ցըցուց իրեն մէկ ոսկիէ կացին մը, թէ արդեօք այս է ։ Ասաւ չէ, ըսաւ մարդը ։ Յետոյ ցոյց տըւաւ իրեն եր-կըթէ կացին մը ։ Աղաղակեց փայտ կտրօղը, թէ ահա այս է որ կը փնտըռեմ, և ասոր համար միայն քեզի կաղաչէի ։ Ա՛ռ, ըսաց ծերը, և քու բարի հաւատքիդ համար առ մէկալ երկուքն ալ ։ Եւ այսպէս ստիպեց որ իրեքն ալ առնէ երթայ ։

Կապադովկացիները կըսէին թէ Հերմէս էր որդի Դիոսին, և զանազան արուեստներու չարծ կըր-վէր ։ այս պատճառաւ ճարպ կարօղը անոր կաղա-չէր ։ Որ մինակ է շիտակ և արդար խօսողը, անոնց մարդը Գիշ Եաքի կը գտնէ ։

Յետո՛ր զանկեղծութի Ճշմարտախօսին
Զխօ՞րդ խնկարան զատաւ 'ի բանին,
Ու եղծանելով զխակն առ ցանկութն,
Պանծայ և շահի զարծաթն և զոսկին ։
Վա՜յ որ 'ի շահել զանցաւոր ոսկին,
Երդնուն և խառնեն սուտն ը Ճշմարտին.
Որով և խաւար է նոցա բաժին,
Որդի ստութն խաւարասիրին ։

ՄԱՅՐ ԵՒ ՏՂԱՅ ԼԱՑՕՂ

Է վայելուչ ազնիւ ծնողաց,
Ժուժկալ ձայնի անմեղ մանկանց :

Մի՛ գէշ դատեր լացող տղան,
Որ չար կամք չի գայ գլխուն :

Հք. Տղայ մը օրոցքին մէջ պառկած անդադար կուլար որ մօրը համբերութիւնը հատաւ, և սպառնալով ըսաւ տղուն. Թէ որ ձայնդ չի կտրես հիմա քեզի գայլին կուտամ՝ որ ուտէ : Այս խօսքս որ կըսէր՝ գայլն ալ տանը պատուհանին տակէն կանցնէր ու կը լսէր սպառնալիքը. ուստի մէկէն վազեց ուրախութեամբ դրան եկաւ, որ յանկարծակի տղան որսուն կը սպասէր : Բայց չարաչար խաբուեցաւ. վ՛ն զի մայրը գայլն տեսածին պէս շուտ մը կանչեց դրացիները, որոնք փութալով եկան օգնութեան, և գաւազաններով երկաթներով ծեծելով հալածեցին գայլը :

Գէշ չէ որ մէկ մայր մը [illegible] տղուն անէծք տայ. և բարկութիւն գէշ խօսք բերնէն հանէ, որ չըլլայ թէ չար պատահմունք մը հանդիպի. վ՛ն զի օրհնենքն ալ շուտ կը հասնի, անէծքն ալ հոգևոր և մարմնաւոր ծնողաց : Արիստոտէլ կըսէ, թէ աղէկութիւն ու գէշութիւնը տղին մօրմէն կը ճանչցուի. որովհետև տղուն կէսը մայրն է :

Զխեղդ վաղ ըմբռնեալ կորից մօրն զծայրն,
Վազէ մերձ առ դուրս խլել զորդւոյն .
Այս գործ է չարաց որ գնան շրջին,
Դաւել խարդախել ծնունդս ընկերին ։
Սակայն ազնիւ գութ ծնողականին,
Չժուժայ մերձիլ առ նա թշնամին .
Մերժէ հալածէ անդէն առ նմին,
Զի գան և հարուած են չարաց բաժին ։

ԿՐԻԱՅ ԵՒ ԱՐԾՈՒԻ

Որչափ հպարտն 'ի վեր ճախրէ,
Այնչափ սաստիկ գահավիժէ ։

Թէ վեր ելլես հպարտութեամբ,
Վերէն կիյնաս ոչինչ կըլլաս ։

ՃԷ. Կրիան օր մը աւազին վրայ քարշ գալով կերթար կաղաչէր արծիւին, որ զինքը վեր հանէ օդին մէջ. և որչափ կարելի է շատ վեր բարձրացընէ իրեն հետ ։ Իսկ արծիւը անոր խօսքը չը կոտրելու համար առաւ զայն իր ճանկերուն մէջ, հանեց բարձրացուց ամպերէն վեր ։ Մինչդեռ, կըսէր, անհամբերութ կրիան՝ ես վարն եղած ատեննս ամէն կենդանիները զիս կանարգէին. բայց հիմա աւանց կարծեաց նախանձելով ինձի կը նային, որ անոնցմէ շատ վեր եղած եմ ։ Արդար սաստիկ կը պարծենար, արծիւը հոգնելով զայն բանելու, և ճանկերը բացաւ ձգեց վար,

Անտառները հարաւոր կրկեան ընկաւ շուառքը քա-
րերուն վրա, ցըրուեր ցըրուեր եղաւ ։

Փիլիսոփայի մը հարցուցին, Թէ ա͞ծ ինչո՞ւ հա-
մար Թոյլ կուտայ չար հպարտ մարդիկներուն, որ
մեծնան ու բարձրանան ։ Անոր պատասխան տը-
ւաւ, Թէ անոր համար, որ բարձրէն իյնելով լա-
մը կտոր կտոր ըլլան . ինչպէս եղաւ Հէման ։

Ահա գաղափար ամպարհաւաճին,
Որ պանծայ ընդ ճախր յածիլ յեթերին .
Ոչ գիտէ Թէ այն բարձրագոյն վիճակ,
Գուշակէ նմա կործանումն ուժգին ։
Զի՞ բերկրի հպարտն 'ի Թափչ բաղդին,
Երբ քան զայլս 'ի վեր բարձրանայ յերկին .
Երկիւղ ոչ բերկրանք նմա պատշաճին,
Զի չար է անկումն գերամբարձ կային ։

ԽԱՉԱՓԱՌ ԵՒ ՁԱԳ ԻՒՐ

Բարի ծնողաց առաքինի,
Լինին որդիք առաքինի ։

Զաւակն ինչ որ ծնողէն տեսնէ,
Չար Թէ բարի սորվի նէնէ ։

ճը. Խաչափառը կըսէր իր ձագին, Թէ
պէտք է որ դուն զքեզ շտկես այդ մեծ պա-
կասութենէդ, որ շատ ժամանակէն 'ի վեր քու

վըրադ կրտեմնեմ։ Վասն զի կընայիմ որ միշտ ծուռ ծուռ կըգալես եանւորանց․ ինչ չո՞ւ համար ուրիշ կենդանիներուն պէս դէպ 'ի առաջ չես երթար։ Պատասխան տուաւ ձագը․ մայրիկ, ես ուրիշ բան չեմ ըներ, բայց ինչ որ կընես դուն կրտեմնեմ՝ ես ալ անանկ կընեմ։ Թէ որ կուզես ես զիս շըտ-կեմ, նախ դուն սկըսէ դքեզ շտկել։

Խրատական է շաղանդող․ որ ինապէս խոտորնոյ փախչելը օրինակ է անանց ծնողաց, որ իրենց ըիփոյ չէն երթար ուղղութեամբ, և կուզեն որ զաւակներն ըիփոյ երթան․ բայց անհընար է, թէ պղած ծնողաց լաւ օրինակը տեսնելով ուղիղ ըլլայ․ Ու ալ ծնողաց պէս լաւ վարժապետ մը կըրնայ ըլլալ, թէ որ ծնողք մը կուզէ պզտի առաքինի ըլլալ, նախ ինքը թող ըլլայ առաքինութեան որ անալ տորէ։

Այսպէս օրինակ ծնողաց կըկէ՛ն,
'Ի գիրգ սիրտ մանկանց խոր տպաւորին․
Քանզի օրինակ յաւէտ քան խրատ
Լինի ուսանել 'ի դպրոց ծնողին։
Քանի՞ նախատինք անխնամ ծնողաց,
Երբ կամքին զորդիս տանել բարեկեաց․
Ինքեանք զուրկ գոլով յառաքինութեանց,
Ուղղել նկարին զնոցին ընթացս։

ԻՐ ԵՒ ՏԷՐ ԻՒՐ

Զգեստ և զարդ զարմուղն անզօր
Զառնենն արի առիւծ հզօր ։

Ինչ շահ հագնիլ մորթն առիւծին,
Երբոր վախկոտ էղէ ներքին ։

ձԹ. Մէկ էշ մը առիւծին մորթը քաշեր կը հագնի, ու ջաղացքէն դուրս կելլէ, և անտառէն անտառ կերթայ անանկ այլակերպած որ ամէն կենդանիները կըվախցընէ. որոնց որ կերևնար կըմտմըռային, թէ ինչ բանի կըլլանի. ուստի սոսկալի բան մը երևնալով իրենց՝ շուտ մը կըփախչէին դողալով ։ Աւանը հաստատակ էր անոնց մէջ, մինչև առիւծներն ալ կըհալածէր։ Երբոր ջաղացպանը փէյիրձինծին կըփնտռուէր էշը, կըհանդիպի անոր՝ ու մէկէնիմէկ հեռուէն կըճանչէ թէ իրաւ առիւծ է, շատ կըվախնայ. բայց մօտէն որ նայեցաւ՝ տեսաւ իշուն ականջներուն ծայրը դուրս ելած, հասկըցաւ անոր խաղերունը ։ Ան ատենը չհասաւ վրան վազեց, և առանց խնայելու լաւ մը քաշելով խօթեց ջաղացքին մէջ ։

Մարդուս պէտք է որ սաստկինութիւն իրեն բնութիւն ընէ տոկորութիւն. որչափ սարեկն հրա

լաւ բան մը փնտռէ, թէ որ ջանայ՝ ինքն ալ իրենց ընէ. մէ թէ անխելք իշխան պէս հագուստով միայն փառք երևնալ, ու փառքութիւն ցուցնենալ։ Փի-լիսոփաներն ըսեն թէ ամենէն բան բարեկամութիւն իմերդի. մարդը միայն հոգը ըլլալ իր կարգին :

Տե՛ս յիմարութեն վասն առաքինութեն,
Կարծէ զգեստուք մեծ լինել յանձին.
Այն արտաքին է ոչ յատուկ ներքին,
Մերկանայ լինի որպէս առաջին :
Արդ ջանա՛ ունել զարդութեն մեծին,
Գրեալ քանդակեալ ՚ի սիրտ և յոգին.
Զի թէ զլանայ բնութիւն զզարդին,
Դու ունակութեամբ լցո՛ զթերին :

ԳՈՐՏ ԵՒ ԱՂՈՒԷՍ

Եթէ իցես բժիշկ ճարտար,
Արդ արա՛ նախ անձին քո ճար :

Թէ դուն ուզես քեզ լաւ ընել,
Ի՞նչպէս կրնաս ուրիշին ընել :

Ղ. Գորտ մը ճանչնալ սկսաւ մէկ քանի բժշկական խօսքեր, որ լսած էին իր լճին քովերը։ Յետոյ միտքը դրաւ որ կենդանի-ներուն հասկցընէ, թէ սորված է ինքը բո-լոր բժշկութեան արուեստը։ Երբոր ամենէն գի-ծանուցում կընէր, թէ գիտէ բժշկել ամեն-խալ ամենէն կերպով հիւանդութիւնը որչափ ան-

բժշկելն ըլլայ. Մէկ աղուէս մը՝ որ գէշ հիւանդութիւն մ՚ունէր, ուզեց անկէ դեղ առնել: Զայն որ տեսաւ գորտը սկսաւ պատմել, թէ զարմանալի բժշկութիւններ ըրեր է. ոմը առողջացուցեր է, ոմը ազատեր է, քիչ մնացեր է որ յարութիւն ալ տայ: Երբոր պատմութիւնը լմնցաւ, յորդորեց հիւանդն որ բոլորովին անոր դեղերուն յանձնէ զինքը. պէտք է որ, կըսէր, քիչ ժամանակին մէջ առողջանաս: Իսկ աղուէսը մեծ ուշադրութ մտիկ կընէր, մինչև խօսքը լմնցաւ. յետոյ այս պատասխանը տուաւ ծաղր ընելու կերպով մը: Դուն շատ աղէկ բացատրեցիր, իրաւ որ ըսածներուդ շատին կաւատայի, թէ որ չէի մտածէի քեզ տեսած ատենս. վասն զի կըտեսնեմ պռկունքներդ դեղնած և կապուտ, որ ստոյգ նշան է, թէ դուն գէշ տրամադրութեան մէջ հիւանդ ես: Հապա ի՞նչպէս կրնաս զիս բժշկել, երբոր չես կրնար դուն զքեզ բժշկել: Առանց դուրցելով թողուց գնաց:

Օրինակ է անոնց, որ իրենց պակասութիւնը կը թողուն, ուրիշինը շտկելու կընային. Բայց ծաղր կըլլան ամենուն, որ կըսեն իրենց թէ բժիշկ բժշկեա՛ զանձն քո:

Այս տարացոյց է ախտաւոր անձին,
Որ զայլոց զվէրս բուժել վաստակին.
Եթէ ունիս դեղ դարմանիչ ախտին,
Դի՛ր զայն 'ի վերայ քոյդ անբուժ վիրին:
Քանի՞ շաղակրատք նմանեալ սմին,
Բանիւ իմաստուն երևել ջանին.

Սակայն գիտնոց է սակաւ բարբառել,
Զի միշտ լսի ձայն դատարկ անօթին ։

ՇՈՒՆ ԵՒ ԳԱՒԱԶԱՆ

Թուք անարգանք յերես չարին
Վարդ համարին և զարդ գիտնոց ։

Որուն փողն որ խոհեմն չէ կայ,
Չի ամչնար ինչ որ ըլլայ ։

ղա . Վատազած շուն մը կըխածնէր բոլոր անցնօղները. տէրն որ այս ըրած անկարգութիւն իմացաւ, ուրիշներուն հասկըցընելու համար մէկ գաւազան մը կախեց վիզն որ ամմէն անցնօղ զգուշանայ անկէց ։ Իսկ շունը կարծելով թէ այն մէկ պատիւ մը նշան է որ վզին վրա կըտանէր, սկսաւ հպարտանալով երթալ ճամբաներէն գլուխը վերցուցած, և նախատանքով կընայէր ուրիշ շներուն ։ Անոնց մէջէն մէկ շուն մը չի կըցաւ քաշել ասոր անմիտ հպարտութիւը, ըսաւ իրեն. խեղճ յիմար ինչ է ըրած անխելքութեդ. ատանկ բանի մը վրա կը պարծենաս, որ քեզ պէտք է ցածցընել. վասն զի վիզդ անցած գաւազանը չէ նշան քաջութեն, այլ նշան քու չարութեդ ։

Ամօթ չունեցօղ մարդուն ինչ որ ընես՝ Բըէն

Ռեծուռնիան կը ունպէ, և տուէլ գէշ ըլլայ։
Անոր համար Գիտուններըը ամէն լարէն վեր ները-
նէյին անամօթը. և աշօթ+ ներնէյին թէ մէ փանիր
ամօթն էրէսէն։

Սոյնպէս փառասէրք որչափ նախատին,
Զայն շուքն և պարծանք վերապըրեն անձին.
Թէ առ չարութեան 'ի ճակատ խարեն,
Իբրև քաջութեան նշանակ՝ պարծին։
Զի՞նչ անհամբոյր բարք, զի՞նչ գազանային,
Իբրև անպատկառ խածատող ժանտին.
Քանզի յերեսաց երբ ամօթ մերժի,
Աղատ զամենայն առնէ ըստ կամի։

ՈՒՂՏ ԵՒ ԴԻՈՅ

Այր գանգատող հաշէ մաշի.
Որչափ խնդրէ միշտ վնասի։

Տժգոհ մարդը որչափ որ լայ,
Այնչափ վնաս իրեն կուգայ։

Ուղտ մը ատաջար փէյլքն կը տրտունջար Դիոս-ին, թէ ինչու համար չանծներըը ցուլին կմ եղին եղջիւր տուին, ու ինձի միայն ականջ տուին. կերևնայ թէ կըսէր տրտունջողը, եղջիւրներն ինձի այն կենդանիներն շատ աւելի կըվայլէին. և եթէ անոնք գլխուս վրա բուսած ըլլային, շատ աղուոր պիտի երևնային. որ ինձի կընային ծառայելու թէ զարդա-

բանքի և թէ պաշտպանութեան համար ։ Տրտունջին որ լսեցաւ կարծեց, թէ Դիոս պիտոր նայի իրեն խօսքին ․ բայց հակառակն եղաւ, վասն զի բարկանալով անոր անխելք դանդաղանացը վրայ՝ չէ թէ միայն եղջիւր չի տուաւ որ խնդրեց, այլ և ականջներն ալ մանրացուց ։

Տժգոհ մարդը որչափ մեծութիւն ունենայ՝ բան մը կը գտնէ տրտնջալու ․ բայց պէտք է ամ-մէն մարդ իրեն ունեցածին վրա գոհ ըլլալ, և այ ջանալ պալ․ որ չըլլայ թէ այ բարկութենը ու-նեցածն ալ կորսնցընէ ։

Ըստոք ըղձաւ նման տրտնջման թէ հէ՞մ
Ու տանի Ած պայս ինչ զոր կամիմ ․
Զղխանեն զկարգ անմնախմնատրին,
Որ չափով կշռէ զչափ բոլորին ։
Զի՞ քեզ ո՞վ յիմար զի՞ հայնես ուժգին,
Կամի՞ս փոփոխել զկարգ անբաւին ․
Դու կաս ես անարգ և որդն չնչին,
Իսկ նա անսահման զերդերոց բարին ։

ԵՐԿՈՒ ԸՆԿԵՐՔ

Որ ոչ կշռէ զվախճան իրին,
Իւր մնասիւք փորձի յանձին։

Ամէն բանի մէջ մի՛ մտներ,
Առաջ նայէ կրնաս ընէր։

ՂԷ. Մէկ մուշտակ կարօղ մը կըփնտըռէր արջու մորթ փէրէ. մի՛ աշխատիր, ըսին, իրեն երկու դրացիները, մենք հիմա կերթանք հոս մօտ անտառը կըզարնենք մեծ արջ մը կըբերենք։ Ասանկ խօսելով ծախեցին արջուն մորթն ու պարտական եղան որ անոր ձեռքը տան։ Ուստի ելան գացին անտառը. բայց ներս մտածնուն պէս, մէկ մեծ արջ մը ելաւ իր բունէն, վազեց շիտակ ասոնց վրա. այս երկու կտրիճները մոռցան իրենց ըրած առուտուրը, և ուրիշ բան չի մտածեցին, միայն թէ ազատին. մէկը փախնելով վեցաւ ծառն ելաւ, մէկալն որ գիտէր թէ արջը մեռած մարմիններն չի մօտիր, ընկաւ գետինն ու շունչը բռնեց մեռելի պէս եղաւ։ Արջն որ եկաւ տեսաւ զայն գետինը բռնուած, հոտվըտալով ասդին անդին դարձուց. և մեռածի տեղ դնելով ձգեց գնաց։ Երբոր հեռացաւ մէկալ ընկերը ծառէն իջաւ եկաւ ընկերոջը հարցուց, թէ արջն ի՞նչ ըսաւ ականջդ 'ի վար, երբոր քովդ էր մօտեցեր։ Ան ալ կիսամեռ պատասխան տը-

ուաւ, թէ ըսաց որ ամենևին չի ծախեր ար-ջուն մորթը, մինչև որ գետնին վրա ձգած չըլլայ։

Պէտք է ամէն բանին վերջը մտածել և ա-ռաջ ընել. շատ մեծ պակասութիւն է երբոր չի մտածելով խօսքին եկած ընել թեթևութիւն, որ շատ մարդիկ պղջացեր են։

Այս գործ անխոհեմ վաճառականաց,
Որ գին համարեն անծանօթ իրաց.
Է զի նկրտին զրկել օտարաց,
Բայց ինքեանք զրկին առաւաքոյ մտաց։
Զիարդ վայելուչ ընկերականաց,
Հաւատարիմ գոլ խոհեմ 'ի գնացս.
Զամենայն առաջս արդար կշռելով,
Շահին մէջը գոլին յաղանց և յազգաց։

ԱՆՕԹ ԵՐԿԱԹԻ ԵՒ ԱՆՕԹ ԽԵՑԵՂԷՆ

Որ ոչ է գոհ ընդ իւր վիճակի,
Զինքն արկանէ ՚ի մեծ վտանգ ։

Ով որ գոհ չէ իր վիճակին,
Շուտ կը բերէ ցաւ իր գլխին ։

ԴԷՓ. Որ մը երկըթէ ամանը հողէ ամանին ըսաւ, թէ ո՛ղբայր մենք խոհականներն ունէինն մէկ կողմէն ՚ի զատ ուրիշ բան չպիտի տեսնենք. ուր որ բան չէ տեսած, բան չի յանէ պատմել, նաև կըսուի թէ ճամբորդութիւնը միտք կը բանայ ։ Ես կը փափաքիմ որ քաղաք տեսնեմ. թէ որ դուն ալ ունիս այս հետաքրքրութիւն միասնեղ ճամբորդութիւն ընենք ։ Կը տեսնե՞ս այն ջուրը, որ վարէն կանցնի. պէտք է որ մէջը մտնենք, յետոյ թող կուտանք զմեզ ջրին, որ վազելով տանի. և այս կերպով խիստ քիչ ժամանակին մէջ շատ ճամբայ կրնանք ընել. և այն՝ առանց աշխատանքի ինչպէս կը տեսնես ։ Հողէ ամանը շատ հաւնելով այս հնարքիս ելաւ. անկէ երկըթէ ամանին հետ մտաւ ջրին մէջ. անոր ետևէն կերթար, բայց չի կրցաւ շատ հեռուն երթալ. վասն զի երաւուն ոտք անդրին չի դացած կտոր կտոր եղաւ ։ Իսկ երկըթէ ամանն ալ երբեմն ալ ջրին, երբեմն

Ճակտի՛ գլխն ալէկոծեալ միշտ քարէ 'ի քար կը զարնուելէր :

Փոփոխամիտ մարդը մէյ բանը կը թողու մէկալը կ'ընէ . մէյ տեղէն մէկալ տեղ կ'երթայ . բայց ինչ որ ընէ՝ ունինչ է : Մէկը հարցուց իմաստակալի մը, թէ շատ տեղ տանիցի՝ ինչու համար բան մը չի վաստըկեցայ : Անալ պատասխան տըւաւ, թէ դրան շէնք ձեռք պարապընելոյ համար այդոնց ճամբին :

Դժնդակ թշուառութեան փոփոխամտութեան ,
Որ առաստաղական ցանկը տարբերութեանն .
'Ի գլխուն թողուցած՝ մոլորեալ շրջէին ,
Յստակութեան անոր մեղչին կորնչէին :
Քանզի տարակուսին էրց ընտրէին :
Նա դանդաղ գործն եր անցնելը յառաջին .
Որ գժգոհ յետոյ ընդ իւր միջնակին ,
Անմիջական նոյնպէս քանդէ իւրամին :

ՄԿՌՈՒՆԳՔ ԽՈՐՀՐԴԱԿՑԻՆ

Ճողոմ վատաց որշամբ խորհի ,
Աչինչ բարի վճռել ունի :

Վախկոտ մարդէն խոր կը փնտրէն ,
Բայց չա բան մը ընել չիյպեն :

ղէ. Մ՛եծերը խորհրդարդ կընէին , տեղերն ո-
րոշելին թէ ի՞նչպէս կրնան աղուարը կառ-

ւին ճանկէն, որ գրեթէ իրենց աղջկան իրեք մասին երկուքը ջարդեր էր. երբոր ամէն մէկը կը մոմռար իր կողմանէ, մէկ աւելի ծեր մը իրենց մէջէն վեր ելաւ, ծանր ձայնով մը խօսեցաւ: Ես կարծեմ, թէ կըսէր պէտք է այս անզգամ գազանին վիզը բոժոժ շընկըրփուկ կախել, որ քովերնիս չի մօտեցած բոժոժը կիմացընէ մեզի շատ հեռուէն անոր գալը. և այս միջոցով ամէն ատեն կրնանք փախչիլ. դուք ալ կըհաւնիք լաւ, որ մեզի շատ դիւրին կըլլայ այս ճամբով զմեզ պաշտպանելու անոր ամէն խաբէութենէն: Ուստի բոլոր ժողովքը շատ գովեցին այս խորհուրդիս օգուտը, բայց դժուարութիւնը մնաց մէկ մուկ մը գտնելու, որ կարենայ համարձակիլ և բոժոժը կախել կատուին վզէն. վն զի ամէնքն ալ հրաժարեցան, մէկը կըսէր թաթս վիրաւորած է, մէկալը՝ աչքս հեռուէն չի զօրեր. մէկն ալ ըսաւ թէ ես շատ սրտոտ չեմ. մէկ ուրիշն ալ ըսաց, թէ չկրնամ ի՞նչպէս ընելու է: Ուստի ամէնքն ալ զանազան պատճառներ առաջ բերին. անանկ որ առանց բան մը որոշելու բաժնըւեցան գացին:

Տէր ու անշահ մարդիկ որչափ շատ ըլլան, ու շատ մտածեն՝ մէկ լաւ բան մը չեն կրնար առաջանել. վասն զի ինչոր մտածեն չեն կրնար գլուխ տանիլ, անկարող կըլլողան:

Առակս է խրատ ժողովոց վասայ,
Որք նստին վճռել շահ հասարակաց.

Բայց զեփիւռն հնար այնց ժողովականաց,
Խորհել կատարել զօգտակարն ենթականաց։
Զի՞նչ օգուտ խորհել բազմատանջ մտաց,
Եւ թողուլ անգործ զխորհրդեանն խորհած.
Որ ոչ աշխատի յօգուտ ընկերաց,
Ոչինչ մնացէ զուրկ յօգտակարաց։

ՑՈՒԼ ԵՒ ՆՈԽԱԶ

Որ փակէ զգուշութիւն ընդդէմ եղջեր,
Ոչ գտանէ զխարխս բոլոր։

Թէ չէս գիտէր կարօտ եղբօր,
Ո՞չ գիտայ խեղճութէդ օր։

ղզ. Առիւծը մէկ ցուլի մը ետեւէն կերթի. իսկ ցուլն անկէ ազատելու համար, ուզեց փախչիլ նոխազին գոմը կամ ախոռը. բայց նոխազը դուռը գոցեց, ու յանդգնութեամբ եղջիւրներն ալ ցըցուց անոր։ Ետ քաշուելով ըսաւ ցուլը. անզգամ թէ որ դուն չէր տեսանէիր ինծի հալածօղը, շատ պիտի զզուշանայիր զիս այսպէս մերժելու։ Գիտնաս որ եթէ չեմ կրնամ հիմա քու կամօքդ տուն մտնել, բռնութեամբ ալ կըմտնեմ. թէ որ ատեն ունենայի, քեզի կը սորվեցընէի.

[illegible]

Վէքին չափ մը ըմպելին 'ի շատ՝ ձեռս ու փառաւորա-
ղէ, Բերդեր յիշատակն ու Բան չէ Գայ:

Տխուր է այս տառապ անողորմ անձին,
Որ փակէ զգութն ընդդէմ ընկերին.
Փոխան նպաստել փափաքաւորականին,
Երջներ զառնութեն ամբառնայ նմին:
Ոսկե՛ր օգնական լինել ընտանեկին,
Մի՛ զառնայր ընդդէմ մշտատեւ սրտին.
Զի որ ողորմի՝ ողորմին նմին,
Պարտատուոր տանէ զվարձոյն երկնային:

ԴԻՈՍ ԵՒ ԿԵՆԴԱՆԻՔ

Ջանամք զայլոց թերին ուղղել,
'Ի սեպհականն ոչ նշմարել:

Այլոց գործքը շուտ կը խօսինք.
Մերինները տեսնը կը նեղինք:

ղէ. Օր մը Դիոս բսաւ թէ բոլոր կենդա-
նիները թող ժողվըւին առջեւս. մէկ մի կա-
տարեալ համեմատութեամբ երեւնան տրամադրութեան ու պակա-
սութիւնը. եւ ինչ պակասութիւն որ ունենան՝
կըրեն ցուցանել: Միանգամ ալ հնազանդութեամբ եկան
առջին բայց Դիոս կարծեց, թէ շատ զանազա-
նող այսոր գտնէ անոնց մէջէն. փիղը այսոր
զանգատ ոչինչ համար, ուղտը ականջին
համար, մանաւանդ այլքը՝ իր անշնորհք
կազմածներուն համար: Բայց մեծ զարմանալին

այն եղաւ, երբոր տեսաւ Թէ ամէնքն ալ այնչափ համձայ էին իրենց վրայ, մինչեւ արդ-աւերմունքն ալ ոխամերժեցաւ; Թէ ինչո՞ւ Դիտո իրենց վրայ սաստիկ կարծիք դրեր է: Սակայն լաւ կրցան իրարու պատկառութիւնը պահել, Թէ անոր ալեկոծ է բան եւ ելլելու. մէկալէն ալեկոծ է բան պահպանելու: Իսկ ամէն մէկը միասնաւորապէս իրենց կողմանէ անձամբ գոհ կեցան, որ շատ ելլաւ բան մը չէր զգացաւ Դիտոն: Պատճէն ալ համարատութեան ըննորհակալ եղաւ Դիտոսին. և զինքն այնպէս գեղեցիկ դրաւ, որ չէր կրնար ըլլալ:

Մեզի ուրիշի պարկեշտութիւն կեցցինէնք, և զԵղ իապարէլ տրէր էնք. Իսկոր բաւելը տեսնենք ուրիշին ըսածը, ինչպէս կայր էնք մէրինը չէնք տեսներ. Բայց ներանք Թէ նայելինք մերինը շտկէլինք, ան Թէ ուրիշինը:

Այս գանձդառութեան տեսիլ է տալմինն,
• Որ ամբարտաւանութեան վըշտամանան յամեմին.
Բայց իրբեւ խնդրելու Թէ յի՞նչ պատճառին;
Բերելն ընծայերագ ոչ զիւրիշանց Թերին:
Զի՞ քեզ անփորձութեան, զի՞ գոչես ուժգին,
Զի՞նչ պատճառ 'ի քեզ և զի՞նչ յանկարծին.
Մեկին նշանաւորեալ զայլոց ըղձերին,
Ուղղես ոչ զքոյս, միայն ըղձոցին:

ՍԻՐԱՄԱՐԳ ԵՒ ԿՌՈՒՆԿՆ

Թող գովեսցեն օտարք համայն
Զքոյդ պերճութիւն մի՛ քո բերան ։

Քու բերանդ քեզ չը գովէ,
Թող ուրիշը քեզ ծեծօղնէ ։

ՂԷ. Սիրամարգը մէկ օր մը տատասայէս կը պտտուէ զկռունկը. եղնօր պատուական կերակուրները կը պատրաստեայէն, ինչն ակաա խասել թէ ինչ բանով կը զանազանի ուրիշ թռչուններէն ։ Յետոյ ուզեց հասկըցընել այս բարեկամին իր գերազանցութիւնը, թէ որչափ անկէ վեր է. բացաւ պոչը և ցըցուց անոր բոլոր վրայի գեղեցիկ գոյները ։ Իսկ կռունկը խոժոռելով անոր ամբարտաւանութեան վրայ ըսաւ. Բարեկամ, ես կը հաւանիմ քեզի, թէ իմ փետուրներս քուկիններէդ շատ վար են գեղեցկութեամբ. բայց երբոր կը մտածեմ, թէ դուն դժուարաւ կը թռչիս հազիւ տան մը երդիքին վրայ, և ես ամպերէն վեր կը բարձրանամ, երդում ըսեմ քեզի, որ շատ ուրախութեամբ կը միխիթարուիմ ։

Սիրամարգը այսինքն թաւուզ գուշին օրինակ է հպարտ ժողովուրդներուն, որ կարծեն թէ իրեն

Մեր մարդ մը կայ. բայց չեյփէ, թէ ասորեշին փոխեինչ բաներ կան որ ինոր չունի ։

Այսպէս մոլեգնեալ ինքնապաստան ոգին,
Գեր 'ի վեր կարծէ զինքն բոլորին.
Մինչ զերանութիւն գնել խնդալին
Ցաւերևոյթ գոյն յոլման արեգին ։
Զխառն վաղանցուկ պերճութիւն նորին,
Ընդ շարժիլ լուսոյ այն անսիլք փոխին.
Ջանամ պերճանալ երանգօք նորքին,
Առաքինանալ 'ի թև թեթևին ։

ՎԱԳՐ ԵՒ ԳԱՅԼ

Որչափ յանդգնուդն ի՛յէ հըզօր,
Ընդդգէմ բազմաց մընայ անզօր ։

Մէ՛ վըստահիր դուն քու ուժին,
Վախցէ՛ր թէ այլք ինչե՛ր անին ։

ԶԹ. Վագր գազանը ժողվեց իր մօտաւոր կենդանիները, և անոնց գլուխ եղաւ, ու գնաց ոստորգներուն դէմ այս մաքով, որ նախատանաց վրէժը անոնցմէ հանէ. որ ամէն օր կընէին իրեն ։ Երբոր իր զօրքովը երևցաւ անոնց առջին, ըսաւ կենդանիներուն. ով բարեկամներ ես կուզեմ հոս ձեզմէ բաժնըվիլ, ու մինակ թշնամիներուս վըրա յարձակիլ. որովհետև ես այնչափ զօրութիւն ունիմ, որ առանց ձեր օգնականու-

Թէ որ կրնամ հալածել Թշնամիներս. ուստի դադրիլ կրնանք, հոս կեցէք կաղաչեմ, ետեւէս չի գաք: Իսկ գայլը հասկըցուց անոր թէ կերթայ, բայց կըմնայ չարաչար. դէ մի-նակ ըլլալով որսորդներէն զօրաւոր չես կրնար ըլլալ: Ուստի թէ որ այսպէս միա-բան երթանք վրանին յարձակինք, դիւրաւ կրնանք անոնց յաղթել: Այս խորհուրդս բանի տեղ չի դրաւ վագրը. և ինքիրեն վրա-տահելով վազեց շինական որսորդներուն վրա: Բայց որսորդները զայն տեսածնուն պէս կարկըտի նման վրան մաղեցին նետերը. ո-րոնց մէկը դպաւ իրեն, և խոր վիրաւորեց: Ան ատենը սխալեցաւ ետ դառնալ, ու ա-մըչնալով եկաւ գայլին քով, որ շատ երե-սը զարկաւ ըրած յանդգնութեը. բայց վագ-րը առանց զղջալու չի ցաւեցաւ իր Թշուա-ռութեը վրա:

Վագր՝ այսինքն վենենիկ գազանն է խիստ կա-տաղի եւ յանդուգն. որ ամենէն կենդանիներու հետ կը կռուի, մինչեւ առիւծի հետ ալ կըհամարձակի կռուիլ: Օրինակ է եղեր չի մարմնով յանդուգն մարդոց, որ իրենցին եկածը կընէ, և ամենուն առիթէ մեծ կընէր. բայց շատ անգամ ալ խայ-տառակ կըլլայ: Այսպէս են հիմակուան մարդիկ, որ բարեկամի խօսքին մտիկ ընելով իրենցմին դրածը կընեն:

Զի՞նչ շահ խիզախել խոյանել զթըշնամին,
Մերժել չըլլալ ձայն խորհրդատուութին.

Ցոլացնամ եղանակ յաստապարեզ մարմարին,
Կարկաժեր խոցեալ ծաղիկ 'ի ղընին ։
Այլ մի՛ վստահիր 'ի դէմն յոյժ բաղդին,
Եւ մի՛ անխորհուրդ կապեր ընդ բաղդին.
Զի դէմն դարձուածն յոլովագունին
Խորամանկէ միայն դըրուն ուժգին.

ԵՂԵՒԻՆ ԵՒ ՄՈՐԵՆԻ

Խոնարհ ոգին յամէն վայրկեան
Կայ 'ի չարեաց աներկեւան ։

Խոնարհ մարդիկ՝ ուր որ ըլլան,
Ամէն չարէ միշտ ազատ կան ։

Ճ. Եղեւին ծառը կանարգէր զմորմենին, ու կըսէր. Անպիտան ցուցմունք բնութեան՝ տե՛ս իմ գլուխս մինչեւ ո՞ւր հասուցեր եմ. մամկըսան, ես ձիւղերուս ո՞րչափ տեղ գետնին վըրայ գոցեր եմ ։ Չէ թէ միայն նաւերուն կայմեր փէչէնէս կըպատրաստեմ, այլ և անեւրուն տաճարներուն գերաններն ալ ես կըշինեմ. մանաւանդ ի՞նչ գործք կայ, որ ես յարմար չըլլամ ։ Բայց դուն ողորմելի ծառիկ, չորս ոտքէն աւելի չես կրնար բարձրանալ դաշտին մէջ, ուր որ քեզ կըտեսնեմ չորցած. հապա ի՞նչ օգուտ քեզմէ կրնայ ըլլալ ։ Պատասխան տըւաւ մորմենին, թէ իմէ բան մը չըլլար, բայց իմ մխիթարութիս այն է, որ քեզմէ քիչ կըվախնամ փայտ կտրողէն,

որ շիտակ մեր վրայ կուգայ։ Ահա մեքենի- մէկ եղևինին բերանը գոցուեցաւ. վասն զի փայտ կտրօղը շուտ մը կացինը վերցուց ա- նոր դէմ. և քիչ ժամանակին մէջ ջարդա- բուրդ ըրաւ վար ձգեց, դարձաւ գնաց ա- ռանց դպչելու մորմենիին. զի հարկաւոր բան մը չունէր, որ առնէր։

Եղևնին չար ծառը օրինակ է պարծենկոտ մարդոց, որ զինքը մեծցընելու համար ուրիշը վար կը զարնէ պարծենալով. Բայց օր կու գայ որ չի հասնած մարդուն ոտքը կիյնի։ Ուր որ խո- նարհութիւն կայ, հոն իմաստութիւն կը գտնուի, կը- ռէ ողորմոն։

Ահա սուտ պարծանք ունայնասիրին,
Պանծայ պարսաւէ զվիճակ խոնարհին.
Բայց նա միշտ է նոյն յանսասան կայէն,
Ինքն անդէն սահեալ ձըգի ’ի գետին։
Առ ինչ ճոխանալ յամպոց սահմանին,
Ընտիր ’ի խոնարհ սաստանիլ հեշտին.
Բարի է աղքատ կալ անդորրաւէտ,
Քան ճոխ ’ի բարձուէ խորտակիլ յերկիր.

ՁԿՆՈՐՍ ԵՒ ՁՈՒԿՆ ՓՈՔՐԻԿ

Դուզնաքեայ որս աւուր սերկեան
Լաւ է քան մեծ որս ինչ վաղուեան :

Այս օրուան հաւը ձուէր աւելլայ,
Վաղուան գառէն մեծ որ ըլլայ :

Ճա. Մէկ ձկնորս մը կըձգէ իր կարթը օղնան գետին մէջ, կըբռնէ պզտիկ ձուկ մը. որ իր պզտիկութեան անոր առջին գնելով կաղաչէր որ զինքը թող տայ : Խօսք կուտար որ եթէ թողու զինքն աւելի մեծնալ, քանի մը շաբաթէն ետև նորէն պիտի գար խածնէր անոր կարթը : Այս անանկ բան է որ, կըսէր, քեզի օգուտ է. մէ զի յետոյ աւելի լաւ կերակուր կըլլամ քեզի : Պատասխանեց ձկնորսը, թէ ես չեմ կարծեր թէ դուն այնչափ յիմար ըլլաս, որ խօսքիդ վրայ կենաս. բայց լաւ գիտեմ թէ ես ալ այնչափ անխելք չեմ, որ քեզի հաւտամ ու թողում ունեցածս ունենալուքիս համար :

Լաւ ճարպիկ է ան, որ բանի մը հանդիպի, և ապերինին մեծ բանի վրայ է. այս պարապմունքը պզտիկներուն ալ էր արժէքին, ու իրենց էր տեան : Անոր համար այս առածը հաւը վաղուան սագէն շատ աղէկ է ըսուեր :

Իմաստասիրել յառաւելս ուսոյ,
Ջանացեալ և գոհ լեր ընդ շահեալ իր.
Զի մեծ է սերկեան շահ զուգակցութեան,
Քան զանընտրոյգ շահ վաղուեան մեծ իրին։
Ջանք անգոհութեամբ թողուն զոր ունին,
Կարօտեալ մնան հանդիպել մեծին.
Որ չէ հաճ ը̄ փոքր պարգև իւր բաղդին,
Արտաքոյ լինի մեծին և փոքրին։

ԱՐԾԻՒ ԵՒ ԲԶԷԶ

Զրկանք չարեաց անխրատելին
Նա և որդւոցն հատուցանելին։

ՈՀ ևԸ ՂՐԻԷ ՊՈՒՐԻՇԻՆ փուսն,
Իր պուհլըներն ԻըշԱն անփուսն։

ՃԺԵ. Արծիւը երբեմն մէկ ճագար մը վեր կըվերցընէր առանց նայելու բզէզին աղաչանքին, որ միջնորդութիւն կընէր բարեկամին համար. կաղաչէր արծիւին, որ անոր կեանքը բաշխէ։ Իսկ արծիւը առանց լսելու անոր ձայնին՝ յափշտակեց տարաւ. բայց շատ չանցաւ՝ խիստ զղջացաւ. վասն զի քանի մը օրէն ետև բզէզը տեսաւ, որ արծիւը հեռացեր էր իր բունէն. Թռաւ հոն, բոլոր անոր հաւկիթները տապալեց, ոմը ծակեց, ոմը կոտրեց. և իր բունը բարբառին կործանելով բարեկամին մահուանը վրէժն առաւ։

Ճակատուն է ասսա թմլաշանք, իսկ բերկրին է արտաձեւէ. ու արծիւը օրէնով է անոնց, որ դրկողութեամբ հարստութիւն կըյգեն շահերուն. և որովհետև անոնց համար եղաւ այս անօրէնութիւն՝ արդարութիւն կը պատճէ զանոնք ալ. ինչպէս կըսէ այն առակը, թէ հարք ազոխ կերան, և որդւոց ատամունք առան ։

Տէ՛ր զարդար պատուիժ անլուր զրկողին ,
Պատրաստէ ձաղուց ըղմիս Ճաղարին .
Սակայն խրատունք ոչ թողուն նմին
Դարմանել զածան , անձին զաւակին ։
Այս հատուցումն է զրկողաց բաժին ,
Որ զանձնին որդւոց յանխրատ շահին .
Սովին-անժառանգ անպատիժ լինին ,
Որդիք փոխան հարց դատնապարտ պատժին ։

ՊԱՏԱՆԻ ԵՒ ԳՈՂ

Ճապաղաղ մտաց չէք ինչ գժուար ,
Եթէն չարեաց զատանէ Ճար ։

Վճարս չի գար խնդրով մարդուն ,
Ջանքն դատն ալ ըլլալ գիրքուն ։

Ճգ . Պատանի մը ջրհորին քովիկ քարին վըրա երկար լալու կեր էր , մէկ գող մը շիտակ վըրան եկաւ դայ , որ զինքն հանդիպեցընէ . իսկ պատանին հառաչելով անոր չար միտքը՝ սկսաւ լալ ։ Ան առնելը հարցուց գողը , թէ ինչ

պատճառի համար կուլայ : Ան ալ պատասխա-
խան տուաւ թէ վայ ինծի , ահա այս հորին
մէջ ոսկիէ աման մը ձգեցի : Ղուա մը գողը
հանեց լաթերն , ու հորն ինջաւ զայն հանե-
լու համար , որ մէկալը կըսէր՝ թէ ձգեցի
կորսնցուցի : Բայց երբոր կըփնտռուէր ,
ժողվեց պատանին գողին լաթերն , առաւ
փախաւ :

Խելացի ճարպիկ մարդը ամէն բանին հնարքը կը գտնէ . իսկ յիմարը պաշարուի կը մնայ . անոր համար իմաստուն մարդը ամենուն ցանկալի է , և ամէն տեղի մէջ մեծ յարգութիւն պէտք է ունենայ ինչպէս կըսուի , ու իմաստունը ամէնուրեք կը սիրէ :

Այդ գողն 'ի գողէն յորժամ գողանայ ,
Միտք հողածընաց ամէն զարմանայ .
Բայց սակայն գողոց գողունի խրաց ,
Գողք են ժառանգօղ լուսս ծիրգ օրինաց:
Եղո՛ւկ որ զիւր գործ թողու և գնայ .
Կողոպտել զընկերն կեղեքել զնա .
Ոչ գիտէ թէ գանձ անիրաւ վաստակ
'Ի չէք փոխարկէն և զոր 'ի տանն կայ :

ԱՌԻՒԾ ԵՒ ԱՅԾ

Մի՛ հաւատար ձայնի բարեմաց,
Զի բանք այլոց են վն ինքեանց ։

Ամէն խօսքի մի՛ հաւատար,
Շատին խըրատն է իր համար ։

Ճկ. Առիւծը կը տեսնէ մէկ՝ այծ մը, որ ամէն դիւէն ապառաժ բարձր քարի մը վրայ խոտ կուտէր, հասկըցաւ առիւծն որ հոն ելլել չի կրնար. շուտով կանչեց անոր խաղաղին ձայնով ։ Բարեկամ ինչո՞ւ այդ բարձր ապառաժներուն վրայ կը ճանկես. ուր տեղ անհամ մամռուտէն եօսսանէն ՚ի զատ բան մը չես կրնար ուտել. շատ լաւ կընէիր, ինչպէս ինծի կերեւնայ, վար իջնէիր այս դաշտին մէջ, ուր ես կարծեմ. զի խոտերը մատղաշ, եւ դալարանալի համով են, ինչքր վար նորէն կըսեմ քեզի ։ Պատասխան տուաւ այծը ծաղր ընելով. բարեկամ, ահա շատ յօժարութեամբ կուգեմ ընել բանդ. բայց ան տեղը կը տեսնեմ, երբոր քեզ չեմ տեսներ հոդ բնաւ ։

Պէտք չէ Թշնամեան անոյշ խօսքերուն հաւատալ խաբուելու. Ո՛վ որ օւրբը չար ըլլալով՝ հար- ջաա տեղը իւրաքանչիւրը. և որչափ բարեկամութեա-

նայ, տուփ է. Միայն իր շահը կըմտածէ ։ Շատ դժուար է հաստատութիւն մարդ գտնել, կըսէ իմաստափոխը ։

Վա՜յ որպէս առիւծ ցաւակցի այծերն,
Թողուլ զապականած խայտառակ ՚ի դաշտին.
Բայց նա ծանուցեալ խորհրդոյ նենգողին,
Զարժանին առնէ պատասխան նմին ։
Ո՛վ քանիք խաբեալք առ աչօք որկորին,
Իջանեն ՚ի վայր ճարակել յախտին.
Եւ անդէն ինքեանք լինին կերակուր,
Գազան Թշնամւոյ ժանտ կլանողին ։

ԱԳՌԱՒ ԾԱՐԱՒԻ

Հարկն է գտնիչ նոր արուեստից,
Ելս հնարէ անելք ելից ։

Ուժով հարկը մարդ կըստիպէ,
Ամէն բանին ճար կըգտնէ ։

ԾԵ. Ագռաւ մը խիստ ծարաւցած ջուր կը գտնէ ամանին տակը, որուն միայն երեսն և նեղ բերանովը կտուցը չէր կրնար ջրին հասցնել որ խմէ ։ Այս դժուարութեան ճարը գտնել անհնարին կերեւնար, բայց որովհետև ծարաւէն կըմարէր, ծարաւն անցընելու հարկը իրեն ճար մը գտնել սորվեցուց ։ Բաւական ժողվեց շատ մանրուկ քարեր, ու մէկիկ մէկիկ կտուցովը բերաւ ամանին մէջ ձգեց. առաւ կամաց կամաց ջու-

րը վեր ելաւ, այնչափ որ վերջապէս ագռա-ւը ջուրը խմեց դիւրութեամբ:

Հարկաւորութիւնը մարդուս միտքը սրելով՝ շատ բան կը գտնէ, և շատ արուեստ հնարել կուտայ. Ինչպէս Թոբէլ Ադամայ թոռը փետաւ թէ դարբնութիւնը պէտք է մարդուս՝ երկաթէն եղած գործիքներ հնարեց. ասոր որդիքը փետան որ մանմանները բան կը գործէն, և գիտցաւ որ կրակը շատ հարկաւոր է, կրակ գործելը հնարեց, ևն:

Այսպէս հարկին եղև ըստ բերման առթիւն,
Գտող արուեստից ցեղոց դարմանին.
Որով հանճարեղք յիւրաքանչիւր դար,
Պիտանին մարդկան գիւտ հնարեցին:
Արդ մի՛ անարգեր ըստ հեղգասիրտին,
Զգիւտըս նախնեաց զաւակըս նոցին.
Այլ ընտրեամ զլաւն հետևեաց նմին,
Հանճարեամ զգիւտս ըստ ընդունակին:

ՑՈՒԼ ԵՒ ՄՈՒԿՆ

Որչափ անարգ է փանաքին,
Գործել կարէ վնաս մեծին:

Մի՛ պարծիր թէ ուժըդ շատ է,
Մէկ պզտիկ մը քեզ կը յաղթէ:

Ճղ. Ցուլ մը խոտին վրայ պառկած կըմը-տածէր իր ուժին վրայով: Թող փիղն ու առիւծը չըլլան կըսէր ինքիրեն, իրաւ որ ամէն կենդանիներէն զօրաւոր և ահագին ես եմ. այս երկուքէն 'ի զատ ամենևին մէկէն ալ չեմ վախնար: Երբոր սանկ կըհպարտանար, մէկ մուկ մը ախոռին ծակերէն դուրս ելաւ, և կատղած [illegible] խածաւ ցուլլին ոտքն ու յետոյ վազեց մտաւ ելած ծակը: Անատենը ցուլն անանկ սաստիկ ցաւ իմացաւ, որ չի կրցաւ զինքը բռնել և չի պոռալ: Ուստի մէկէն բերանը փոխեց յուսահատեցաւ տեսնելով, թէ մուկն ալ կըրցաւ զինքը նախատել. և այսպէս ինքզինքը դըրաւ վախցող կենդանիներուն կարգը:

Ո՛վ կը կարծէր թէ մէկ մուկ մը իրեն պէս ահագին ուժով կենդանիին սանկ բան ընել. բայց Գե-նան ինքնահաւան մարդիկ, որ պզտիկ թշնամին իրենց մեծ չար ընել. Լաւ է պէտք է խոնարհիլ:

Պարծանք սընոտի վէս մեծամըտին,
Զիա՞րդ 'ի փոքուէ նանրացաւ գիւղին․
Զի որ վեհ դնէ զինքն ամենեցուն,
Նաեւ 'ի փոքունց ընկճի հեշտագոյն ։
Քանի՜ք ինքնապանծ զանձինըս եդին․
'Ի կշիռ վեհից դիւցազանց կարգին․
Բայց 'ի դոյզն առթէ սահեալ 'ի խոնարհ,
Ծանեան թէ զի՞նչ են և զի՞նչ կար անձին։

ՄՈՒԿՆ ՓՈՔՐԻԿ ԵՒ ՄԱՅՐՆ

Եթէ տիոք լիցես անփորձ,
Խրատ ծնողաց լիցին քեզ փորձ ։

Թէ մանուկ ես՝ սորվէ՛ մեծէն,
Մի՛ պարծենար թէ բան գիտեմ։

ՃԷ․ Մէկ մկան ձագ մը մօրը կըպատմէ ինչ որ իրեն հանդիպեր է ճամբորդութեանը մէջ, որ գացեր եկեր էր ։ Կըսէր թէ օր մը հետաքրքրութիւն բերաւ որ մտնեմ բակի մը մէջ․ և հոն գտայ մէկ կենդանի մը, որ չէի ճանչնար․ բայց խիստ գեղեցիկ ըլլալով շատ հաճեցայ անոր վրայ․ վ՜ զի կերպարանքն էր անոյշ և համեստ, նայուածքը շնորհալի, վրան գունաւոր և պոչն երկան, գրեթէ մերինին նման ։ Ահա ասանկ շատ գեղեցիկ տեսք ունէր․ իսկ ես անանկ սիրեցի որ մէկէն պիտի մօտենայի անոր հետը ճանչւորութիւն ընելու համար․ նայիս մէկ անգգամ

Թռչուն մը, որ գլխուն վրայ կատար մը ձըլխ-քըրքրած մէկ ունէր. խռովեց, և սուրձայ-նովն անմանկ վախցուց զիս, որ դողդղալով փախայ: Ո՛րդեակ, ըսաւ մայրը, տայ փառք տուր, որ քեզ պահեր է այս չար պատահ-մունքէն, որ չի կրնար ըլլալ. վասն զի այն կենդանին, որ քեզի անոյշ երևցեր է՝ կա-տուն է. իսկ Թռչունն է աքաղաղը, որ մե-զի վնաս մը չի տար. բայց կատուն մեր կո-րուստէն 'ի զատ ուրիշ բան չի մտածեր: Ուրեմն ծանիցիր, թէ ի՛նչ անխոհեմութիւն մէջ ես, որ անգութ թշնամուդ ձեռքը զքեզ պիտի մատնէիր:

Ուրիշին գեղեցկութեանը մի նայիր, և մի ար-քուն փետուրը և անոյշ ձայնովը խաբուիր. պէտք է իմաստութեամբ ճանչնալ բարեկամը և թշնա-մին, որ չըլլայ թէ սապանի մըջէտ իյնիս. շատ բան պէտք է որ այս խելքը սորվիս փորձով:

Օրհնեալ է այս խակկամիտ մանկանց,
Որ կարծեն ըլլալ համաստ աշխարհաց.
Բայց անփորձ գտնուիլ յոյժ զխաբելեաց,
Փորձ հասուն ըլլալ կարօտին բազմաց:
Խրատ է այս քեզ մանուկ ինքնապաստան,
Մի՛ խաբիր տեսլեամբ գեղապայծառ դիմաց.
Զի դիւրութեամբ խաբիս և փորձես,
Մինչն փորձ ըլլաս խորհրդով ծնողաց:

ԵՐԿՐԱԳՈՐԾ ԵՒ ԵԶՆ

Թէ և զեղջիւր հատցես ժամանին,
Կացուր ոտիւք մեռանէ կրկին ։

Եթէ կոտրես յետոյ եղջիւրն,
Ոտքով մեռնի կոտորայ կրկին ։

ՃԸ. Երկրագործ մը ուզեց եզին եղջիւրնե-
րը կոտրել, որ միշտ իրեն դէմ կը վերցընէր.
բայց կոտրելէն ետև աւելի չարացաւ եզը.
վասն զի տեսաւ թէ եղջիւրները կորսընցուց,
որով կը վնասէր անոր. սկսաւ ոտքերովը
գետինը փորել անանկ կատղելով, որ հա-
նած փոշին ու հողը երկրագործին աչքը
կը լեցընէր ։ Ուստի ըսաւ խեղճ մարդը. ո՛հ
ի՛նչ օգուտ ինծի եղաւ ըրած զգուշութիւնս.
վասն զի այս չար կենդանին հիմա աւելի
մեծ վնաս կուտայ ինծի ոտքերովը, որ անցած
օրերը այնչափ վնաս չէր տուած գլխովը ։

Բարեկամներդ մարդուն հետ պէտք է զգուշութեամբ
վարուիլ, և չի կոտրեցընել, զի նէ ըրածը չի
մոռնար. Գլուխը կարես՝ ոտքովը կը կոխէ. ոտքը
կարես՝ լեզուովը ։ Ինչպէս որ գազանին ճանկը
բերնէն գէշ կը պատէ, այնպէս ալ բարեկամին
լեզուն աւելի կը ծակէ, կերէ գերեզման մը ։

Ուսի՛ր չկապել ընդ բարկացողին ,
Հեզ կենակցութ̅բ շահիլ զսիրտ ժամանին
Զի ոչ վէրք հարուածք վիրօք բժշկին ,
Ոչ հուր բարկութ̅բ հրդհ.ք շիջանին ։
Զեղջիւր ամբառնալ ընկեր ընկերին ,
Ոչ մարդոյ է գործ այլ գազանային ․
Որք խայթեն խեթկեն յօտար տեսակին ,
Մարդ միայն ըմպէ զարիւն իւր սեռին ։

ԱՐԾՒԻ ԵՒ ՆԱՊԱՍՏԱԿ

Չարագործաց չարն է բաժին ,
Զոր ինչ գործեն 'ի նոյն պատժին ։

Չար ընօղը չար կը գտնէ ,
Իրէն գործերը զինք կը պատժէ ։

ՃԺ. Արծուին իր բունին մէջ կեցած տեսաւ հեռուէն որ նապաստակին ձագերը խոտ կուտեն, մէկէն վրանին հասաւ յափշտակեց տարաւ իր ձագերուն ։ Իսկ անոնց մայրը կաղաչէր արծուին, որ խնայէ, և իրեն տայ ձագերը ։ Բայց արծուին առանց անոր աղաչանքին նայելու, մէկիկ մէկիկ մեռցուց ձագերը աչքին առաջ ։ Մայրն ալ կսկըծուն կատղեցաւ, և ուրիշ ճար չի գտաւ վրէժխնդիր ըլլալու, սկսաւ ծառին տակը հողը փորել. այնչափ փորեց որ մինչև հողը զար-

կածին ալէս ծառն ընկաւ, և արծիւին ձագերը վար ընկան մեռան ։

Խրատ է անոնց, որ իրենց մեծութենը ապաւինելով անիրաւութիւն կընեն աղքատին. չէյպէն թէ աղքատին յայնը շատ վէր կելլէ, ու Ձէկէն փառն աւրողին փառքը մոխիր կը դարձնէ.

Չար է գեղեցիկ անձնապաստանին,
'Ի փոքուէ անտի կրել զարժանին.
Որ քանդել ջանայ զտուն անանկին,
Քանզի նախախնամայ ղրկանօք նորին ։
Մի՛ քեզ վստահիր Թէ կաս 'ի գահին,
Վերացեալ 'ի կայս իշխանականին.
Երկի՛ր 'ի շնչմանց ալեբեր հողմին,
Որ կործան առնէ զամրու հաստատունին ։

ՍԱԳ ԵՒ ՏԷՐՆ

Սիրտ ագահին ոչ գիտէ յագ,
Թէ և լցէ յոսկի համակ։

Ագահ սիրտը յոսկին բաղձի,
Չի կշտանար, այլ շատ կամի։

ՃԺ. Մէկ սագ կար մը ամմէն օր մէյմէկ ոսկիէ հաւկիթ կածէր տիրոջը. իսկ տէրը միտքը դրաւ, թէ սագին ներսը լեցուն ոսկի է։ Այս մտքով բռնեց խողխեց զսագը. բայց ինչպէս յուսահատեցաւ երբոր բացաւ փորն ու բան մը չի գտաւ որ կըխնդրէր։

Ագահութիւնը երբոր ագահին սրտին մէջ թագաւորէ, իր կուրացընէ զայն. և որչափ շատնայ ոսկին, այնչափ այս ծարաւութիւն աւելի սաստկանայ. Վերջապէս հոգին ալ կերէ, մարմինն ալ։ Դիոգինէս փիլիսոփային հարցուցին, թէ ոսկին ինչո՞ւ դեղին է։ Պատասխանեց թէ շատ փնտըռօղ ունենալուն համար վախուն դեղներ է։

Ո՛վ քանի՛ անյագ սիրտ ոսկէսիրին.
Ոչինչ շատանայ ընդ ձիրս բաղդին.
'Ի մի ումպ ըմպէր թէ էր 'ի ձեռին,
Զոսկի և զարծաթ գանձ տիեզերին։

Է զի 'ի ցանկալ հանդիպիլ շաւղին,
Թողու զբաւականն որ կայ 'ի ձեռին.
Եւ է զի յանկի համանկիլ սրտին,
Ճնշի և մաշի նոյն սիրտ նոյն հոգին։

ԸՆՁԱՌԻՒԾ ԵՒ ԱՂՈՒԷՍ

Մեծ և չքնաղ է գեղ հոգւոյ,
Քան վաղանցուկ ասփիղ մարմնոյ։

Մի՛ պարծիր սուտ մարմնոյդ վրա,
Նայէ՛ հոգիդ պայծառ ըլլայ։

Ճժեռ. Ընձառիւծը կըպնդէր, թէ աղուէսէն շատ վեր է ինքը. լաւ նայէ կըսէր իմ վրայիս աղուորութիւնը. կըտեսնեմս ինչպէս փայլուն գունաւոր և խատուտիկ է մորթս. բարեկամ առանց կեղծաւորութեան մտածէ՛, քու կինդ խմլնոր ալ չին կրնայ շատ ըլլալ բաղդատութիւն։ Պատասխանեց աղուէսը, թէ ես անանկ տգեղ կըտեսնեմ զիս, որ կրնայի աղաա խոստովանիլ, թէ քեզմէ շատ վար եմ, թէ որ չդիտնայի թէ խելացինները քիչ մը աւելի մեծ կըհամարին հոգին, քան թէ մորթը։

Ընձառիւծը խառնուած կենդանի ըլլալուն յետ՝
[illegible] առիւծի նման է, իսկ մորթը ընձի

խափկանի․ որ հզօրք բնութեր օրինակ է պար-ծընքոփ կանանց, որ միայն իրենց զարդարանքնե-րուն վրա կը պարծենան, ու առաքինութիւնը և պարկեշտութիւնը միշտ են յետեր, որ է բուն մար-դուն գեղեցկութիւնը ։

Անիմաստ դատմունք մտաց յիմարին,
Որ 'ի գեղ մարմնոյ գնէ զիւր բարին.
Պանծայ վեհ լինել այն բազմագիտին,
Զի պերճ երևի տեսիլն արտաքին ։
Բաղումք 'ի մեր դար յայս խորհուրդ բերին,
Ցարգեն զգեղ մարմնոյ և ոչ զհոգին.
Թողեալ զներքին պճնեն զարտաքին,
Զուրկ գոլով բարեաց իմացականին ։

ԵՐԿՈՒ ԲԺԻՇԿՔ ԵՒ ՀԻՒԱՆԴ

Արդ մի՛ այլոց ըղձքեղ մատներ,
Բերէն 'ի գլուխ քո մահ և վէր ։

Մէ՛ մտներ տեղ ուրիշներուն,
Ըստորոճ չերթաս ծոցը հողուն ։

ԺԺԲ․ Հիւանդ մը իր հիւանդութեան զանա-զան ցաւերը կըպատմէր երկու բժշկի, որ զինքը նայելու եկեր էին ։ Ամմէն մէկ պատա-ման բանին մէկ բժիշկը միշտ կըսէր, շատ լաւ․ մէկալն ալ կըսէր շատ գէշ ։ Հիւանդը լաւ հասկըցաւ թէ այս բժիշկներուն ինչ կարծիքը ունեցան իր հիւանդութեանը վրայ․ որ

մէկին կարծիքը մէկալին հակառակ էր։ Ուստի կապվեցաւ մնաց՝ որն ընտրէ. վասն զի դժուար էր ընտրութիւնը. երկու կողմի կարծիքին ալ հաստատելով պինդ ունէին, և պակաս չէր իրենց պատճառները, թէպէտ անհաստատ, բայց մեծցուցած և երկած պատճառներ էին։ Այս ընդդիմութեանց մէջ հիւանդը քննելով չէր գիտէր ո՞ր կողմը բռնէ։ Վերջապէս յանկարծ դէշ բաղին հետևեցաւ, և ամէնէն զգուշութի անոր կարգադրութեանը յանձնըվելով դեղ առաւ անկէ մեռաւ. իսկ բժիշկներն ասոր մահուանը վրայ երկու պատճառ տուին. դէշ բաղը կըսէր. անտարբերս ի՞նչպէս ճանչցայ. լաւ բաղն ալ կըսէր որ անսխալ կարդացեր հիւանդը, թէ որ խմէր դեղերը բան չընէր։

Շատ զգուշանալու է, որ օտար մարդու խօսքին հաւատալով պէտք չէ մարդս ուրիշին քէնքը. Բըդէք շատ մարդու քան հարցմունք, խօսք սա, բայց քիչ մարդու հեշանէ, և նայէ որ մարդու քէնք չըլլնիս։

Այսպէս որ անենչայ այլոց պատրանանէն;
Մատնեցալ զանձն 'ի ձեռս աղէտ բժշկին.
Փութով կորնչի բառ առաւկողին,
Գնայ և նստի 'ի մահու բանտին։
Իսկ դու որ իշխան և տէր ես անձին,
Մի՛ մատներ զքեզ օտարաց հեշտին.
Որ ոչ 'ի լաւ անդր փոխարկել ունին,
Եւ ոչ անպատճառ մատնեն զքեհենին։

ԱԾԽԱԳՈՐԾ ԵՒ ՆԵՐԿԱՐԱՐ

Սեւատեսիլ ածխագործին,
Ոչ երեւի իւր սեաւ փոշին :

Թէպէտ ճոխանացած ըլլայ ,
Քէզնի ձեռքով լաւ ներկուած :

Ժժզ. Մ՛էկ ածխագործ մը կըսէր ներկարարին , թէ բարեկամ իմ տունս քեզի շատ յարմար է . հրամմէ հանդրանէ , հաւատացիր որ շատ զուարճանալի հանդիպում կըլլայ : Պատասխանեց մէկալը շնորհակալ ըլլալով անոր բարերարութիւնը վրայ . թէ ես կվախամ, որ քու տունդ ինծի շատ աղէկ կըլլայ . բայց ինչպէս կերեւնայ , ես աւելի լաւ կըլլամ տանիկ մէկ տեղ մը նստիմ, ուր որ քու ածուխդ չի կրնար սեւցնել իմ կտաւներս :

Պախարակաւոր մարդը իր պախարակութիւնը չի փճացներ , ինչպէս որ մուրճին ալ իրեն նման ընկ՝ խարծելով թէ իրեն պէս չար մը ըլլայ , իր պախարակութիւնը կը գոցէ : Ասանկ չար ընկերներէն պէտք է հեռու փախչիլ , որ չըլլայ թէ մէկն ալ անոր պէս սեւնայ :

Այս օրինակ է պատկառանութին ,
Որ ոչ տեսանէ զիւր ինքեան թերին .

Կոչէ զմերձաւոր նաւակն առ նմին ,
Համակել զնա 'ի մութ սեւագին :
Սոյնպէս ախտաւորք շաղեալ 'ի տղմին ,
Մաքուր ձեւացեալ արդարոց մերձին .
Փախչիլ 'ի ճան է մերժել զայնպիսին ,
Քանզի աղտեղքն զանմեղաց հոգին :

ՄՈՐԵՆԻ, ՀՈՂԱՄԱՂ ԵՒ ՉՂՋԻԿԱՆ

Ամէն խրաց գոյ ինչ պատճառ ,
Քննեա՛ զծերոց բանն նախապատճառ :

Ամէն բանի մէջ պատճառ կայ ,
Կառղեմ [illegible] գիրքեր կարդամ :

Ճժդ. Մորմենին, հողամաղը, և չղջիկը ընկերացան որ վաճառականութիւն ընեն. մորմենին ապրանք առաւ նաւը դրաւ, որ հընդկաստան խրկէ. հողամաղը դրաւ իր կողմանէ գունտ մը ոսկի. չղջիկն ալ իրեն համար արծաթ ժողվեց դրաւ նաւը: Ժամանակն որ եկաւ՝ ճամբայ ելաւ նաւը. բայց շատ չի հեռացած մէկ ալէկոծութիւն մը հանդիպեցաւ, անանկ որ բոլոր մէջի ապրանքովը գնաց նաւը ծովին տակը: Անկէ եղաւ որ հողամաղը միշտ ծովին քովերը կըպտըտի, յուսալով թէ ոսկին տեղէ մը գտնէ: Չղջջիկն ալ կը վախնայ ցորեկն երևնալու՝ չըլլայ թէ փոխ տըւողը արծաթն ուզէ: Իսկ

մորմէնին, որ միշտ կըմտածէ իր ապրանքը գտնելու, ամենէն անցնողներուն փէշը կը փակչի ։

Հողամաղն է խարապապաթակա Ճանչնալը, որ Երկայնէնցաղ ըլլալով՝ միշտ գրեթէ ծովուն տակերն է ։ Այս տեսակը օրինակ է հոփկըռնելի մարդե-ներուն, որ մինչեւ մեռնին վիզ կըծեն կորսնցու-ցած բաներուն վրայ ։ Նաեւ տակէ մտած է ասա-մէկներուն մէջ. Թէ որ մորմէնին ջուրը մէջին վրայ ձախէն՝ կըսէն թէ պարտէզ փոր ։

Ահա գաղափար ընչաքաղց անձանց,
Որք մինչեւ ցմահ շահել՝ նկրտին.
Եթէ միանգամ կորուսին ինչ զանձ,
Հեծեն եւ ողբան մինչ՚ի կեան վերջին ։
Են որք մահանան ընդ կորուստ իրաց,
Եւ են որ մոլեալ մտաւթեամբ շրջին.
Բայց աւաղ ոչ մարդ ոսկւ մեռանողաց,
Ի վասն մարդոյ այն զանձ այն ոսկին ։

ԵՐԿՈՒ ՄԱՐԴԻԿ ԵՒ ԷՇ

Հակառակօղք յայնժամ հաշտին,
Երբ վնասիւք խելք տուժին :

Կռուասէր մարդ չի հաշտըւի,
Մինչև մեծ վնաս չի պատահի :

Առակ. Էշ մը մոլորած կերթար. երկու մարդ կըգտնեն զայն, և կըսկըսին վիճաբանութիւն ընել, թէ որուն կըլինի. երբոր կըջանային մեկզմեկէ յափշտակելու՝ ըսին թէ ով որ աւելի զօրաւոր է՝ այն թող առնէ. ուստի սկսան ծեծկըռտիլ իրարու հետ. բայց շատ անխելքութիւն ըրին. մի զի երբոր մեկզմեկ գետինը կըզարնեին՝ էշն ելաւ ձեռքերնուն փախաւ. և ասով հաշտըւեցան ակ րով այս երկու կռւօղները :

Կռուարար մարդիկ այնչափ մէկ քանին վրայ հակառակութիւն կընեն, որ վերջապէս ամենայն ծա-նին կը կորսընցընեն ու հաշտ կը մնանեն :

Այս առակը պատիժ է կռուասիրաց,
Որք ագահին կորզել զշահ յիրերաց.
Բայց երբ ելանէ այն ինչ 'ի ձեռաց,
Ըստիպեալ հաշտին առանց յինքեանց :

Ա՛ռ քեզ 'ի խրատ այս գործ առեղծեաց ,
Մի՛ ատեր զընկերն առ սէր օգտութեանց.
Գաղանաց է բարք, որք Թողուն զորսանս,
Անխնայ հաւուքն խածատեն զմիմեանս ։

ԳԱՅԼ ԵՒ ՇՈՒՆ ՎՏԻՏ։

Անյագ ոմերը ցանկայ շատին ,
Բայց միշտ կարօտ կայ սակաւին ։

Որոնք գոհ չեն ունեցածին ,
Ունեցածին ալ կը զրկուին ։

Ժժկ. Օր մը մէկ գայլ մը կը պատահի խիստ աղուոր շան մը. բայց անանկ վատառուժ էր, որ ոսկորն ու կաշին էր մնացեր. երբոր ակռան պատռէր գայն՝ ըստ շանը. ով պարոն գայլ, ի՞նչ կընես. չե՞ս տեսներ թէ հիմա ես անանկ վիճակի մէջ եմ, որ մէկ ակռայիդ կերակուր չեմ ըլլար ։ Սակայն համբերէ՛ տեղս դառնամ. երդում ըլլայ քեզի, որ կըջանամ զիս լաւ կերակրելու. թէ որ քիչ մը ժամանակէն ետև տեսնես հոն գաս, զիս այնպէս գէրցած ախորժ գտնես, մինչև չախորժ զքեզ որ անուշահ կերակուր մը Թողուցիր՝ աւելի լաւ կերակրեալ ուտելու համար ։ Իսկ գայլը հաւատաց, և Թողուց գայն ։ Քանի մը օրէն ետև գնաց գայլը շանը տեղը, և գտաւ ծակէն տեսաւ կանչեց որ դուրս ելլէ, որուած

խօսքը կատարէ։ Պատասխանեց շունը, թէ ,կուզես վաղն եկող. զիս այսօր չեմ յուսար թէ այն աստիճանը գիրցած ըլլամ, որ քեզի յարմար կերակուր ըլլամ. և չեմ կարծեր թէ դուն ալ խամով գոհ ըլլաս։ Իրաւ գայլը այս խօսքս լսեց չի լսեց, կախեց ականջներն ու ետ դարձաւ, և երդումն ըրաւ որ մէյ մը նալ բանն մի բանէ՝ բնաւ չակնախ թողու։

Գայլի բանին չի հաւնօղը մեծէն ու իշխանե-րէն՝ ազատիկէն ալ. Վասն զի ազատիկը յետոյ կը-ցէ, մեծն ալ չի գործեր, իր ձայ դարձնէ։ Գի-տանի մը հարցուցին, թէ ազատարութիւն ո՞րն է ի՞նչը. ան ալ ըսաց թէ բանի չի հաւնօղ ծոյլ մարդը։

Այսպիսոյժ ընդմուտք որկորամոլեանն,
Թողու զըստականնն, վազէ անշափին.
Որով և նքթեալ հիւծի առ մշտին,
Եկմանն տառապի անդադ ոլկործին։
Այրք մի նմանիր զիրչափանսն շարին,
Որ մարմնով այլոց սնանի յանձին.
'Ի սնունդ մարմնոյ շատ են ձեռք կրկին,
Քրտամբք երեսաց սնանել ինքնին։

ԿԱՊԻԿ ԵՒ ՁԱԳ ԻՒՐ

Որ քան զչափ սիրէ զորդին,
Կրկին վնաս առնէ նմին ։

Թէ չափէ դուրս զաւակ սիրես,
Անշուշտ կողբաս որդի կորնես ։

Հժէջ․ Մէկ կապիկ մը խեղճը տըրեր էր իր մէկ ձագին․ անանկ որ գիշեր ցորեկ կը պագնէր, և գրկելով կըսխմէր․ բայց այս անխելք սէրը շատ գէշ ըրաւ ձագին․ վասն զի օր մը սաստիկ սիրելով գիրկն առաւ անանկ ուժով սխմեց գիրկին մէջն, որ շունչը բռնըվեցաւ մեռաւ խեղճ ձագը ։

Կապիկը կըսեն թէ այնչափ սաստիկ կը սիրէ ձագն, որ երբեմն սիրելով կը մեռցնէ ։ Օրէնակ է անանկ ծնողաց, որ սաստիկ սիրելով զաւակնին անխնէմ կընեն․ որոնք առանց կրթութեան մեծնալով՝ անպիտան կըլլան, և բանի մը չեն հաւնին․ մինչև մարդկութեն մէջ՝ մեռած կը սեպվին ։

Տեսանե՞ս զոխալ յիմար ծնողին,
Որ գգուէ այնչափ փայփայէ զորդին,
Մինչ չխջուցանել զեռանդուն ոգին,
Առնէ զայն անմիտ իբրև լոկ մարմին ։
Զինչ օգտեն գգուանք յիմար զաւակին,
Երբ անկիրթ աճէ նման անբանին ․

Քանզի անխրատք ոչ մարդ համարին,
Թէեւ կերպարան մարդոյ ունիցին :

ԱՌԱՋԱԿ ՀԵՂՁԵԱԼ

Թէ և պատիժք անագանին ,
Բայց ոճրագործք ոչ ազատին :

Չարերն որչափ պարծին ժախուլին,
Հարկաւ կուգայ կորուստն անձին :

ՃԺԸ. Պատաւորը մէկ աւազակի մը ե-
տեւէն կիյնի որ բռնէ. իսկ աւազակը ա-
նանկ արագութեամբ կը փախչի որ չեն կրնար
բռնել. ուստի կազատի, և միտքը կը դնէ
չարագործը՝ թէ այլ տեղէ մը վախնալու
բան չունի. կարծէ թէ իր գործած չարու-
թիւններն առանց պատժի պիտի մնան:
Բայց երկնաւորը լաւ գիտէ հատուցում ը-
նելու. վասն զի երբոր այս թշուառականը
մէկ գետի մը մէջ մտեր անդին կուզէր անց-
նիլ, չգիտնալով անոր խորութիւնը, ոտքը սա-
ղաց գնաց տակը խղդըվեցաւ:

Թող խրատվին ասկէ չարագործները, որոնց
յորդորւթը են ունայնք, հարկաւ պիտի ըլլայ. վասն
զի ա͞ծ է իրենց [illegible], ա͞յ [illegible] ո՞ւր պիտի
ժախուլին. ա͞ծ են [illegible] ո͞բ գիրքը:

Այս է հատուցման օրինաց Էդեն,
Որ կշռէ կէնց լոկ գործոց նոցին.
Թէ իցէ բարի՝ այն մնայ նմին,
Իսկ եթէ չար է՝ հանդիպի չարին:
Ո՛վ, զինքդ պատրաստ կայ դատող վերին
Դատել և պատժել զարդ չարագործին.
Թէ հալին արդարք յերեսաց նորին,
Թշուառ մեղաւորք զի՞նչ առնել ունին:

ԵԶԻՆՔ ԵՒ ԼՈՒԾ

Ո՛րչափ բեռն է անտանելի,
Համբերատար սիրտն տանի:

Անհամբերներին թէւ մը նեղ գայ,
Տերպաններով խինդ կը պայ:

ԾԺԹ. Երկու եզներ լծած էին մէկ խոտ բարձրուած սայլի մը վրայ, և շատ աշխատան-քով կը քաշէին. իսկ լուծը անանկ սաստիկ ձայն կը հանէր, որ եզները ձայնէն վախցան ու կեցան: Յետոյ դարձան լուծին ըսին, թէ ո՛վ անհանդարտ, ի՞նչ ունիս որ սաստիկ կը պոռաս. զի եթէ դուն աշխատանք մը չու-նիս. մենք որ բոլոր այսչափ բեռը քաշելու կաշխատինք, մէկ ձայն մը չենք հաներ:

Համբերօղ մարդ մըշտ ծանր բեռան փոխ
ըլլայ, յոյժ չըլլէր. իսկ անհամբերներին յայնց թէւ

Բանէ մը կ'ելլէ ։ Երանի անոր, որ համբերութեան իր բնութիւնը կը ճանաչէ, և ատենին պտուղները կը տանի ։

Ահա՛ առակացս համբերութեան,
Որ ընկճեալ բնաւ մի վատանայք լալեօք,
Իսկ եթէ ունիք մտաւոր յինչ մարմնին,
Զայն զանազանութեամբ արձակեն ուժգին ։
Զանձն անսխալ ամենը ճշդիւ բերել,
Ենթարկեալ ձեռաց անհնարինքը.
Լռօղք արտասուք միւսանգամ ամենեն,
Մինչ արդարութեան միւսն է անպատիժն ։

ԱՔԱՂԱՂ ԵՒ ԱՂՈՒԷՍ

Խորամանկին որոգայթ նենգել ջանայ,
Ծանակ լինի անհնարանայ ։

Ո՛րչափ որ շատ բան կը խորհիս
Զարմանալիքով կը կորսուիս ։

ճն. Աքաղաղ մը նստեր էր բարձր կաղնի ծառին վրայ. մէկ աղուէս մը հոն գալով տեսաւ որ չի կրնար անոր հասնիլ, վազեց ծառին տակն ու կանչեց անոր ։ Բարեկամս, սիրելիս, խաղաղութիւն հաստատուեցաւ երէկ ձեր մէջն ու մեր մէջը. ուրեմն կարող չեմ քեզի տակէն եւս առանց սիրոյ պահելու պատրաստ ենք մէկզմէկ սիրել եղբօր պէս, և մենք ալ սիրով հաշտուելու. ուստի եկուր, սիրելի, խնջոյք որ պատմելու ։ Պատասխան

տըւաւ աղջամուղջը · բարեկամ, չկրնալս թէ ո՞ր չափ զիս ուրախացուց աւետիսդ · կարծեմ թէ իրաւ է, ինչպէս ինծի կերեւնայ · վասն զի կրտեսնեմ որ վարէն երկու սուրհան-դակ Նաճար կուգան մեզի այս աւետիսը տալու համար · ուստի. քիչ մը կեցիր կաղա-չեմ, անոնք հոս հասածնուն պէս ես ալ վար կիջնեմ · չորսս մէկ տեղ կուրախանանք ։ Եւ այս սուրհանդակներն են երկու որսող շներ ։ Զայս որ լսեց աղուէսը դողալու, ու ճամբով փախաւ անկէ · իսկ աքաղաղը վե-րը մնաց, սկսաւ երգելով խնդալ անոր վրան ։

Այսպէս իր ըրածը կըգտնէ · որպէս ուրի-շին նենգաւորութիւն ընելով խաբել կուզէ, այն-չափ ինքը կիյնի թոռը ։

Տե՛ս զպատուհաս խարդախող չարին ,
'ի նենգել զընկերն հալածի ինքնին ·
Քանզի լոյս ճրագ նենգաւոր անձին ,
'ի մուտս արեւու անդէն շիջանին ։
Արդ այժմեան մարդիկ նման են սմին ,
Միայն առ երես շուք տան ընկերին ·
Այսու քաղցրութ͞ե երբ զօգուտ շահին ,
Լարեն անխնայ զորոգայթ նմին ։

ՎԱՐԴ ԵՒ ԾԱՂԻԿՔ

Զի՞նչ փառք փթթիլ չքնաղ վարդի,
Երբ յերեկուն ընդ փոյթ խամրի :

Ի՞նչ շահ բարձրիլ վերեւ նման,
Երբ ծաղկիլն ու չքանալն է մէկ օրուան :

Առակ. Ծաղիկները մռածեցին վարդին վրա, և անոր գուներուն մէջ անանկ կենդանի պայծառութիւն մը գտան, որ գրեթէ առանց նախանձելու խոնարհեցան, ու գեղեցկութեան պսակն իրեն տալ ուզեցին։ Ամենքը միաբերան կըսէին, թէ մեր գուները անոր պէս մէկ հատիկ գեղեցիկ չեն. մենք անոր անոյշ հոտը չենք կրնար հանելու. ուստի քեզի կըվայլէ պսակը, ազնիւ վարդ, քեզի կըվայլէ միայն անոյշ հովերն սիրուն գգուանքը։ Վարդն ալ ըսաւ հառաչելով. ով ծաղիկներ՝ որովհետեւ ես մէկ աւուր մէջ կը ծնիմ, ու կըթառամիմ, ինչո՞ւս պէտք է խմեմ այսչափ գեղեցկութիւնս. մէ՜հ աւելի կուզէի ձեզմէ վար ըլլալ, և ձեզի չափ դիմանալ։

Օրինակ առանձին անոնց, որ իրենց աղուորութեանը՝ խելքին և բաղդին տղաքներուն կերպարանփառան. որովհետեւ մէկ բոպէին մէջ ամենքն ալ կանցնին կերթան. երբ առաքինութիւն մը ունին, միայն այն կը մնայ։

Ահա՛ քեզ տիպար փառաց աշխարհի,
Որ փախչի գնայ նման ստուերի.
Մինչչև է փթթեալ խամրի շիջանի,
'Ի քթթել ական ը̄ չեղեալս խառնի:
Թէ պանծանք ծաղկանց ոչինչ համարի,
Զի՞նչ ապա մարդոյն դիւրեղծանելի.
Որ այսօր 'ի կառս վաղիւն 'ի դագաղս,
Լքեալ զամենայն յաւիտեան հանգչի:

ԿԱՐԱՊ ԵՒ ԿՌՈՒՆԿՆ

Թէ կեանք մարդոյ է բարելի,
Լինի օրհասն ուրախալի:

Թէ որ վարքդ է առանց մեղքի,
Մահըդ կըլլայ փառաւորութ̄ մի:

Ծնթ. Կարապ թռչունը մեռնելու ատենը կերգէր ինչպէս իր սովորութիւն է: Կռունկը զայն տեսնելով ըսաց իրեն, թէ չկրնամ ի՞նչ կըմտմտաս որ սաանկ վիճակի մէջ ալ կուրախանաս: Պատասխանեց կարապը, թէ կըհասկընամ որ պիտի մեռնիմ. միթէ ճամբէ դուրս անկարգ բա՞ն. է յայտնել ուրախութիւն. երբոր զիս կըտեսնեմ այս ետքի կէտիս մէջ, որ բոլոր իմ Թշուառութենէս պիտոր ազատիմ:

Օրինակ է առակս երջանիկ մարդուն, որ մեռ-

Նէլսոն ատէնն ըրած բարեգործութիւնները մեծ երեւելի խոստովանանաց, որ աշխարհաց թշուառութեան կապած. ինչպէս հէն ատենը ալ մը կար, որուն փառաց որ կը ծնանէր՝ կոչւոյն. և երբոր մէկը կը մեռնէր՝ խոստովանանոյն :

Լաւ է օր մահու քան զօր ծննդեան,
Արդար օրինօք գիտունք վճռեցին.
Քանզի յօր ծննդեան վիշտ չարիք ծագին,
Իսկ յաւուր մահու է չարեաց վախճան։
Երանի մարդոյ որ յաւուր մահուան,
Ընդ գործըս բարեաց հրճուի խնդագին.
Սիրտ առաքինեաց ցնծայ 'ի բարին,
Վայ անօրինաց մահու անվախճան :

ՋՐՇՈՒՆ ԵՒ ՇՈՒՆ

Պսակ գործոց է կէտն յետին.
Ելք և վախճան իրաց բնաւին :

Ամէն բանին վերջը նայէ,
Որ գործերը կը պսակէ :

Առակ. Մէկ շուն մը կ'երթի ջրշանն ետեւէն. և ջրշունը անոր ձեռքէն ազատելու համար զինքը ջուրը կը նետէ. շունն ալ անոր ետե-ւէն ջուրը նետուեցաւ լողալով գնաց անոր հասաւ. և այնչափ մօտեցաւ, որ բերանը բացաւ պիտի բռնէր. իսկ ջրշունը մէկէն մտաւ ջրին տակն, ու աներեւոյթ եղաւ։ Ետ-

այսպէս շունը կորսընցուց տըսը այն կէտին,
որ ձեռուքովը գրկեր էր թէ բռնեցի ։

Կրէսոս Թագաւորը հարցուց օր մը Սողոն իմա-
ստակին, թէ ինծի պէս երջանիկ կը գտնըւի՞
աշխարհիս մէջ. անալ պատասխան տըւաւ, թէ
մինչեւ եսքի կեսը պէտք չէ որ երանի տայ մարդս
իր մեծութեանը. վասն զի ամէն գործք վախճանովը
կը դատուի ։

Ըսա է անեսանել վճիռ Սողոնին,
Թէ վախճանն է եղը պսակիչ իրին.
Մինչեւ է հասեալ գործ ինչ այն կիտին,
Մի՛ վստահանար տեղի տայ հեշտին ։
Ո՛վ զխարդ տմանք 'ի մտի եղին,
Ցնծալ հանապազ 'ի գահոյս բաղդին.
Բայց 'ի Թարթ ական ըն հասեալ անուլին,
Վեր 'ի վայր արար խորհուրդ հողածնին ։

ԱՅՐ ԱՆՀԵՐ

Թէ չէ ինչ քո յատուկ անձին,
Ոչինչ օգտեն իրք օտարին ։

Թէ քու բանըդ քեզ չանի լըմնէ,
Օտարինն ինչ պիտի ընէ ։

Ձին. Մէկ անհեր մարդ մը հարկադրեցաւ,
որ գլուխն օտար մազ դնէ. երբոր օր մը
պար կըխաղար ընկերներուն հետ, անանկ

ուժով ցաթկեց, որ մարմինը ցնցըվեցաւ. և սուր մազերը գլխէն վար ընկան: Զայս որ տեսան ամէնքն սկսան խնդալ, իսկ պարխաղացողն ուզեց անոյշ խօսքով մը այս ծիծաղը դադրեցընել անոնց ըսելով: Պարոններ պէտք չէ այսչափ զարմանալ, թէ այս մազերը ուրիշ մարդու գլխուն վրայ չեն կենար կեյնին. որովհետև բուն տէրոջը գլխուն վրայ չեն կրցած կենալ. մանաւանդ թէ իմ յատուկ մազերս գլխուս վրայ չեն մնացած, ուրիշինը պիտի մնայ:

Ուրիշին քանը Իմաստութիւնը խելքը մարդու և փառք լուսին. Ջանա՛ որ դուն ունենաս այն խելքը այն Իմաստութիւնը արդարութեան որ միշտ հետդ ըլլայ, և ընկերներուդ ալ շահ ընէ:

Այնպէս որ ցանկայ ընչից օտարին,
Խաբի և մնայ աղքատ և մերկին.
Զի այն որ չօգտէ իւր վաստակողին,
Զիա՞րդ օգտեսցէ օտարաց անձին:
Ջանա՛ ամբարել քեզ բարիս ներքին,
Եւ մի՛ մոռանար առ դուրս ընկերին.
Դիր զիմաստութիւն պսակ 'ի գլխին,
Զառաքինութիւն զարդ ինչ գագաթին:

ՈՒՂԵՒՈՐՔ ԵՒ ՍՕՍԻ

Զոր ինչ առնես ապերախտին,
Միշտ ապերախտ է յիւր բանին։

Ապերախտին ինչ բան ընես,
Բոլոր ըրածդ ծովը նետես։

ՃԻԷ. Շնիկ աստղին մէջ մէկ խիստ տաք օր մը երկու ճամբորդ զովանալու համար սօսի ըսած ծառին շուքը նստան. արեգակին տաքութեան այրուելով հոն քաշուեցան կեցան։ Երբոր ծառին ճիւղերուն վրայ կընայէին, որ պտուղ չի կար վրանին, սկսան իրարու ըսել. ահա՛ անպիտան ծառ մը, որ բանի մը շահ չունի. Թէ որ մեզի իյնէր, հիմա կը կտրէինք կրակը կը ձգէինք։ Պատասխան տուաւ ծառը. ո՛վ ապերախտներ՝ հապա այս շուքն որ իմ տերևներս ըրեր են բան մը չէ՞, որ զձեզ այսչափ ատեն արեգակին տաքութենն ազատեց, որ երելով հազիւ փախաք հոս հանգչեցաք։

Ապերախտ մարդուն ինչ որ ընես աւելին ընընայ, և իրեն աղէկութիւն ընողին գէշ կը կամենայ. վասն զի ինքը մարդ չէ, աղէկութիւն չունի, որ մարդկութիւն ճանչնայ, անոր համար միշտ ատելի է այս և մարդը։ Երբոր արեգակը յուլիսի 17 ին շնիկ աստղի տանը կը մտնէ, խիստ տաք կըլլայ։

Տե՛ս ո՞րպէս խառն բարերար սօսին,
Ցամաքրախառ անձանց յոր պատսպարին.
Քանզի որ առնէ բարիս ընկերին,
Զարիս ընդունի դարձ փոխարինին։
Արդ մի՛ մոռանար ըստ անզգամին,
Ընորհս երախտեաց քոյ բարերարին.
Մի՛ հետաքններ դյատկութիւն անձին,
Այլ թէ զինչ բարիք անտի քեզ քաղին։

ՁԿՆՈՐՍ ԵՒ ՁԿՈՒՆՔ

Որք քաղցրութե՛ան ոչ ամոքին,
Բռնի ուժով անդէն կակղին։

Չի կակղեցօղն անոյշ խօսքով,
Մոմ կը դառնայ բռնութենով։

Ձիղ. Մէկ ձկնորս մը նստեր էր ջրին մօտ սրինգ նէյէ կըչալէր, կարծելով թէ ձկներն ասոր ձայնէն կըզմայլին. և անանկ կը մօտենան իրեն, որ ձեռքով կըբռնէ զանոնք. բայց որչափ որ չալեց, մէկ ձուկ մը չեկաւ. Ան ատենը ձկնորսն առաւ իր ուռկանն, ու նետեց ձկներուն վրայ. ահա բոլոր ձկները թանըվեցան ուռկանին մէջ. զանոնք դուրս քաշելով կըսէր ձկնորսը, խեղճ ձկներ, ես կարծէի թէ դուք երաժշտութիւն կըսիրէք. բայց հիմա աղէկ հասկցայ թէ աւելի լաւ կըխաղաք եղեր ուռկանով, քան թէ սրինգով։

Լռութիւնը ամէն տեղ շահ չըներ. շատ'անգամ պէտք է խօսութիւն խօս տեսնել. վասն զի կան մարդիկ, որ մինչև խօսութիւն չի տեսնեն չեն հասկընար:

Քաղցրութիւն բանից ոչ յամենայնի,
Յօգտակարաց լինչ վճարել ունի.
Այլ 'ի ժամ յանէտ իշխանաւորին,
Որտանայ երբեք 'ի սաստել ռամկին:
Այսու ապստամբք ճնշին առ ահին,
Սատահակ զաւակք ուղղին խրատին.
Զի որ ոչ բանիւ գայ յուղիղ կարգին,
Գանիւ բռնութեամբ ուղղի խստագին:

ԿՈԿՈՐԴԻԼՈՍ ԵՒ ԱՂՈՒԷՍ

Վա՜յ որ ըլլէր քո անարգես,
Ամենեցուն դու անարգ ես:

Վա՜յ անոր որ զինք չի ճանչնայ,
Սուտ պարծանքով ծաղր կ'ըլլայ:

ԺԻԷ. Կոկորդիլոսը զաղուէսն անարգելով միայն իր ազնուական ցեղին վրայ կըխօսէր. և հպարտ ձայնով մը կըսէր անոր. այ ողորմելի, ես զքեզ անանկ լիրբ կըտեսնեմ, որ մինչև կըհամարձակիս ինձի հետ բարեկամութիւն ընելու. դուն գիտես ես ով եմ. գիտես որ իմ ազնուականութիւնս գրեթէ աշխարհքիս պէս հին է: Պատասխան տուաւ աղուէսը զարմանալով, թէ այդ բանը ի՞նչ-

պէս կրնաս ցցընել ինծի: Ըստ դիւրին կրնամ ըսել կոկորդիլոսը, վասն զի գիտնաս որ հսկաներուն կռուին առենը ոմանք Ածներէն փախան եկան կոկորդիլոս եղան, Նեղոս գետին մէջ պահվեցան, ահա ես ալ շիտակ անոնց ցեղէն եկած եմ. բայց դուն Թշուառական ուստի՞ կուգաս: Պատասխանեց աղուէսը, իրաւ որ այս բանը ամենեւին չիյտէի, եւ չէի լսած. բայց հաւատամ պատրոն կոկորդիլոս, որ ես շատ աշխատանք կը քաշեմ գիտնալ, թէ ո՞ւր կերթամ, քան թէ ուստի՞ կուգամ:

Ի՞նչ շահ պարծենալ ծնողաց մեծութենը վրայ, երբոր ինքը մարդ չէ: Հարուստի մը անշահ զաւակ ուզեց մէկ իշխան մը վար զարնել. պարծենալով երեոը զարկաւ անոր վար մարդու զաւակ ըլլալը. ան ալ պատասխան տըւաւ, թէ ես իմ ցեղիս առաջին ազնուականն եմ. իմ ազգս իմմէ կը սկսի, եւ քու ազգդ 'ի քեզ պիտի վերջանայ: Հոյաներուն պատմութենը տէս ձէմ. 642 համարը:

Տե՛ս զունայնութեն զբաբան վատին,
Նախատէ զընկերն իբրեւ դիւցազին.
Երկրաքարշ գոլով սողայ ընդ գետին,
Պանծայ թէ իցէ յԱծոց կարգին:
Եղո՛ւկ այնոցիկ որ նման սմին,
'Ի վերայ լանջաց ճարակեն յախտին.
Պարծին ը̃ նախնեաց գործս ազնիւ զարմին,
Ոչ գիտեն, այն է նախատինք նոցին:

ՈՒԽՏ ՀԻՒԱՆԴԻՆ

Ով է հաճոյ երկնաւորին,
Ուխտել 'ի վեր քան զոյժ անձին ։

Թէ լսէիր դուրս ուխտեր ըրէր,
Արփաւածոյ տօղերան մը ըըրէր ։

Ճիշդ. Մէկ երկրագործ մը վտանգաւոր կը հիւանդնայ, և հարիւր կով ուխտ կընէ Ասկղեպիոսին՝ այս դաշինքով որ եթէ առողջանայ բոլորը զոհ ընէ անոր ։ Հարիւր կովը ուստի՞ պիտի գտնես՝ ըսաց կընիկը. գոմ չէ՞ս մնացեր ամենևին. տէ՛ր Ած՝ ես մէկ հատ մը չեմ տեսներ գոմին մէջ ։ Պատասխանեց հիւանդը թէ կըտրէ ձայնդ. Թո՛ղ իմ խնդիրքս կատարուի, հարկաւորապէս անանկ բարի է Ած, որ եթէ հաճի մեր հորթուցը ալ զոհ կըլլայ ։

Հին ատենը Ասկղեպիոս էր բժշկութեան աստուած. որ Ապողոնի աստծոյն որդին ըլլալով ինչ կերպ հիւանդութեան որ ըլլար կրնար բժշկել կըսէին ։ Այս պարզամտուս երկրագործն ալ անոր ուխտ ըրեր է իր կարողութենէն վեր, որ հաճոյ քան չէ. ինչպէս կան մարդիկներ, որ անկարելի ուխտեր կընեն պարապ տեղը ։

Ահա՛ քեզ բերմունք մնաց յիմարին,
Կշռէ մարդկօրէն զքան անբաւին .

Ոչ գիտէ թէ նա յամենայն վայրի,
Ներկայ և զննիչ է շարժման սրտի։
Ուսիր երկիւղիւ պատկառ կալ նմին,
Ուխտիւք զաղարիչ պաշտել ջերմագին.
Որում զոհ ընտիր է եռանդն հոգւոյն,
Եւ ոչ բազմութիւն երամ անբանին։

ՁԿՆՈՐՍՔ

Որ լոկ յուսով ուրախանայ,
Յանձանկ գործոյն անյոյս մնայ։

Մինակ յուսով եթէ երթաս,
Ամէն բանէն պարապ կելլաս։

ՃԻԹ. Ձկնորսները իրենց ուռկանը ջրէն դուրս կը քաշէին. բայց սովորականէն ծանր ըլլալով մեծ յոյս ունեցան, և մեկմէկու կըսէին թէ առանց կարծեաց լաւ որս ունինք. ով գիտէ հիմա ի՞նչ ձկներ պիտի տեսնենք մեր ուռկանին մէջ։ Ասոնց ուրախութիւնը շատ չի քշեց. վասն զի երբոր շատ աշխատանքէն ետև նայեցան ուռկանին մէջը՝ ուրիշ բան չի գտան, բայց մէկ մեծ քար մը որ ջրին ընթացքը բերեր էր հոն։

Օրինակ է անոնց, որ իրենց հարկաւոր բանին Եփսէ մէն ըլլար, ու կընային որ հօրբընան ապ-

բանքը յափշտակէին ։ Բայց հայրերնին մեռնելէն ետքը պարապ թղթերէն 'ի զատ ուրիշ բան չէ մնար յիշատակներնին ։

Քանի՜ք յուսալից գնան խնդալէն,
Գլխովին յեցեալ դիւրաստան բաղդին.
Զամենայն գործս յաջող ենթադրեալ,
Ցեստոյ չարաչար յուսոյ վրիպին ։
Ցո՜ւշ լիցի վճիռ իմաստասիրին,
Իբրև բարեկամ քեզ ազդ արարին.
Սիրտ զգուշաւոր աստ կասկածի,
Հակառակ կողման իւր յաջող բաղդին ։

ԳՈՐՏՔ

Միտք խոհական խորհի զվերջին,
Համեմատ զելս ընդ մտին.

Խելացի մարդ շուտ բան չընէ,
Ետքն ու առաջ լաւ թող քննէ ։

ձէ. Գորտերը ամառուան մէջ տեսան որ իրենց ջրոտ տեղը կը ցամքի՝ սկսան պօռալ, թէ ուր պիտի երթանք բնակինք ։ Իրենց մէ-ջէն մէկ ձագ մը պատասխանեց, թէ այս մօտ եղած հորն երթանք, որուն մէջ լեցուն ջուր ըլլալով մինչև բերանը շատ դիւրին հոն կըր-նանք մտնել ։ Խի՛ստ լաւ, ըսաց մէկ ծեր մը իրենցմէ. բայց երբոր ջուրը ցամքնայ մենք հորին տակն որ մնանք՝ որուն խորութիւնը

քսան ոտքէն աւելի է, ինչպէս կրնանք անանկ դիւրին դուրս ելլել, որ սանկ դիւրին ալխոր մտնենք:

Խելացի փորձ մարդը մեր ամէն բանին նայելը կը մտմտայ. իսկ անփորձ պապանին խելքին եկա-ծը կընէ, և մեզ կը փոշմանի: Ամէն պէտք է ծերոց բան հարցընել և անոնց խրատովը բան ընե-նել, որ չի փոշմանինք:

Տես պճնասուն մնաց խորհուրդ գերագանց,
Խորհի դժուարին 'ի վախճան իրաց.
Քանզի փորձ գոլով խիթայ յապառնեաց,
Զի մի՛ անխորհուրդ դիպեսցի չարեաց:
Արդ մի՛ հեռանար դու 'ի ծերունեաց,
Ո՛ւնկն մատուցես բանից փորձառուաց.
Որք ոչ վայրապար խորհին և խօսին,
Թէ և չեն յարգոյ առ անմիտ մանկանց:

ԵՐԿՈՒ ԹՇՆԱՄԻՔ

Որ ոխս ունի ընդ ընկերին,
Դաշնակից է սատանային:

Ոխ պահելով ով չար հոգւէ,
Չարին բերան զինք կը ձգէ:

Ճլա. Երկու մարդ մեկզմեկ մահուչափ կա-տէին, եղաւ որ այս երկուսը մեկ նաւով

ճամբորդութեն ըրին ։ Երբոր լեցուն հովով կերթային, ալեկոծութեն մը ելաւ անանկ սաստիկ՝ որ նաւը հովին բռնութենը ծովին զարնելով փշրտեցաւ, տակը բացվեցաւ ։ Այս վերջին խեղճութե̄ երբոր երկու ճամբորդները ջրին մէջն էին ընկեր և իրաւ կը տեսնէին որ ալ պիտի խղդըվին, սկսան մխիթարվիլ․ զի կըսէին մտքերնուն մէջ, թէ որ ես կորսըվիմ, ահա թշնամիս ալ ինծի հետ կը կորսըվի ։

Ատելութիւնը անանկ կը կուրացընէ մարդն, որ թէնչեւ մահին դուռը կը հասնի, և ոխը սրտէն չի հաներ, ու սատանային կերակուր կըլլայ ։ Փիլիսոփայ մը կըսէր, թէ որ կուզես թշնամիէդ վրէժ առնել՝ անկէ աղէկ եղիր ։

Զխո́րդ ապաժոյժ կիրք դժոխային ,
Անհամբոյր ոխոյ ատելեաց կրկին ․
Մինչ հասեալ ժամնեաց սեաւ մահաբերին,
Լինին վրիժառու յայն կեա խաւարին ։
Եւ ա́րբէ կուրութե̄ խորհրդոյ նոցին ,
Ո՛չ հոգին ո́ւր կան յո́ր սահման հասին ․
Այս գործ է տհա սկզբնաչարին ,
Որ այսպէս զմարդ առնէ իւր բաժին ։

ԱՌԻՒԾ, ԱՐՋ ԵՒ ԱՂՈՒԷՍ

Խռովարարք միշտ վնասին,
Այլ ոք շահի ինքեանք ծաղրին :

Կռուօղ մարդիկ միշտ ղէն կընեն,
Միջնայրոց շահ կը բերեն :

Ճլր. Առիւծն ու արջը իրենց մէջ խռովեցան մեղրի փեթակին համար, որ պատեր էին կաղնի ծառին խոռոչին մէջ. երկուսն ալ կը ջանային որ յափշտակեն առանց իրարու բաժնելու : Շատ լաւ կըլլար թէ որ երկուքամին ընէին. վասն զի երբոր իրարու հետ կը կռուէին՝ մէկ աղուէս մը կամացուկ մը եկաւ մօտեցաւ մեղրին, բոլորը լափելով կերաւ փախաւ :

Շատ անգամ երկու եղբայր, և երկու բարեկամ իրարու հետ չեն հաշտուիր. մինչև որ մէջերնին մէկը չի մտնի, կամ մեծ վնաս մը չի քաշեն. վասն զի անտարբերը իրենք իրենց կռուգան, և շուտ մը կը հաշտուին :

Ահա՛ հատուցումն անմիաբանից,
Զրկեն զմիմեանս 'ի միոյ ընչից.
Այլոց առնեն շահ, ինքեանք մերկ թափուր,
Երբ օտարք շահին վերջ լինի վիճից :

Քանի՛ շահաբեր է միաբանից,
Մասնակցել սիրով միմեանց զբարիս.
Զի զի՛նչ քաղցրութի՛ն և զի՛նչ բերկրալից,
Քան սիրել սիրիլ գոյ հարազատից:

ԱՍՏՂԱԲԱՇԽ

Զի՞նչ շահ զննել զաստղս վերին,
Ոտիւք սահիլ 'ի գուբ խորին:

Ի՞նչ շահ մեծ մեծ բաներ խօսիլ,
Պզտի բանով փոսը իյնիլ:

Ճլէ. Մէկ աստղաբաշխ մը քալելով կը դիտէր աստղերը. բայց շատ լաւ կըլլար եթէ իր ոտքին վրան նայէր: Վասն զի երբոր աչքը վերցուցեր միակերպ երկինքը կը դիտէր, ահա մէկ հոր մը փորած էր ճամբուն վրա՝ որ առանց նայելու անանկ մօտեցաւ, մինչև ընկաւ մէջն ու խղդըլվեցաւ:

Թալէս փիլիսոփան օր մը գործիքը ձեռքը երթալով աստղերը կը դիտէր, ընկաւ փոսի մը մէջ. ծառան հասաւ որ զինքը անկէ հանէ, բայց՝ երկինքին բաները դիտելու տեղը ոտքիդ տակը չի նայիր: Խրատ է անոնց որ իրենց բանը կը թողուն, ու իրենցմէ վեր բաներու ետևէ կըլլան, և երբեմն հասարակի վրա ալ հակառակութիւն կընեն, որ մէկէն փոսը կը գլորին:

Օրինակ է այս ընդվայր չըջողին,
Թողելով զօգտակարն քննէ ըղձերին.
Ոչ գիտէ թէ մեր իւր վիճակք յանդգին,
Շրջի խնդրեալ զբան օտարին :
Մի՛ հետաքննեք զոր քեզ ոչ օգտին,
Գնդեալ զկնի վայելչականին.
Եւ օգտակարին և փառաւորին,
Որով արերճ մնաս 'ի քոյդ վիճակին :

ԴԸԼԲԻՆ ԵՒ ԴՈՆ

Մի՛ պահանջեր վրէժս յայլմէ,
Ջի մի՛ և քեզ նոյն չար հասցէ :

Վրէժխնդիր այլոց մըլլար,
Չէ նէ նոյնգայ գլխուդ մեծ չար :

Ճըռ. Դըլբին ձուկը ետևէն էր ընկեր մէկ դոն ձկան մը, վրէժխնդիր ըլլալով նախատանացն որ անկէ տեսեր էր : Դոն ձուկը փախաւ ծովին եզերքը քենուրը, դըլբինն ալ ետևէն վազեց : Իսկ դոնը անոր ձեռքէն ազատելու համար ցատկեց աւազին վրա, դըլբինն ալ անոր ետևէն ցատկեց. բայց ինչպէս պատժեցաւ իրենց յանցանքը, երբոր երկուսն ալ անանկ ձգած մնացին հոն : Որովհետև իրենք ջրէն դուրս ըլլալով օդին մէջ մնացին, ու անանկ տկարանալով մեռան. և շատ զզջացան որ իրարմէ վրէժ առնելէն 'ի զատ ուրիշ բան չէ մտմըտացին :

Տեսնե՞ր զպատուհաս ոխակալ չարին,
Զիա՞րդ յայն պատիժ կորեաւ ընդ նմին.
Զի որ ոչ ներէ չարեաց ընկերին,
Ոչ թողցին յանցանք իւր յաւուր կանձին:
Այս քեզ է խրատ մարդ ընկերական,
Մի՛ առներ զընկերն ըստ ձկանց բարուն.
Սիրել և սիրիլ քեզ է սեպհական,
Կեալ որպէս զմարդ և ոչ զերթ գազան:

Թշնամին է եռանդ, ու դուռն է մխիթարութեան
յոյզը. որ օրինակ են ադելի մարդկանց. Բայց
շատ անգամ երկու Թշնամի այնչափ իրարու հետ
կռւին, որ մինչև իրարու գլուխ կուտեն:

ՄԵՌԵԼԱԹԱՂ ԵՒ ԲԺԻՇԿ

Որ անիրաւ ջատագովք,
Զերթ շաղակրատ յայլոց ծաղրի:

Մի պարծենար թէ բան գիտես,
Հապա դեռ թէ բան մը չգիտես:

Ճլե. Մ՚էկ մեռել թաղող մը կը թաղէր իր
դրացին. երբոր գերեզմանը կը լմնցը-
նէր լեցնելու, տեսաւ բժիշկը, որ դեղ
ըրեր էր մեռելին երբոր հիւանդ էր. ուս-
տի ըսաւ անոր, ես դքեզ անանկ վարպետ
կը տեսնեմ, որ կարծեմ թէ կրնայիր հի-
ւանդն ողջացընել: Պատասխանեց բժիշ-
կը, թէ որչափ որ կըրցայ նէ ըրի. բայց

այդ մարդը գէշ հիւանդութեան մէջ էր ։ Կրկնեց մեռնել Թաղօղը գլուխը շարժելով. Թէ որ անանկ չըլլար քու ձեռքդ կիյնէր ։

Լեզուանի մարդը կարծէ թէ խօսքով գործած յանցանքը կը գոցէ. բայց շատ անգամ ալ ծաղր կըլլայ և իր խօսքովը կիյնի ։ Ասանկ մէկ լեզուանիին ըսաց Զէնոն թէ ականջներդ լեզու են դարձեր ։

Այսպէս և զեկօզք արդար երևին,
Պատճառ տան գործոց ոչ զիրաւացին.
Որով 'ի բազմաց երբև շաղակրատ.
Արդար օրինօք մերժին հալածին ։
Արդ մի՛ հետևիր ունայնախօսին,
Որ բազում բանիւք խաբել հնարին.
Քանզի բանք ոչինչ վճարել ունին,
Թէ ոչ ընդ գործոց արդեամբք լծակցին։

ԹՌՉՆՈՐՍ ԵՒ ՕՁ

Որ ընկերին չար ինչ խորհի,
Նոյն չարեօք պատուհասի ։

Ով որ եղբօր չար կը կամի,
Ինքն ալ չարով կը կորսուի ։

Ճնճ. Մէկ Թռչուն որսորդմը կաշխատէր որ Թռչուն բռնէ. երբոր վար ծռեցաւ որո

դայթը լարելու, օձ մը խածաւ ոտքը․ ո՜հ կանչեց մարդը ես արժանի եմ այս բանիս, որ ինձի եղաւ․ Ինչպէս կրնամ տրտնջալ թէ կուզէ օձը իմ կեանքս վերցընել․ որովհետեւ ես ուրիշ բան չեմ մտածեր, միայն այլոց կեանքը վերցընելու կրնայի։

Անախտալ օրէնք է, թէ որ կուզես քեզի աղէկ ըլլայ, դուն ալ ուրիշին աղէկ ըրէ՛․ թէ որ կուզես քեզի մէկը գէշութիւն չընէ, դուն ալ ուրիշին մ՚ըներ․ վասն զի ինչ որ ընես, նոյն կըգտնես։ Ասոր է թէ սուր առնօղը սրով կերթայ։

Այս արդար պատիժ է չարակամին,
Միայն զչարիս այլոց խնդրողին․
Զի ո՛ր չար կամի չարն է իւր բաժին,
Զոր ինչ և կշռէ՝ կշռի չափ նովին։
Թէ խնդրես բարիս՝ բարիք քեզ պահին․
Գործք քո և քո սիրտ զքեզ ուղիղ դատին․
Մի՛ ցանկար այլոց չարիս այլ բարին,
Զի արկածք չարեաց 'ի քէն հեռասցին։

ԱԽԱՆԱԿ ԵՒ ԴԻՈՍ

Որ ոչ է գոհ յիւր վիճակի,
Ուր և գնայ յաւէտ ծանրի։

Թէ մէջ նիշէն փոխչէ ուղէն,
Աւ մեծին մէջ փեղ կը յգեն։

Ճլէ. Պարտէզպանին էշը կը համեմրանաց ամմէն առտու գիւղերանց ելլել խոտ տանել վաճառանոցը։ Օր մը աղաչեց Դիոսին, որ զինքը անանկ մէկ մարդու մը տայ, որ կարենայ գէթ քնանալ։ Ըսաց Դիոս թէ անանկ թող ըլլայ. նայիս որ ըսածին պէս էշը գործելի ծախողի մը տուն գանրվեցաւ։ Երկու օր չի կրցաւ կենալ հոն՝ սկսաւ զըղջալով փնտռել պարտէզպանը. ես անոր տունը կրսէր երբեմն կաղամբի լահանայի տերեւներ դաղտուկ կաանէի կուտէի. բայց հոս ի՞նչ կըվաստըկիմ գործելը տանելովս, ծեծ ուտելէն 'ի զատ ուրիշ բան չի կայ։ Ուրեմն պէտք եղաւ անոր ուրիշ վիճակ խնդրել։ Դիոս դըրաւ՝ զայն մէկ խաղախորդի մը Բաղախի տուն. իսկ էշը չէր դիմանար կաշինները ուն դէշ հոտին, որ կը կրէր։ Ուստի անանկ ուժով պօռաց որ չի կընար ըլլալ, և խնդրեց երրորդ անգամ մէկ ուրիշ տէր մը։ Անտանելը Դիոս ըսաւ անոր, թէ դուն խելք ունենայիր առջի

տիրոջդ տունը կրկենայիր։ Թէ որ քեզի ուրիշ նոր տեղմ' այլ տամ, դուն գոհ պիտի չըլլաս ինչպէս մեկայծոնց ըրիր։ Այսպս կեցիր ուր ես նէ. չըլլայ թէ ուրիշ տեղ անանկ առիթ մը գտնես որ աւելի տրտնջաս։

Անդադար գանգատող մարդը կարծէ, թէ տեղ փոխելով իր հանդարտի. բայց դժէպ է իր ոխերը ու գէշ բնութիւնը փոխէ որ հանգչի. ասոր ասանկ մարդուն գլխէն փորձութիւնը չի պակսիր։ Հարցուցին փիլիսոփային թէ աշխարհիս ինչ ծանր բան ունի կրան. անալ ըսաց, թէ ծոյլ ու խոշոր մարդը։

Այս գործ է ամօթոյ ծոյլ հեղգասիրին,
Ջանայ անվաստակ կալ 'ի քուն խորին.
'Ի փախուստ միշտակ կարծէ թէ փրկի,
Իւր անասնական յատկութեն նեղքին։
Այլ մի' գանգատիր ըստ տրտնջողին,
Զի մի' դիպեսցի քեզ չարիք կրկին.
Ո՛ւր և լինիցիս դու ընդ քեզ տանիս,
Ցո՛ր միշտակ մնացես ընդ քեզ կամք քոյին։

ԱՌԻՒԾ ԵՒ ԳՈՐՏ

Ի զի երբեք զառիւծ հզօր,
Ահաբեկէ գորտ ինչ անզօր ։

Շատ հեղ անանկ բան կը փէաննէս,
Չի կործածէր որ կանարգէս ։

Ճլր. Մէկ առիւծ մը ջրոտ տեղի մը քով պառկած ըլլալով քունը հոն կը տանի ։ Երբ որ խորունկ քունի մէջ էր՝ մէկ գորտ մը սկսաւ պոռալ. այս ձայնէն առիւծն արթնցաւ, կարծեց՝ թէ զօրաւոր կենդանի մը եկեր է հետը կռուելու, մէկէն ելաւ չորս դին կը նայէր. բայց ի՞նչպէս զարմացաւ երբոր տեսաւ թէ մէկ գորտ մը զինքը անանկ սաստիկ վախցուցեր էր ։

Որչափ քաջութիւն ունենաս՝ պէտք չէ ոտքի փախ տանես աղաղակը. Վասն զի շատ անգամ շատ մարդիկ թագաւորները կը դողացընեն ։ Եւ երբեմն երեւէ յգած մարդիկ անանկ բաներ կընեն որ մարդը կամչցընեն,

Տե՛ս զինո՞րդ հզօր առիւծ ամեհին,
Դողայ 'ի ձայնէ կենդանւոյ չնչին.
Որ օրինակ է փարթամ հզօրին,
Զաղքատս զիողքումս յաւէտ ծաղրողին ։

Արդ մի՛ տանհար լինիր տկարին,
Թէեւ յարքայից բազմիս 'ի գահին.
Զի փոքունք երբէք արտաքոյ կարգին,
Ահաբեկ առնեն զսիրտ արքային:

ՀՆԴԻԿ

Օձաւ և ջուր ծըչափ իցեն,
Մաքրել զՀնդիկ ոչինչ զօրեն:

Ի՞նչ շահ կընէ հինէրն ըսին.
Սևին սապոն խորաք խևին:

Ճշմ. Մէկ մարդ մը միաքը դրաւ որ ձեր-մըկցընէ սև Հնդիկ մը. ուստի ջուրը խօ-թեր կը լուանար և կաճրռէր, բայց փուճ տեղը աշխատեցաւ. վասն զի շատ աճրռը-վելովը անկէ եռև առաջուանէն աւելի սև երևցաւ:

Հնդիկի կամ սև մարդիկի օրինակ են այնոնք գէշ մարդու, որ ինչ ընեն չէն կրնար խօսք հասկըցը-նել՝ ինչպէս որ սևն ալ չի ձերմըկնար. վասն զի կըսեն թէ անոնց կաշիին տակը բարակ մաշկ մը կայ, որ մէկ լուանիք՝ անկէ է սևութիւնը. որ ի-րենց փէզին և արեգակին տաքէն կըլլայ:

Զի՞նչ շահ լուանալ զսեաւ ափրիկեցի,
Որ զսևութիւն ընդ մորթով ունի.

Զի՞նչ շահ խրատել` զյիմար կամակոր,
Որք ուղիղ գնեն զոր ինչ և խորհին ։
Արդ մի՛ վայրապար ուղղեր զայնպիսին,
Որ անուղղութիւն է կանոն անձին.
Քեզ լիցին կանոն վրիպանք նոցին,
Առաքինանալ ըստ ուղիղ բանին ։

ՎԱՃԱՌԱԿԱՆ ԵՒ ԾՈՎ

Փորձել զփորձեալն է յիմարին,
Որ կրկնակի փորձի յանձին ։

Փորձած բանը փորձել ուզողն,
Որ նոր փորձանք մէջ կը բերէ ։

Ճիշդ. Վաճառական մը կը բարձրընէ նաւը ապրանքով դէպ 'ի Հնդկաստան կերթայ ։ Երբոր առագաստը բացին հովը յաջող էր, և ծովը հանդարտ. բայց հազիւ թէ նաւահանգստէն հեռացան մէկէնիմէկ հովը փոխւեցաւ, և ծովն ելաւ, անանկ որ նաւը մղեց բերաւ մէկ աւազոտ տեղ մը զարկաւ հոն նստեցուց ։ Իսկ վաճառականը բոլոր ապրանքը կորսընցնելէն ետև, նաւուն մէկ տախտակովը ճորով ազատեցաւ ։ Քանի մը օրէն ետև երբոր ժուռ կուգար ծովուն քովը, ուր տեղէն որ նաւը նստեր էր տեսաւ ծովը հանդարտ. իրեն կերևնար թէ կըսէ որ նորէն նաւով տեղ երթայ. ուստի սկսաւ պոռալ ։ Անզգամ ծով փուճ տեղը կաշխա-

սիրտ դիտ խորհելու՝ սուտ հանդարտութ ըլլա-
լուն ։ Ո՞վ որ կուզէ թող հաւատայ, իմ
կողմանէս ես անհնարին չեմ սեպած անցած
օրերը նորէն ըրածներդ ։ Ես այնչափ փափա-
խամիտ չեմ, որ հաւատամ՝ քեզի երկրորդ
անգամ, որուն անհաւատարմութիւնը փոր-
ձով տեսեր եմ ։

Ծանր է օրինակ աշխարհիս, որ անոյշ հան-
դարտ երեւնալով շատ մարդիկ խորշութեն մեզ յետեր
կորուսեցուցեր է ։ Բայց ոտքով որ անմէն անգամ
ակէկոծութեն մեզ կեցնին ։ Եւ չենք աղբերնուր
ղաճառանքնին ալէս ։ որ ատեխինքերէն հեռու կե-
նալով մեր մաւշ ընկնա խորշութե մեզ ։

Ահա իմաստութեան բան խոհականին,
Որ զգուշանայ փորձ գնել անձին ։
Զի որ ոչ փախչի յաստեղից փորձանքին,
Անդէն անկանի ի վտանգ կորստին ։
Ծով է այս աշխարհ լի տարապայուցին,
Հեղեղի ծածանմամբ քաղցր է անփորձին ։
Այլ մի՛ հաւատար տեսողեան արտաքին
Զի մի՛ ընկղմեսցէ զքեզ յիւր կոհակին ։

ԱՔԱՂԱՂ ԵՒ ԲԱԶԷ

Է՛ վաղանցուկ պարծանք չարին,
Անդ 'ի հրճուանք փառաւորեալ պատուովն :

Մէ գոռոզանար այլոց վրան ,
Զի պարծանքըդ մերթար երկան :

Ճիտն. Երկու աքաղաղ չարաչար կը կռուէին մէկ վառեկի մը համար, որ մէկզմէկու կը նախանձէին : Ինչ և իցէ մէկ աքաղաղը յաղթեց մէկալին . յաղթըւողը փախաւ բունին մէկ կողմը քաշուեցաւ կեցաւ : Իսկ յաղթող աքաղաղը թռաւ ելաւ հաւնոցին վրայ որ երգելով իր յաղթութիւնն իմացընէ . բայց այս ուրախութիւնն երկար չի կրցաւ վայելել . վասն զի երբոր թևերը կը զարնէր , և ուրիշ բան չէր մտածեր , բայց եթէ իր ուրախութիւնը յայտնելու ատենն , ահա բազէն՝ որ վերէն յարձակելու էր հաւնոցին վրայ , յանկարծ վրան հասաւ յափշտակեց :

Ամբարտաւան մարդը յաղթութենէն ոչ միայն չը խրատուիր չի ջանալով ամենևին զգուշանալ խոնարհ . բայց նոյն յաղթութիւնը մեծամտել իր կորուստը կ'ըլլայ : Շատ ամբարտաւան մարդիկ իրենց գործքին վրայ պարծենալու ատենը կորսուելու պատահեցան :

Արժանի պատիժ է անզգամին,
Անդ հրճուիլ 'ի չարն հանդիպի չարին.
Խոնարհք յանկեան ինչ ապահով նստին,
Հպարտք 'ի բարձունս չարաչար ծախին:
Զի՞նչ օգուտ գործեաց այն յաղթականին,
Երբ նոյն յաղթութեն առթեաց մահ նմին.
Զի՞նչ շահ ճոխանալ 'ի վերայ այլոց,
Ուր այլք 'ի կեանս են իսկ ինքն յօրհասին:

ԲԻՂԿ ՄՂԿՈՑ ԵՒ ՈՐՍՈՐԴՔ

1 Լաւ է տալ մասն ընդ բոլորին,
Զոհել զփոքրն առ սէր մեծին:

Շատ աղէկ է մաս մը ձգել,
Բոլոր մարմինն ամբողջ պահել:

Ճիւք. Որսորդները մէկ ջրշուն մը ետեւէ կելնէին, որ որսան, և իր անդամէն դեղեր շինեն. որովհետև սովորութիւն է, որ ատոր մարմինը կը գործածեն օգտակար դեղի համար շատ հիւանդութեանց դէմ. Իսկ ջրշունը գիտնալով անոնց միտքը՝ հասկըցածին պէս թէ չպիտի կրնայ ազատիլ անոնց ձեռքէն. բռնեց իր անդամը ակռաներովը փրցուց վար ձգեց: Զայն որ տեսան որսորդները առին իրենց ուզածը, և անով շատացան ու ալ ետևէն չի գացին ետ դարձան: Եւ աստանկ իր խոհեմութեամբը ջրշունն ազատեցաւ, որ շատ իմաստութեամբ մտածեց մէկ

անդամը պակասեցընել, երբ չէր կրնար պահել, և բոլոր մարմինն ազատել:

Զբրսանը կրօնի բեւեռ մշկոյ զուեաուզ որ է երկակենցաղ և շան նման կենդանի. բայց պոչը չկան կրմանի. որ որովայնին տակը բուրս պարկ ունի, ըեցոան հոտաւէտ հեղուկ որ միակ կրօնի. և իր անդամը ունի բժշկական զօրութիւն շատ հիւանդութեանց դէմ: Այսոր գործածեն դեղք որովայնի, բէ քոտր ձկանց մեծը խոզքանէր մեծ խելացութին է:

Գործ է խոհական 'ի լինել աւելին,
Փոքր չարին ընտրել խափան աւել մեծին.
'Ի ճահ է զոհել զանդամս սորին,
Պահել զգլուխ մասն էականին:
Գլուխ և բոլոր ըստ տիրականին,
Կրօն և հաւատք են որպէս աւելին.
Այլ 'ի պահել զայն յաւէտ պատշաճի,
Զոհել զամենայն զկեանս աշխարհի:

ՀՈՎԻՒ ԵՒ ՇՈՒՆ

Շահասէրներն սրտի բերկրանք,
Են օտարաց չարիք զրկանք:

Անձնասէրը միշտ կը բաղձայ,
Այլոց վնաս իւր շահ ըլլայ:

Մեկն. Մէկ հովիւ մը շատ անգամ իր շանը կուտար՝ որչափ որ ոչխարներէն կը մեռնէին

հիւանդութիւն ։ Օր մը խիստ գէր ոչխար մը կը հիւընդնայ . անտառին շունը սովորականէն աւելի տրտում երեւցաւ ։ Հովիւը երբոր հարցուց անոր պատճառը, պատասխան տուաւ, թէ այս է պատճառն որ չեմ կրնար առանց տրտմութեան տեսնել ասանկ մէկ համեղ պատուական ոչխար մը, որ մահուան վտանգի մէջ է ։ Պատասխանեց հովիւը, թէ ինչ պիտի ըլլայ այս երեսպաշտութիւն որ կընես ինծի . ողորմելի դուն քու շահդ խնդրես շատ աւելի կը նայիս, փուճ տեղը կեղծաւորութիւն կընես . գնա՛ աղէկ ես լաւ գիտեմ, որ դուն չես ցաւիր իմ ոչխարիս համար, հապա կը վախնաս որ չըլլայ թէ առողջանայ, ու ձեռքէդ երթէ ։

Շահասէր խամ կեղծաւոր մարդը կը նայի . որ իրեն շահ ըլլայ . ուրիշին ինչ կորուստ ըլլայ . ըն- ցաւիր անձնին ուրիշին խաբողութեանը վրա . որ է շատ բնական ։

Շահասէր ժլատք համանման սմին,
Կեղծեալ վշտանան ընդ վնաս ընկերին .
Բայց յորժամ անտի ելանէ բաժին,
Հրճուին 'ի հոգի ընդ օգուտ անձին ։
Զի՞նչ քան զայս զազիր գործ որկրամոլին,
Ուր չարիք այլոց է ինքեան բարին .
Դառն է աղտեղութիւն գիտել յաղցանկցին,
Բարիս որ միակ է պատիժ արժանին ։

ԱԳԱՀ ԵՒ ԱՆՑԱՒՈՐ

Վա՜յ որ թաղէ սիրտն ընդ գանձին,
Անդ 'ի գեհեանն աստ 'ի գետին:

Թէ որ դնես սիրտդ 'ի ոսկին,
Ըստապաւէլոյս դժոխոց էակին:

Ժլատ. Մ'ագահ մարդ մը կը թաղէ իր գանձը մէկ արտի մը մէջ. բայց չի կրցաւ անանկ ծածուկ ընել, որ իր դրացին չի տեսնէ: Ուստի երբոր ագահը գնաց անկէ, դրացին հասաւ հոն, հանեց ոսկին առաւ տարաւ: Մէկալ օրը ագահն եկաւ որ նայի իր գանձը. բայց ի՞նչ կսկիծ եղաւ երբոր բացաւ, ու բան չի գտաւ հոն. աշխարհնք չի կրնար պատմել անոր ըրածը. ի՞նչպէս կը կանչէր, ի՞նչպէս կուլար, և մազերը կը փետթէր. մինչև յուսահատեցաւ: Այս ձայնին որ առաւ մէկ ճամբորդ մը հոն վազեց. ի՞նչ կորսնցուցիր ըսաց անոր, որ ասանկ կեանքէ կելլես: Պատասխանեց թէ գանձս կորսնցուցի. որ ինձի հազար հեղ աւելի սիրելի էր քան իմ կեանքս, որ այս քարին քով թաղեր էի: Կրկնեց մէկալը. թէ տուանց քեզի աշխատցրնելու բերելով այսչափ հեռու տեղ, ինչո՞ւ համար տունդ չի պահեցիր, որ ամէն անգամ երբոր պէտք ըլլար կարենայիր դիւրութե̄ հանել ու-

կիդ ։ Հանել իմ ոսկի՛ս, պօռաց ագահը ․ բէ՛հ, ես այնչափ խե՞նդ էի որ հանէի ․ ամենևին չի դպչէի պիտի անոր ։ Անալ ըսաւ թէ երբոր չպիտի դպչէիր, ինչո՞ւ համար այսչափ կը ցաւիս ․ ո՞վ բարեկամ քա՛ր մը դիր գանձիդ տեղը, անալ անոր բանը կընէ քեզի ։

Բիաս փիլիսոփային հարցուցին, թէ ո՞վ է աղքատ ողորմելին ․ անալ ըսաւ թէ ագահն է, որ սիրտն ու հոգին մաշելէն ետև, դիզած աղբանքը չի կրնար ամենևին վայելել․ և ինքն ալ հոգին ալ անոր համար կը կորսնցնէ ։

Աւա՛ղ կուրութեան մտաց ագահին ․
Ամփոփէ 'ի հող զոսկին և հոգին ․
Այն որ է կարգեալ 'ի դիւր մարդկութեան,
Տե՛ս զինչ քաղէ զհոգի անմտին ։
Գանձի այն ոսկի առ անունդ անձին,
Նա մաշէ զայն անձն առ սէր մնացչին.
Արդ մի՛ մատներ զայն դներ 'ի հողին,
Առ անբան սիրոյ առ անբան ոսկին ։

ԵՂՆ ԵՒ ՁԱԳ ԻՒՐ

Որ ոչ է փորձ ոչ գիտէ չափ,
Զանձին իւր կար դատի անչափ։

Ո՛վ որ իրեն չափը չգիտէ,
Զինքն ամենէն վեր կը դնէ։

Ձխն. Եղնիկին ձագը կըսէր իր մօրը, թէ բնութենէն ինծի անանկ մեծութիւններ տրուեր է շնէն աւելի, որ անկէ ամենևին վախ մը չունիմ։ Թէ որ պատահի կըսէր շանը հետ կռուելու, գրեթէ առանց աշխատանքի պիտի յաղթեմ անոր. վասն զի ես շատ բարձր և անկէ զօրաւոր ըլլալէս 'ի զատ, իմ գլուխս զէնք մը ունի եղջիւրէ, և շունը բան մը չունի։ Պատասխանեց մայրը. որդեակ ըզգո՛յշ կեցիր անոր հետ իյնելու, դուն անոր չես հասնիր. թէպէտ Ած զգուշացաւ իրեն եղջիւր տալու, և քեզի տրուաւ. բայց՝ անոր անանկ սիրտ մը տրուած է, որ դուն չունիս ամենևին։

Վատասիրտ մարդը շատ բան կը խօսի տանը մէջ. բայց թշնամին որ տեսնէ, լեղին կը պատռի։ Անխելք է որ իր չափը չի ճանչնալով, ինքը զօրաւորներուն կարգը կը դնէ։

Այս թերակատար բերմունք են մանկանց,
Որք գնեն զանձինս ի՛ չափ մեծազանց.
Ամէն զժուարին հեշտ թուի ինքեանց,
Զի խակ և անփորձ են բազում իրաց:
Մի՛ գներ զքեզ 'ի կշիռ քաջաց,
Եւ մի՛ անխորհուրդ լիներ ինքնապանծ,
Կշռեա՛ խորհրդով զայլոց զօրութիւն,
Գտանես յոլով գործս սքանչելեաց:

ԱՂՈՒԷՍ ԵՒ ԿՒՆՃ

Խոհեմ բնութի՛ հնարէ ճարտար,
Նախ քան զարկած նպաստ և ճար:

Խէլք ունօղին չկայ ինչ չար,
Զէն մը ըլլած ներգործէ ճար:

Ճիւղ. Մէկ լեռան խոզ մը կը սրէր ակռաները ծառի մը կոճղի վրայ, զայն տեսնելով աղուէսն, ըսաւ իրեն, թէ որո՞ւն հետ կը պատրաստուիս ծեծկռուելու. որովհետև հիմա ոչ շուն կը տեսնեմ, և ոչ որսորդ: Պատասխանեց խոզը. հէ՛ պէ՞տք է սպասել, որ անոնք երևին հասնին ես հապա իմ զէնքս սրեմ, երբոր անատենը մտածելու ժամանակ ալ չեմ ունենար:

Ամէն մարդ պէտք է ապահովէ իր բանը հոգալ իրեն պիտուային բանը գիտնալ, և ունեցած

խելքովը զինքը կառավարէր խոհեմութիւն, որ յանկարծ ծուլութիւն մը կրան գալու խեղճ ըլլայ:

Գեղեցիկ խորհի նախասահմանս բնութիւն,
Պահել յարկածից զերկրաւոր անասուն.
Զի յամենեւին գոյ զէն զօրութիւն,
Թէ 'ի զէնս գործէ յաղթէ թշնամւոյն:
Միոյ և լոյս բանին է քաջ զէն մարդոյն,
Միակ կառավար բանական գաստուածն.
Որով փայլեցի զայն ոյժ զայն ցոլմունս,
Լիցի քեզ պաշտպան 'ի զինուց ժամուն:

ԿԱՐԿԱՏԻՉ ԲԺԻՇԿ

Բանն է շնորհեալ ամէն լեզուի,
Բայց սակաւուց խոհաւոր բանի:

Ամէն մարդու խօսք է փքած,
Բայց քիչ մարդու խելք հնացած:

Չինէ. Մէկ կարկատիչ կօշկակար մը խիստ աղքատ չարչրուած ըլլալով իր արուեստին մէջ՝ անանկ քիչ շահ ունէր իրեն եկած վաստակէն, մինչև մտածեց որ արհեստը փոխէ: Օր մը խելքը դրաւ, թէ բժիշկ ըլլայ և քանի մը բժշկական բառեր սորվելով բժիշկ եղաւ, և ճանչցուեցաւ. որ իր ըլլալութիւնը շառլատանութիւնը, և անծանօթ ըլլալը շուամը զինքը ըրին մէկ շատ անյարմար բժիշկ մը. բայց խիստ յարմար շառլատան մը: Ամէն

դի ծանուցում ըրաւ, թէ իր դեղերուն զօրութիւնը չի կրնար սխալիլ. և ամէնքն ասոր խօսքին հաւատացին: Իր դրացիներէն մէկ վարպետորդի մը ուզեց ծաղր ընել զայն այս կերպով: Սաստիկ գլխացաւութիւն ունիմ ըսելով բերել տուաւ այս բժիշկը. անալ եկաւ սկսաւ երկան երկան խօսիլ անոր սուտ հիւանդութենը վրայ պատճառներով. յետոյ հաստատեց հիւանդին, թէ զինքը կազատէ այս ցաւէն քիչ ժամանակին մէջ, միայն թէ կամենայ յանձնել զինքն անոր հոգաբարձութեան: Վարպետորդին ալ խնդալով ըսաց. խնդրեմ անխնելք, ես ի՞նչպէս կրնամ քեզի յանձնել իմ գլուխս, որովհետև միայն ոտքս ալ քեզի չեմ հաւատար:

Օրինակ է անոնց որ չեն ջանար իրենց գործքին մէջ երևելի ըլլալ, այլ մեծ բանի յետոք զարնելով կը փառքին: Ո՞ր Յոյնական զանոնք որ ճարփակ ըռամկենաշնորհան համար եկեղեցական կըլլան. իրենք ի՞նչ գիտեն որ ժողովուրդին ինչ պէտք սորվեցընեն. կոյր կոյրի առաջնորդ երկուքն ալ խորխորատ կիյնին:

Ահա՜ արժանի բան անիմաստին,
Զանձին բրտութիւն ու նկատողին.
Հեգել ոչ գիտէ տառս ալփաբետին,
Բազմի սիգալով յիմաստնոց դասին:
Արդ քանի՞ անզօրք յայս մտաբերին,
Մոռանան զկար զօրութիւն անձին.
Միայն բան դատարկ 'ի բերան նոցին,
Հեռի 'ի խելաց հանճար լոյս բանին:

ՓՈՂԱՀԱՐ

Որ ոք գրգռէ զընկերն 'ի չար,
Նոյնին պատժի չարեօք իսպառ:

ՈՀ չար պատճառ այլոց կըլլայ,
Շատ մեծ վնաս շատին կուտայ:

Ճխր. Մէկ փողահար պօռուզան մը պատերազմին բաները չալելէն ետեւ բռնըվեցաւ: Երբոր մէկն անոնց մէջէն թուր վերցուց որ սուրը խօթէ անոր, պօռաց գերի բըռնըվօղը, թէ ո՛վ զօրական մոմըռած, որ ես ուրիշ բան չըրի, բայց եթէ փողս չալեցի. ուստի ոչ մարդ եմ մեռցուցեր, եւ ոչ ձեզմէ մէկին զարկեր եմ: Պատասխանեց մէկալը, թէ դուն ալ քիչ արժանի չես մահու. եւ թուրը փորը խօթելով կըսէր անորէն իրաւ մարդ չի մեռցուցեր, բայց ո՛վ ժողվեց զանոնք որ մեռցընեն:

Աւելի պիտի պատուհասին անոնք որ ուրիշին գէշութենը պատճառ կըլլան, եւ կը գրգռեն չարութիւն ընելու. ասանկներուն մեղքը իրենցմէ առաւել տապաստան կերթայ:

Այս են հատուցմունք խեռ պատանեկաց,
Որ գրգռեն 'ի չար զընկեր բարեկաց.

Ու՛ գիտեն զերկնից պատիժ պատուհաս․
Գանձեալ կան նոցա 'ի մահու արկած ։
Զի՞նչ ունիս տալ քան յայն սահման չարեաց․
Զի՞նչ վասն անձին քո և զի՞նչ զընկերաց․
Մի՛ սուլէր զփող չարին դրդանաց ,
Զի մի՛ կորիցես 'ի սուր Թշնամեաց ։

ԵՐԿՐԱԳՈՐԾ ԵՒ ՇՈՒՆՔ ԻՒՐ

Զայլոց չարիս երբ տեսանես ,
Այնու և դու ուղղեա՛ զքեզ ։

Թէ որ պախարան այլոց փնտռես ,
Շտկէ՛ զէնդ, քանի ու չինայ ։

Ճիթ . Երկրագործ մը կարձըկէ լծէն իր կովերը ը , սովի ատեն կը մորթէ զանոնք , որ անով տալըրվի ինքը և իր ընտանիքը ։ Երբոր զայն տեսան իրեն շները շուտմը ցաթկեցին իրենց տեղէն քաղաք փախան ։ Փախչինք աղատինք կըսէին իրարու , թէ որ այս մարդը չի խնայեց մորթեց կովերն , որ իր գործքին շատ հարկաւոր էին , մեզի ի՞նչ չըներ , որ գրեթէ անանկ շատ պիտուական մը չենք անոր ։

Թէ որ տըրէշին վրա գէշ բան մը փնտնես՝ մէ գայթակղելով դատէր , այնպայէ որ քանի ըրէս,

և անանց իմներովը դուռն չերփելով։ Այլոց Թշուառութիւնը նայելով, եւ աւելի եղայ. կըսէ Փիլիսոփան։

Այս սահման վճիռ իմաստասիրին,
Հրահանգիլ տայ սահմանօք օտարին.
Զի որ հանդիման երբէք տեսակին,
Հանդիպակիլ զիտէ նաև անհատին։
Բանական զատիս մտանակցեալ բանին,
Մի՛ օտար դատիր գործ բանականին.
Արթո՛ւն կաց զիտեմ գործածս աշխարհին,
Փախի՛ր 'ի յաւելից վնասաբերին։

ԱՌԻՒԾ, ԱՂՈՒԷՍ ԵՒ ԷՇ

Զի՞նչ զօրաւոր քան միտք խոհեմ,
Որ աշխարհի յաղթել գիտեն։

Խոհեմութիւն մեծ յաղթող է,
Ամէն բանին ճարն կէնէ։

ԺԾ. Օր մը առիւծը աղուէսն ու էշը որ ստորադրութեն եղան միատեղ, և բռնեցին մէկ եղնիկ մը. որ գետինն ընկածին պէս մէկէն էշը կտրտեց զայն. բաժինն որ եղաւ նախ էշը յափշտակեց առաւ քան զամէնն աւելի մեծ բաժինը։ Այս անկարգութիւն անանկ կատղեցուց զառիւծն, որ նոյն կետին ցաթ-կեց իշուն վրա պատռեց։ Անատենը հաս-կըցաւ աղուէսը գլխուն գալիքը. անոր հա-մար զգուշացաւ իրեն բաժինն առնելու

Նաև տարաւ զան ալ խառնեց առիւծին և փշուն բաժինին հետ, և բոլորն ընծայ ըրաւ առիւծին ։ Այս քաղաքավար վարմունքս որ տեսաւ առիւծը խաղաղեցաւ. որ քիչմ' առաջ էշուն ըրածը աղուէսին ալ պիտի ըներ ։ Մանաւանդ երբոր գոհ եղաւ բոլոր եղնիկն յափշտակելուն համար, ըսկըսաւ շնորհակալութի ալ ընել անոր մարդավարութենը ։ Եւ այսպէս ազատեցաւ աղուէսն իր ճարտարութեըը անանկ վտանգէ մը, և էշը կորաւ իր անխելքութեըը ։

Խելացի մարդը զինքը վտանգէն կազատեցընէ խելքովը. իսկ անխելք մարդը զինքը վտանգի մէջ կը ձգէ. ահա այս է զանազանութիւնը խելացի ու անխելք, իմաստուն և ռամիկ մարդկանց ։

Ահա՛ զօրութիւն հզօր առիւծին,
Անսասան խիզախ ձիրանաց նորին.
Տե՛ս 'ի հանճարոյ զխմրդ նուաճին,
Զի միտք ոչ ձիրանք են պաշտպան անձին ։
Իսկ դու որ տէր ես աշխարհաց ծրին,
Մի՛ ընկճիր փութով 'ի տես հզօրին.
Ըղձացի՛ յաւէտ զայն տուր հանճարին,
Որ յաղթել գիտէ ուժոյ աշխարհին ։

ՊԱՌԱՒ ԵՒ ԱՂԱԽԻՆ

Որչափ փախչիս յաշխատանաց,
Վստահաբար լինին քեզ դժուարութեանց :

Թէ գրուած է որ ննջես թաղես,
Ո՛ւր որ փախչիս թաղելու ես :

ՃԾԶ. Մ՚էկ պառաւ մը իրեն աքաղաղին ձայնը առածին պէս՝ ամէն առտու կերթար կարթընցնէր իր աղախինը հաւուն կանչելը առաւօտէն ժամ մը առաջ կանչելով : Անիկա կը հարկադրէր որ մէկէն ելլէ րոպէն ոտքէն առնէ մանէ. և թող չէր տար ձեռքէն ձգել՝ մինչև որ արևը մանելէն ետև ժամ մը չանցնէր մութ չըլլար : Իսկ աղախինը հանեցաւ մաշեցաւ քուն չըլլալով և աշխատանքով. ուստի օր մը բռնեց աքաղաղը խեղդեց այս մտքով, որ երբոր պառաւը կը կորսնցընէ արթընցնօղը՝ կրնայ անկէ ետև հանգիստ քնանալ. բայց հակառակն եղաւ : Վասն զի աքաղաղն որ մեռաւ, պառաւը ալ չէ լսելով ձայնը՝ կարգը կորսնցուց. ուստի բոլոր գիշերուան ոտքի վրայ էր, կը փնտռէր կարթընցնէր աղախինը. անանկ որ հազիւ կարճ մը ժամանակ կրնար պառկիլ :

Պէտք է մ՚էկը հնազանդ ըլլալ Ճակատագրին որ-

չափ խնոր ըլլայ, մէ թէ աշխատանօք ծախուծչու-
համար խնայէն էջածն ընէր. անապէնը գէշ նըլ-
լայ. վասն զի երբոր մէկը տաղէնէր որ ամենևայ,
քնուըսէ շահ լանի:

Խնդրեն ըղձանօքխոս ըստ մարմնաւորականեաց,
Խորշել ՚ի կոյւս է գործ սակարկին.
Քանզի ՚ի սկզբան ՚ի գրել մարմնին,
Նոյն սահմանեն երկրային գիրեցաւ նախին:
Պատրաստ կալ ձայնի հրամանաց վեհին,
Միայն զխոհուրթեն երկոց ծառայութին.
Արդ մի՛ ծընընկեց լինիր հեղգութեամբ,
Զի մի՛ զինակուցիս զծառայութեանն:

ՁԻ ԵՒ ԻՐ

Զայրոյց վկշանկ մի՛ զարդարեացն,
Թուշիմ մեռք կշռեա զնեցքին:

Մեծ ծառանը յխանն ա՛ մեծ է,
Հայրապետին ու հոգը շատ է:

ՃԾԶ. Փառաւոր ծածկեցով զարդարած մէկ ձի մը կերթար անդը զանեւըլու. համար պատերազմին մէջ. աստր անցնելը տեսաւ էշ մը՝ սկսաւ հառաչանքով նախանձելը ձիուն երջանկութենը վրայ: Ձին որ լսեց և հաւնըր ցաւ զայն. ետևէս եկօր ըսաւ, որ իմ փառքիս մասնակից ըլլաս, ինչպէս ես աշխատանքին եղէք եմ այս զարդարանքիս: Իսկ է

ըր լուսծքին ալէս վաղեց եռանէն գնաց, և հասան պատերազմին բանակը․ նախ առաւ-ջորքերը զէնքերը վրանները յարդերնը փո-ղերուն թմբուկներուն ձայնը, շատ հաճե-ցաւ, անձնուն վրա կուրախանար զբօսար-ճանալով։ Բայց քանի մը օրէն ետև ան-սաւ որ ձին պարապատարկյառաջը առանելու-պատերազմին կրակոտ առջը և վտանգաւոր ծեծին մէջ․ սկսաւ տաղտկանալով զբօսար-ճութենը ձգեր, և միայն ընկեր իրեն աւզի թողուցած ատեղը․ քէշմ՝ աւ անցաւ ե․․․ ականջներին, ու ետ դարձաւ․ Ի՞նչ որ ըսաւ իրեն ձին՝ որ չերթայ հոն ․․․այ, անձնային ամեն չըրոքա․ և յետոյ սաստկէն վառերուն ձեռք առաւ Ջաղացքին ճամբան գնաց․

Օրհնեալ է Աստուծոյ հաչատայքին, որ դըրան առանց խառատոր կերպեալ, մինչև անձինք երա-նի փորձին նախանձքին․ Բայց նիւրը նայիս՝ հա-ղար հող ներգործէ անձ անհանգիստ․ որ միշտ երանի խորքոյ մեջուն հարկիւնց։

Այսպէս և սովորք ընդ անս արտասուքին,
Պէտքն զգնդյալին իշխանութեան օրէն․
Երբ քննէն ընդս ներքին միջնակին,
Այլայլ գատաքինն առխուր վէրասաքին։
Մի ցանկար փառաց վեհափառութեան,
Եւ մի՛ փայլութեց աշխարհի բաղդին․
Զի այն շողշողանք են սուտ արտաքին,
Այլ ներքին նոյն թախիծ խաւարին։

ՀՈՂԱԳՈՐԾ ԵՒ ԱՐԱԳԻԼ

Կենակցութի՛ն անզգամին,
Վնաս բերէ մերձաւորին :

Անզգամին ընկեր,
Գլխուդ կուգայ չար ու դաւեր :

ՃԾԷ. *Երկրագործ մը լարեց իր որոգայթը, և մէկ արտին մէջ քանի մը որսող թռչուններով եկաւ մէջն ինկաւ : Անատենը բռնեց երկրագործը մեռցուց թռչունները. երբոր պատրաստվեցաւ արագիլն ալ մեռցընելու՝ աղաչելով կըսէր արագիլը, Թէ ես ոչ չարագործ եմ և ոչ մեղսակից աւազակներուն. վասն զի որոնց մէջ որ գտնըվելով բռնըվեցայ՝ անոնք սորվեցընելով ակամայ զիս հոս բերին. ուստի մեծ անիրաւութիւն կըլլայ, Թէ որ անոնց ըրածը՝ ինծի ալ ընես և անոնց հետ զիս կորսընցընես: Պատասխանեց երկրագործը. դուն մեռնելու արժանի ես, ի՞նչպէս կրնամ ես քեզի բարի ընել, երբ չար ընկերներու հետ գտայ զքեզ : Զայս ըսելով վիզը փրցուց :*

Խրատ է անոնց, որ կըսեն Թէ ես աղէկ ըլլալէս ետքը գէշ ընկերին ինծի ինչ պիտի ընէ : Ասանկ մարդիկ ինչ կուզեն Թող ըսեն. գէշին հետ

Կեղօւը փեւ կըւլյա, ողջէին հետ կեղօւը ողջէ կըւլյա:

Այս ահա պատրաստ է գուշակողին,
'ի վերուստ անուխ մեզ տալ առնողին.
Թէ որք ընդ չարաց կենակցիլ կրթին,
Զարեօք 'ի կենաց զրկուիլ ունին:
Հեռի 'ի վատաց մերձիր 'ի բարին,
Կցորդեալ յաւէտ ընդ առաքինին.
Որով և արդար լինիս ընդ նմին,
Ազատ յարկածին վնասակարին:

ՍԻՐԱՄԱՐԳ ԵՒ ԿԱՉԱՂԱԿ

Յիմարք սքանչան ընդ զարդ մարմնոյ,
Իսկ իմաստունք ընդ գեղ հոգւոյ:

Խեղճոյն մարդ մեծնալ չուզէ,
Իր քարըը մեծ չիներ կենէ:

ՃԾԴ. ( )ր մը թռչունները ժողվեցան իրենց մէջէն թագաւոր ընտրելու համար, որ յառաջ մեր ըլլայ գիրերնիս կատարելու: Իրաւ քանի չիւր թռչուն ժողովքին ընտրութիւնն իրեն քաշելու համար ըսին թէ այն ըլլայ թագաւոր, որ ըստ աղէկս աւելի կարողութիւն ունի. ուստի արծիւը խօսեցաւ իր ուժին վրայ, աքաղաղը՝ քաջասրտութեան վրայ, թութակը յիշողութեան վրայ, և կաչաղակը մաքին վրայ: Բայց պարապ տեղը կը պարծէին ժո

զովքերն մէջ ամէն մէկը իրենց կատարելու-
թեանը վրայ . մէկին խօսքը բանի տեղ չէր դնե-
լէն 'ի զատ՝ գլխացաւութեան եղան զուրցըլուած
խօսքերը : Ամենեկեն ետև եկաւ միրամարգը
բանաւորով զննելովն աղջը . երևնալուն պէս
թռչուններու զննելով դոյնզդոյն փետուր-
ներուն վրայ , երեն աշխին մեծութեանը առանց
նայելու կոչումներուն ցուցմունքներուն . որ
կը ասէին , թէ միրամարգը այդչափ 'ի զատ
ուրիշ կատարելութեան մը չունի . բայց անոնք
զովասանքը միրամարգին աշխին և մէկէն
թագաւոր կոչեցին :

Խնձի անհեյծուղը ղէփ է ատելի հոգւոյն գե-
ղեցկութեանը և բնական ազնուութեանը նայել , քան
թէ մարմնոյն . զի մարմնական գեղեցկութիւնը
ծաղկի պէս շուտով կանցնի , միայն հոգւոյնը
կըմնայ :

Անբան ընտրութիւն աշխարհաւորին ,
Ընդ ամենայն մարմնոյ յաւէտ աշխոյժին .
Որ զուրկ 'ի լուսոյ տերական մասին ,
Ոչինչ նշմարէ զգեղ հոգեկանին :
Նուրբ հանճար մտաց միայն գտանէ անդէն ,
Մի՛ փոխեր զորպիսութ լոկ մարմնականին
Թէ մեռ է հոգւոյ նշոյլ գեղոյն ,
Ոչինչ զեղ և զանոյշ ձայն զուարթութեանն .

ԴԼՓԻՆ ԵՒ ԿԱՊԻԿ

Մի՛ խաւսիր զայն որ չես քաջ անձն,
Զի մի՛ անկցիս յանմեղ վտանգ :

Անզգեաց բանիցն [illegible],
Որ մը [illegible] :

ՃԾԵ: Մ՚էկ դլփին մը ցամաքէն խիստ մօտ լողալով կ'երթար, տեսնելով զայն կապիկ մը, շատ լաւ միջոց է ըսաւ, որ դիւրութեամբ երթամ բոլոր ծովը քալեմ. վասն զի բնաւ չեմ տեսած, պէտք է որ սիրտս հանգչի: Զայս ըսելով ծովուն մտնելով, յետոյ ցատկեց ձկանը կռնակին հեծաւ. խեղճ դլփինը որովհետեւ մարդս կը սիրէ, կարծեց թէ մարդ է վրան՝ սաստիկ շատ հեռուն տարաւ զկապիկը, որ [illegible] ժուռ գալով ովկիանոսին մէջ, մինչեւ խընդալու ձայն մը հանեց: Այս ձայնէն դըլփինը [illegible] որ [illegible] նայեցաւ կապիկին, ճանչցաւ եւ զարկաւ [illegible] ներսեց [illegible], մէջէն [illegible] ծովուն տակը:

[illegible]

հաղինէին մէջ ուրիշին պատճառովը կը կորսուին:
Շատերը փնտռէ որ այս ճամբան բռնելով մներ-
նին աւրէշին մուրացկան եղան:

Բարդք անստանական ընդվայր շրջողին,
Մոռանայ զիւր գործ քննէ զօտարին.
Թողու լքանէ զտուն և տեղին,
Զի գիտակ լինի թէ այլք յի՞նչ բերին:
Զի՞ կաս ով յիմար 'ի վայր անտեղի,
Առ ի՞նչ յօտարաց շրջիս միճակի.
Դարձ 'ի սեպհական արտս և տեղի,
Զի մի՞ ծովակուր լինիս անտեղի:

ՀՈՎԻՒ ԵՒ ԳԱՅԼ ՓՈՔՐ

Մի՛ նպաստեր չարասիրերին,
Զի մի՛ չարիք 'ի քեզ դարձցին:

Թէ գաղանին փուները փէշ պառ,
Ջահիլներուն կորսուոր կուպառ:

ԾԾԿ. Հովիւ մը կը գտնէ գայլի ձագ մը, որ մայրը ձգեր էր, կառնէ կը տանի իր խուցը, և հոն կը մեծցընէ. ետքը կը դնէ զայն շներուն մէջ, որ կը նայէին ոչխարները. բայց շատ լաւ կըլլար, թէ որ սատկեցընէր. վս̃ զի առաջ քանի որ պզտիկ տկար էր, բան չէր ըներ. կատարեալ գայլ եղածէն. ետեւ մէկէն 'ի մէկ շները խղդեց, և երբոր հովիւը

քուն էր՝ վրայէն ընկաւ ոչխարներուն վրայ բոլորը ջարդեց ։

Խրա՛տ ըլլայ վարդապետաց, որ աշխէրտներուն յետեւը են բան գործելու աղանդաւորներուն գըլխուն. որ թէպէտ առջի բերանը անճառ կերենայ, բայց կամաց կամաց կապականէ մանկանց միտքը ։ Դիմացողէս ծնօղին ալ իր տունը գէշ մարդ չի հանդիպցընէն, որ անոյշ խօսքով մը բարի և ընտանի կը թուանաւորէ բոլոր տունը ։

Զօրավիգ լինել դժնեայ գազանին,
Գործ է դժնդակ սրտի անմտին.
Զի խնամ և գութ անշնորհականին,
Ըստ անդրոյն տանել է խոհականին ։
Իսկ դու հոգածու մանկանց երամին,
Մի՛ խառներ ընդ այն ըղձընունդ չարին,
Թէև առնիկար իցէ չարածինն,
Սակայն է անգութ անրմբն գազանին ։

ՕՁ ԵՒ ՑՈՒՑՆ

Երբ ոտքն իշխէ իշխող գլխոյն,
Եղուկ և վայ բոլոր մարմնոյն ։

Ուր տեղ կիշխէ կին ու ծառայ,
Ըռոտով կընեն տանն ու հէրոյ ։

Օձէ. Օր մը կը նայի օձն, որ պոչը իր գլխուն դէմ կելլէ. ինչ անբարութիւնու-

թէ է կրնէր այսչը գլխուն, որ միայնքս գրեր ես թէ ես քեզ անանկ լաւ չեմ կրնար կառա-վարելով տանել, ինչպէս դուն զիս կը տա-նիս. ոչ թէ իմ խելքս քուկինէն շատ վար է: Ցայտնի է որ շատ ժամանակէն 'ի վեր ես քեզ կը հետեւէի, հիմայ ալ դուն ինծի հետեւէ կարգով. տեսնես որ աղանկ լաւ բան չէի կրնար ըլլալ: Զայս ըսաց այսչը և քաշեց գլուխն սկսաւ ճամբայէն ետ տա-նել, որ ճամբուն վրայի բաներուն զարնե-լով տարաւ քարի մը զարկաւ պատռեց մար-մինը. քիչմ' ալ առաջ գնաց, ձգեց զայն ծակի մը մէջ: Եւ այսպէս քանի ոտք ա-ռաջ չէր գացած՝ վայն 'ի վրան եկաւ բոլոր օձին: Անասունը ետ կեցաւ այսչը կառավա-րելու, և խոնարհելով հետեւեցաւ գլխուն, ինչպէս կարգն էր. ուստի շատ լաւ բոլոր մարմինը կառավարեցաւ գլխուն առաջնոր-դութիւը, քան այսչին:

Երբ մէկ ժողովի կամ տան մը մէջ պզտիկը ու-զէ հրամայել մեծին, հարկաւ այն տեղի կործա-նի. սաստիկ ալ մարդուս զգայութիւնը բանականու-թենէն որ փախչի՝ այն մարդը կը կորսուի. որովհետե-ւ զգայութիւնը ծառայ է, և բանականութիւնը կամ հոգին տէր է. բայց մէկը որ շատ անգամ հա-գուսն ուղածը ընելու, և մարմինին կըլլայ:

Անօրէն օրէնք ըստորնադասնին,
Որ իշխէ լինել կառավար գլխին.
Բայց ո՞ւր տուն քաղաք կայցէ 'ի կային,
Երբ կին և ծառայք տիրեն տիրողին:

Տէր իշխան կարգի բան մտաւորին ;
Ի քաղաք ծածկելոյ կատարեալ միջին .
Թէ թողլ տաս միասնից դրդայականին ,
Տիրեն կործանեն զքաղաքն ընդ այնմին :

ԴԻՈՍ ԱՊՈՂՈՆ ԵՒ ՄՈՄՈՍ

Որ ձեռնարկէ 'ի գործս այլոց ,
Ցանկանայ ծաղր 'ի նոյն գործոց :

Մէ յետ+ զարնէր այլոց գործ+ին ,
Ծաղր ենլլաւ անանց առ-ղին :

ՃԾԶ. Մ՛էկ որ մը Դիոս ըսաւ Ապողոնին, Թէ կարողիք ժամանակ՝ տուր ինծի քու աղեղդ. ինք կուզեմ՝ քեզի հաւանիլ ցընել, թէ ես քեզմէ շատ աղէկ կընամ՝ նետել: Երբ անոր նե՞ս այս կաղնի ծառը տնկած Ովլիմպոս լեռան գլուխը. կուզեմ՝ որ նետը օդը երթայ աղէկ ծառին կոճին մէջ տեղը զարնէ. այս որ ըլլայ՝ դուն ալ ջանա անանկ աղէկ նետել որ յետոյ Մոմոս դատաւորանն թող ըսէ, թէ որերմնիս աւելի յաղթող ենք: Զայս ըսելով առաւ Ապողոնին աղեղը նետեց, նետն ելաւ, բայց աղէկ երթալու տեղը խոտորեցաւ, և Մոմոս դատաւորին երեսին քմծելով անցաւ զնաց զարկաւ քարերուն հարիւր ոտք հեռու նշանէն: Իսկ Մոմոս բոլորովին շփոթած վախուն, որ վրան էր իրեն՝ ոտքի վրա ելլելով ըսաւ Դիոսին.

Աճներուն գլուխը՝ չը կրցայ հասկընալ, Թէ Ապողոնին նետերը աւելի շիտակ է, բայց զայս ստոյգ գիտեմ որ անոր նետած-ներն ինծի վախ մը չէին տուած, ինչպէս քուկինդ պատճառեց. ուրեմն ինծի՛ մօտիկ ըրէ. ա՛ռ ձեռքդ դուն քու կայծակդ, և մեծդ Ապողոն, դուն ալ ա՛ռ քու աղեղդ. ահա սաստիկ շատ լաւ կըլլայ: Զայս ըսաց ու առանց աւելի բացատրելու, և մէկալին նետուածքը մեծցընելու, գնաց Մոմոս: Եւ այս կերպովս դատաստանն անորոշ Թողուց Դիոսին վախուն:

Դիոս կայծակ ունի ձեռքը, որ կը նետէ կը-ռէին. իսկ Ապողոն արեգակին մէջը՝ աղեղ ունի ձեռքը. Մոմոս խեղկատակութեան մէջ ըսաւոր երբեմն մեծներուն վէջ տափաւոր կըլլար: Օրի-նակ է անոնց որ իրենց արուեստը կը ջգէն ու-շփացած ըսնի կը խօսակցին. և անոնց շըփոթութ կը խաբէին ծիծաղելեան:

Այս շահ վաստակոց փոփոխամըտին,
Ցայլոց 'ի վաստակ վաղ ձեռնարկողին.
Այս և կատարած ինքնահաւանին,
Որ զայլս եպերէ, պանծացեալ յանձին:
Բայց յիւրաքանչիւր ըստ իւր վիճակին
Գո՛յ զօրութիւն ինչ յատուկ բնածին.
Վառեա՛ ըզնշյլ քոյդ տնկականին,
Եւ մի՛ նախանձու մըխիր յօտարին:

ԽՈԶՆ ԵՒ ԿՈՎ

Զի՞նչ շահ անգործ նստիլ՝ի տան․
Եւ պարարտանալ լինել զենման ։

Շատ աղէկ է հոգնիլ ջանալ,
Քան ծուլութեամբ կերակուր ներթալ։

ՃԾԹ. Խոզ մը կըջանար քաշել դաշտը արօտին մէկ խիստ քաղցր տեղէ մը․ մէկ կով մը տեսնելով անոր ջանքը՝ կըխնդար վրան, ու կըսէր․ խեղճ՝ ողորմելի ես, չեմ տարակուսիր թէ դուն օրը հարիւր անգամ կըցանկաս իմ վիճակիս․ լաւ գիտեմ որ շատ կուզես ինծի պէս տիրելի ըլլալ, և տանտանց աշխատանքէ ազատել։ Երբոր ասանկ կըխօսէր՝ մէկ զոհ ընող մարդ մը հասաւ հոն, և սկսաւ տաճարին ճամբան տանել զխոզը, որ սեղանին վրա իր կուռքին զոհ ընէ։ Անատենը եզն ըսաւ անոր, ով ամբարտաւան՝ նայինք հիմա քու վիճակդ ցանկալի կերեւնայ քեզի․ Ճշմարիտ է թէ ես կը բաղձամ քու վիճակիդ․ բայց դուն ալ խոստովան եղիր, որ հիմա շատ կըփափաքէիր զքեզ իմ վիճակիս մէջ տեսնել։

Հեշտասէրք հարուստք մարդիկ ուրիշը կու ար-
համարհեն, կը պարծենան իրենց հանգստութեանը վրա,

քայց չէյփէն, թէ որչափ հանգիստ տալըէն, այն-
չափ շուտ իրէնց կը ծօփէնայ հիւանդութիւնը և
ձանձը. անոր համար ամիւսապատուց ձուրդին շուտ
չտալըէն, և ծափսուխէրը շուտ կը մեռնին:

Այսպէս թուլամորթը ընդ հեշտասիրութեան
Մերժեն ըղձլաստանք 'ի խնդրոյս հեշտութեան.
Որով մերձենան 'ի սայր մանգաղին,
Խաւարին առաւօտ կենդանութեան պահին:
Իսկ զոր որ գործել ծրէարք յաջողութեան,
Անաշխատանք 'ի սէր տրտմութեան,
Մի՛ անգործ նստիր ըստ հեղգասիրին,
Մի՛ պարապանօք 'ի գողոց հեշտասէրն:

ԱՂՈՒԷՍ ԵՒ ԶԵՑ ԻՒՐ

Իւրաքանչիւր իւրն է սիրուն,
Զոր ինչ ունի՝ հրձուի 'ի նմին:

Պախարակուածն միշտ կը նայի,
Զուրիշն իրեն նման ընէ:

Ձկ. Աղուէս մը կեցնի թակարդին մէջ. մինչեւ որ պոչը չի ձգեց, չի կրցաւ անկէ ազատիլ: Այս պատահածէն շատ յամօթաւեցաւ. վասն զի տեսանել անպոչ մնալը չէր կրնար երեւնալ, ամէնքը վրան կը խնդակային: Այս բանէն ազատելու համար ուզէ ինչ ըրաւ: Միտքը դրաւ որ իրեն պէս ընկերները անպոչնայ. ժողվեց աղուէսները, ու

բարեկամաբար խորհուրդ տուաւ անոնց, որ պոչերնին ձգեն. զի աւելի արգելք կուտայ կըսէր, քան թէ զարդարանք. որովհետեւ աւելորդ բեռ մի է. վերջապէս ցըցուց, թէ այս պոչը ճամբաներն աւլելէն 'ի զատ՝ ուրիշ բանի չի ծառայեր: Փուճ տեղը այս ցուցմունքներն ըրաւ. վասն զի բոլոր ժողովքը վրան կըխնդար: Ցետոյ մէկ ծեր աղուէս մը դարձաւ իրեն ըսաց. բարեկամ չէյտեմ թէ ի՞նչ կըլլայ մէկ պոչէն անցնելով. բայց զայն գիտեմ ստոյգ՝ որ եթէ դուն ունենայիր քու պոչդ, չէիր ըսեր թէ անօգուտ բան է պոչը:

Օրինակ է անոնց, որ իրենց պակասութիւնը և աղքատութիւնը գոցելու համար, կ'ուզեն որ ամէնքն ալ իրենց պէս ըլլան, բայց ինքն անանկ ճանչէն եւս ինչ օգուտ:

Արդ մի՛ ցանկանար զարդու օտարին,
Եթէ ոչ ունիս սեպհական յանձին.
Գիտութիւն հանճար հոգեկան մասին,
Են բուն վայելչանք իմացականին:
Զի՞նչ շահ բեռնակիր՝ գանձուց աշխարհին,
Զի՞նչ իմաստութիւն՝ գրպանախաճաւին.
Արտաքին է այն, ո՛չ 'ի նա յանկին,
Զի դայ և գընայ ըստ բերման ատթին:

ԱՅԳԵԳՈՐԾ ԵՒ ՈՐԴԻՔ ԻՒՐ

Անխոնջ վաստակ հողագործին
Են հանք հողոյ և գանձ անգին ։

Աշխատողին բան չի պակսիր,
Ծոյլ կը դիմէ փանջ ու սովի ։

Ճկա. Այգեգործ մը տեսաւ որ մեռնելը մօտ է, կանչեց որդիքներն ըսաց. որդեակք աւանց ձեզի իմացընելու իմ խորհուրդս՝ չեմ ուզեր մեռնիլ, որ պատճառ մը համար մինչև հիմա ձեզմէ պահեր էի ։ Գիտնայք որ եգիխս մէջ գանձ թաղեր եմ, չէ մոռնաք երբոր ես մեռնիմ, դուք ալ եաշքի պարտքեր-նիդ ընելէն ետև փորեցէք որ գտնէք հոն ։ Մեռաւ բարի ծերը. որդիքը վազեցին եգին և բոլոր հողը մէկ ծայրէն մէկալ ծայրը դարձուցին տակնուվրա ըրին. բայց փուճ տեղը յոգնեցան և փորեցին հողերը. բան մը չի գտան ինչ որ ըսեր էր իրենց հայրը ։ Անատենը մոռքերնին դրին թէ ծերը խաբեց. բայց մէկէն խելք ըրին որ ճշմարիտ էր ա-նոր ըսածը. վասն զի հողը այսպէս շրջելով անանկ պտղաբեր եղաւ, որ շատ տարի է-գին սովորականէն եռապատիկ աւելի բա-րիք կուտար ։

Ոսկեղէն դար կը ուզէր մէկն առնել, երբոր ըսպըէն ուէր և հարկաւորութիւն չէինը, ամէն մարդ երկրագործութիւն կայրէր. երբոր պէտք ըլլար ն-րարդ կը տեղին և ամէն հանգիստ խաղերն. ահա այս է գանձը հան տէրիններն որ անոր մար-դէն հողին տակը կը պահուէր։

Զի՞նչ այն գանձ Հողոյ Թաղեալ 'ի ծոցին,
Զի՞նչ այծ անեծ ապսոկ քիմքականին.
Անմահութիւն և քիւրրին ծիր հողագործին,
Այն գանձն՝ այն տակուն ծնող են քնքծին
Թէ վաստակը ձեռնացդ ընդ քեզ կենակցին,
Մ'Թերփն քեզ գանձք մեր սակերքին.
Եւ եթէ անգործ ձեռք քո կաշկանդին,
Անչափ գանձ մԹերք փուշԹով ըսպառին։

ԵՐԿՈՒ ՇՈՒՆՔ

Որք ընդ սովորաւ վայր Թարթափին,
Աղանդաւորն՝ 'ի բաց մերժին։

Անկարեւորութիւն փոխելն ըերնոս,
Որ գործէն այլոց հըլլայ։

Չհէ. Երկու շուն մէկ տուն մը կը պահէին. որ մը մէկը բոլորովին ուրախանալով ըսաւ մէկալին. Եղբայր իմացայ թէ մեր տէրը գե-ղին տունը պիտի կարգըլլի. դուն գիտես որ առանց հարկէքի հարմնեք չըլլար. ուս-տի թէ որ ինծի մտիկ կընես, երկուքնիս մէկ

տեղ երկնային մէջ բանակիւք սանենք. մի՛ լ գի-
տէ. Թէ ի՞նչ կերպակալութեամբ՝ այժմու տեանենք
հոն ։ Զայս ընտելով սկսան երթալ մէկ գեղ
ծանօթայէ մը, անտանիկ որ հարկաւորեցան
առատոր և զարդերէ ջերմէն անցնելը. մինչև
բոլոր տեղմ չանոտ եղան, և տասնիկ հարս-
նիք գացին ։ Իրենք զիրենք դրին պատուա-
ւոր հարսնիք գացողի տեղ. բայց չարաչար
խաբուեցան. վասն զի երբոր նկատեցան հոն՝
ամենեքը հարսնացին անհոգ արտաքսութիւն վերա.
և հարկերէն աւելը չի մնացան՝ որը վնաս-
ուիլ որը տաղտուկ զարդերէն վերջնեցին ։ Այս
կերպով հետ պարզուան այս երկու տղայոց շը-
նորհը, հեղինած քաղցած և ձեռնած կերած ։

Օրինակ է որկրամոլներուն և գէշ ճամբայ գացողներուն, որ ամէնուն գործէն կըլլան. մինչև մարդ երեսնին չի նայիր. այս երեսէն ալ ընկած են՝ մարդու երեսէն ալ՝ իրենց չար վարքովը։

Գեղեցիկ խրատ մանկանց անփորձին,
Որ ընդ տիղմ գնան յանվայել տեղին.
Անդէն մոլորեալ ՚ի նոյն շաղախին,
Ի մաքուր հագուաց մերկին հալածին ։
Այդ մի՛ անձնամոլք վաղեր յուսալին,
Եւ մի՛ ուղեկցիր ընդ հեշտասէրին.
Որք գնան ընդ տիղմ՝ տղմով աղտեղին,
Եւ ՚ի թիւր թիւրեալ ասպին կործանին ։

ՋՈՐԻ

Ունայն պարծանքը ոչ ինչ օգտէ,
Բնութեան անդէն զխակն յայտ առնէ։

Սուտ պարծանօքով մարդ չի փոխուի,
Բնութիւն ինչ է՝ կը յայտնուի։

ՃԿԷ. Մէկ գէր և մսոտ ջորի մը միշտ կը պարծենար մանկութեան ատենը իր մօրը վըրայ, թէ ձի է, ու ես ձիու զաւակ եմ. բայց ծերութեան ատենը երկար ալուր կրասնելը ջաղացքը, ընդուն փոխեց, և միջոցը անընդելով չինուակ խոստովանեցաւ թէ իմ հայրս էշ է։

Հպարտ մարդը իր ծագումը նայելով զինքը բան մը կը կարծէ, ու իր ազգին վրայ կը պարծի, ինչպէս հին ատենի կռապաշտ թագաւորները յաջողութէ մէջը որ կան ; կ'ըսեն թէ աստուածներուն ցեղէն ենք, բայց ձախորդութէ մէջ ինչ եղածնին կը խոստովանէին։ Աւելի գեղեցիկ է ազնուական ըլլալը, քան ազնուական ծնիլը. կըսէր Սողոն։

Եւ յայտնես ինքնահաւանեալքդ 'ի յաջող եկին,
Իբր դիւցազունս 'ի հանդէպս բազմին.
Բայց երբ ժամանեն 'ի ձախորդակին,
Զինչութիւն ինքեանց խոստովանին լինելոյ։
Մի՛ թեթեւութեամբ խաբիր զերթ ջորին,
Պարծելով լինել 'ի վեհից ազգին.

Թէ բանք քո և գործք չիցեն պանծալի ,
Անիրաւ պարծիլն է գործ յիմարին ։

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԵՒ ԲԱՂԴ

Լե՛ր նախատես յընթացս ուղթին ,
Եւ մի՛ պարտս դներ բաղդին ։

Զգո՛յշ կեցիր գալու չարէն ,
Եւ մի՛ ասեր թէ բաղդ չունիմ ։

Ճկզ. Մէկ կտրիճ մը պառկեր հորին բերա-նը կը քնանար , երբոր բաղդն անկէ անցաւ՝ տեսաւ զայն և հասկըցաւ անոր գալու վը-նասը , մէկէն վազեց եկաւ թեւէն քաշեց ու ձայն տալով կըսէր . որդեակ թէ որ հորին մէջ իյնէիր՝ յանցանքն իմ վրաս պիտի ձգէին . ուրեմն քեզ կը թողում մտածել՝ յանցանքն իմի՞նս էր թէ քուկինդ ։

Բաղդին առիթները՝ ալպ բանաս գոյես կանչ-նին՝ թէ՛ յախորդ ըլլան թէ յաջող . գործելնակ թէ որ առիթ կայ և դուն գալու չարին նախապէս ըլլաս՝ հարկաւ կրանգի մէջ կիյնիս , և թէ յա-ջողութէ առիթին նախապէս ըլլաս , կանչնի ա-ռիթը , ու չես կրնար գտնել այն յաջողութիւնը ։ Հին ատենը բաղդը կըյեւցընէին կոյր պատանի մը մէկ ոտքով կլորակի՝ վրա կեցած , որ աչքին առջին դառնալով կուտայ դիպուածով մեծութի , փառք և այլն ։

Այս է նշանակ անխորհուրդ անձին,
Որ ոչ նախատես լինի. վտանգին.
Անարգէ զաւրհնթս ալէքեր բաղդին
Ի վտանգիլ անոր. մէ՛ջ գնէ նմին։
Դո՛ւ իմացական միջնակեալ բանին,
Կշռեսմ զվախճան ելից և մտին.
Արա՛ ըստ տեղւոյն ըստ ժամանակին,
Զի մի զղջասցիս 'ի վախճանիլ աւուրթին։

ԾԻԾԱՌՆ ԵՒ ՊԱՏԱՆԻ

Մի՛ հաւատար պատկեր բանից,
Զի մի՛ ծանակ նկուն լինիցիս։

Եթէ հաւատաս ամէն բերանի,
Եղո՛ւկ խուգայ շատալով թշուի։

Ճկն. Մ՚էկ ծիծեռնիկ մը շատ փութալով անցաւ ծովերէն, և գարնան օրերէն առաջ եկաւ այն քաղաքը հասաւ, ուր տեղէն որ ձմեռուան մօտ գացեր էր. մէկ պատանի մը աղւոր օր մը տեսաւ որ ծիծեռնիկը եկեր է. շատ լաւ ըսաւ ինքիրեն, ահա գեղեցիկ եղանակին կարապետը ծիծեռնիկն եկաւ. ուստի կրնամ լաթերս ձգել. զի աւկէ ետև ծանրութի կուտան ինծի։ Զայս ըսելով գնաց ծախեց լաթերը և ստակն ալ շուայլութե մսխեց կերաւ. բայց շատ չանցաւ խիստ զղջացաւ. վա զի քանի մը օրէն ետև ցուրտը եա դարձաւ անանկ սաստիկ

որ պապանձեալքն չխօսեցաւ, որ մերկ առաքատ ըմբռնել ծիծեռնակներն առաւօտ մեռաւ, որ այսպէս զուշակութեան ամոր բերեր էր ։

Օրինակ է փոփոխամիտ մարդկանց, որ ամենքեան կապած աւելորդապաշտութե և չարաչար էր խաբէին ։ Այս առակէն մտած է որ կըսէ, Թէ մէկ ծիծեռնը գարուն չի բերեր ։

Աւա՜ղ խորհրդոց յիմարամիտ առմեկեն,
Որ զառոք մեծ լինի բան զուշակողին ․
Նա խաբէ զնա յերկրգիւղի բանեն,
Սա կարծէ լինել վՃիտ երկնայեն ։
Զի՞նչ քան պղյս անբան բան մտացածին,
Զխաբող 'ի սուտ խաբք հետեւեցին ․
Գուշակք և բաղդակնայք աստղաբաշխք չարին,
Կորուստ են ինքեանց և բարեպաշտաին ։

ԱՍՏՂԱԲԱՇԽ ՄՈԳ

Մի՛ հետեւիր ձայնի մոգին,
Զի մի՛ անկցիս 'ի ցանց չարին ։

Մի՛ հաւատար խոխոարդներուն,
Որոնց խօսքն է ստապատրելեցուն ։

Ծնկչ․ Վասն մի կրամանէ առասպելաբանշէս կախարդի մի առաւ, և երբոր կախարդը բաղդնութե մէջ կեցած էր նայամեխո մարդատերէն այսպէս

գուշակութիւն կընէր գալիքներուն վրայ, և կըպարծենար թէ աստղերուն նայելով անանկ գիտութիւն ստացեր եմ, որ ամմէն բան կիմանամ որ հարիւրաւոր տարի ետև պիտի ըլլան ։ Հոն կեցողներուն մէկն՝ որ տեսեր էր տունը մանող գողը, կանչեց անոր խօսքին ու ըստաց. Ինչ պատճառաւ հաւատամ թէ դուն գիտես գալիքները. Ինձի անտարակոյս կերևնայ թէ դուն և ոչ ներկայն կրնաս գիտնալ. քանզի կամ թէ որ դուն գիտնայիր բան մը՝ շուտով տուն կըվազէիր գողը փախցընելու համար, որ տեսայ տունդ կըմտնէր ։

Մոգութիւնը հին Արաբներէն մնացած է, որ կըսէին թէ որչափ աշխարհքիս մէջ բան կըլլայ, աստղերուն զօրութենէն, և անոնց շրջութիւնը կը պատճառէ. անոր համար աստղերուն դիրքը նայելով կարծէին թէ գալիքները կիմանան, և խաբէութիւններ ընելով կը խողովէին ժողովուրդը ։

Ցես խորքէութիւն բաղձամոլեա մտքին,
Կախարդէ զմարդ անհանճար ամմէքին.
Ուրինչ տեսանէ որ կայն առ տակին,
Գանձայ գուշակել զապագայն խորքին ։
Քանիցս կորուսեալ հաւատան նոցին,
Ի կուրայց անտի ըմպա առնուլ կերթին.
Իմաստ ապագայնեաց թէ դոյր 'ի նոսին,
Ոչ մերկ և աղքատ մնային շրջէին ։

ԴԻՈՍ ԵՒ ՄԱՐԴԻԿ ․

Այլոց թերին կայ առաջքը,
Իսկ սեփհականն յետուստ թերքը ։

Այլոց պակասն տեսնիք առաջ,
Մերինն տեսնիք մէջ ետեւանց ։

Յիշէ • Մարդիկ ստեղծուելէն ետեւ Դիոս տեսաւ թէ անանկ մեծ մեծ պակասութիւններ ունէին որ չպիտի կրնային համբերել, մինչեւ որ անոնց ճանաչողութիւնը չի վերցընէր իրենցմէ ։ Այս պատճառաւ կը մտմտար Դիոս, որ զանոնք այս կարծիքէն հեռացընէ • ասոր համար ժողվեց բոլոր մարդկային պակասութիւնները՝ լեցուց երկու բերնէն շատ պարկերու հեցողներու մէջ • յետոյ քաշնեց՝ ամէն մէկնը իրեն տալով վրան բարձուց անանկ կերպով, որ ուրիշներուն պակասութիւնները կախուած էին տեսողներուն առջին • իսկ իրենց պակասութիւնները պարկին մէկալ դին ըլլալով ետեւնին կախուած մնացին ։

Մարդուս բնութիւն եղեր է որ իր պակասութիւնը չի տեսներ, ուրիշինը միայն կը տեսնէ • անոր համար առակը կը յիշեցընէ, թէ Դիոս ասանկ ըրաւ • ծանօթանալ ընելու թէ այս չար սովորութիւնը բնութիւն եղեր է ։

Այս անկարգ դատաւորնք պակասաւորին ,
Որ գնէ հանդէպ զայլոց զթերին ,
Սուր խուզէ զշիւղ ական ընկերին ,
Կոյր է և անտես իւրում գերանին :
Քանի՞ գեղեցիկ լինէր ըստ կարգին
Եթէ զննէաք զվրիպանս անձին ,
Փութապէս ուղղեօք զերծ դառնէաք
Ի վրիպանաց բարոյականին :

ՀԱՒ ՊԱՐԱՐՏ

Որ քան զչափն ունել կրթի ,
Կորուսանէ և զոր ունի :

Եղած բարւոյն ով գոհ չըլլայ ,
Ունեցածն ալ ձեռքէն կ'երթայ :

Ծկզ. Մէկ հաւ մը ամմէն օր մէյմէկ հաւկիթ կածէր տիրոջը. իսկ տէրը կըսէր որ եթէ երկու չափ գարի տամ, ինձի երկու հաւկիթ կածէ : Եւ ահա ժամէ 'ի ժամ շատ գարի լեցընելով առջին՝ անանկ սաստիկ հաւը գիրցաւ շատ ուտելուն պատճառաւ, որ մինչև շուտ մը սկսաւ քիչ ածել, և յետոյ բոլորովին հաւկիթէն կտրեցաւ :

Շատ մարդ իրեն բաւական բարիքն անէլչընելու համար՝ ուրիշ մաշելով ունեցածն ալ կորսնցուցեր է. Ու յետոյ նրա ընեսով փոշէր է ալ

խարհէ՞ք։ Անոր համար կըսէ մէկ իմաստուն մը. Թէ ինչպէս որ ծովը գետերով կըլեցուի և չի յագենար, ատանկ ալ շահասէր ագահին աչքերը չի կշտանար։

Այսպէս ոչ յագի բաղձանք անյագին,
 Զկնի համատարած յանչափից մասին.
 Անսահման գոլով խիղձ և անձն սրտին,
 Մինչև ստացէ զերկրան ընդ գոյին։
Մի՛ անձնչար շատին մի՛ չափազանցին,
 Մի՛ զքեզ մաշեսցէ ցեց տրտմականին.
 Ի ձկտիլ յանչափին արկածք քեզ չափին,
 Կանխատեսան ընտաց և գու ընդ նսափին։

ԴԻՈՍ ԵՒ ԿՐԻԱՑ

Մի՛ կար ընդդէմ կամաց վերին,
 Մի՛ կրեսցես պատիժս յանձին։

Ինչ բանով որ կը մեղանչես,
 Անոր պտուղը պէտք է քաղես։

Զրյց. (Ո)ր մը Դիոս կանչեց առջին բոլոր կենդանիներն, որ ամենքը միատեղ տեսնելով, և իրենց տարբերութիւնը վրա նայելով զըւարճանայ. որոնք մէկէն հնազանդելով վազեցին եկան առաջութե՛, միայն կրիան ուշացաւ, այնչափ որ կարծեցին թէ չի գայ ալինտ. բայց ինչ և էցէ եկաւ յետոյ հասաւ, և ինչ բանի վրա որ արտասունչ կար՝ պատասխանա

ըներու թէ գալու տանենը հարկ եղաւ իր տունը ապահով տեղ մը պահել . ահա ասոր համար կրակը շատ ժամանակ կորսնցուցի , և այսչափ ուշացայ : Բայց այս անմեղադրութիւն անանկ պատ ընկաւ , որ մինչեւ չունեցաւ գթութեան մէջ ունենալու . վասն զի հազիւ թէ սկսաւ խօսիլ տանը վրայ , Դիոս մերցուց տունը կռնակը գրաւ , որ կուզէր թէ առանց ուշադրութեան հետաքննել ըսել և ըսեն : Ասկէ եղաւ որ պահպանութիւնը պատաժելու համար , մինչև հիմա իր տունը վրան առեր կրնանի :

Ինչ Զեւս որ Գործէ Մեղ՝ անոր պատիժը կը տանի . Ինչպէս կրիայն իր տանը պատճառ թերաս անհնազանդութիւնը , անոր համար կանանցն ատուաւ պոյն . այնպէս ալ ուրիշները պատժեալ կը բռնեն ինչ պատժի տեսք ունին , պէտք է շահին , ինչ որ պատուիրին յետաքերեն կառանք , և երբեմն խեղճ արդար կըլլէ . տառանք է ամենին բան :

Այս կերպ արդար արդարադատին ,
Ամենէն վերջը կայ 'ի կշռոյ նորին .
Ուր ինչ որ յանցեաւ զծանրութեան բեռին ,
Դնէ 'ի թիկունս այն յանցաւորին :
Ուստի՛ր յառաջէս անլուր անբանին ,
Կոչողին ձայնի ոչ հնազանդին .
Պատժեսցէ կալ կառանց վերջին կոչողին ,
Գնալ զինի ձայնին անդառնալին :

ԵՂՋԵՐՈՒ ԵՒ ԱՅԳԻ

Որկոր անյագ կորուստ բազմաց
Կարապետէ 'ի չար արկած ։

Անչափ սէրը շատ ուտելուն,
Սև օր բերաւ շատին գլխուն ։

ՃԿ. Մէկ եղնիկ մը որսորդներուն ձեռքէն փախչելով' այգին կը մտնէ և հաստ տերևներուն մէջ կը պահուի․ անանկ որ՝ որսորդները զայն կորսնցուցին ետ դարձան ։ Իսկ եղնիկը տեսաւ թէ վտանգէն ազատեցաւ՝ սկսաւ որթը ուտել կրծել և տերևներն ուտել, որ զինքը պահեր էին ։ Այս եղաւ իր թշուառութեանը պատճառ․ վասն զի այնչափ տերևները կերաւ, որ բացին եղաւ երևցաւ․ մինչև որսորդները ետ դառնալու ատենը տեսան զայն, հասան վրան մէկէն բռնեցին մեռցուցին ։

Օրինակ է անոնց որ ապաւինին 'ի չար ասրիշ բան չեն մտածեր, և կարծեն թէ որչափ ատեն ապաւէն ապաստանան այնչափ շատ կարգեն, բայց չեն յոպէն թէ անոնք ատենն դիւրին կը կորսուին ։ Պրոպեր մէկ իմաստուն մը թէ մարդուս կէսը ապաւորհինքն կը թողնի, կէսն ալ շատ հոգ ընելով ։

Գործ է յետամիտ օրկորածեալին
Ուտել և ըմպել զօտ անընչման սրտին .
Որով վաղվաղէ ըղկորուստ անձին ,
Փութայ ժամանել ժանեաց օրհասին :
Սակայն ողջութեն գոհար է անգին ,
Թէ ոչ խամրեսցի յանկարծ հեշտալին .
Գնացք բարեխառն զգաստ յուսելին ,
Մի միայն անգխուտ գիւտ է կեցողին :

ԵՐԿՐԱԳՈՐԾ ԵՒ ԱՂՈՒԷՍ

Որ չար խնդրէ մերձաւորին ,
Նոյն չար դառնայ 'ի ծոց նորին :

Ուրիշներուն ո՛վ չար կուզէ .
Զարը կուգայ գլխուն կը գտնէ :

ՃՀԶ. Մէկ երկրագործ մը ցանեց իր արտերը, և բոլորը զարմանալի լաւ բուսաւ. երբոր կընայէր որ հնձէ ցորենը, դրացիներէն մէկն որ զինքը կատէր, ըսաւ մտքովը. ես անանկ արգելեմ ցորենին ժողվելը, որ դուն ալ տեսնես. ուստի առաւ վառած կերոն մը կապեց աղուէսին պոչը, որ բունին մէջ բռներ էր իր արտին քովերէն : Ցետոյ տարաւ զայն հետը մէկալին արտին մօտ, և հրելով հասած ցորեններուն մէջ ձգեց. կուզէր որ այս կերպով բոլոր ցորենները մոխիր դարձընէ. բայց տես ինչ պատահեցաւ : Աղուէսը առաջ երթալու տեղը, ճամ

բայէն եւ դարձաւ որ իր բանը երթայ՝. և որովհետև չէր կրնար երթալ առանց անցնելու իր անիրոնը առաջէն, որ չարութեն կուզէր ընել. ահա վազեց մտաւ անոր արտերուն մէջ ու կրակը տըւաւ. և այսպէս բարոր չարութիւնը՝ չարութեն ուզողին գլխուն եկաւ, որ անասուն իրեն բոլոր ցորենը մոխիր դարձած իր խորամանկ չարութենէն։

Նախանձյար չար մարդիկ իրենց դէմ մէկը կը գրկեն. ու կ'ընային որ անոնք ուրիշին վնաս տան. բայց ամէն մարդ ըրածը կը գտնէ։

Չարակամ խորհուրդ դաւաճանողին,
Գուն գործէ կործանել զօտարաց բարին.
Բայց նոյն դարձեալ թէ էր ՚ի ձեռին,
Զի մի՛ ծառայեսցի ՚ի տուն ընկերին։
Մի՛ չարակնութեամբ աչեր զընկերին,
Եւ մի՛ նախանձու վնասեր նմին.
Զոր ինչ սերմանես զնոյն հնձեսցես,
Թէ չար թէ բարի գտանես զմին։

ՁԻԱԴԱՐՄԱՆ ԵՒ ՁԻ

Վա՜յ որ այլոց փորձըն դասնա,
Զգոյշ մեծ չարիս առնես անկանես։

Քու պախտութիւներ տասալէր Տէր,
Մէկ ուրիշին ձուքըն դարպէր։

ՃՀԷ. Պարոնի մը ախոռը եղաւ իրեն ձին, որ քաղաքը թողուցեր էր, և հրամեց ձին նայող սպասաւորին, որ իր եղած տեղը բերէ։ Այս հրամանին որ գնաց անոր ձին, առաւ մեկնեցաւ անկէ. երբոր երկուքը միատեղ կանցնէին անտառին դաշտին մէջէն, ծառան տեսաւ՝ որ ձին գլուխը կախեր գաղտուկ խոտ կուտէր. գո՛ղ աւազակ ըսաւ զարնելով անոր՝ չգիտես որ այս խոտը մեր տիրոջն է. ասկէ խոտ ուտելը իրեն գէշ է։ Պատասխան տուաւ ձին. դուն որ ինծի կես չափէն աւելի գարի չես տար որ ինծի համար գներ է, չգիտես որ այս գարիին կեսը անոր կերնի, և գողնալովդ մէկալ կեսը ինչպես սովորութիւն ես ըրեր, ես կորսուածնամ տեսքովդ, դուն մեղքի պատճառ կըլլաս։ Եւ ահա այս շատ մեծ մեղք է մեր տիրոջը, քան թէ այն որ երես կըդառնես։ Ուրեմն դադրէ՛ ինծի նեղութիւն տալու. եթէ կուզես հաւատարիմ ըլլամ անոր, նախ դուն սկսէ ինծի բարի օրինակ տալ։

Օրինակ է անզգամ ծառաներուն, որ մեծամեծ շնորհքին մեծ անէրախտութիւններ կ'ընեն փոխարէնը․ իրենց մեծ բարերարին վնասներ, ու պատիժ բանի վրա կը գայթակղին ։

Ընդհանէր ծառայն անհաւատարիմ
Այսպէս կենակցի ընդ ծառայակցին ․
Կարծէ հատանել զապարտս ընկերին
Լուծանել զայն յիւր անյագ փորին ։
Սոցա դատաստան ոչ շատ յերկարին ,
մին. Մ՛էկ արջ մը քաղցած անօթի ելաւ անտառէն, որ կերակուր գտնէ. Ճամբուն վրայ մեղուի փեթակ տեսաւ, սկսաւ լափել. փեթակէն մեղու մը դուրս ելաւ արջուն ականջը չարաչար խայթելով ցաւցուց. արջն ալ կատաղութենէն կործանեց փեթակը։ Անտառէնը բոլոր մեղուները բարկանալով դուրս թափեցան մէկէն արջուն վրայ մտաւեցան, և անանկ խայթեցին զինքը, որ արջուն լըւայ եղաւ մեծ ժխինգիր ըլլալով իրենց թշնամոյն, որ փեթակը կործանեց։ Եւ այսպէս արջը ամօթով և կատաղած սուրվեցաւ եւ գտանալ, մեղադրելով իր գազանական ան-

համակերպութեան: որ նախընտրել թշնամին եղեն
միայն հանելու պատասխան եղաւ ։

Խորագ է մանուկը, որ իրենց առողջութիւն համար ուրիշին աչքերն կորսնցնել . և առանց երբեմն անհամեմատ մարդիկ, որոնք շատ անգամ արդէն պատրաստ են խորհելին ։

Այսպէս անհամեմատ կրեն զուարճանքն,
Ըստ իւր պատմածոյ ընկերներուց ողորմելին.
Զի որ կեղեքէ զաւակն օտարին,
Զրկանք և յայլոց պատրաստէ նմին ։
Մի՛ զազանութեամբ ընդ իւր յուսալին,
Եւ մի՛ գողանար զապրուստ ընկերին.
Որ թէև իցէ փոքունք չինչին,
'Ի նախանձ բռնելով միայն ուժգին ։

ԽՈՀԱՐԱՐ ԵՒ ՇՈՒՆ

Քաջ զօրանայ միրտ խոհարարն,
Երբ համեղական նմին վկայէն ։

Խոհէմ մարդը խէթ կորսնցնէ,
Երբոր իրեն վնաս կուգայ ։

Մինչ. Սրբակամ շուն մը մտաւ խոհարարանը կամ կերակուր եփելու տեղը, և հոն սպասելով տեսաւ թէ խոհարարը անզգուշութեամբ կեցեր չէր նայեր. խլեց անկէ կողմին սկրաւ.

ու վախկոտ ։ Իսկ խոհականը անսասան որ շու-
նը այս չարութեան ըլլալ՝ կը փախչի , կանչեց
եւ ըսէն՝ ասանկ . դուն այսօր գիւղին կըր-
ցար զիս խաբել . բայց լաւ գիտնաս . եւ
ասկէ ետեւ անանկ պիտի նայիմ , որ ամենեւին
բան մը չպիտի կրնաս ինծմէ գողնալ . վասն
զի դուն չէ թէ իմ ոչխարս տարեր , այլ մա-
նաւանդ ինծի ոչխար ըրեր . որովհետեւ կը-
րուսար եւ հանճարութիւնը կը բանան մար-
դուս միտքը , եւ կը սորվեցընեն որ լաւ
զգուշութեամբ ընելով՝ առջեւ ըլլայ դժբաղ-
դութեանց որ կը պատահին ։

Աշխարհքիս փորձութիւնը չի պակսիր . բայց
պէտք է որ մեզ անփորձ չթողու , մեզմով ըսինք .
վասն զի ձախորդութիւնը եւ փորձը լաւ կը սորվե-
ցընեն մարդուս խոհեմութիւն ։

Գեղեցիկ առածն բանի խոհականներ ,
Որ սիրտ տալ տայ միտան առաւելին .
Այս մարդոյ պատահած այս բանականներին ,
Մի կրկին անզգամ միամտել յանձնին ։
Թէ չես փորձ զգաստ 'ի մի նուագին ,
Անկանիլ քեզ կայ 'ի նոյն վերաստին .
Եւ թէ անընդդատ կացցես 'ի կային ,
Սահման կործանման կրկին չորեքին ։

ԱՐԾԻՒ, ԲԱԶԷ ԵՒ ՑԻՆ

Զգիտակ գործեն գործք և գնացք,
Եւ ոչ պատմիր անուն զինաց:

Գործքն է նորա մարդը ցուցան,
Եւ ոչ փետուրն առաւելութիւն:

ՄԻՏՔ. Բազէն ու ցինը մեծամասնութիւն կը-նէին արծուին առջին, թէ որն աւելի ազ-նուական է, ցինը կը գովէր իր գերազանց ուժը և սաստիկ թռչելը. Իսկ բազէն իր ազնիւ բարքը. և կը նայէին թէ ի՞նչ վճիռ կուտայ արծիւը: Պատասխան տուաւ ար-ծիւը, թէ գնացէք մէյմէկ որս բերէք. ով որ ձեզմէ լաւ որս բերէ, այն է աւելի ազ-նուական: Եւ ահա ցինը գնաց մուկ մը բերաւ, և բազէն աղաւնի մը: Անանկը արծիւն ըսաւ թէ այնչափ աւելի ազնուա-կան է բազէն քան ցինը. որչափ աղաւնին գերազանց է քան զմուկը. որովհետեւ ուժը չէ, հապա գործքն է ազնուական ընողը:

Ազնուականութիւնը գործքով կը յայտնի եւ ոչ փետուրով. Թէ որ ցեղը ազնուական չէ՝ գործքը ազնիւ է, ազնուական կոչուի. Թէ որ ծնունդը ազնուական է, գործքը չէ, ազգերէն ելլէ. Ինչ-

դէս որ յաջողին ճաշէն ու ցինը, այսինքն շատ_
հինն ու չալլախը ։

Նալեր գնայք գործքը տաւալին,
Չքնաղ յօրինեն զանոնք և հոգին.
Թէ տեսա չեցեն ընտելցեալ ընդ գեղ,
Չէ ամենիւ չքնաղ այն մեղս այն հոգին։
Մի պաշտար ընդ գեղ և յանձանց զարդեր,
Ջանաս զքեզ գործով գործել պաշտօնլի.
Զի լոկ բանի անուն չեն ամենև յաղթել,
Գործն է պատկեր ամենայն բանի ։

ՆԱՊԱՍՏԱԿ ԵՒ ԳՈՐՏՔ

Քաջդ վերջանք թեթև թուքն,
Եթէ հայիս յայլոց թերին.

Քու պակասութիւնդ նշմարես,
Թէ որ նայիս այլոց վրայ ։

մինչ. Նորեկն նապաստակներէն մէկը տեղ
նեղանն կուռլայէն կրեն խեղճութենը վրայ, որ
վախկոտ ըլլալով շատ վախնալի մէջ էին.
վասն զի մարդը կը վախցնանք կըսեին, չէ,
արծիւ է, գիրգեթ ամէն բանէ վախ ունինք.
ուրեմն մենք աստանեկ ապրելս հասանեկք. ուսու_
ցեր ասուլի ըսաւ է մէկ անդամ մը մեռնիլ,
քան թէ բոլոր կենդանութեան մէջ զարհուրանե_
լով մեռնիլ ։ Զայս ըսելով վազեցին միա_
բան որ լճին եզերին խեղդըեին. բայց առանց

ոտքերնին ձայնէն լճին քովի գորտերը վախնալով մէկէն ջուրը ցատկեցին : Անասուններէն մէկ ծեր նապաստակ մը խնդալով կանչեց . ո՜վ ընկերք , կեցէք մի՛ վախնաք . ահա ինչպէս տեսանք , մեզմէ շատ աւելի վախկոտ կենդանիներ ալ կը գտնուին եղեր . հապա մենք անտեղընիս զարհուրանք :

Ինչ նեղութեան մէջ ալ ըլլայ մարդ , պէտք է յուսահատելով զինքը նուաղեցնել , այլ իրեն [illegible] հաստել ու մխիթարուիլ . վասն զի յուսահատութիւն է թուլամտութեան ու մեղկութեան նշան : Փիլիսոփաներն կ'ըսեն , թէ երբ մարդ անբախտութեան մէջ ալ ըլլայ , [illegible] [illegible] [illegible] [illegible] :

Թէ քեզ զժկամանք ըլլայ ձեռաց բաղդին ,
Զլացեալ զձիրս օժիտս բնածին .
Մի՛ կարճամտաբար վհատեսցիս ՚ի ստորին ,
Այլոց թերութիւնք չեն [illegible] լիցին :
Զի՛ք ինչ անթերի յեղելոց կարգին ,
Գործ է կատարել զայն թերոյ նմանին .
Արդ ուշիւ մտաց քննեալ զաստուածն ,
Գիտասցես զքեզ ՚ի գոհ վիճակին :

ԵՂՋԵՐՈՒ

Թէ և երկու յանկարծ առեալ :
Մի՛ գներ զքեզ յաղագս յապահովս :

Ով որ ըլլաս ապահով չես ·
Ամենէն հեռոս տեղ չի կարծես :

ՄԻԹ. Մէկ եղնիկ մը ծովուն քով ժուռ գալով քանի կ'ուտէր · որ մէկ աչքը չի տեսնելուն համար ծովուն դին էր դրեր · առողջ աչքը ցամաքին դին · և աստանկ զինքին ապահով կարծելով վախ մը չունէր : Սակայն նաւով անցնողները տեսան զայն ու նետով զարկին ձգեցին · ողորմելի եղնիկը մեռնելու ատենը լալով կը կանչէր , Թէ ուսկից որ կը վախնայի այն կողմանէ բան չեկաւ · և ուսկից որ վախ չունէի , անկէ մահս քաշեցի · ու զարմանալեցայ · ուրեմն վախ չեղած տեղէն աւելի վախնալու է եղեր :

Այլէն անգամ և այլէն փէշ դէփէ է որրան չէնաւ, Ինէկ՝ ևի չարծած դէվլէն նէփ ջաւգայ· որոզէհէփն չաւջածելի բանկէն այնլաֆ մեծ քառա ևի գար՝ որշաֆաղա հոլ բանկէն : Քաշ նասաւաղէ որը նասատհանգուտին մէջ աւելի դէփէ է հախնաշ փան Ոէ ծոլնին մէջ · երոէ իմաստան մը :

Այսպէս հասաննէն արկածք աշխարհէ,
Անփոյթ շըջողաց յապահով վայրի.
Զի աներկեան չիք ուստեք տեղի,
Ցոր ոչ ժամանեն վիշտք աղէտալի:
Արթուն կաց ով մարդ յանքոյթ վիճակի,
Ի գործս 'ի գնացս ժիր յամենայնի.
Շատք իբրև զինքեանս անվտանգ եդին,
Ի վտանգ մահու կորեան ցաւագին:

ՕՁ ԵՒ ԽԵՑԳԵՏԻՆ

Թէ ոչ գնաս յուղիղ կարգին,
Զքեզ չարաչար գործք քո դատին:

Թէ այլոց հետ շիտակ չերթաս,
Մահին դուռը շիտակ կերթաս:

միտ. Խեցգետինը օձին հետ ընկեր կըլլայ, և միատեղ երթալու ատենը կը նայի, որ օձը մէկէն մէկալին չարութեն կուզէ ընել և խայթել. այս բանէն կասկած երթալով խեցգետինը միշտ կը խրատէր օձն որ խորամանկութենը թողու և իրեն պէս պարզամիտ ըլլայ. բայց օձը ամենևին մտիկ չէր ըներ: Ուստի խեցգետինը օր մը տեսաւ, թէ օձը կը քնանայ բանեց ճանկերովը անանկ սխմեց որ մեռցուց. և յետոյ երկնցընելով շիտկըցուց, սկսաւ մեռած օձին հետ խօսիլ. թէ որ առաջ կըլլեր այսպէս շիտակ և պարզ ըլլայիր, հիմա ասանկ

պատիժով չէիր շխտկըլվէր · որովհետեւ ես ընկերը շխատակ կուզեմ, հարկ եղաւ որ քեզ ալ շտկեմ ։

Խրատ է ասանց, որ Թաղման չարուԹը Բարու-Թէ Եփնէ ըլլան · Վասն զի Բարի ընօղը Բարի կը Գտնէ, չար ընօղը՝ չար · Երբեմն շատ Երբեմն ուշ ։

Այս են խրատունք արդարադատին,
  Զափէ 'ի գործոց չափ չարասիրին .
  Զի որ ոչ դատնայ 'ի գործոց չարին,
  Զարատանջ ուղղի զանիւք արկածին ։
Այդ մի' դառնանար ընդդէմ խրրատչին,
  Գանձեամ 'ի սրտի խրատ մտերմին .
  Փախի՛ր 'ի գործոց մնասաբերին,
  Թէ ոչ կորնչիլ կամիս յօրհասին ։

ԱՌԻՒԾ ԵՒ ԳԱՅԼ

Մի' զոք զրգռեր ընդդէմ եղբօր ·
  Զի մի' հասցէ քեզ խաւար օր ։

Չար մի խօսիր եղբօր վրա,
  Չար խորհուրդը քեզ կը դառնայ ։

միէ · Օներ առիւծ մը երբոր հիւանդ պառկեր էր այրին մէջ, ամէն կենդանիները գնացին զինքը տեսնելու բաց 'ի աղուէսէն · իսկ գայլը մատնուԹի կընէր առիւծին, Թէ

աղուէսը քեզ բանի տեղ չի սեպելուն չե-կաւ ։ Այս միջոցիս մէջ աղուէսն ալ հոն հասաւ, տեսաւ որ առիւծը մռմռալով կը բարկանայ իրեն, բանը հասկըցաւ ու մէկէն առջին գնաց ըսաւ. տէր իմ, ո՞ր կենդանին քու շահդ մտածեց ինչպէս ես, որ աշխարհք պտըտելով քեզի համար դեղ գտայ բժիշկ-ներէն ։ Ի՞նչ դեղ է, ըսաց առիւծը. քեզի դեղ այն է, որ գայլը ողջ քերթես, ու կաշին տաք տաք հագնիս ։ Առիւծը հաւտալով, մէկէն զարկաւ գայլը պատռեց. երբոր կա-չին կը հանէր, աղուէսը ծիծաղելով ըսաւ. աստանկ հասկըցի՛ր՝ որ պէտք չէ տէրը բար-կութեն շարժել, այլ բարեկամութեն յոր-դորել ։

Որպէս որ իշխանին հաճոյ ըլլալու համար ու-րիշը կը մատնեն, և ծառաները սիրոյ կը շար-ժեն բարկութեան, այսպէս կը պատժուին ։

Գրգռիչ նենգաւորք չարաչար պատժին,
Այլոց գուբ փորեն 'ի նոյն գլորին.
Որ չար խորհեցաւ ընդդէմ ընկերին,
Ե՞րբ ոչ դառնաղէտ կորեաւ 'ի նմին ։
Քե՛զ է այս խրատ ծառայդ վեհազնին,
Մի՛ մտաներ զընկերին առ օտարի անձին.
Որչափ քաղցրանկեաց լինիս ընդ այլոց,
Այնչափ բարութեան՝ յայլոց քեզ ըներին ։

ԳԻՆԷՄՈԼ ԵՒ ԿԻՆ ԻՒՐ

Ով կրթութիւնք իցեն յոռի,
Զինչ և տանես միշտ է յոռի։

Երբոր մէկը գէշ սորված է,
Ինչ որ ընես օգուտ չընե։

միբ. Մէկ կին մը իր գինով էրկանը դեղ կը փնտռուէր. օր մը տեսաւ որ խիստ գինով է, տարաւ քարէ շինած գերեզմանին մէջ պառկեցուց, գերեզմանին դուռը գոցեց գընաց. կարծէր թէ ասով պիտի զգաստանայ մարդը։ Բայց իրիկուան գնաց գերեզմանին դուռը զարկաւ. գինովը ներսէն ձայն հանեց թէ ով ես. կնիկն ալ պատասխանեց, թէ ես մեռելի հաց բերող եմ։ Գինովը կանչեց անոր, թէ ինձի ուտելու բան մի՛ բերեր, հապա խմելու. վն զի ես շատ կը տրտմիմ երբոր կերակուր անուշ կառնեմ ու գինի անուշ չեմ առներ։ Անատենը կնիկը գըլխուն զարնելով կուլէր. վա՜յ անբաղդիս որ ճար մը չի գտայ քեզի շահելու, ահա չար սովորութիւնք քեզ անանկ կորսնցուցեր է, որ ճար չիկայ։

Խրատ ըլլայ մարդուն, որ չար գործէն մէջ ընտանենայ. վասն զի շատ անգամ սովորութիւնը

լուսնկեզօղն ու մութի կերն կը կորսնցընէ · անանկ որ բնական իրեն պատուելի բաներն ու կերակուր ընել բնչալս փեսանք ։ Որո՞ն է վայ, որո՞ն է խռովութի՞, որո՞ն է դատաստան, բայց միայն գինեմոլ մարդուն · կըսէ Սողոմոն ։

Որ 'ի գործ վատթար այսպէս սովորի,
Ի նոյն վատթարեալ մոլի յիմարի ·
Զի ունակութիւն բնութիւն փոփոխի,
Եղանէ ըստ չափ թէ չար թէ բարի ։
Թէ անկար երբէք 'ի գործ ինչ յոււի,
Արամ զներհական բարին ցանկալի ·
Եւ թէ նոյն դառնաս 'ի գործ առաջին,
Մոլեալ կործանիս յայն անկանգնելի ։

ԲՈՒ ԵՒ ՉՂՋԻԿ

Թէ ըստ տեղւոյն չես նախատես,
Ոչինչ օգտիս զօր և գործես ·

Որ առջէնին զգոյշ ըլլայ ·
Ետքի ըրածն ոչինչ կերթայ ։

Միթ. Մէկը բռնեց բու թռչունը, և վանդակով պատուհանին մէջ կախեց · որ բոլոր գիշերը ձայն կը հանէր կերգէր · իսկ գիշերահաւը չդիմանալով ասոր ձայնին եկաւ քովը մօտեցաւ, հարցուց թէ ի՞նչու ցորեկը ձայն չես հաներ, ու գիշերը կըկանչես ։ Անոր պատասխանեց, թէ առանց միտած-

մտնելի չէ ըրածս. վասն զի ցորեկին երգելուս համար բանդակեցայ : Կրկնեց գիշերապահը ծիծաղելով, թէ աղէկ եւս. քեզի ոչ զգուշանալ պէտք է, և ոչ պահուիլ. անխելք այդ զգուշութիւնը բանդակելէդ առաջ ընելու էիր :

Բան կամ պատմութիւնս օրինակ է անխոհեմ մարդկանց, որ դէպք եղած վերջը զգուշութիւն չեն ըներ, ու դէպք չեղած վերջը կ'ընեն : Մարդուս զգուշութիւնը իրեն բերանն է, որ իր խօսքովը կը բանտէ. կրնայ իմաստութը :

Ի զո՛ւր է ջանալ յանցանել առթին,
Որոնել ըղձալ փրկութիւն անձին.
Խորհիլ և առնել ըստ ժամանակին,
Գործ խոհեմութեան է խոհականին :
Արթուն նախատես լե՛ր ապագային,
Մինչև է եղեալ դեղ խորհեա՛ց ախտին.
Չի գայ ժամանակ երբ 'ի սոյն սահիս,
Ոչ ինչ դեղ և ճար գտանել մարթիս :

ԿԱՏՈՒ ԵՒ ԽԱՐՏՈՑ

Վա՜յ որ լեզուն զերկրաւ ածէ,
Բոլոր մտաց լինելան ածէ:

Ով որ այլոց չար կը գործէ,
Իրեն հոգին կը սպանէ:

մը. Կատուն կը մտնէ ոսկերիչին խանու-թը, և հոն գտնելով խարտոց մը՝ կըսկըսի լզել. բայց լեզուն խարտոցին ակռաներէն քերթըլուելուն համար՝ արիւնոտեցաւ խար-տոցը. իսկ կատուն կուրախանար՝ կարծե-լով թէ երկաթէն ուտելու բան կը հանէ. մինչև բոլոր լեզուն մաշեցաւ:

Լեզուին փռօղ և քաղցրաւանք ուրօղ մարդը փոս կը փորէ, ու կարծէ թէ ուրիշին փոս կը-նէ. անոր համար իր լեզուն իր գլուխը կուտէ. մանաւանդ երբ իրմէ պզտիկներին և գիտնական մարդկանց հետ խօսի: Թէ որ մարդ քաղցրաօղը կրակէ արծաթէ կըլլայ, հապա փափուկ քաղցրա-սօղը ինչ կըլլայ. կըսէ Իմաստունը:

Ո՛վ զխայրդ գժնեայ գործ լեզուագարին,
Լսէ և խարտէ զանեալ տարարին.
Կարծէ խանգարել զայլոց ըղձարին,
Բայց ինքն մաշի կոտորի յանձին:

Նախանձու է ընդ այս գործ խաւարին .
Դառնացեալ ընդդէմ բարեաց ընկերին .
Մի սրեր լեզու այլոց 'ի վնաս ,
Զի մի՛ անզգայ մաշեսցիս կրկին :

ԵՐԿՐԱԳՈՐԾ ԵՒ ԲԱՂԴ

Եթէ բարիք քեզ դիպեսցին ,
Տուր փառս երկնից և ոչ բաղդին :

Թէ որ յետեւէդ աղբանք ելնեն ,
Ճանչցիր Տէրոջ փառք Երկնաւորին :

մէն . Երկրագործ մը գետինը փորելու ատենը գանձ գտաւ , և այս պատճառաւ գիշեր ցորեկ գետնին պատիւ կընէր որ իրեն այն բարերարութեան ըրաւ . օր մը բաղդը բարկանալով երևցաւ իրեն ըսաց : ով յիմար ինչու համար ինծի ընելու պատիւդ գետնին կընես . այն ոսկին ես քեզի տուի , որ փարթամ ըլլաս , բայց գիտեմ՝ եթէ ժամանակը փոխուի , և այս ոսկին ուրիշին ձեռքն անցնի , անատենը պիտի պարսաւես զիս թէ բաղդ չունիմ :

Ամէն մարդ պարտական է , որ իւր գտած բարիքը ճանչնայ , և պաշտէ արարիչը , ինչ Թէ դէպուածք ոեղելով ուրիշին պատիւ ընէ . Վասն զի ամէն բան իւր կամքովը ըլլայ : Բայց զարմանքն

այն է որ շահը իրենց խնչքին նայած, և յա-ջորդութիւնը այս փառքին որոնչան, ընդդէմ թէ անալ իրենց հոգւոյն փրկութիւնը համար նայալ, որ յախորդութիւն մէջ համբերութիւն ընեն, յաջողութիւն մէջ խոնարհութիւն։

Այսչափ է խորհուրդ անխիմաստ ռամկին,
Որ ոչ ճանաչէ ուստի՛ գայ բարին.
Երբ զխաբ բարեաց գանձուց աշխարհին,
Ձայն երկրի գրէ զայն պարգև բաղդին։
Աղբիւր է բարեաց անսահման բարին,
Հանուրց բարերար ըստ էից հարկին.
Պատկառ կալ ձեռաց ամենակալին,
Որ տայ և բառնայ երբ կամք են նմին։

ԵՐԿՈՒ ՈՒՂԵՒՈՐՔ

Բազում խնդրակք յաջողակին,
Չե՛ք բարեկամ ձախողակին։

Յաջող բանին խնդրող շատ կայ։
Ձախորդին մարդ չի մօտենայ։

ՃԼԲ. Երկու հոգի ճամբայ կերթային, մէկը կացին մը գտաւ, ուրախանալով անունուն կըսէր, թէ կացին գտայ. իսկ ընկերը կը խրատէր որ գտայ չըսէ, հապա գտանք ըսէ. բայց մէկալը միշտ նոյն կըսէր։ Քիչ մը առաջ գացին՝ նայիս որ կացինին տէրը վազելով ետևնուն կուգար. անատենը գըրո-

նօղը խօսքը փոխեց, ու սկսաւ մեկնալէն ը-
սել, թէ կորանք եղբայր ։ Անալ պատաս-
խանեց թէ ինչու կորանք կըսես, հապա կո-
րայ ըսէ ․ վասն զի երբոր կացինը գտար՝
գտանք չէիր ըսեր՝ գտայ կըսէիր ․ ուրեմն
ինչպէս յաջողութեանդ զիս մասնակից չուզեցիր
ընել, պէտք չէ որ ձախորդութեանդ ընես ։

Ով որ յաջողութե̄ մէջ ուրիշին բարի կընէ ․ յախորդութե̄ մէջ դէմը կուգայ ․ Վա՜յ այն մարդուն, որ յաջողութե̄ մէջ հպարտանալով մարդու երես չի նայիր ։

Բարեբաղդք պանծան յելս յաջողակին ,
Ու չ զորս մասնակցեն ընդ բարեաց մասին ․
Բայց թէ ժամանեն ՚ի ձախողակին ,
Բաշխեն և սփռեն զայն ընդ բոլորին ։
Մի՛ մեծամտիր երբ կաս ՚ի բաղդին ,
Մասնակցեա՛ զայն բաղդ կարօտ ընկերին ․
Զի յետս յընթադրիլ դիւրասաս անուէն ,
Քեզ նշխարեսցի և բաղդ օտարին ։

ԵՐԿՈՒ ԳՈՐՏՔ

Որ գոհ վարէ կեանս աղքատին,
Անքոյթ զուարթ կայ յիւր կային ։

Ո՛վ որ գոհ չէ իր վիճակին,
Մահին կըլլայ շուտափով բաժին ։

Մլք . Երկու գորտ եղբայրու դրացի ըլլա-լով մէկը լճին մէջ կ'ապրէր ապահով և աղ-քատ . մէկալը ճամբուն վրայ քիչ ջրի մէջ կ'ապրէր հարուստ ։ Լճին մէջինը շատ ան-գամ կը խրատէր ընկերին, որ իրեն քով գայ ապահով ապրի, և գուբը վտանգի մը չի գայ . բայց մէկալն ամենևին անոր մտիկ չէր ըներ՝ թէ ես հոս շատ կերակուր կը գը-տնեմ ։ Սակայն շատ չանցաւ երբոր սայլ մը վրայէն անցնելով տրորեց, որ մեռնելու ա-տենը կը կանչէր, թէ ի՜նչ անխելքութիւն է, որ շատ ուտելու համար կեանքս կորսնցու-ցի . թէ որ ընկերոջս խօսքը մտիկ ընէի, հի-մա ողջ կըլլայի ։

Որչափ մարդիկ որ շատին փափաքելով քիչ բա-նին ալ հասնան՝ վտանգի մէջ ընկեր կորուսեր են ։ Լաւ է կտոր մը հաց հանգիստ խաղաղութեամբ, քան թէ մէկ տուն մը լեցուն զոհերով խռովութեամբ . կըսէ Սողոմոն ։

Աղքատք և փարթամք զմի օդ շնչեն ,
Ընդ կենաց շաւիղ այլ ո՛չ զոյգ դիմեն ։
Նա գոհ յիւր փոքուն ապահով շրջի ,
Սա անգոհ բազմաց ՚ի վտանգ մաշի ։
Այս կրկին վիճակք քեզ տիպ են կրկին ,
Շատանալ փոքու ՚ի կեանս աղքատին ․
Թէ չես գոհ փոքուն փափաքիս շատին ,
Ատամթուր փշրիս ՚ի մահու անուշին ։

ՄԵՂՐԱԳՈՐԾ ԵՒ ՄԵՂՈՒ

Մերժեա՛ ՚ի բաց զայր անզգամ ,
Մի՛ զընտանի և բարեկամ ։

Հեռու կեցիր անզգամէն ,
Չէ ըլէ օգնիլ բարեկամէն ։

մըդ․ Երբեմն մեղուանոցին մէջ մէկ մարդ մը մտաւ մեղր գողցաւ ․ երբոր տէրն եկաւ տեսաւ թէ փեթակն աւրած է , զարմանալով կայնէր կընայէր թէ ով ըրեր է ․ անատենը մեղուներն ալ դարձան եկան ․ տեսան որ մեղրագործը փեթակին քովն է , սկսան խայթել ։ Ո՞վ անզգամներ կըսէր մեղրագործը ձեր մեղրը գողցողին բան չըրիք , ու ձեզի նայօղը կըխայթէք ։

Կան մարդիկ որ անմտութեամբ թշնամիէն չեն զգուշանար բարեկամութեամբ կը վարուին ․ իսկ բարեկամէն.

Երես կը դարձընեն. Բայց երբ կը հասկընան թէ լաւ են վէրք բարեկամին, քան համբոյր թշնամոյն

Կշռել զինչըն և զայս է մտաւորին,
Ընտրել զբարեկամ մերժել թշնամին.
Իսկ սիրել զվնասն ատել զբարին,
Գործ է յիմարաց խորհուրդ անբանին։
Են որ զուլթ խրատ մերժեն մտերմին,
Կենակցին անհոգ ընդ գող թշնամին.
Բայց գայ ժամանակ յոր խայթին ծաղկին,
Յայնժամ Ճանաչեն զյարգ բարեկամին։

ԵՐԿՈՒ ՇՈՒՆՔ ԿՐԹԵԱԼՔ

Յոր ինչ 'ի բնէ ոք սովորի,
Այնպէս մնայ չար թէ բարի։

Ինչ բանի որ սորված ըլլայ,
Գէշ թէ աղէկ անանկ կերթայ։

մին. Մէկ պարոն մը երկու շուն ունէր. մէկին որս ընել սորվեցուց, մէկալին տունը պահել. որսորդ շունը միշտ որսի երթալով կաշխատէր, և ինչ որ բռնէր պահապան շունը մէկ տեղ կուտէր հետը։ Ուստի օր մը որսորդ շունը բարկացաւ, և նախատելով կըսէր անոր. դուն ամէն օր առանց աշխատանաց հանգիստ նստեր ես. իսկ ես միշտ կաշխատիմ, դուն կուտես։ Պատասխան տըւաւ պահապան շունը՝ թէ զիս մի՛ պարսա-

ւեր, հապա մեր տէրը պատուած՝ որ ինձի աշխատիլ չեն սորվեցուց, քեզի սորվեցուց ։

Խրատ է ամէն մարդու, մանաւանդ ծնողաց, որ զաւակնին պզտիկուն ատենը բարի բաներով կրթեն. վասն զի տղաքները ինչպէս սորվին՝ անանկ կը մնան ։

Ծնօղք վարդապետք յայս պատուանդին,
Քաջիկ հրահանգել բոյս բարուց մանկկին.
Զի մանկունք ցվերջ զայն առնել կրթին,
Գովեստ և պատուա նոցա վերբերին ։
Զանամ սովորիլ 'ի բարեաց մասին,
Առաքինանալ երբև դիւցազին.
Ի քեզ նկարեալ բարեաց բոլորին,
Տենչալի տիպար գոցես անփորձին ։

ՁԿՆԿՈՒԼ ԵՒ ԾՈՎ

Մի՛ հաւատար այլոց զքեզ,
Եւս առաւել զանձն քո քեզ ։

Չէ՛ հաւատար քեզ ուրիշին,
Եւ մանաւանդ քեզ քու անձին ։

Մկ. Ձկնկուլ թռչունը անապատասէր ըլլալով, միշտ ծովուն քովերը կը կենցաղավարի. և ծովուն քովի ժայռերուն մէջ ձագ կը հանէ, ինչպէս կըսեն ։ Եղաւ որ ձագ հանած ատենը՝ կերակուր գտնելու գնաց. այս

միջոցիս մէջ ծովը ալէկոծելով, ալիքները քարին զարկեր, քունը ծովուն մէջ ձգեր էր. երբոր Թռչունը դարձաւ տեսաւ որ ձագերը ջրին մէջ կորսուեր են, վայ ինձ կըսէր, ես ցամաքը Թշնամի կարծելով ծովուն ապաւինեցայ. սակայն ծովն է եղեր իմ բուն Թշնամիս, որ ես չիտէի:

Խրատ է անոնց, որ Թշնամիէն փախչելու համար՝ անանկ տեղ բարեկամի յետ կը ապաւինին, որ Թշնամիէն աւելի վատ կը բերէ իրենց:

Զի՞նչ շահ արթուն կալ՚ի մի վտանգին,
Յայլ վտանգ հաշիլ Թմրեալ գլխովին:
Զի որ ոչ գիտէ եզր սահմանին,
Անդարձ մոլորեալ դանդաչէ յուղին:
Ծով է այս աշխարհ որ ցանգ եռերին,
Ալեբեր հողմունք խաղան 'ի նմին.
Արդ մի՛ վստահիր փոփոխականին,
Զի մի՛ ծախեսցիս յանկարծակ ծոցին:

ԱՑՐ ԵՒ ԿԻՆ

Զխարդ դժնեայ կին անզգամ,
Խայթէ զընկերն օտարս համայն։

Չար խանայք են օձի նման,
Որոան մօտքին վիշապ գէն խոտան։

մշէ. Մէկ չար կնիկ մը ամենուն հետ անհլութը վարվելով կռիւ կընէր. օր մը իրեն ընկերն ուզեց հասկընալ, թէ արդեօք հօրը տունն ալ անանկ կըվարվի. ուստի մէկ պատճառով մը կինը խրկեց հօրը տունը. բայց քիչ օր անցաւ նայես դարձաւ եկաւ. ընկերը հարցուց իրեն թէ անոնց հետ ի՞նչպէս կը վարվէիր հոն։ Անալ պատասխան տուաւ, թէ ի՞նչպէս պիտի վարվիմ, հովիւներն ալ ինծի հետ աղէկ չէին երթար։ Ո՛վ անզգամ կին՝ պօռաց էրիկը, եթէ անոնց հետ ալ կռիւ ըրիր, որ առտուանց կերթան ոչխարներուն հետ մթուն կը դառնան. հապա ի՞նչ չես ըներ անոնց, որ գիշեր ցորեկ մէկ տեղ ես։

Պատարար մարդը մար որ էրթայ ղինքը հէփ կը փանի, ու ամէնուն հէփ կռուի կը բանայ. ուստի տաալ է ԹԷ մէն փէշը փառասուն աղէկին հէփ չի կընար վարիս ու մէն աղէկը փառասուն փէշէն հէփ կը վարէ։

Այս բոյսք են բարուց կնոջ ժառանգածին,
Որ միշտ աղմկէ զընկեր գըրացին.
Ապականիչ թոյն կրէ 'ի լեզուին,
Աղգեւլ զայն այլոց բերկրանք են սրտին:
Բարձէ դառնութիւն այն անզգամին,
Յորմէ մերձաւորք հեռանան փախչին.
Փոխան գգուանաց որ պարտ էր նմին,
Առեն հալածեն զժնդակ զայն կին:

ՈՒԼ ԵՒ ԳԱՅԼ

Եթէ ունիս բան և հանճար,
Յաղթես բնաւից չէք քեզ դժուար:

Թողուս փոս գործող այլ քան ընես,
Հոփ ճռանէր փեղկը բերես:

մը. Մէկ այծի ձագ մը իր ընկերներէն մոլորած երբոր կերթար՝ գայլ մը առոր ետեւէն ընկաւ, այծը հասկըցաւ որ ազատում չունի՝ դարձաւ ըսաց. ով գայլ լաւ գիտեմ որ քեզի կերակուր պիտի ըլլամ. ուրեմն կը խնդրեմ որ խեղճութ̅ը չի մեռնիմ. եկուր քիչ մը խաղ կանչէ, ես ալ պար խաղամ, անկէ ետեւ ինչ որ կուզես ըրէ: Իսկ գայլը հաւանեցաւ անոր, ու երբոր ոռնալու ձայն կը հանէր որ այծը խաղայ, շները գայլին ձայնը առին հեռուէն, և մէկէն հոն հասան հալածեցին զգայլը: Բայց գայլը փախչելով կըսէր այծին, թէ արժանաւէս ինձի այս.

բանն եղաւ. պէ՛տք էր երաժշտութիւն ընել,
որ բնական խոհարար ոչնի եմ։

Ո՛չ որ իր սորված բանը կը ձգէ՝ անտառէր քա-նի ձեւով կը դառնէ, դժբախտութեան մէջ կ'իյնայ։ Վա՜յ անոնց որ շիտակ ճամբան կը թողուն, ու-խոտորը կ'երթան. կ'ըսէ Առակը։

Այսպէս որ ձգեն զիւրեանց տանելին,
Մխա դնեն այլոց գործոց և բանին.
Բայց անդէն ծաղրին առ մտաւորին,
Ոյր հանճար յաղթէ բունութեն նոցին։
Զի՞նչ հզօրագոյն քան զէն իմաստին,
Երբ հատու սրեալ է յիւր յեսանին.
Հատանէ զջիղ արքայից բազկին,
Ծաղրեալ զխորագէտն ածէ յարկածին։

ԳՈՂՔ ԵՒ ԱՔԱՂԱՂ

Պատճառ լինել գործոց բարեաց,
Աւելի է չարասիրաց։

Թէ լաւ բանի ըլլաս պատճառ,
Կը քամքաւեն փեղ լարալար։

ՄԼԹ. Գողերը տուն մը մտան Թալլելու համար. բայց տանը մէջ ուրիշ բան չի գտան՝ մինակ աքաղաղ մը գտան բռնեցին տարին. երբոր պիտի մորթէին կ'աղաչէր որ թող

տան զինքը․ վասն զի կըսէր ես շատ պիտ-ուական եմ մարդու, որ գիշերը կարթընցը-նեմ զանոնք, կելլեն կաշխատին։ Ասոր համար՝ ըսին գողերը՝ դուն մահապարտ ես, որ զանոնք արթընցընելով չես թողուր մե-զի գողութին ընելու։ Զայս ըսելով գլուխը կտրեցին թէ ինչու համար աստանկ բանի պատճառ կըլլայ։

Բարի բաներու պատճառ եղօղը տէրէն է ան-ըզգամներուն․ որ իրենց ձեռքէն բարի ընել չի գար, ու բարեգործութիւն ընօղը կամ ատենն ե-րեւէն եղօղը կը բամբասեն։ Ո՛վ որ ստամոքը ու հոգւորը կը չգէ՝ իրեն փորը մահէն մօտ կը դառ-նէ, ու ճամբան դժոխքին քով․ կըսէ իմաստունը։

Այսպէս Թշնամիք բարեաց բոլորին,
Ըշպատճառ բարեաց անեն խատաղին․
Զի այր ակն է չար նմա չար Թուին,
Բարեգործ արդարք պատճառ բարեծին։
Դու մի հեռանիր եղծողաց բարին,
Նպատ յարգութի տուր բարեսիրին․
Որ պատճառ լինի բարեաց աշխարհին,
Զքնաղ պանծալի լինի նազելին։

ԳԻՇԵՐԱՀԱՒ ԵՒ ԿՈՒԶ

Որ ըստ անդուոյն զէն իւր փոխէ,
Անյաղթ մնայ զերծ 'ի չարէ:

Թէ ըստ փէղուոյն բանըդ փոխես,
Ամէն բանի վրան կելլես:

մխ. Երբեմն գիշերահաւը թռչելու ատե‐նը յանկարծ վար կիյնի. կուզն ալ հոն գըտ‐նըվելով կբռնէ զինքն, որ սպաննէ: Իսկ գիշերահաւը կաղաչէր որ չի մեռցընէ. պա‐տասխանեց կուզը ասմարը՝ թէ չեմ կրնար քեզ թող տալ. որովհետև բնութէն ամմէն թռչուններու հետ հակառակութիւն ունիմ: Ես՝ ըսաց գիշերահաւը, թռչուն չեմ. հապա մուկ եմ: Զայս որ լսեց կուզը թող տուաւ: Ու‐րիշ անգամ երբոր ընկաւ գիշերահաւը կա‐տուն զինքը բռնեց. կաղաչէր թէ զիս մի՛ ուտեր: Կատուն ալ ըսաւ թէ բնութէն ամմէն մկներու թշնամի եմ. անաւ կըսէր թէ ես մուկ չեմ թռչուն եմ: Եւ այսպէս երկու անգամ անունը փոխելով ազատեցաւ գիշե‐րահաւը նէծէ գուշման:

Պէտք է ժամանակին յարմարելով կրնայ ա‐պրիլ, և ամմէն մարդու հետ խելքով վարվելով սիրտը շահիլ, ու թէ ազգի սովորութէ քաշե‐լով ուրիշ բանի չի նայիլ:

Յարմարիլ առթից գործ է հանճարին,
Մի՛ յամառութե՛ պինդ կալ ՚ի նմին.
Ձի փոփոխ շնչմունք հողմոց աշխարհին.
Հարկաւ փոփոխեն պարագայս անձին։
Մի՛ կաշկանդեսցեն զքեզ բերմունք ազգին,
Մի՛ սովորութիւնք ՚ի քեզ անդատցին.
Փոխեա՛ զայն երբեմն ըստ ժամանակին,
Որով ՚ի լաւ անգիր գործք նախնեաց փոխին

ՑԻՌ ԵՒ ԷՇ

Մի՛ երաներ բաղդ մեծատան,
Ձի սատապանք նմին մերձ կան։

Երնէկ մի՛ տար մեծամեծին.
Նայէ՛ նեղանքն ինչ միշտ ունին։

Միտք. Ի եւան էշը կը տեսնէ ընտանի էշն, ու քովը մօտենալով կընայի անոր փափկութեը երանի կուտայ, որ քաղքի մէջ գտնըւելով լաւ կուտէ և հանգիստ կեանք կը վայելէ։ Ուրիշ անգամ տեսաւ որ բեռնաւորեալ կերթար. տէրն ալ ետևէն գաւազանը զարնելով կը քշէր, ըսաց թէ ես ասկէ ետև քեզի երանի պիտի չի տամ. վասն զի կը տեսնեմ, որ առանց չարչարանքի դուն երջանկութիւն չես կրնար վայելել։ Ուրեմն իմ աղքատութենս քու մեծութէդ շատ վեր է, որ ազատութեամբ ուզած տեղս կերթամ։

Պէտք է որ աղջիկներն իրենց վիճակին վրայ գոհ ըլլան, փնտռելով մեծատուններուն տուած նեղութիւններն, որ միշտ ծածկուած կը մնան ըն-տանին: Շատ աղէկ է քիչ ունենալ հանգիստ, քան թէ մեծ գանձ ունենալ խռովութեամբ. կըսեն ի-մաստունները:

Մեծատանց աղքատք երանեն բաղդին,
Նոյնպէս մեծատունք կենաց աղքատին.
Թէ կշռես նոցուն ըղձիճակ ներքին,
Փարթամքն են թշուառք աղքատք երանին։
Մի՛ ցանկար փառաց փարթամագունին,
Որոյ տագնապք են ըծակից սրտին.
Լաւ են կեանք անխինչ որ անվիշտ վարին,
Քան զայն ցեցակեր կեանք արտամականին։

ԻՂ ԵՒ ԳՈՐՏՔ

Ծոյլ հեղգասիրտք փոյթ գանգատին,
Ու ինչ յայլոց վատասկս հային:

Ծոյլը որ նեղէն գանգատ կընէ,
Այլոց ջանքին նայելու տեղ:

միջ. Ի նչք փոյր բարձրըված երբոր ջէն մը կանցնէր, ընկաւ ջրին մէջ մնաց, չէր կըր-նար ելլել. սկսաւ փոխանակ աշխատելու, սկսաւ հառաչանքով լալ: Իսկ ջրին մէջի գորտերը լսելով անոր հառաչանքը՝ ծաղր կըր-նէին ու կըսէին. Թէ որ դուն մեր տեղն

ըլլայիր, և այդչափ ժամանակ ջրին մէջ մը-նայիր, ի՞նչ պիտի ըլլէիր. որ կարող մը ժամա-նակ հոս մնալուդ համար առանձ կուլաս:

Խրատ է ծոյլ մարդկանց. որ ժիր մը բանողէն կը փրփնչան, և չեն նայիր գիշեր ցորեկ աշխատող-ներուն վրա: Գիտունները ծոյլ մարդը կընմա-ցընէն ջրփած ողի, որ միայն ծանրութիւն մը ու-նի, ամենևին բանի չիգար:

Այս բընական բերըք վասա տրտնջողին,
 Թեթև նեղութի նման մեծ լծուին.
 Ցայլոց մեծագոյնս ևթէ հայէին,
 Թեթևագունից յօժար տանէին:
Արդ փոքրագունից մատիր 'ի գընին,
 Տես զիա՞րդ 'ի վիշտս տանջին վաստակին.
 Ցամօ՛թ լե՛ր ո՛վ վասն ընդ գործ քո չնչին,
 Ուսի՛ր զօրանալ 'ի մեծագունին:

ՀԱՒ ԵՒ ԾԻԾԱՌՆ

Զուար սերմանս հա՛ր զքարփ,
 Եւ մի՛ խառնեալ չարն ընդ բարի:

Գէշն աղէկին հետ մի՛ խառնես,
 Չարը ջեղմէ հեռու ընես:

Միտ. ( )ր մը հաւը կը գտնէ օձի հաւկիթ, հոգաբարձուն ընելով կը տաքցնէ որ ձագ-հանէ: Զայս տեսնելով ծիծեռնիկը զարմա-

ցաւ անոր անխելքութենը վրայ . ո՛վ յիմար կըսէր , ինչո՞ւ այդ բանը կընես . չգիտե՞ս որ ձագերն ելածին պէս նախ քեզի պիտի սկը-սին վնաս տալ : Ան ատենը հաւը մտմըտա-լով ըսաց . այս ի՞նչ յիմարութիւն է իմ ը-րածս , որ ասանկ օձ թշնամիս կը սնուցա-նեմ . որ նախ ինծի վնաս տալով ձագերս պիտի կորսընցընէ :

Մեծ զգուշութիւն պէտք է նախ ծնողաց , որ չար և անառակ զաւակը չի մօտեցընեն իրենց ան-մեղ մանկանց . Երկրորդ պէտք է վարդապետնե-րուն որ թող չի տան աշակերտաց չար օրինակ տեսնելու , անհաւատ աղանդաւորներուն բաները կարդալու :

Զխո՛րդ քաջ խորհի խոհեմ կենդանեաց ,
Մի՛ լինիր ասէ դարմանիչ չարեաց .
Որոյ թոյն գժնեայ 'ի ներքս պահի ,
Խայթէ և ժայթքէ երբ 'ի չափ աճի :
Խրատ է ծնողաց և քաջ վարժողին ,
Անարատ պահել զմիտս անմեղին .
Որ խառնէ զթոյն քաղցր սնընդին ,
Կորուստ պատրաստէ իւր անմեղ զաւակին :

ԱՂԱՒՆԻ ԵՒ ԱՆՕԹ

Արդ մի՛ անյագ բերիր յուսել,
Զի մի՛ անկցիս 'ի վիշտս անել։

Ուտել խմել շատ մի ցանկար,
Շատքին մահուան այս է պատճառ։

Առակ. Մէկ աղաւնի մը խիստ ծարաւցած ջուր կը փնտռէր այնչափ բաղձանքով, որ երբ տեսաւ պատին վրայ ջրի աման մը դըրած, շփոթութենէն կարծեց թէ իրաւ ջուր է, վեր ելաւ ուժով մը զարկաւ պատին վըրայի ամանին որ նկարի. բայց շատ զղջացաւ. վասն զի այնանկ սաստիկ պատին զարկաւ թեւերին, որ վիրաւորելով վար ընկաւ. և երբոր բռնըվեցաւ, կուլար թէ ափսոս իմ անխելքութենս, որ կաթ մը ջուր խմելու համար՝ անմտութեամբ այս խեղճութեան մէջ զիս ձգեցի։

Խրատ է անոնց, որ առանց մտածելու իրենց ցանկութեան ետեւէն անանց կ'իյնին, որ փնտռելով կը կործանին։ Ինչպէս որ դժոխքն ու կորուստը չեն կշտանար, ասանկ ալ ագահին աչքը. կ'ըսէ առակը։

Այսպէս որ անյագ անչափ յամառելին,
Անդէն կորնչի 'ի նոյն հեշտալին.
Զի բռնական կիրք կորստականին
Վաղ կարապետէ 'ի դուռս օրհասին։

Արդ երբ տեսանես սրտիդ բերկրալէն,
Մի՛ գահավիժիր անսանձ 'ի նմին.
Զափակցեալ զկիրս ըստ բանականին,
Զքնաղ վայելես զերկնածիր բարին:

ԱՂՋԻԿ ԵՒ ԼԱԼԱԿԱՆՔ

Բազումք առ սէր ոսկւոյն անբան
Առնեն ըզգործս եղերական:

Շատ մարդ ոսկւոյն համար կընէ.
Լալու բաներ որ արժան չէ:

Մխէ. Մեծատուն մը երկու աղջիկ ունէր. ասոնց մէկը երբոր մեռաւ լալկան կնիկներ բերին, որ չարաչար ողբ կընէին. մէկալ աղջիկը տեսնելով անոնց չափազանց լացը՝ կը զարմանայր թէ այս ինչ խեղճութիւն է. ո՛հ մեզի պէտք էր, կըսէր, ասանկ լալ հարկաւոր ու կսկիծը մերն է, չէ թէ ասոնց որ ասանկ սաստիկ կուլան: Պատասխանեց մայրը թէ մի՛ զարմանար, աղջիկս, ասոնց խեղճ լացին վրայ, որովհետեւ փարայի համար կընեն. բայց ոսկիին ուժն է, որ կըլացընէ՝ չէ թէ կըսկիծը:

Շատ մարդիկ կան որ արժանաւորութեան եւ քաղաքավարութեան համար շատ բաներ կընեն, ու չեն իմանար. հապա ալ սանկութիւնը մարդոց կը խօսարէ:

Այս գործս է այժմեան գարուն տարամածին,
Ցոյ 'ի սէր օգտակ գործեն փեղկելըն .
Աչք ամենեցուն են յանդման սակըն ,
Միտք ամենեցուն ձգել զայն յանձըն ։
Զի՞նչ ինչ կործանէ դիրս հողագնտըն ,
'Ի սուսեր մաշէ մարդիկ երկրածըն .
Բայց աշխարհակուլ այս հրահալելըն ,
Որ զաշխարհս ողջոյն գործէ ըղձալըն ։

ՀՈՎԻՒ ԵՒ ԹԶԽԱՐՔ

Զարկս խարհել բարերարըն ,
Գործ է տխմար ապերախտըն ։

Բարերարին լաւ մի տայէր ,
Որ փեղ հասանէն քաջի օրէր ։

Մխիթ . Մէկ հովիւ մը ոչխարները անտառը տարաւ , և կաղնի ծառին տակը հանեց իր լաթը փռեց՝ ելաւ ծառին վըրա , որ պտուղը վար թափէ , բայց ոչխարները պտուղը ուտելու ատենը անոր լաթն ալ միասնեց կերան ։ Իսկ հովիւը երբոր վար ինջաւ տեսաւ որ լաթերը չի կան , ով անզգամ կենդանիներ ըսաւ . դուք ուրիշներուն բուրդը կուտաք որ լաթ շինեն , իմ լաթերս կուտէք , որ ձեզ պտուղ կերակրեցի ։

Կան անանկ մարդիկ որ հարկաւոր մարդուն, և իրենց ընտանեացը ալ և բարիք մը չեն ուզեր ընել, օտար անարժաններուն կընեն, որ քուածը կերթայ։ Ով որ բարերարին լաւ հասկցած կը-նէ, լաւը իր տնէն չի պակսիր. կըսէ իմաստունը։

Անտպայ տխմարք յայս միտս բերին,
Թողեալ զընտանիս օգնեն օտարին,
Եւ զի գառնացեալ բանիւ նենգողին,
Ընդդէմ ելանեն խնամակալին։
Խակամիտ մանկանց խրատ է անդէն,
Զընկեր և զօտար ոչ ճանաչողին.
Որ մերժեն խոտեն գութ խնամարկուին,
Անկանին 'ի ձեռս ոխերիմ չարին։

ՀԱՒ ԵՒ ՁԱԳՔ ԻՒՐ

Զինք ապահով պատսպարան
Իրեն առնուր հնազանդութեն։

Մօրդ երբոր հնազանդութէ,
Քեզ չի մօտիր փորձող բան։

Մեկնէ. Երբեմն հաւը ձագերն առաւ հեռուն գնաց ուտելու բան գտնելու համար. տե-սաւ որ ուրուրը կըպտըտի օդին մէջ անոր մանկտոյը ձագերուն յափշտակելու համար. մէ-կէն կանչեց քովը զանոնք ու թևերուն տա-կը պահելով ազատեց թշնամուն ձեռքէն։ Իսկ ձագերը տեսան, որ ուրուրը հեռա-

ցաւ, ելան ինքնագլուխ կռապաշտանէին. քիչ մը ատենէն ետև նորէն եկաւ ուրուրը, հաւ ւը նորէն կանչեց ձագերն, որ գան թևերն տակը պահվին. որոնք որ հնազանդեցան ե կան մօրը թևերն տակը մտան, ազատեցան. իսկ անոնք որ չուզեցին մօրերնուն հնազան դիլ և քովը գալ, ընկան թշնամւոյն ճանկը կորան:

Խրատ է մանկանց, որոնք որչափ հնազանդ են ծնողաց և իրենց մեծին, միշտ ողջ կըլլան. իսկ անհնազանդ եղածնուն պէս տառապ կը կորսուին:

Որդի հնազանդ ծնողաց ձայնին,
Քաջ պատսպարի ընդ թևօք նորին.
Ճիրանք և մագիլք գժնեայ ոսոխին
Ոչինչ վէրս առնեն ՚ի վերայ անձին:
Իսկ որ անհաւան գտանի նմին,
Ինքնակամ շրջի ուր կամք իւր բերին,
Երագէ ինքեան ճիրան գազանին,
Մանրի կործանի ՚ի նոյն դառնագին:

ՊԱՐՏԻԶՊԱՆ ԵՒ ՄՈՒԿՆ

Գործ վնասակար զօշաքաղին
Է միշտ քաղել զօգուտն անձին ։

Շահասէր մարդն ամէն բանէ ,
Միայն իրեն շահ կը փաղէ ,

Մխք. Պարտիզպանը էգիին մէջ մէկ մուկ մը կը բռնէ . երբոր ուզեց մեռցունէր , սկսաւ մուկն աղաչել , թէ մի՛ սպաններ զիս մեղք կը գործես . վասն զի ես քու ծառադ եմ , միշտ քեզի համար կաշխատիմ ու գիշեր ցո՛րեկ գետինը կը փորեմ առանց վարձքի , և հողն ալ ուրիշ տեղ մը չեմ տանիր ։ Պատասխանեց պարտիզպանը թէ ի՛նչ որ ընես , միայն քու շահիդ համար կաշխատիս , և քեզի օգուտ ըլլալու համար աշխարհքի վնաս կուտաս . այս պատճառաւ պէտք է որ զուն անպատճառ մեռնիս ։

Ամէն գործոյ մէջ պէտք է դիտաւորութիւնը նայել գործողին . շատ բան կայ որ ինքը չար չէ , բայց չար վախճանով ըլլալուն համար չար կըլլայ ։

Դժնեայ զօշաքաղք զանձանց շահ խորհին ,
'Ի վնաս այլոց բերին խնդալին .
Բայց երբ գործ իւրեանց յերեւան ածին ,
Անատգիւս լինել ջանան յատենին ։

Ո՞ւր յանժամ լսօղ ձայնի զրկողին ,
Ինքեան դատախազ նոյն իսկ գործ անձին.
Զի գործքը թէ չեցեն կարգեալ 'ի վախճան,
Հարկաւ կործնչել կայ 'ի վախճանին :

ԱՂՈՒԷՍ ԵՒ ՇՈՒՆ

Որ վասն այլոց չարիս խորհի ,
Չարագունին իւքն հանդիպի :

Թէ որ այլոց չար ուղենաս ,
Մեծ չարերու նը փերանաս :

Մխիթ. Մէկ աղուէս մը խորամանկութեամբ մեռել ձեւացաւ, եւ դաշտին մէջ ընկած մնաց, որ թռչուններր մօտենալով իրեն, առանց աշխատանաց բռնէ զանոնք ուտէ: Բայց ըրած խաբէութիւնը գլուխը կերաւ. վրան գի շուն մը գիւղացւոց անցաւ անկէ. տեսաւ որ աղուէսը բռնուեր պառկեր է, մէկէն վրան վազեց սպաննեց. երբոր կըմեռնէր կըսէր ողորմելին. ուրիշները խաբել ուզելուս համար ահա ես խաբուեցայ, եւ ըրածս գտայ. Ճշմարիտ է ըսեր թէ ինչ որ ընես՝ զայն կըգտնես:

Ո՛րչափ խորամանկ ըլլաս եւ խորագէտ, այնչափ քեզմէ խորամանկին կը պատահիս, դուն ինչ չարութիւն որ կը մտածես ուրիշին, քուկդ թագնուած կուգայ, ու անդամին կործանումը չար է:

Զոր ինչ ողջ խորհէի առնել ընկերին ,
 Նոյն վերադառնայ յիւր ներգործողին .
 Զի գործ 'ի պատճառն բերին հոլովին ,
 Թէ վատ թէ ընտիր յայն կեդրոն յանկելնս ։
Իսկ քեզ մտախոհ վիճակեալ բանին ,
 'Ի ճահ է անձնենդ վարիլ ընդ մանկտին .
 Որչափ խորամանկ գտցիս ընդ այլոց ,
 'Ի նոյն ըմբռնեալ մանրիս դառնագին ։

ՇՈՒՆ ԵՒ ՏԷՐՆ

Պահել զքոյս թէ չես արթուն ,
 Զիա՞րդ յայլոց խնդրես զնոյն ։

Թէ չես հոգար դուն քու բարին ,
 Ինչ շահ կընէ հոգն ուրիշին ։

մծ . Մ՚էկ մարդ մը շատ հաւ կըպահէր հաւնոցին մէջ . գիշեր մը մոռցաւ հաւնոցին դուռը փակելու . ուստի աղուէսը գիշերն եկաւ բոլոր հաւերը խեղդեց ։ Առաւօտուն երբոր տեսաւ տէրը այս եղած վնասը , սաստիկ բարկանալով սկսաւ շունը ծեծել , թէ ինչո՞ւ համար անհոգ կեցար նայելու , որ աղուէսը զանոնք խեղդեց ։ Պատասխան տըւաւ շունը , թէ տէ՛ր իմ , դուն առանց պատճառի զիս կըծեծես . որովհետեւ եթէ դուն անհոգ եղար քու հաւերդ նայելու , եւ չի մտածելով դուռը բաց թողուցիր , որոնցմէ այդչափ շահ ունէիր , ի՞նչ կուզէիր որ ես

ընեմ. դուն քու պիտուական բանը չի նայե-լէն ետեւ ես ի՞նչպէս պիտի նայիմ ։

Օրինակ է ծոյլ մարդու, որ իր բանին հոգ չտանելուն ուրիշին յետքը կ՚իյնէ, և կուզէ որ ուրիշը լաւ փնտռէ իրեն բանը. չգիտէ թէ ուրի-շին շահ չի կայ ։

Ընկերաւ դաստամունք զանցաւոր հեշտքին ,
Որ յայլոց վերայ ձգէ միոյ անձին .
Զոր ինքեան անկ էր առնել ըստ կարգին,
Թողու հեղգութեամբ առնել օտարին ։
Թէ դու՞ չես ով վատ հողածու անձին ,
Հիմ յայլոց խնդրես հոգ տանել նմին .
Եւ եթէ դու քեզ չես հաւատարիմ,
Ո՞վ ոք քեզ լինի բարեկամ ներքին ։

ՇՈՒՆ ԵՒ ԻՇ

Չէ վեհապանծ ունին արտաքին ,
Թէ համեստութիւն չիցէ ներքին ,

Դրսի փէօթը բան մը չարժէ ,
Թէ որ ներսի օժրան անանկ չէ ։

ՄԾՔ. Շունը գայլէն հետ պատերազմ ու-նէր. տեսաւ որ գլուխ չպիտի կրնայ ելլել, ուզեց ընկեր մը գտնել որ անով թշնամուն յաղթէ ։ Ահա օր մը հանդիպեցաւ իշուն ,

որ կըղզուար , և վերջի համեմատը ունէնըը զէնքը կարծեց · Նայեցաւ որ ձայնն ալ շատ զօրաւոր է , միտքը դրաւ թէ իշուն պէս ուժով և քաջ կենդանի չի կայ · ուստի իրեն ընկեր ըրաւ ու միասնեզ գնաց գայլին հետ պատերազմելու : Բայց էշը երբոր սկսաւ հեռացեն գայլը՝ ակռան փրթելով մէկէն փախաւ Թողուց շունը մինակ : Իսկ շունը զարմանալով կըսէր ետևէն , թէ մեղք այդ ձայնիդ ու ականջիդ որ սիրտ չունիս · ուրեմն զուր ականջին նայելու չէ եղեր , հապա ներքին սրտին :

Խրատ է անոնց՝ որ մեծախօս և մեծագլուխ մարդը մեծ կը համարին · վասն զի մարդուս մեծութիւնը սրտին և հոգւոյն վրայ է , չէ թէ մարմնոյն :

Ռամկական մնաց այս ծնունդ յետին ,
Որ միայն դատի տեսլեամբ արտաքին ·
Յորժամ տեսանէ զհաղթանդամ մարմին ,
Կարծէ զերկնաձիր ոգիս 'ի սրտին :
Իսկ իմաստնոց է կշռել զներքին ,
Վասնզի ճրագ փայլէ 'ի նմին ·
Զի այնու մարդն է անյաղթ 'ի մարտին ,
Եւ ոչ անարի դիմօքն ահագին :

ՍԱՐԵԱԿ ԵՒ ՏԱՏՐԱԿ

Մե՛ք ինչ դողանք դժնդակ ձուածին,
Երկիր յաւէտ որ կայ լուին:

Ըստ խստողէն տուն մի վախնար,
Անկէ վախցիր որ կայ խոնարհ:

ՄԾՔ. Սարեակը տատրակին հետ ընկեր ըլլալով՝ տեսաւ ուրուրն որ օդին մէջ կերթար զարհուրելի ձայն հանելով ինչպէս որ սովորութիւն է իրեն. տար ձայնէն ախորժած սոսկաց ու դողալով կըսէր տատրակին, թէ նայէ՛ ինչպէս սաստիկ սպառնալով կերթայ ուրուրը. ես խիստ կըվախնամ այս ձայնէն: Պատասխան տուաւ տատրակը, թէ մի՛ վախնար անոնց ձայներէն. զի զիս այս սպառնալեօք մեզի համար չէ, հապա մկներուն և հաւի ձագերուն համար է. մենք պէտք է ուրիշ վախնանք տուտիկ բազէին ճանկերէն, որ ձայնէն առաջ մեզի կըհասնին:

Աւելի պէտք է չի խստողէն վախնալ, քան թէ մեծախօսէն. վասն զի մեծին գործքը խօսքէն առաջ կը յառաջէ. իսկ մեծախօսին յայտնը առանց գործքին կըմնայ:

Գիտցէք խորամանկ խոսքէն տատրակին,
Զգո՛յշ կաց սակէ որ ըլլիկ նմանին.

Զի փոխան գործոց բանքն են ճռոտմին,
Իսկ փոխան բանից գործքն են անխօսին։
Արդ մի՛ երկնչիր 'ի ձայնէ ուժգին,
Մի՛ 'ի սպառնալեաց անգործ զրախօսին.
Պատկառ կալ յաւէտ անձայն գործողին,
Որ նախ քան զձայն արգելունք վճարին։

ՓԱՐԹԱՄ ԵՒ ԱԶԳԱԿԱՆ

Որ յոյժ տենչայ յառնուլ զբոլոր,
Կորուսանէ զպարէն բոլոր։

Ոհ՝ որ բօլուրն ասնէլ իստէր,
Քէնտի ու չափըլ ճէտէրէն իէլլէ։

մծդ. Հարուստ մարդ մը իր գանձը տարաւ ծածուկ անտառին մէջ թաղեց մարդչիմացաւ. մինակ իր մէկ ազգականը դիտեր՝ որ գիշերանց գնաց ոսկինները հանեց գողցաւ։ Ատեն անցաւ երբոր եկաւ տեղը իր գանձը նայելու, տեսաւ որ չիկայ, հասկըցաւ թէ իր ազգականն է գողցեր. մտածեց անանկ խելք մը բանեցընել որ ոսկին տեղն երթայ։ Ուստի կանչեց ազգականն ըսաւ, թէ կաղաչեմ վաղը մէկ տեղ երթանք անտառը փորենք գանձս եղած տեղն, ու հազար ոսկի ալ նորէն թաղենք։ Նոյն գիշերանց ազգականը առաւ գողցած ոսկինները տարաւ տեղը դրաւ, որ այն հազար ոսկին ալ տեղը թաղէ հետ. անկէ ետև բոլորը յափշտակէ։

իսկ հաղթութեան երգոր գնաց գտաւ գանձը,
վերջացուց տաղաւ տուն։

Ո՛վ որ ցանկանալով փէու կը փնտռէ ու բոլորին է. փոխէն կէսոյն, բոլորին կը սկսէ, և ամենցանն ու կը կորուսընէ։

Այսպէս որ անյագ ցանկայ բոլորին,
Վաղ կորուսանէ որ կայ 'ի ձեռին.
Զի երբ ոչ գտանէ ընկերել 'ի մասին,
Արխայն ընկերել 'ի բոլոր բաժին։
Մի՛ ցանկար շատին մի՛ շահաղանցին,
Զի մի՛ զրկեսցիս 'ի շահաւորին.
Հրճուեամ ընդ բաժնիս նշխարհեալ անձին,
Նորանոր բարիք քեզ վերադրեսցին։

ՈՉԽԱՐ ԵՒ ՇՈՒՆ

Ծանր է կրել վիշտս յընկերէն,
Քան յոխերիմ զինամանարտէն։

Շատ կըցաւի վէրէն ընկերին,
Քան խորունկ խոց թշնամին։

ՄԾՊ. Գայլը երբեմն ոչխար մը բռնեց. իսկ ոչխարը ամենևին ձայն չի հանեց կեցաւ. գայլը ապահով ըլլալով ոչխարին վրայ եր-բոր աղքին անգին ժուռ կուգար, կերպով մը ոչխարը փախաւ ազատեցաւ գայլին ձեռ-

քէն ու ընկաւ շան մը ձեռք ․ բայց շունն որ զինքը բռնեց անամօթ ատամներով պօռալոց, որ հովիւը ձայնն առաւ հոն հասաւ ազատեց շանը բերնէն ։ Ինչո՞ւ համար՝ ըսաւ հովիւը երբոր գայլը քեզ բռնեց ձայն չը հանեցիր, ու շունն որ բռնեց բոլոր ուժովդ պօռացիր։ Պատասխան տուաւ ոչխարը թէ աւելի դժուարեցայ երբոր շնէն վնաս տեսայ՝ քան թէ գայլէն ․ վասն զի գայլը 'ի բնէ մեր թշնամին է ․ իսկ շունը պահապան ըլլալով տեսայ թէ պահապանը թշնամութիւն կընէ , շատ դժուարելով պօռացի ։

Շատ դառն է [illegible] և նեղութիւն քաշել բարեկամէն և ազգականէն, քան թէ օտարէն ․ վասն զի բարեկամէն կը [illegible] բարութիւն փնտռէն՝ ոչ թէ չարութիւն ։

Այո՛ դժնդակ են վէրք մտերմին ,
Որ յանկարծ խոցէն զսիրտ բարեկամին ․
Եթէ թշնամին լինէր ոխերիմ,
Ոչ յոյժ մորմոքեալ ցաւ գործէր խորին ։
Խրատ վայելուչ ընկերականին ,
Միամիտ սիրել զընկեր դրացին ․
Բարք է անհամբոյր գազանականին ,
Որ զիւրան խոցէ որպէս թշնամին ։

ՀԱՒՈՐՍ ԵՒ ԵՂՋԵՐՈՒԿ

Այդ մի՛ խորհիր տանիլ փորձուն,
Զի մի՛ անկցիս 'ի մեծագոյնն ։

Եթէ փէւր փոքր չաղես․
Մեծ կլլաց մէջ փեւղ կըլլօ ։

մծն․ Հաւորսը բռնեց եղջերուկ թռչունը, և ոտքը չուան կապեց տանը մէջ կըպահէր․ իսկ թռչունը դժուարելով մնալու քով կենալու, չուանն ոտքը թռաւ գնաց իր բունը նստաւ․ բայց չուանը ծառին փաթթուելով արգիլեցաւ ու չի կրցաւ անկէ թըռչիլ։ Այսպէս կերակուր չէր գտնէր ուտելու․ երբոր անօթի կըմեռնիր՝ սկսաւ ինքը զինքը մեղադրելով ըսել․ աւա՜ղ թշուառիս․ ես չի համբերեցի մարդու ծառայութեան ըննելու, ահա անմտութեամբ կըմեռնիմ․ որչափ որ կամեցայ ազատ ըլլալ, չարաչար կապւեցայ․ վասն զի կապով փախչելը աւելի վտանգաւոր է եղեր, քան թէ գերի ըլլալը ։

Խրատ է անոնց, որ պզտի նեղութենէն փախչելու համար շատ անգամ մեծին մէջ կ'իյնան ․ վասն զի առաջնոյ նեղութենէ ելլալ չի կայ ։ Նման այս առակին կ'ըսեն, խրատ տալով ․․․ ները և մարդկերաները, որ աշխարհքին կռուեն

կը ճանչնան . երբ աշխարհքին հետ սրտերնին կապած ըլլայ , վա՜յ է իրենց ։

Վրէժ յաշխարհի վիշտ տրտմութեներին ,
Հարկ 'ի սկզբանէ եղաւ մահացուին .
Որ 'ի բաց փախչի տանիլ թեթեւին ,
Նմին հասանէ ծանր անտանելին ։
Մարդ ժառանգաւոր տրտմական մասին ,
Մի՛ տար գլխեր զոր քեզ պատշաճին .
Եթէ զոհ տանիս ծանունք թեթեւին ,
Թէ փոքունց անգոհ քեզ ծանրաբեռնին ։

ԿՐԻԱՅ ԵՒ ԳՈՐՏՔ

Մի՛ մեղադրեր բնութեան արդար ,
Թէ հե՛մ հանուրց բարիս չտար ։

Մի՛ փրփրիր Ինչ մեծ բան չունիս ,
Թէ չաս փնտրես շատ բան ունիս ։

Մեկ . Կրիան տեսաւ որ գորտերը արագ ա-
րագ կը ցատկէին , առանց ջանալով ըսաց թէ
ինչու համար բնութիւնը տուեր է անոնց ա-
նանկ արագութիւն , և իրեն անանկ ծանրութիւն ,
որ բեռան տակ ըլլալով կամաց կամաց քալել
կուգայ ։ Բայց օր մը տեսաւ որ արագիլը եկեր
է լճին մէջէն ու մէկիկ մէկիկ զանոնք ջարդէ
կուտէ . սկսաւ զինքը մխիթարելով ըսել թէ
ես խե՞նդ եմ , որ կը մեղադրեմ արդար բը-
նութեանը , որ ինծի անանկ մեկ լաւ զէնք մը

տուներ է․ որով այս մտածողներէս ապա-ւեմ, և բանէ մը վախ չունիմ։

Օրհնեալ է անմեղ ամենիմաստութիւնն․ որ մեզի վրա-էարի եան մը փնտածնուն դէս նը փրփռքան թէ քնոյ լուանինք․ ընդդէմ թէ ու ամենուն արդար էաշխեր է․ ողոր շատ էարեր ունի, շատ ալ նեղութիւն ունի։

Այս բերքը են մնաց անխորհուրդ ուժմկին,
Որ աշնու ցանկայ ընդ այլոց բարին․
Երբ գեղեցիկ ինչ գիտէ յօտարին,
Կարծէ զինքն զուրկ յիրաց բնաւին։
Մի՛ լինիր չարակն յընկեր դրացին,
Քոյդ չեն փոքր օժիտք նկատեա՛ յանձին.
Եթէ մի՛ ակնածք գիտես ձիրս այլոց,
Միւսով անձս չարիս լծակցեալ նմին։

ԱՌՆԷՑՔ ԵՒ ԿԱՂՆԻ

Որ ոչ խորհի զգործոց վախճան,
Զգնայ կրէ ցաւս անվախճան։

Բան մը ըրած վերջը տեսնէ՛,
Եթէ շատ օգուտ ընէ։

Մծէ․ Առնէտները աշխատանքէ փախչելու համար խորհուրդ ըրին իրենց մէջ, որ կաղնի ծառին արմատները կտրելով վար ձգեն․

որ եղերուն ինչընելու նեղութի չի քաշելով վարէն ուտեն պտուղները։ Բայց ասոնց մէջէն մէկ ծեր մը պատասխան տըւաւ, Թէ մենք հիմա մեզի կերակուր տըվօղն որ կըտրենք. հապա եկած տարի ով մեզի կերակուր պիտի տայ. քիչ մը նեղութի չենք քաշելու համար ի՞նչ խելքով մեզի անուշցանօղը պիտի վար ձգենք, գնացէ՛ք բանեցնելով. այս միտքը մէկ բանին ետքը չի մտածելէն կուգայ ։

Ասանկներն են կարգաւոր նման կենդանի, որ ծառոյ պտուղ կուտեն առանց. ինչ յիշուր կըսէն թէ վէջ ամէն թմբլած կը ծառոյ բան ըրածէր ։ Օրինակ թէրած է անկեր ծառերկանց, որ երբեք չի մտածելով բան կընեն ։

Այսպէս որ կշռէ զսկիզբն և զվախճան,
Կանխաւ գուշակէ զանգոյ ապագայն .
Որով միշտ առնէ գործ աներկեան,
Ոչինչ վրիպի անձն խոհական ։
Արդ մի՛ անխորհուրդ առներ գործս համայն,
Այլ որէշ մտօք քննեալ զապագայն ,
Զի նախկին պատճառն է վախճանական,
Որ սակս եղանին բնաւք եղական .

ԶԻՆՈՒՈՐ ԵՒ ՁԻ

Նորատիպաց նորն է սիրուն ։
Ընտրելն զնորն հինէն թողուն ։

Փորձած բանէն եփ մի՛ չէնար ,
Մ՛ ափէր հինը նորին համար ։

ՄԾՂ. Մէկ զինուոր մը պատերազմի ձի մը ունէր, որ երկար ժամանակ իրեն լաւ ծառայութիւն ըրեր էր ամէն բանի մէջ. իսկ զինուորը նորէն ուրիշ ձի մը գնեց, որ անշահ ընկերով մեկալ ձիէն շատ վատ էր ։ Սակայն տէրը նոր գնած ձին առաջիններէն շատ փափուկ կը պահէր և մեծ գութ ունէր վրան։ Օր մը անշահ ձին ըսաց լաւ ձիուն, թէ գուն խամէ շատ զօրաւոր ես և լաւ ծառայութէ կընես, բայց մեր տէրը զիս քեզմէ շատ կը սիրէ ու խնամ լաւ կընայի։ Անոր պատասխանեց տուաւ, թէ զարմանքը բան չէ, որովհետև սովորութիւն է մարդկանց հինը ձգելէն նորը սիրել ։

Օրինակ է մարդկային միտաց անհաստատութեան. որ ամէն են նորը սիրեն և հինին չեն բանեն, թիւղեր գեղշըլայ. սակայն նորութիւնը ձեծ ձեծ վնասներ բերեր է շատ մարդու ։

452։
Ահա նշանակ անհատատատ սրտին ,
Որ ընտրէ զնորին առէ զընտրեալին .
Ոչինչ համարի հնութեին անգին ,
Անհատուած մնաց այն նորատիրին ։
Նորատիրութ՟ թէ մերժես զհինն ,
Յեղաշարժ ոգիս ցուցանես յանձին .
Հնադիտութ՟ թէ զննես զնորին ,
Հնոց և նորոց գոս հետաքննին ։

ԳԱՅԼ ԳԱՌՆԱԶԳԵՍՏ

Բազում գառինք ըստ արտաքնոյն ,
Այլ քանատար գայլ ըստ ներքնոյն ։

Շատեր դըրսէն գառն է անմեղ,
Սակայն ներսէն է գայլն անհեղ ։

Մեկն. Երբեմն գայլը վրան առաւ ոչխարին մորթը փէրին, գնաց ոչխարներուն մէջ խառնըվեցաւ, և ամէն օր մէյմէկ ոչխար կուտէր։ Տէրն որ իմացաւ սպաննեց զգայլը, ու անանկ մորթը վրան կախեց ծառէն. երբ քով հովիւները կըհարցընէին, թէ ինչու համար ոչխարը կախեր ես ծառէն. պատասխան կուտար թէ մորթն որ կը տեսնէք, իրաւ ոչխարի է. բայց ինքը գայլ է. երեւցուծը անմեղ գառն է, ներսը պատառօղ գայլ է ։ Ուստի դրսինը մի նայէք, ներսինը նայեցէք, որ այս անմեղ կերպարանքով այնչափ ոչխարներս կերաւ ։

Օրհնեալ է հեղձաւոր, եւ խաբեբայ մարդկանց, որ սուրբ երկնաւորին ուրիշին փառք կտարեն. բայց որ մը խայտառակ կըլլայ իրենց հեղձաւորութեանը :

Այսպէս կեղծաւորք զերթ փարիսեցին,
Արդար ձեւանան ձեւովք արտաքին.
Քաղցրաւէտ բանիւ մաքուր երեւին,
Այլ 'ի ներքոյ են գազան գազանագին :
Երդ մի՛ հաւատար կեղծութեանց նոցին,
Որոց այլ է սիրտ այլ ինչ 'ի լեզուին.
Մի՛ քեզ բարեձեւ գաղանք մերձեսցին,
Զի մի՛ ծախեսցիս յանդգութ որկորին :

ՁԻԹԵՆԻ ԵՒ ԴԴՄԵՆԻ

Որ փոյթ ցուցայ վաղ հերձանի,
կանխաբողբոջին անդէն խամրի :

Շուտ հասածը շուտ կը չորնայ,
Ուշ հասածը կը դիմանայ :

ՃԿ. Ձիթենին կը պարծենար դդումին վը-րա, որ քանի՛ց փոխուած էր, թէ ի՛նչպէս քիչ ժամանակին մէջ այնչափ աճեցաւ մինչեւ զինքեն անցաւ երկայնութեամբ, որ քանի տա-րի առաջ էր տնկած : Բայց շատ չանցաւ, տեսաւ որ ձմեռվան մօտ չորցաւ դդումը. անասունները ձիթենին մերձը կերան ու բանա-կրում յիմարութեն եւ նախանձէն պատմեն շատ

ամօթխածութեան վրայ վրդովի մեկին մեծցօղը, շատ-ալ կրկնորդմի եղեր ։ Թերեւմն շատ աղէկ է կատակ կատակոց ածելի . ու շատ մնալ . քան թէ շուտ ածել , ու շուտ չորնալ ։

Շատ պատուով եղած բանը շատ չէ որ կենայ . [illegible] ։

Զի՞նչ օգուտ պանծալ ծոխաքանակ հեշտին,
Ընդ փոյթ նուաղեալ խամրիլ գլխովլին .
Լաւ է անազան ածիլ ՚ի չափին ,
Ցերկարել մնալ ՚ի նոյն վիճակին ։
Մի՛ ցանկար փառաց փախստականին,
Որ փոյթ ցոլացեալ անդրէն խաւարին .
Փառք են տեւական փառք հոգեկանին ,
Որ փայլին ընդ միշտ յանծայր յաւիտենին ։

ՇՈՒՆ ԵՒ ԾԱՌԱՅ

Երբ որ այրէ ջրով [illegible] ,
Խեղճ [illegible] ՚ի ջուր [illegible] .

Եղած [illegible] [illegible] [illegible] ,
Պաղ ջրէն ալ չի [illegible] ։

Միտք . Պատահին մը տան մէկ շան մը կար . որ ամէն [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]

նէն դուրս չէր ելլէր ծակերը կը մտնէր. որ մը տանը ծառան ուզեց շունը դուրս ընել անձրևի տակն. կաղաչէր շունն որ քիչ մը տակն տայ իրեն, մինչև որ անձրևը անցնի. վասն զի առանց պատճառի չէ կըսեր այս ըրածս: Անոր հարցուց, թէ ի՞նչ է պատճառն որ անձրևի տակն դուրս չես ելլեր: Պատասխանեց թէ մէկ անգամ մը դիպուածով տաք ջրին մէջ ընկեցայ, կռնակիս կաշին խաշեց. անոր համար պաղ ջրէն ալ կը վախնամ:

Ընտիր օրինակ է. [illegible] մէկ բանէ մը զատ ընենք, ամէն բանէն զգուշաւոր եղեր, որ նորէն զատ մը չի տայ:

Գեղեցիկ համեմատ մնայ փորձառութին,
Լաւ է կալ չփորձել 'ի նոյն վերայն.
Եթէ ոչ փորձի 'ի միամ աւթի,
Պարտի աղեթան կալ յամենայն աւթին:
Պատշաճ յորդորակ ժիր պատասխանեկին,
Ալ 'ի հեռանալ յաւթից վտանգին.
Թէ աւարկաց ինչ փորձեաց զգեղ գեղըին,
Մի՛ անփորձ մերձիր յիր ինչ մնացին:

ՀԱՒՈՐՍ ԵՒ ՄԱՆՈՒԿ

Միտք տղայոց չեն խոհական,
Զոր ինչ լսեն այնպէս գնան։

Խաբէբայ բան լսելոյ փութան,
Անմեղ խօսքն է անմեղաց բոյն։

Մէկը․ Հաւորսը զարկաւ տարաւ թռչունն, ու շամփուրին անցուց տըւաւ տղուն որ խաղցէ մինչև ինքը գայ․ բայց երթալու ատենը ապսպրեց որ զգոյշ կենայ, չըլլայ թէ մոխրին մէջ ձգէ․ թէ չէ՝ բոլորը քեզի կըկերցընեմ կըսէր։ Թռչունները գրեթէ խորոված էին՝ դիպուածով տղուն ձեռքէն ընկան մոխրին մէջ։ Տղան ալ մոխրոտը խօսքին նայելով սկսաւ ուտել․ ինը հատը կերաւ կշտացաւ, մէկ հատը չի կրցաւ ուտել։ Երբոր տէրն եկաւ՝ սկսաւ տղան լալ․ ան ալ հարցուց թէ ինչո՞ւ համար կուլաս․ պատասխանեց թէ յանկարծակի թռչունները ձեռքէս ընկան, ես ալ ինը հատը կերայ մէկը չըկըրցայ ուտել, կաղաչեմ մի՛ բարկանար, վասն զի խիստ կշտացայ։ Անատենը հաւորսը մտամոլորով լսաւ՝ թէ շատ զգուշութիւն պէտք է եղեր տղոց բան հասկըցընելու։

Տղոց բնութիւնը պարզամիտ ըլլալովը զգուշաւոր

Թէ պէտք է վարուիլ հետերնին․ և գէշ օրինակ կու տան իրենց խաբէական խօսքերով։ Առակը կըսէ, թէ խելացիներուն հետ կեցօղը խելացի կըլլայ․ անզգամին հետ կեցօղը անզգամ ։

Ի խոհեմ մտաց վարիլ ընդ մանկանցն ,
Կշռել և խօսիլ առաջի նոցին .
Զի Թերակատար միտք մանկականին
Զոր ինչ և լսէ գրէ 'ի սրտին ։
Մի՛ խօսիր խարդախ և կամ զանտեղին ,
Զի մի՛ չարուսոյց լիցիս անմեղին .
Խօսեա՛ց պարզ արդար ըստ հոգեկանին ,
Օրինակ բարեաց ելով համբակին ։

ԴԻԱՍ ԵՒ ԿԱՊԻԿ

Իւրաքանչիւր իւրով բերկրի ,
Զի ամենեց իւրն է բարի ։

Ամէն մարդու իրն է աղուոր ,
Թէև ըլլայ պախարաւոր ։

մկզ . Դիաս ուզեց իմանալ, թէ ամէն կենդանիներուն մէջ որուն ձագը աւելի գեղեցիկ է . հրաման հանեց , որ ամէն կենդանի իր ձագն առնէ գայ . ուստի ամէնքը իրենց ձագերովը եկան ժողվեցան . կապիկն ալ իր ձագը բերաւ հոն ։ Իսկ Դիաս անոնց վրա նայելով սկսաւ ծիծաղիլ . երբոր կապիկը տեսաւ Դիասին ծիծաղ երեսը՝ ուրախանա-

ըռվ կըսէր, Թէ իմ ձայնս ամենեքեն զնդեցին տեսաւ, անոր համար կըխնդայ Դիոս ։

Խեղայի մարդը իրեն ունեցածը քանի փեղ մը դնելով ուրիշին կը նայի, որ իրենն ալ կատարե-լագործէ. վասն զի անխելք մարդիկ միայն իրենց քանին կը հաւնին ։ Սոկրատ փիլիսոփային հար-ցուցին թէ մը կենդանին գեղեցիկ է. ան ալ պա-տասխան տուաւ, թէ խրատուած հոգի մարդը ։

Անմիտ խնջոյքները նմանեալ կաւակի
  Զոր ինչ և ունին համարին յարգի.
  Ոչ հայելին յայլոց բարեն ցանկալի,
  Զիւրեանցն 'ի կատար բերել անթերի ։
Տես քանի չքնաղ յօտարս երևի
  Զանազան օժիտ ձիրք առաքինի.
  Կրթեալ զքոյդ ծնունդ գործով պանծալի,
  Պայծառ փայլեցո այլոց առաջի ։

ՍԱՐԴ ԵՒ ԾԻԾԱՌՆ

Մի՛ զքեզ դներ մեծ յաղթական,
Զի մի՛ մեծնալ լինիս կործան :

Մեծերուն կարգ ջնել չի պէտք,
Ու ինչ կըլլաս ծաղրելի դէպք :

Առակ. Մամուկը տեսաւ թէ ծիծեռնակը վեր վար օդին մէջ թռչելով ճանճերը կուտէ իրեն բան չի մնար, ուզեց որ բռնէ. ուստի իրեն թելերէն որոգայթ մը լարեց ծիծեռնակին ճամբուն վրան, որ ճանճի պէս բռնուի. բայց երբոր ծիծեռնակն անկէ անցաւ ոչ միայն պատռեց աւրեց անոր որոգայթը, այլ և մամուկն ալ հետը տարաւ զարկաւ պատին ճղմեց. որ երբոր կըմեռնէր, կուլար թէ իմ մահս ես ձեռքովս պատրաստեցի. ճանճին յաղթելովս կարծէի թէ մեծ կենդանիներուն ալ պիտի յաղթեմ: Այսպէս իմ տկարութիւնս չի ճանչնալուս համար արժանի եղայ այս պատուհասիս :

Ամէն մարդիկ եթէ պզտիկ յաղթութիւն մը գործեն, կարծեն թէ ամենայն դիմացինին ալ կրնար եսել. և այս խելքով իրենց մեծին հետ կռուելն ալ չարաչար կը կործանին : Ոտքի փիլիսոփաներուն առջին խրատն է. ծաղրելի դէպք :

Այսպէս ամբարիշտք կրեն զարժանին ,
Ոչինչ չափելով զօրութեն անձին .
Երբ իշխեն փոքունց ընդ մեծից կռուելն ,
Յորոց և անդէն կոխին սատակին :
Արդ մի՛ մաքառիր ընդ մեծագունին ,
Զի մի՛ կործեցես նման յիմարին .
Պատկառ կա՛լ պետաց և գլխաւորականին ,
Պանծալի լիցիս ՚ի շնորհս նոցին :

ՊԱՌԱՒ ԵՒ ԲԺԻՇԿ

Ջանա՛ պահել ճրագ քո վառ ,
Մի՛ տիրեսցէ անձինդ խաւար :

Նայէ՛ քու լոյսդ որ վառ մնայ ,
Այլոց լոյսը քեզ մութ կըլլայ :

մկն . Մ՚էկ պառաւ մը աչքի ակարութեն ունենալուն համար կանչեց բժիշկն , որ ըւընտցընէ՝ այսպէսի պայմանով . թէ որ աւողջանայ՝ անոր ուզածը տայ . իսկ թէ չաւողջանայ՝ բան մը չի տայ : Բժիշկը սկսաւ դեղ ընելով ամմէն օր աչքը եղով օծել . բայց տեսաւ թէ չառողջանար , ամմէն գալուն մէյմէկ բան տնէն գողնար կըտանէր . անանկ որ տանը մէջ բան չի մնաց . մինչև պառաւն ալ կրցաւ տեսնել թէ տանը բաները պակսեր են : Ուստի երբոր բժիշկը պահանջելով իր վարձքը կը հաստատէր վկայութը , թէ ըւընտցաւ աչքը լաւ կը տեսնէ , պա-

տասխանեց պատասխանը թէ սուտ է ամենևին. վասն զի երբոր աչքս կըցաւէր, շատ բան կը տեսնէի տանս մէջ. հիմա որ կորսեր ըն-ծայար՝ ամենևին տանս մէջ բան չեմ տեսներ. ինչու՞ պէտք է անանկ տեսնելն, որ ինծի պէտք եղած բաները չեմ տեսներ ։

Օրինակ է անհաւատարիմ մարդկանց. որ երբ աղէկութիւն մ' ընելու ըլլան, կրկին չափ կուզան ։ Ասանկ սուտ բարեկամներէն զգուշանալու է, որոնք բարի ընելու տեղինը ունեցած բարիքդ կը վերցնեն ։

Այսպէս ինքնահաճ 'ի ձեռս օտարին
Զերկի 'ի բարեաց, զոր ունէր յանձին.
Զի այլք մ'ի ինքեանց աքնին վաստակին.
Ոչ վասն ընկերին ոչ բարեկամին ։
Թէ ծրագ մարմնոյդ ինչ է խաւարին,
Ուստի՞ քեզ ծրագ լուսաւոր անձին.
Այլոց լոյս ծրագ վասն ինքեանց վառին,
Ի քեզ մթագնեալ փութով խաւարին ։

ՈՒՂԵՒՈՐ ԵՒ ՀԵՐՄԷՍ

Արդ մի՛ սուտը զուխտ և զերդումն,
Զի ոչ խաղի բարձրեալն անքուն :

Հոգևորիդ սուտ մի՛ խոստանէր ,
Զի չես կրնար զԱծ խաբեր :

[illegible] Ճամբորդ մը երկար ճամբորդութենէ մէջ անանկ կանօթենայ , որ ուխտ կընէ թէ ինչ ուտելու բան որ գտնէ , կէսը Հերմէսին ընծայ ընէ : Նայքս որ ճամբուն վրա պարկ մը կըգտնէ մէջը լեցուն նուշ և արմաւ պտուղէն խուրմայ․ շուտով կըմոռնայ ուխտը ու կընստի բոլորը կուտէ : Բայց խելքը վը սատանութեն մտածեց , ժողվեց արմաւին կուտերը և նուշին կեղևները դրաւ սեղանին վրա , և հառաչելով ըսաց․ ո՜վ մեծ Հերմէս , ընդունէ՛ իմ ուխտս , որ կատարեցի․ վասն զի ահա գտած բանիս դուրսինն ու ներսինը հաւասար բաժնեցի :

Առակս խրատ է ագահ և մոլի մարդկանց , որ հոգևոր բանի մէջ ալ խաբէութիւն կը բանեցնեն : Կռապաշտները շատ անգամ Հերմէսս ընծին ուխտ կընէին :

Տեսե՛ր զվաստ խորհուրդ մոլի խարդախին ,
Զի՞րդ արատէ զուխտն ընդ արարչին .

Նենգութիւն վարի 'ի հոգեւորին ,
Մարդկօրէն չափէ զիրաւունս եւն ։
Բամբէ կոյր մտաց նենգօղ առաւհին
Զրկել նկրտի զտիրող բոլորին .
Որ ըղձիրաս էից ունի 'ի ձեռին ,
Դիտէ զամենայն , պատժէ ցաւագին ։

ԻՇԱՄԵՂՈՒՔ ԵՒ ԿԱՔԱՒՔ

Չար է խորհուրդ չարասիրաց .
Զոր ինչ առնես , բերեն վնաս ։

Երբոր մէկին ուրիշը լար է ,
Ինչ որ կամի զէն կը բերէ ։

Առակ . Իշամեղուներն ու կաքաւները օր մը սաստիկ ծարաւցած կուգան երկրագործին կաղաչեն , որ ջուր տայ իրենց . և խոստացան կաքաւներն որ ջրին տեղը փորեն անոր էգին . իշամեղուներն ալ չորս դին ըսալոսելով գողերը խայթեն ։ Իսկ երկրագործը պատասխան տուաւ , թէ ես երկու եզ ունիմ , որոնք առանց բան խոստանալու իմ ամէն բանս կընեն . ուրեմն աւելի աղէկ է անոնց տամ քան թէ ձեզի . որ ձեր օգտին համար ինծի սուտ խոստմունքներ կընէք ։

Օրինակ է վնասակար մարդկանց . որոնց խորհրդածքն է աղէկութեան ընել , իսկ գործքն է վնաս

բերբերութիւն ։ Հասարակաց մարդուն ամէն աշխարհք ընդուն է . իսկ անհասարակին ամէն բան դժուար է , կրնէ խնայութը ։

Ժամոտ մնասարքերը խոստասանան բարին ,
 Նուաթել զչարիս բերէին նկրտին .
 Զի այլ կամքն է չար միշտ 'ի չար համկին,
 Ոչինչ ցուցանեն 'ի բարեաց մասին ։
Արդ մի' թեարկու լինիր զրկողին ,
 Թէև փաղաքշէ զերթ յուշկապարկին .
 Խաղաղապատելով յածի կամթողին ,
 Մինչև քուսացէ զկարիս անձին ։

ԱՐՑՈՒՏ ԵՒ ՀԱՒՈՐԾ

Մի' կերակուր և գոյզն շահ ,
 Քեզ նուաթեացեն վտանգ և մահ ։

Քիչ մը հանգիստ կտոր մը հաց
 Քեզ կըյգէն մահին առաջ ։

Մկբ. Արտոսա թռչունը , որ է հարևզածագը , ամէն օր կերթար ցորեն ուտելու . որ մը տեսաւ դայն հաւորսը՝ որոգայթ լարեց բունեց ։ Իսկ թռչունը հասկըցաւ որ ազատում չունին , սկսաւ լալ . վայ անբաղդիս , կըսէր , ես ոչ արծաթ եմ գողցեր , ոչ ոսկի , և ոչ մեծ չարութին մը մարդու ըրած եմ . հապա միայն ցորենին մէկ հատիկին համար պիտի կորսըվիմ . շատ աղէկ էր որ ըլլանե-

րուն խառներն ուտէի, քան թէ մէկ քանի հատ ցորենն, որ մահուանս պատճառ եղաւ։

Խրատ է անոնց որ քիչ շահի համար մեծ վտանգի մէջ ընկնելու կը յօժեն. և ուրիշին քիչ մը բան յափշտակելու համար լարալար կը պարծընեն. ինչպէս եղաւ արտուտը չայլըրդուշը։

Որ անյագ անհնչմամբ ձգտի յուտելին,
Սակաւ կերակուրն առթէ մահ նմին.
Զի անհրաւօղք յայլոց 'ի բարին
Դառն վնասին 'ի մեծի պատժին։
Մի՛ բերիր զըկել զինչըս օտարին,
Եւ մի՛ դիմադրաւ լինիր վտանգին.
Զի փոքրիկ արկած գուգնաքեայ օգտին
Հատանէ զկեանս վերջ այս բոլորին։

ԲԺԻՇԿ ԵՒ ՀԻՒԱՆԴ

Թէ դու չես քեզ բժիշկ ճարտար,
Ուչինչ օգտէ բժշկաց ճար։

Երեսպաշտին երես մի տար,
Քեզի կընէ իրեն պաշար։

մկթ. Բժիշկը գնաց հիւանդ մը տեսնելու, և հարցուց թէ ինչպէս է. հիւանդն ալ ըսաց թէ չափէն աւելի կը քրտնիմ. բարի նշան է, ըսաւ բժիշկը։ Երկրորդ անգամ

գնաց հոն բժիշկը երբոր հարցուց հիւանդին, պատասխան տուաւ, թէ սաստիկ մաղէն դող մը կուգայ ինծի · բարի է, ըսաւ : Դարձեալ՝ երկրորդ անգամ գնաց երբոր հարցուց, ան ալ ըսաւ. Չըդող ուրխայ եղայ · բարի նշան է, ըսաւ բժիշկը : Յետոյ երբ ընտանիքէն մէկը հարցուց հիւանդին, թէ ի՞նչպէս ես : Ի՞նչպէս պիտի ըլլամ, կըսէր · ամեն բարի նշաններու մէջ կը մեռնիմ :

Պէտք է երես դարձընել երեսպաշտին, չէ թէ կեղծաւորութիւնը հաւանելով հաւատալ խօսքին · վասն զի անանկ մարդիկ ամենէն դի կը դառնան :

Տխուր է այս անխմար մարդահաճոյին,
Որ ընկերհականն կրէ 'ի լեզուին ·
Խառնէ անպատկառ սուտն ընդ ճշմարտին,
Ի միում կիտի ընտրէ զերկոսին :
Քանի՞ անարգանք այն մարդերուղին
Զիւր ուղիղ դատման զխակն եղծանողին ·
Որ 'ի սէր օգտի խօսի զանտեղին ,
Մինչև մի կարծել զայնն ընդ ոչին :

ԱԳԱՀ ԵՒ ՈՐԴԻ ԻՒՐ

Այլք վայելեն յինչս ագահին,
Ինքն է միայն պահնակ գանձին։

Ագահն իրէն բանին տէր չէ,
Այլոց համար զայն կը պահէ։

մէջ. Ագահ մարդ մը իր պարտէզին մէջ ունէր պատուական խնձորի ծառեր. բայց մինչև որ խնձորները չէ փթթանէին մէկ հատ մը չէր ուտեր։ Իսկ որդին առատաձեռն ըլլալով օր մը ատեւ ընկերները պարտէզը տարաւ, և առաջարկելով կըսէր անոնց թէ մի վախնաք կերէք ըստ խնձորները որչափ կուզէք. միայն փթթածները մի ուտէք, վասն զի հայրս պիտոր ուտէ զանոնք։

Օրինակ է ագահին, որ ուրիշին համար կաշխատի. ոչ իրեն համար. Ընդհէտ պատրաստածը իւրը դնէ փող այս չոր ախորժին համար։

Ոսկւոյ ընտանիք ժառանգ ագահին
Քաղցր վայելեն ՚ի վաստակ նորին.
Մահուչափ ուզենի պահել զգանձերն,
Մինչև ակամայ տայցէ օտարին։
Ո՛վ յիմարութեան ապարասնել որդին,
Առանց չարաաանջ յաւելու զգանձին.

Երբ ոչ վայելէ զայն զանձ զայն ոսկին ,
Հի՞մ վասն օտարաց տանջիր զատանադին ։

ՄԱՆՈՒԿ ԵՒ ԿԱՐԻՃ

Մի՛ մերձենար յամէն կենդանի ,
Թաքուցեալ ունին թոյն ՚ի տասան ։

Մի՛ մօտենար ամէն բանի ,
Շատփուշ ծառս կատաղայ տեղի ։

մՀա . Մանուկ տղայ մը պարտէզը կը մտնէ . և կը տեսնէ որ գեղեցիկ կը թռչէին թիթեռնիկը փէփէնէները՝ սկսաւ բռնել հետեւելին խաղալ ։ Յետոյ կարիճ մը տեսաւ , չգիտնալով զինուց քաղէն որ բռնէ ։ Իսկ կարիճը ըսպառնալով պոչը ցըցուց ու ըսաւ . համարձակ կեցիր , մի՛ անխելք , ինձի մի՛ դպչիր . հիմա ունանկ կը խայթեմ քեզ , որ կը մեռնիս . եթէ ամէն բանի տանկ անխտիր դպչելու ըլլաս՝ վա՜յ է քեզի ։

Խրատ է անանց , որ ամէն մարդու հետ և ամէն տեղ միանգամ կը վարուին . վասն զի շատ բան կայ որ կերպարանօքը գեղեցիկ իրեւի կարծի մը ապրանքայը . սակայն շատ անոնց մարդիկ տանիկ կորուսեալ են ։

Անմիտ պատանիք ընդ չարին ընդ բարւոյն ,
Բերկրեալ անխտրականութեամբ մի՛ առնցք հպիցին .

Բայց երբ 'ի կարիճէն մահաթոյն խայթէն,
Ցամքեցաւ խոնարհեալ վերջապես անձէն :
Մ'ի պատարկէք աւերակաց գերեզմանին,
Եւ մի անտառաբերէր հուսալ յինեկը վայրին .
Որչափ պատրաստութեամբ անմեղ երկին,
Այնչափ մահաշունչ թխանալից նեղքին :

ԱՌԻՒԾ ԵՒ ՑՈՒԼ

Այլ մի՛ ճաշեր ընդ թշնամին,
Զի մահաբեր է ճաշ նորին :

Չար Թշնամւոյն բերան ժպտա,
Որ ներքուստ իրեն լեղի :

Մէջք. Առիւծը միտքը դրաւ որ վարպե-տութեամբ ուտէ ցուլ մը . ուստի հրամցուց ի-րեն հարկիքը . բարեկամ, կըսէր, մեկ աչխար մը մորթեցի և ամենէն պատրաստութեամբ տա-ւայ, կը խնդրեմ որ երեկոյեան գուցն ալ իմ հարկիքիս մէջ գտնուիս : Ցուլը գնաց հե-տուեն նայեցաւ որ ամենէն պատրաստութիւն կայ՝ բայց աչխար չի կայ, հասկըցաւ բանը, ակսաւ փախչիլ : Ինչո՞ւ համար կերթաս ը-սաւ առիւծը . ցուլն ալ պատասխանեց տեսայ, թէ ուրեմն որ հարկիքիդ ամենէն բանը պատ-րաստ է ցուլը ուտելու համար, չէ թէ աչ-խարը :

Խաբէբայ, ծաղրիկ շատ անգամ պարին ընելով,
և ընծայ փալովնէր խաբէն զուրիշը. սակայն պէտք
է հեռու փախչիլ անոնց խորամանկութիւններէն :

Դրժօղ զաւառածանք 'ի ախոյ ստախւծին,
Յարգելով պատարին զմկրոտ բարեկզարդ.
Զի ծաշ և կաշառք զթաղուածս արկնին,
Յանգուսթ դժրողաց կորուսիչ Թակարթ :
Մի՛ քեզ քաղցրացի ծաշ զաւառածանին,
Մի՛ կախարդեսցէ պատրիւ նենգողաց.
Զգո՛յշ լեր արթուն բաց խորագիտին,
Թափել հնարիւք չարին 'ի ձեռաց :

ԸՌՆԱԿԵԱՆ ԵՒ ՀԵՐՔԻՒԼԷՍ

Երդ մի՛ անձան կորդար զերկին,
Զի չէք նաստատ անգործ վաստին :

Զանց ընելով աղաղակ,
Ու երկնաւոր յօժար է :

ՄՀՔ. Մ՝եկ գեղացի մը իր սայլը աւերէ ձող
կերթար. յանկարծ ընկաւ սայլը ցեխա փո-
սին մէջ, ու չէր կրնար առաջ երթալ՝ մէկոյ
անաանց. իսկ գեղացին Թողուց զայն ու ընկը-
աւ Հերքիւլեսը չնծերն աղաչել, որ զայն սայ-
լը հանէ տեղին մէջէն : Իսկ Հերքիւլես ձի-
ծաղեցաւ անոր վրան. մի՛ անխելք բաւա,

զա՛րկ ձիերուդ, հրէ՛ սայլը, և հապա կանչէ Հերքիւլէսն, որ գայ օգնէ քեզի:

Հերքիւլէս կամ Հերակլէս հին ատենը քաջ պարաւոր էր, որ անպարտելի քաջագործութեանց համար հին կռապաշտները կըպաշտէին զայն, և նեղութեան մէջ օգնութիւն կը խնդրէին. որ օրինակ է այս նախախնամութեան, որ հարկաւոր տեղը կը հասնի ջանք ընողին. Բայց ուր տեղ որ մարդաճարը և հնարքը կը հասնի, անտեղը կը հասնի վերին նախախնամութիւնը. զի ծայր մարդկեան մըտահնարս է:

Թէ խնդրես նպաստ արարող մասնին,
Վաստակեա՛մ զիմաստունս 'ի գործ արիանձին.
Թէ անջան կարդաս զօգնութն վերին,
Մի՛ ակնկալցիս սատար երկնային:
Ջանա՛մ դու ով վասն ըստ կարի անձին,
Հասցէ քեզ յօգնել ձեռք նախախնամին.
Զի նա քեզ թողու տանել զկարելին,
Եւ զանկարն ինքեան պահէ հրաշալին:

ԳԵՂՋՈՒԿ ԵՒ ԽՈԶ

Թէ և հատցես զականջս անլըւր,
Ոչ իմանայ խրատ և լուր ։

Այն ականջն որ լսել չուզէ,
Ինչ որ ընես խօսք չի լսէ ։

ՄՀԶ. Գեղացի մը տեսաւ, որ դրացիին խոզը մտեր է արտը կապականել ցանած գարին. շատ վռընտեց մտիկ չըրաւ. անտալ բարկութենէ զարկաւ մէկ ականջը կտրեց. բայց խոզը նորէն սկսաւ հոն մտնել, մինչև զարկաւ գեղացին մէկալ ականջն ալ կտրեց ։ Բայց խոզը՝ ամենևին այս բանէն ետ չի կեցաւ. բռնեց տիրոջը տարաւ որ մորթէ ։ Իսկ տէրը երբոր գլուխը կտրեց ու ճղքեց, տեսաւ որ խոզն ուղեղ չունի՝ շատ զարմացաւ ։ Մի՛ զարմանար տար վրա ըսաւ գեղացին. վասն զի թէ որ խելք և զգայութիւն ունենար, երկու ականջն որ կտրեցի՝ կը հասկընար ու չէր գար նորէն իմ գարիս ապականեր ։

Օրինակ է այնոր գլուխ կոշտ մարդկանց, որ ամենևին խրատ չեն ընդունիր, և իրենց համառողանանց բան կընեն, որ պէտք է ընել, թէ ոչ խելք ունին ու միտք ։

Ահա տապաստամ՝ գործ անխըրատին,
Որ ոչինչ արդեամբ ընդունի յանձին.
Գոյ յոյս բուսանիլ սերմն յապառաժին,
Քան յանլուր ականջ վայրապ տարածմին:
Տե՛ս, զհորդ անգործ մնայ սերմն անգին,
Ցանհերահանգ ափրս 'ի միտս անստատին.
Ընկալ զխրատ 'ի հերկեալ սրտին,
Ընձիւղեալ բազում պտուղ պարարտ երկրին:

ԱԳԱՀ ՀԻՒԱՆԴ

Մի՛ զանձեր քեզ զկորստականն,
Զի մի՛ տացես զքեզ կորստեան:

Զանձն հոգւոյ ոսկին շահեայ,
Որ երբ մեռնիս փէշի դէմ գայ:

ճխդ. Մէկ ագահ մը անիրաւութեամբ շատ հարստութիւն ունէր. երբոր հիւանդցաւ, և տեսաւ որ պիտի մեռնի, ուզեց որ իր բոլոր գանձը բերեն առջին: Ուստի առաւ առջին ոսկիներն ու սկսաւ հառաչելով անոնց հետ խօսիլ. ով սիրական ոսկիներս կըսէր՝ ես ձեզ չարաչար աշխատանքներով վաստըկեցայ, ու դուք ինձի ամենևին հանգիստ և զուարճութիւն մը չի տուիք. հապա միշտ տրտմութիւն և նեղութիւն: Պատասխան տըւին ոսկիները, թէ մենք զուարճութիւն կըրնանք տալ միայն քու ժառանգներուդ, որբոր ուտելով խմելով բոլորը կը մսխեն. բայց

չկրցանք թէ հոգւոց բանին՝ ինչչափ սխալ ըլլայ. որ հոս ալ տանջըլծեցաւ, հոն ալ պի- տի տանջըլծի ։

Ով որ ազգահաւատութեամբ հոս կը գտնուի՝ հագնուած մարմնով կը կորսուի. վասն զի հոս չէ մեր հայ- րենիքը, այլ երկինքն է. ուր պիտի թագաւորենք յաւիտեան. ինչպէս կըսէին հին քրիստոնեաները ալ: Քրիստոնեայի մը հարցուցին, թէ հայրենիքդ շատ կը սիրե՞ս. ան ալ երկինքը ցուցնելով ըսաւ, խիստ շատ կը սիրեմ իմ հայրենիքս ։

Նաւարկական առաջնորդ վերնածին յանձին ,
Ժողովել զգանձս գործի կորուսչին .
Կարծեն թէ իշխեն ոսկւոյ արծաթին ,
Բայց ինքեանք յոսկւոյ գերեալ կաշկանդին ։
Քանի՜ք 'ի սատանայ կորստականին ,
Կորուսին զկեանս և սիրտ ընդ նմին .
Գանձել քեզ լիցի 'ի բարձն հայրենին ,
Ուր յաւէրժ բերկրի վերնածնեալ հոգին ։

ԹՈՒԹԱԿ

Չէ՛ մարգարէ ընդունելի,
Եւ ոչ գիտուն յիւր քաղաքի ։

Գիտուն մարդիկ պատիւ չունին,
Իրենց տան մէջ և քաղաքին ։

Մհկ. Թութակը փուփու Գուշլան երբոր ա-րեւելքէն եկաւ արեւմուտքը՝ ամենքը մեծ պատիւ կընէին իրեն. որովհետեւ արեւմուտք չըլլար այս թռչունը ։ Օր մը հարցուցին թէ ի՞նչու համար քու աշխարհքիդ մէջ քեզի պատիւ չէին ըներ, ու հոս այսչափ պատիւներ կընեն, արծըթէ և փղոսկրէ վանդակի մէջ կըդնեն, և զանազան փափուկ կերակուրներով կը պահեն ։ Պատասխանեց թէ մի՛ զարմանաք. վասն զի ամէն տեղ վայլած պատիւը չընելնուն համար, ես հոս պատուաւոր եղայ, և այս պատճառաւ գիտունները ալ իրենց քաղաքը կը ձգեն ուրիշ տեղ կերթան, որ ընդունելի ըլլան, ու պատիւ ունենան ։

Իմաստուն մարդիկ իրենց քաղքին, և ազգականաց մէջ ընդունելի չեն. օտար տեղ աւելի յարգութիւն ունին ։ Գիտունի մը հարցուցին թէ ո՞ր ազգականներդ քեզ աւելի կը ճանչնեն. ան ալ պատասխան տուաւ թէ միայն գիրքերս ։

Բանիբուն խոհեմք գիտունք ցանկալի,
Չեն յարգի և մեծ յիւրայնոց միջի.
Զի յաճախութիւն ընդ մերձաւորին,
Գործէ զմեծարուս անարգ խոտելի։
Լաւ է յարգանօք կալ՝ յանապատի,
Քան ծնարգ մնալ՝ ի մեծ քաղաքի.
Փախիր ուր գիտունք չիցեն յարգելի,
Նստեալ առ անձին յանանձին տեղի։

ԱՐԾՈՒԻ ԵՒ ՍԻՐԱՄԱՐԳ

Ոյժ և մագիլ զարծիւ տգեղ,
Անեն սիրուն և աչագեղ։

Հարստութիւն որչափ նոյն երևնայ,
Քան զիմաստութիւն տղուոր երևայ։

ՄՀԷ. Երբեմն արծիւը եկաւ ուրիշ թռչունն-
ներուն մէջ նստեցաւ ու սկսաւ պարծենալ.
չեմ կարծեր թէ կրնայ՝ իմմէ գեղեցիկ գըտ-
նըվի աշխարհքիս վրա. ահա իմ վրաս յայտ-
նի կերևնան շատ գեղեցիկ նշաններ։ Երբոր
իր վրայի ամէն բանը կը գովէր, բոլոր թըռ-
չունները վախերնուն կը հաստատէին թէ
ճշմարիտ է. միայն սիրամարգը քթին տակէն
ըսաւ կամաց մը, թէ կտուցքդ ու ճան-
կերդ քեզ գեղեցիկ են ըրեր. թէ որ ատոնք
չըլլային, կը գտնըվէր հազ մէկն որ քեզի
ցոյց տար, թէ ոչ միայն գեղեցիկ չես, այլ
և խիստ տգեղ ես։

Մեծութիւն ունօղ մարդը գեղեցիկ ալ ըլլայ գիտուն ալ. որովհետեւ ամէնքը վախերնուն կը գովեն. ինչ որ ըսէ, գլուխ ծռելով անանկ է կըսեն, թէպէտ չիմար ըլլայ. անոր համար հին ֆիլիսոփաները [illegible] մեծատուններուն անունը դրեր էին՝ անասուն ոսկեղէն ։

Անխիղճ փարթամք ինքեանց վեհ թուին,
Ցանձին կարծեցեալ ունօղ բոլորին.
Ոչ որք զխմացիր խորհրդոց նոցին,
Բնաւք ծնրադիր յոխորտող ձայնին ։
Ա՛յս թիւր սկզբունք թիւրեալ աշխարհին,
Որ զմեծութն գնէ 'ի գանձին.
Գեղեցիկ գիտուն փարթամք համարին,
Թէև խեւ ապեղ լոսո բընականին ։

ԷՇ ԵՒ ՇՈՒՆ

Որ ոչ լսէ զձայն կարօտի,
Զօգնի աւանդք երբ կարօտի ։

Թէ չես հանիր դրան ուրիշին,
Մարդ չի հանիր քու խեղճ ձայնին ։

ՄՆՀԸ. Էշն ու շունը ընկեր ըլլալով միասնեղ կերթային. բայց էշուն վրա հաց կար բարձըված, որ աղքատներուն կըտանէր ։ Ասոնք ճամբան կանօթենան՝ էշը կերթայ խոտ ուտելու, և շունը կաղաչէ էշուն որ իրեն քիչ մը հաց տայ. իսկ էշը ծառը ընելով կըսէր.

շանը, թէ խամա կեր ինձի հետ։ Այս խօսքիս վրա Նայիս գայլը հոն հասաւ. սկսաւ էշին աղաչել շանը թէ չունն եղբայր, կաղաչեմ օգնէ՛ ինձի, և հալածէ զգայլն որ զիս չի պատռէ. գիտեմ որ կրնաս այս շնորհքն ընել։ Պատասխան տուաւ շունը, թէ քիչ մը առաջ կտոր մը հաց չի տուիր ինձի, հիմա զիս քեզի օգնութի՞ւն կը կանչես. գնա կորսուէ ինձի անանկ ընկեր պէտք չէ, որ կարօտութեանս ատենը օգուտ մը չունի։ Եւ այսպէս թողուց որ գայլը պատռեց զայն։

Խրատ է անոնց, որ ուրիշը կարհամարհեն, օգնութեան մը չեն ըներ և իրենք ալ խեղճ կըլլան. Վասն զի չի կայ անանկ անպիտան, որ պէտք եղած ատենը օգնութիւն մը չի կարենայ ընել փոխարէն։ Շատ անգամ ուրիշի աղէկութիւն ընելով մեծ բարիք ծագեր են։

Բոյսք են բնական իմացականին,
Կարեկցիլ այլոց նպաստել նոցին.
Իսկ թողուլ զընկեր կարօտ ցաւագին,
Բերմունք են սրտի անասնականին։
Թէ մատամբ մերձիս յօգուտ կարօտին,
Բազումք թեկնածեն և քոյդ կարօտին.
Թէ մերժես զձայն որ քեզ կարօտին,
Կաս մնաս 'ի վիշտս միշտ կարօտագին։

ԷՇՆ ՈՒ ԽՕԶ

Զանամ 'ի գործ կրթել զմարմին,
Մի՛ պարարեր նման խոզին:

Կրթէ՛ շնէր աշխատանօք,
Թէ չէ մահին կերթաս շտապով:

մհթ. Էշը սաստիկ կը նախանձէր խոզին. վասն զի կը տեսնէր որ առանց աշխատանաց բոլոր օրը կուտէր կըգիրնար. իսկ ինքն առաւօտուընէ մինչև իրիկուն բեռ կրելով հոգին կելլէր: Օր մը տէրն ուզեց մորթել զխոզն, որ շատ գիրցած էր. երբոր պառկեցուցին մորթեցին, էշը զարմանալով կը նայէր. ահա պատճառը հասկըցայ թէ ինչու համար մեր տէրը գգուելով գիրցուց խոզն, որ մորթէ և իրեն կերակուր ընէ: Ուրեմն շատ աղէկ է էշ ըլլալ, քան թէ խոզ, և այսպէս գոհ եղաւ իր վիճակին վրայ:

Յարմար է անոնց, որ աշխարհին հանգստութեանը վրայ կը նախանձին. վասն զի որչափ դիւրին երջանիկ երևնան, այնչափ շատ նեղութեանց փակ են. անոր համար իմաստուններն աշխատասիրաց կեանքը փորձանքներուն կեանքէն վեր կը դնեն:

Ահա՛ այս վախճան է պարարտութիւն,
Որ միայն լնու զծակ կարասին.

Բայց որչափ պատրաստ լինի փառելին ,
Փութով'ի սպանդ վարի կորչին :
Արդ մի' նախանձիր կենաց անգործին ,
Ջանամ միշտ կրթիլ'ի գործ պիտանին .
Քանզի կեանքն է կեալ յօգուտ աշխարհին ,
Այլ ոչ'ի կորուստ բուծանել զմարմին :

ԱՔԱՂԱՂ ԵՒ ԱՂՈՒԵՍ

Եթէ անկար յարկած չարին ,
Փախիր'ի բաց հեռոց նորին :

Թէ ոչէն փնասար անզգամին ,
Հնարս քանիր կոխած փեղքէն :

ՃԶ. Մէկ աքաղաղ մը աղուէսին ձեռքն ընկաւ. բայց շատ աշխատելով և ջանքով փրցուց զինքը անոր ձեռքէն ու փախաւ : Օր մը մէկ քանի աքաղաղներու հետ երբոր ժուռ կուգար՝ տեսաւ աղուէսի մը մորթ , մէկէն սկսաւ փախչիլ : Այն որ տեսան ընկերները՝ ամէնքը միաբերան վրան խնդացին . այնչափ որ աքաղաղը չդիմացաւ եւ դարձաւ ըսաւ իրենց . հը՛ , թէ որ դուք ալ աղուէսին ճանկը մտնէիք , չէ թէ միայն մորթէն , այլև կախած տեղէն ալ կը փախչէիք դողալով :

Օրինակ է զգուշաւոր մարդոց որ ամէն պատրա

գաները դիպելով անանձ կըզգուշանայ, որ նորէն ձորձուածէ մէջ չիյնիր. և ամէն բանի մէջ ձորձ կըլլայ ։

Խոհական մնաց այս գործ փորձառութիւն,
Փախչի 'ի հեռուց դաժան փորձողին.
Զի կրկին արկածք տապանան խորքին,
Առ 'ի ոչ փորձիլ 'ի նոյն վերստին ։
Լեր զգուշահայեաց յամենայն առթին,
Զի անպակաս կան գարանք ոսոխին.
Թէ արթուն գնաս և հսկօղ յանձին,
Անվրդով մնան հնարք դարանակալքն ։

ԷՇ ԵՒ ԳԱՅԼ

Որ յանհաւանոր գործ խնչ մխի,
Գանխուք վշտօք ծանր տուժի ։

Չի սորված բան ընել ուզողը,
Ծաղր կըլլայ մեծ ցաւն կրէ ։

մՅա. Սրբեանն իշուն ոտքը փուշ կը մտնէ, որ շատ կը տանջըվէր փուշին ցաւէն. ուստի տեսաւ որ գայլը վրան կուգայ՝ սկսաւ ողորմուկ ձայնով աղաչել. ով գայլ կըսէր, ահա այս ցաւս զիս պիտի մեռցընէ ու ատամներուն կերակուր պիտի ըլլամ, քեզմէ օգնութի մը կը խնդրեմ, ինձի շնորհք ընելով հանէ՝ ոտքէս փուշը. գոնէ առանց ցաւի մեռնիմ։ Իսկ գայլը ուրախանալով մօտեցաւ իրեն,

Ու առջեւի ակռաներովը բռնեց փուշը կամաց մը հանեց ոտքէն ։ Սակայն էշը մոռնալով քաշած ցաւը՝ կից մը զարկաւ երեսին որ ակռաները թափելով պատռեց գայլին ճա-կատն ու փախաւ ։ Երբոր գայլին խելքը գլուխն եկաւ՝ սկսաւ ինքնիրեն ըսել թէ ա-ղէկ եղաւ ինծի . որովհետեւ ես անասուննե-րուն մսագործութիւնը սորված էի , հիմա ուզեցի ըլլալ անոնց վիրաբոյժ բժիշկ ։

Որոնք որ իրենց սովորական արուեստը կըձգեն ու չի սորված բանի ձեռք կը զարնեն՝ ծաղր կըլ-լան եւ մեծ վտանգի մէջ կիյնան ։

Որ ձգէ զգործս սովորականին ,
Մխի յանսովորն 'ի ճահ օտարին .
Անդ խայտառակեալ տուժի և ծաղրի ,
Անագան ուրեք մեղադրի ընկերին ։
Արդ մի՛ գահավէժ լինիր յառնելին ,
Եւ մի՛ ոստոստեր 'ի միոյ առ միւն .
Անսասան կացեալ 'ի քոյդ վիճակին ,
Յաւերժանաս միշտ 'ի գերագունին ։

ԱՂՈՒԷՍ ԵՒ ԱՌԻՒԾ

Երբ յաճախէ պետն ընդ ռամկին,
Կորուսանէ պատիւ անձին ։

Մեծն որ ռամկին շատ երեւնայ,
Անարգ ու ցած մարդ մը կըլլայ ։

ՄՃԶ. Աղուեսը բնաւ առիւծ չէր տեսած. եղաւ որ օր մը դիմացն ելաւ, անանկ սաստիկ վախցաւ որ քիչ մնաց կը մեռնէր ։ Երկրորդ անգամ երբոր տեսաւ, վախցաւ, բայց առաջինին պէս չեղաւ ։ Իսկ երրորդ անգամ որ տեսաւ առիւծը՝ ամենեւին վախ մը չունեցաւ, համարձակ սկսաւ հետը խօսիլ, և լեզուներն ըսել թէ վախն ու ակնածութիւնն է եղեր մեծութեան տուօղը, չէ թէ մեծ մարմինը և մեծ անունը ։

Որչափ մեծ ու պատուական բան ըլլայ, երբոր շատ անգամ կը տեսնուի, վախը կերթայ ու համարձակ բան մը կըլլայ ։ Այս պատճառաւ հին ատենը երեւելի թագաւորները, ու իշխանները քիչ անգամ մարդոց երեւնային, ու երբ ժողովուրդը զանոնք կը տեսնէր, կարծէր թէ երկինքէն եկած են ։

Գլխաւորք իշխանք 'ի մեծ միճակին,
Ցանցառ երեւիլ ռամկաց հարկաւորին.

Զի յաճախութեն կարծէ զյարդ անձին,
Թէ և մեծայարգ իցեն անհագին ։
Իսկ դու վերանցեալ 'ի պատիւ կարգին,
Մի՛ յաճախ նստիր 'ի ժողով ռամկին .
Կշռելով զանձինս զխօսս զտեղին ,
Վեհապանծ բազմեաց առաջի նոցին ։

ԳԱՅԼ ԾԵՐԱՑԵԱԼ

Բազում ընկերք ճոխ մեծատան ,
Ոչ ոք մերձի յաղքատ մեղան ։

Մեծ տեղանին շատ ընկեր կայ .
Աղքատին քով մարդ մը չերթայ ։

մձգ. Գայլ մը անանկ ծերացած էր , որ ոչ կերակուր կրնար գտնել և ոչ մէկին քովէն բան կուտար . անանկ որ ամէնքը զինքը կը հալածէին ։ Օր մը ելաւ անտառը գնաց , և հոն գտաւ մէկ մեռած եզ մը՝ վազեց ուտելու ։ Բայց ուրիշ գայլերը մէկէն հոտն առին հոն Թափեցան , որ ուտելով օգնեն իրեն . վասն զի ընկեր ենք կըսէին ։ Իսկ ծերը բարկանալով կըսէր . հիմա որ կերակուր ունիմ ամէնքնիդ իմ ընկեր եղաք . և երբոր բան չունէի , մէկերնիդ զիս ընկեր չէիք ճանչնար ու միտքերնիդ զիս կը հալածէիք . ուրեմն ուտեցածիս ընկեր էք , չէ թէ ինծի ։

Մեծատունքը ունէին բարեկամ կըտրանայ, տան թէ խեւտը. և այս սատ բարեկամները որդւոյ օ_գոստ փեսնէն՝ կը մոփէնան. և երբոր յախոր_դութեան հանդերձի ծծապոսնը՝ դանէն ու չէն անցնէր, որ գիշեր ցորեն դանէն չէին պախեր:

Ահա տարացոյց այժմեան վիճակին,
Որ տոյ գլորդուն փառաց և պատուին.
Ուշ-ագ բարեկամ բուն բանակային,
Այլ անմնեքեան մեծութեն նորին:
Չի՛ք քեզ մերձաւոր թէ ես աղքատին,
Թէև վեհապանծ և ձոխ յիմաստին.
Թէ աղքատ մնօք և ձոխ 'ի գանձին,
Ի ծունր իջանեն քեզ բոլորեքին:

ԳԱՌՆ ԵՒ ԳԱՅԼ

Որ կայ հնազանդ ձայնի վեհին,
Անգործ առնէ նետըս չարին:

Ուխոր հրաղանդ է իր ծծէն,
Վնաս և չար չի գար անյէն:

Մձդ. Գայլը տեսաւ որ գառնուկ մը կեր_թար այծին հետ՝ սկսաւ անոյշ խօսքերով ըսել թէ ինչու համար թողուցիր մայրդ, ու այս դարշահոտ այծին ետևէն կերթաս. դարձիր մօրդ քով, որուն ստինքը կաթով լեցուն են: Այս խօսքերով կը ջանար այ_ծէն զատել, որ դիւրաւ յափշտակէ զգառն:

Ան ալ պատասխան տուաւ, թէ մայրս զիս առոր յանձնեց. ուստի աւելի կուզեմ հնազանդ ըլլալ մօրս քան քեզի, որ կեղծաւոր խօսքերովդ կուզես զիս առկէ հանել ու պատռել:

Ով որ Թշնամուն խօսքին նայելով անհնազանդ կըլլայ, հարկաւ կը կորսուի. ինչպէս ըլլայ մանկանց, որ չար ընկերներուն հաւատալով իրենց ծծէն չի հեռանան:

Այսպէս փաղաքշէ նենգօղ Թշնամին,
Խորամանկ բանիւ զմիտս անմեղին.
Տքնի ճողոպրել 'ի ձեռաց վեհին,
Զի ծախեսցէ զայն 'ի ժանիս հեշտին:
Մի՛ լսեր զձայն կորուսիչ Թովչին,
Նազելի բանիւ զքեզ խարդախողին.
Հնազանդ և հլու կաց մեծաւորին,
Հարեալ զբերան գազան բանսարկուին:

ԵԶՆԱՎԱՐ ԵՒ ԵԶՆԻԿՔ

Որում իմիք որ կարօտի ,
Զայն երազէ 'ի գիշերի ։

Ինչ բանի որ մարդ փափաքէ ,
Երազին մէջ զայն կը տեսնէ ։

ՄՃԵ . Օր մը եզնավարը կըմանէ եզներուն գոմը , կըտեսնէ որ բոլորն ուրախութեան մէջ են , կըհարցընէ թէ ինչ պատճառաւ այսանկ կուրախանաք ։ Անոնք ալ պատասխան տուին , թէ այս գիշեր երազ տեսանք , որ մեզ մէկ խիստ զուարճալի դաշտի մը մէջ տարեր խոտ կը կերցընէիր՝ անոր համար կուրախանանք ։ Պատասխան տուաւ եզնավարը թէ ես ալ տեսայ , որ բոլոր օրը ձեզ կաշխատցընէի երկիրը փորելու . ուստի պէտք է որ իմ երազս իրաւ ելլէ , ձերինը սուտ ։ Զայս ըսելով վերցուց տարաւ արտը հերկելու ։

Օրինակ է անոնց որ անմտութեամբ երազի հաւատան . որովհետեւ երազը անտարբերը կը պատահի , երբոր մտքը բան մը կայ որ գիշերը զայն տեսնէ՝ երազ կըլլայ . ինչպէս ծարաւ մարդը ջուր կը տեսնէ . բայց երբոր ըշխըը կը լրնայ , ու արթունը կը պակսեայ՝ զարհուրելի երազ կը տեսնէ ։ Նայէ Գր Ճեմարանին 979 համարը ։

Զխա՛րդ պաշարեալ միջոց նախադատեն ,
Երազէ զայն ինչ որում կարօտեն .
Բերկրի հանդիպիլ բարեաց բոլորին ,
Զոր եւեթ ընդ կարծ յանգոյ կարելին :
Մի՛ զքեզ շարժեսցէ տեսիլ անգոյին ,
Որ չէ ինչ պատճառ բարւոյ եւ չարին .
Այլ այն գաղափար նման ստուերին ,
Անցանէ ընդ միտս զգայականին :

ԱԳԱՀ ԴԵՍՊԱՆ

Ագահն 'ի սէր գոյզին ինչ օգտի ,
Ծանակ լինել լաւ համարի :

Ագահը քիչ շահի համար ,
Զինքը կ՚ընէ անարգ ու չար :

մՃիզ. Երբեմն ագահ մարդ մը դեսպան գնաց ուրիշ քաղաք մը . երբոր քաղքին մօտեցաւ , ամէնքը դէմ գացին նուագարաններով . զի սովորութիւն էր որ երաժիշտները քաղքին դուռը կերթային հանդէսով բան կըշալէին , որ անկէ պարգեւ առնեն . բայց ագահը մարդ խրկեց որ չերգան բան չալեն . վասն զի սուգ ունիմ կըսէր մօրս մահուանը համար : Այս պատճառաւ քաղաքացիք գացին զինքը միխիթարելու . երբոր իրարու կը հարցընէին , թէ արդեօք որչափ ատեն է որ ասոր մայրը մեռեր է : Պատասխան տուաւ ագահը , թէ քառասուն տարի կայ . սկսան

ամէնքը ծիծաղելով զարմանալ անոր ապա-
հովութեը վրայ :

Օրինակ է ագահին, որ մէկ ոսկիի և քիչ մը շահի համար ամենուն ծաղր կ'ըլլայ. բայց մարդուս վայելածն այն է որ ոսկին անարգէ, և ինքը չանարգուի: Ուր տեղ որ ոսկին կը խօսի, ամէնքը կը լռեն. կ'ըսէ Գիտուն մը:

Այս սկիզբն յոյսի մնաց ժլատին,
Այր նպատակն է յաւելուլ յոսկին.
Ծի՞նչ գանձ մի ծախել դժուար է նմին,
Քան ծանակ լինել բոլոր աշխարհին:
Եւ հի՞մ ժողովէ այն գանձ այն ոսկին,
Երբ ոչինչ ծախի յօգուտ գանձողին.
Կաշկանդէ կապէ զսիրտ և հոգին,
Ի նախատ բերի կծծի ագահին:

ՇԻՆԱԿԱՆ ԵՒ ՄՈՒԿՆ

Ընկեր ծառայ են մեծերին,
Բաղդին միայն և ոչ անձին:

Շատ բարեկամ կայ ու պտուղին,
Մարդ մը չի կայ նեղ օրերին:

մձէ. Մ՚էկ գեղացիի մը տուն յանկարծ բոլորկեցաւ կերեր չարաչար, և ինքը հեռուն կեցած երբոր կընայեր, տեսաւ որ մուկ մը

ամէն գուրս ցաթկեց կըփախչէր․ մէկէն գեղացին վրան վազեց ու բռնեց մուկը կըրակին մէջ նետեց․ Թշուառական կրակէր, քանի որ տունս շէն էր կը վայլէիր, հիմա որ թշուառութեան հասար, գո՛ւրս կըփախչիս․ ա՞յս է քու ընտանութիւնդ․ ուրեմն ինչպէս որ աղէկութիւնը վայլեցիր, գնա՛ խեղճութիւնն ալ քաշէ․ քեզի պէս բարեկամին այսպէս պէտք է ընել:

Օրինակ է աշխարհիս թշուառութեան, որ երբ մէկը յախորդութեան մէջ կիյնի, ամենքը երես կը դարձնեն, մէկը չի նայիր երեսը․ բայց ճշմարիտ բարեկամը յախորդութեան մէջ աւելի բարեկամութիւն կընէ:

Ո՛ւր այն բարեկամ ընկեր մտերիմ,
Յաջող վիճակին նոյն և ձախողին․
Արդի բարեկամք միայն յաջողին,
Ոչ ոք մերձաւոր ձախողակ բաղդին:
Ո՜վ դիւրափոփոխ մտաց մարդկային,
Որ այսպէս փոխի ընդ փոխիլ բաղդին․
Զայն որ յամենայնից գնէին սակին,
Յետոյ անարժան իւրեանց ողջունին:

ՎԱՐԱԶ ԵՒ ԷՇ

Տե՛ս զվնաս քո վաղագոյն ,
Մինչ չև գործեալ է Թշնամւոյն :

Գալըր զարար ափէնոյլ փէ՛ս ,
Չի խարծածէր ղէն կը քաշէս :

մէջը. Լեռան խոզը իր ակռաներուն զօրու-Թիւը ապաւինելով որ խիստ երկայն զօրեղ էին , ուզեց իշուն հետ կռիւ ընել : Իսկ էշը վարպետութենով մը մօտեցաւ խոզին , և անանկ կից մը զարկաւ ճակատին , որ կիսամահ գետնին ընկաւ խոզը : Յետոյ խոզին միտքը վրան գալով սկսաւ ըսել ինքիրեն , Թէ ոտքով կռիւը մտքէս չէր անցած . աս ալ տրուեցայ , բայց հանդերձ պատուով :

Մէշա դէկէ է մըմըզաւլ , Բէ ուսաի՞ կըհայ Գէսա Գօւլ , չէ Բէ ըիհէը բաձի մը փէղ տըհէլով ըօսլիւշը նախաթէլ . վաան ըի ըի խարծած մար-տիկ Թեծ Գէսա կըհաս փաւլ :

Այս պատահար պատահի յանձնապաստանին ,
Որ զինքն յաղթական գնէ բոլորին .
Իսկ այն տկարիկը որ չըշին լալին ,
Զգետնի հարեալ յաղթէ գոռոզին ,

Մի՛ զոք արհամարհ դներ և չնչին ,
Զանալ անխորհուրդ կոխել առ ոտին .
Գոյ զէն զօրութի՛ն 'ի սիրտ խոնարհին ,
Հանէ և ծաղրէ զհպարտ Թշնամին ։

ԲԱՆԱՍՏԵՂԾ ԵՒ ԷՇ

Մի՛ դներ ինչ յաւէրժական ,
Զի մահն հանուրց գնէ վախճան ։

Մնայական բան մը չէ հոս ,
Ամէն բանի մահը մօտ հոս ։

ՄՃԹ. Մէկ բանաստեղծ մը կըպարծենար, թէ ես անանկ վարպետ եմ և անանկ լաւ կերպով բան կըսորվեցընեմ, որ չէ թէ միայն մարդիկ , այլ և էշն ալ կրնայ սորվիլ իմ բանաստեղծութիւնս ։ Զայս երբոր լսեց մէկ իշխան մը կանչեց զինքն ըսաց, թէ իմ էշուս ալ բանաստեղծութիւն սորվեցուր , ահա՛ քեզի տասը տարի ժամանակ , և ինչ որ կուզես կուտամ ։ Բանաստեղծն ալ խոստացաւ , թէ խի՛ստ լաւ այսչափ տարվան մէջ կրնամ սորվեցընել՝ բան մը չէ . թէ որ չի սորվի՝ բոլոր կեանքիս մէջին ըրած վաստակս քեզի կուտամ ։ Այս դաշինքիս համար շատ մարդիկ զինքը մեղադրեցին , թէ անանկ բան մը վրան առաւ որ անկարելի է ։ Պատասխանեց բանաստեղծը թէ ո՛վ յիմարներ , տասը տարվան մէջ կա՛մ իշխանը կամ էշը և կամ ես կը մեռնիմ ։

Խորապ է անոնց որ աշխարհիս անցաւոր բա-
նէրուն վըրա հոգ կը տանին. մէկ մահը շատ մը կը
հատնի անձին բան կը մընցընէ: Հոգ տանող մար-
դուն ոսկորները կը ցամքին, կըսէ Իմաստունը:

Արթուն խորագէտ դիտող վախճանին
Ծաղրէ զխորհուրդ յիմար իշխանին.
Զի գիտունք միայն զներկայն ունին,
Իսկ յիմարք զգալիս խոստացեալն անձին:
Ունայն վաղանցուկ զի՞նչ քան զմարմին,
Ում կեց են արկածք մանկական օրհասին.
'Ի թարթել ական հասանէ նմին,
Վերջ տայ խորհրդոց նանրախոհ ուղղին:

ԽՈՅ ԵՒ ՑՈՒԼ

Հպարտ յիմարն վստահ յանձին
Գայ 'ի պայքար ընդ հզօրին:

Յիմար մարդիկ ըներէնոք միայն
Մեծ կը կարծեն, ծիծաղ կըլլան:

Մկ. Մէկ արու ոչխար մը խիստ զօրաւոր և մեծ ըլլալով ոչխարներուն մէջ միշտ կը կռուէր անոնց հետ, և ամենուն յաղթող էր. որ այնչափ ամբարտաւան եղաւ, մինչև յանդըգնեցաւ ցուլին հետ ալ կռուիլ. բայց երբոր իրարու դէմ ելան՝ ցուլը անանկ սաստիկ զարկաւ ոչխարին, որ գլուխը ճզմելով եղջիւրները թափեց գետինը ձգեց: Ուստի

մեռանելու առանց կրնալը ոչխարը հատուածելով. ով Թշուառականներս, այս ինչ անխելք հպարտութիւն էր ըրածս, որ համարձակեցայ կռուիլ ցուլին հետ. որովհետեւ բնութիւն անանկ քաշ է ըրեր զայն, որ մէկը չի հասնիր իրեն ։

Ով որ իրմէ մեծին հետ կռուիլ կուզէ մեծապէս կը վնասի, և ամենուն ծաղր կըլլայ ։ Գիտնականի մը հարցուցին թէ ով է շատ արժանի, ան ալ պատասխան տուաւ՝ թէ շատը չի Գիտցող մարդը ։

Զբաղխոհ յիմարը վաստակեալ յանձին
  [illegible] ամբաստան ընդդէմ հզօրին,
  Անդէն զինաթափ ձգեալ՝ի գետին,
  Փորձեն՝ի մնաս զոյժ ախոյանին ։
Մի՛ բերիր կագել ընդ մեծահարուստին,
  Մի՛ ընդ իշխանաց և գիտնականաց.
  Զի նոցին հարուածք ծանուն ուժգին,
  Զգեն յայն փորեալ խորխորատ խորին ։

ԱՂՈՒԷՍ ԵՒ ՇՈՒՆ

Գովեստ ոմանց վնասէ ուժգին
Քան զպարսաւ չարախօսին :

Գովեստ կայ որ մեծ վէն կուտայ ,
Կայ պարսաւ որ վնաս չի տայ :

մղէօ. Շուն մը աղուէսին ետեւէն ընկեր կը հալածէր որ բռնէ. աղուէսը տեսաւ թէ աղուասում չունի՝ կանչեց շանը. ո՛վ շուն, ի՞նչ ես ընկեր ետեւէս, իմ մարմինս միս չունի որ ուտես. ահա՛ անդին գէր նապաստակ մը կայ, վազէ՛ ետեւէն, որուն մարմինը իմինէս շատ լաւ է: Շունը տեսաւ նապաստակին, ու վազեց ետեւէն. բայց չի կրցաւ հասնիլ, մինչեւ փախաւ ազատեցաւ ձեռքէն: Քանի մը օրէն ետեւ նապաստակը երթալ տեսաւ աղուէսը, սկսաւ մեղադրել թէ ինչո՞ւ համար զինքը գովեց շանը: Պատասխանեց աղուէսը. թէ որ արհամարհեր զքեզ ի՞նչ անխոհ ըսէիր, որ աղէկ ըսելուս համար կը տրտնջաս: Անոր ըսաւ թէ ո՛վ աղէկ եր զիս վար զարնէիր, քան թէ սատանի չարութե գովէիր:

Խորամանկ մարդը սուտ գովասանքով և անոյշ լեզուով կը մոլորէ մարդը. ասոր համար անգամ գովեստը նախատինքէն աւելի վնաս կը բերէ:

Այս գործ է մասանց սուտ բարեկամին ,
Որ ատէ զընկերն յետ վատ ներբողին .
Քաղցր գեղգեղելեաւ զձայն մանկաբերին
Մատնէ զայն հնարիւք ժանեաց օրհասին։
Են և անձնասէրք որ ՚ի շահ անձին
Ոչ խղճեն զընկեր բարիս օտարին .
Յորինչ վաստակին զրկին և խօսին ,
Զամենայն յիւրեանց շրջեն ՚ի բարին ։

ՇՒՆԱԿԱՆ ԵՒ ԳԱՌՆ

Զինչ զօրաւոր քան ըմկաշաւ ,
Որ շատ գործոց լինի պատճառ ։

Կաշառքն ամենայն զօրաւոր է ․
Որ աշխարհիւքն բանը կարէ ։

միք . Գ՚եղացի մը կերթար միշտ իշխանին , որ իր խնդիրքը կատարէ . բայց իշխանը ամեն անգամ որ կը տեսնէր զայն , չէր տեսնելու զարնելով ուրիշ բանի մը կտօր կը լլար . ոչ զինք մայը հանել կուտար , և ոչ խօսքը մտիկ կը նէր . անանկ որ յուսահատեցաւ խեղճը ։ Օր մը խելք բերաւ , առաւ հետը մէկ գեր և չինաց փուկ գառ մը կամուօխ դնաց իշխանին . երբոր դռանը մօտեցաւ՝ ձայն հանել տուաւ գառին . ծառաները այս ձայնս լսածնուն պէս մէկէկէն առջին գեղացին իշխանին քով , որ խօսեցաւ հետը ինչ որ պէտք էր խօսիլ և խնդիրքը կատարեց ։ Ամառանը գեղացին

դարձաւ դառին ընաց ; Թէ շատ մեծապէս շնորհակալ եմ քեզի , սիրելի գառնուկս , որ զիս արժանի ըրիր այս բաղձալի խօսակցութեանս ։

Խրատ է անոնց , որ կաշառքով կը կուրնան , և անիրաւ բան կընեն ։ Վասն զի կաշառքին փչած բանը մէկը չի կրնար փակել ։ Բայց արդար դատաւորը միշտ պէտք է ճշմարտութեան հետեւիլ ։

Տե՛ս զխաբող բաղխէ զկաւրծս իշխանին
Ամփկար մրմունջ ձայնի կաշառին ։
Որով անիրաւ դատաւորք լինին
Եւ ոչ զօրութիւն ճշմարիտ փաստին ։
Այս ձայն խանգարէ զկարգ օրէնսդրին ,
Փոխարկէ զատեան 'ի տեղւոջ ճշմարտին ։
Փախէ զԷզոս և սէրս դատաւորին ,
Քան հանդիսանայ յայն հանդէս դատին ։

ԾԵՐ ԵՒ ՄԱՆԱՒԿ

Թէ ոչ յորդորն անցնէ խրատին ,
Ուղղեսցէ զայն հարուած գանին ։

Թէ խրատը օգուտ չընէ ,
Գաւազանը շատ կը շինէ ։

Մղձ ․ Սիրելի ծեր մը տեսաւ մէկ մանուկ տղայ մը , որ պարտէզը մտեր պտուղ կը գող-

նար. սկսաւ անոյշ խօսքերով խրատտալ, որ այն չարութիւնը չընէ երթայ անկէ. իսկ մանուկը ծաղր ընելով մտիկ չէր ըներ խօսքին: Ուստի տեսաւ ծերն որ խօսքը փուճ եղաւ, սկսաւ ինքիրեն ըսել՝ թէ ես կարծէի, որ մարդուս զօրութիւնը խօսքին և ուժին վրա կը կայանայ. ահա խօսքս զօրութիւն մը չունեցաւ, նայինք ուժն ունի՞ զօրութիւն: Զայս ըսելով քարեր ժողվեց կը նետէր մանկանը վրայ. նոյնիս մանուկը շուտ մը ծառէն ինջա-փախաւ: Ու այսպէս խօսքին չի տեսածը բանը ուժը տեսաւ. մինչև զարմանալով կըսէր ծերը, թէ ինչու՞ պէտք եղաւ իմ փորձ խրատս՝ երբոր տեսար ձեռքիս ուժը անկէ աւելի բան տեսաւ:

Խրատ է մանկանց, որ ծերոց խօսքը լաւ պահեն. որպէս փորձ ըլլալով քանի բան չեն խօսիր. շատ հարկաւոր խրատ և խորհուրդ կուտան: Հարցուցին թէ աշխարհքիս որ բանը ծանրագին է. վճիռ եղաւ թէ խելացի և փորձ ծերուն խրատները:

Ահա բոյս բարուց խելա պատանեկին,
Զոր ոչինչ շարժէ ձայն խոհականին.
Միակ բանութիւն ուղղէ զայնպիսին,
Զընկենուլ զեղեռն առնել զբարին:
Արդ մի՛ հեռանար դու պատահակին
Անլսող եղով ձայնի ազդողին.
Ամբարեա՛ 'ի սիրտ իբր ակունս անգին
Խրատ ծերունեաց և զաւակ նոցին:

ՄԵՂՈՒ ԵՒ ՄԺԵՂ

Հետեւեալ զսա այն արուեստին,
Որ քեզ այլոց յօգուտ կարգին ։

Անանկ բան մը սորվելու ուզէ՛,
Որ քեզ այլոց-ալ օգուտ մը բերէ ։

մղդ. Ձմեռուան մէջ մժեղը մեղուներէն մէկուն գը-
նաց մեղուներուն աղաչեց, որ իրեն տեղ և
կերակուր տան, խոստանալով անոնց, թէ
ձեր ձագերուն երաժշտութիւն կը սորվեցը-
նեմ ։ Պատասխանեցին ասոր մեղուները թէ
չենք ուզեր, որ ձագերնիս այսպիսի արուե-
ստ սորվին. այլ կուզենք անանկ բան սոր-
վին, որ կարենան ուրիշին կերակուր տալ
և աշխատանք առնել, ոչ թէ երաժշտու-
թիւն գիտնալ որ բանի մը պիտանացու չէ ։

Օրինակ է անոնց, որ միշտ օգտակար բանի կը
փնտռէ ըստացել իրենց զաւակներուն անօգուտ բաներ
չեն սորվեցըներ. որ ցեղոց խնդք չեն ըներ, և
ուրիշին ալ օգուտ կրնան ընել ։

Քանզի նուագարանէ խմաստ առաւելա,
Ցանկին նուագելի մանկանց անմեղին.
Ուսեր մայրերու, առէ, զաւակոններ,
Մէկ զանազանականն քեզ և բոլորին ։

Թէ կրթիս գիտել զանպիտանս անձին,
Ոչ լինիս գիտուն՝ այլ վարիչ հոգւոյն.
Թէ ջանաս գիտել գիւտս օգտակարին,
Յայնժամ քեզ իմաստք բարեաց հանճարին։

ՄԱՐԴ. ԵՒ ՕՁ.

Թող զապերախտն՝ յորժամ էր չար,
Զի ոչ գիտէ զիւր բարերար։

Աներախտին օգնել մի՛ լինիր,
Եթէ երախտիք բան չի ճանչնար։

մըկէ. ( )ձ մը երբեմն քարին տակը մնացեր նեղէն կը ճզմուէր, անցաւ, Թէ անկէ մարդ մը կանցնի, աղաչեց որ քարը վրայէն վերցընելով զինքը ազատէ, և իրեն շատ մեծ աղաչանքեր խոստացաւ։ Մարդն ալ վերցուց վրայէն քարին ազատեց օձը։ Իսկ օձը ետքէն դարձաւ, ու բան մը չէր ուզեր անոր տալ, մինչև սկսան բարկանալով հակառակութիւն ընել. Անասունները գիտցածով անկէ կապիկը կանչեցին, կանչեցին զայն իրենց մէջ դատաւոր ըլլալ, որ այս վէճը կտրէ։ Դատաւորեան ըսաւ կապիկը, Թէ երկուքդ դատաստան չեմ կրնար կտրել, մինչև որ չի տեսնեմ թէ ինչպէս քարին տակը ճմլուած էր օձը. այս խօսքովը պատրաստուեցաւ օձն, որ կենայ, և մարդը դրաւ քարը վրան. Դարձաւ կապիկն ըսաց, Թէ, ահա այս է ուղիղ դատաստան,

որ դուն քարին տակը այսպէս մնալով սատա-կես :

Առնէ օրինակ [illegible] շատ անգամ մարդը [illegible] [illegible] մէջ կը [illegible] [illegible] կը [illegible] : [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] հապա գետնին երեսէն [illegible] [illegible] [illegible] [illegible] էրած է, որ շատ բան կրնային ընել :

Այսպէս ամբարտաւանք գործով խաւարին
Դիմադրելեն կամաց բարերար անձին.
Մերժելեն զհնազանդ, որ արդար երանելին,
Գետնաքարշ անձանց կողմն [illegible] :
Ունիր [illegible] գործոյ բարերարին ?
Որ քեզ 'ի նպաստ [illegible] [illegible] :
Զի գործ դժնդակ է դժնեայ օձին
Մերժելով զբարերար [illegible] [illegible] :

ԻԸ

[illegible]
Այլ կենդանիք նոցա միշտ ցաւալից :

Աղքատին որչափ հանգչելու ջանայ,
Հանգիստն իրմէն հեռու կերթայ :

Ճղճ. Մէկը ձմեռուան մէջ սաստիկ կրակ կը ձգտանար ցրտէն, և միննակ յարդ ուտան կուտէր, ուրիշ բան չէր գտներ ուտելու. և այս պատա-

Ձմեռը էշը կ'աղաղակէր գարնան, որ ցրտէն ա-
զատի և խոտ գտնէ ուտելու ։ Գարունն որ
եկաւ պարտաւորուեցաւ բրուտին կաւը տա-
նել փուռը, որ կաւէ ամաններ շինէն . ոհ,
կըսէր . երանի թէ ամառ գար, որ քիչ մը
հանգչէի ։ Ամառն ալ եկաւ . պարտաւորուե-
ցաւ ցորեն և պտուղ կրել ։ Աշունն եկաւ նորէն
բեռն բառնալ, - թէ խնձորի, շատ բան է. ձմեռն որ
անէր ցրտէն չի կրնար աշխատիլ . ես ալ քիչ
մը կը հանգչիմ ։

Այսպէս են մարդիկը. միշտ կ'ուզեն տարին
աշխատիլ, և երբեք բեռը համբերութեամբ տանիլ.
բայց մի՛ համբերողին բեռը կը թեթևնայ, և
անհամբերին բեռը կը ծանրանայ ։

Այսպէս գործաւորք միշտ գործել հարկին,
Ո՛չ անգործ մնալ յաջողակ բաղդին.
Քանզի վաստակիլ կնքեալ է նոցին,
Ծրանալ քաջիկ 'ի բոլոր տարին ։
Եթէ փափաքիս անգործ վիճակին,
Ջանք քո և վաստակ քեզ ծանրաբեռնին.
Զի ժիրք նոքա հեշտ տանին հարկապարտին,
Նա թեթև տանի և այլ ծանրագին ։

ԴԻՈՍ ԵՒ ԿՐԻԱՑ

Լաւ է փոխել զտունն յայլ տեղի,
Քան մերձ ունիլ չար դրացի։

Լաւ է տուն փեղչփել երթալ,
Քան գեղջին հետ ծէկփեղ կենալ։

մըղէ. Երբեմն Դիոս կամեցաւ ամմէն կենդանիներուն խնդիրքը կատարել. ուստի ամմենքն եկան իրենց խնդիրքը յայտնեցին. կըրիայն ալ եկաւ կաղաչէր, որ տունը իր վըրան դնէ, որպէս զի ուր որ երթայ՝ հետը տանի։ Ինչո՞ւ համար, ըսաւ Դիոս, կուզես այդ բեռը հետդ տանել։ Անալ ըսաց, թէ՝ շատ լաւ է իմ հետս տանիլ այս բեռը, քան թէ չար դրացին որ ունենամ չի կրնամ աներես չարժիլ. և ամմէն օր անոր նեղութիւնը քաշելով կեռաւ խօսքը ըսել։

Չար դրացիէն և չար ընկերէն պէտք է հեռու փախչիլ. Վասն զի որչափ բարեկամութիւն ընես, չամ թէ զարդարանական պատ, այնչափ կը չարանայ անզգամը։

Անզգամ ընկեր և չար դրացին
Լքանեն զսիրտ թողուլ տուն տեղին.
Մինչ բառնալ զտուն թեթև դառնացին
Քան կալ կենակցիլ ընդ անզգամին։

Փախի՛ր յայնպիսեաց, թէ քեզ մերձեացին,
Մի՛ պատասխաներ բանից բամբասրկուին.
Կագ և Թշնամանք են մերկրանք նոցին,
Զրկել զմերձաւորն համձար համարին :

ՀԱՅՐ ԵՒ ՈՐԴԻ ԻՒՐ

Մի՛տ դիր ծերոց ուսի՛ր զիմաստ,
Եւ մի՛ լինիր անմիտ գրաստ :

Թե որ ծերոց լսօղ ըլլաս,
Խելքով գիտուն մարդ մը կըլլաս:

մկր. Մ՚էկ խելացի ծեր մը միշտ կըխրատէր որդին, որ ժամանակը փուճ չի ծախէ, ու մէն միտք դնէ ու բան սորվի, և ախտաւոր չար սովորութիւնները վար դնէ : Բայց ծերը գիտէր ցուցել կըջանար միտքը խօթել. թէ ինչպէս աղնիւ և գեղեցիկ է առաքինութիւնը, և քանի՛ զզուելի գէշ բան է մոլութիւնը : Պատասխան տըւաւ որդին ըսելով. կաղաչեմ, հայրիկ, շատ երկան մըներ. մտածէ՛ թէ ես որ այնչափ քարոզիչներէ յորդորանք լսեր եմ առաքինի ըլլալու համար, և մտիկ չեմ ըրած, դուն որ քարոզիչ չես ինչպէս պիտի մտիկ ընեմ խօսքիդ :

Տէր. և անպատուոր մարդիկ խելացիներուն խրատը բանի տեղ չեն դներ. որովհետև իրենց

լսէր մոլութենը դէմ է. բայց օր կուգայ որ լաւ կը զղջան, և կը ճանչնան այն խրատները որ չեն կրնար գտնել: Ով որ իր ծնօղքը կանարգէ՝ լոյսը կը մարի, և աչքը կը խաւարի. կըսէ Աստուած:

Այսպէս վայրենամիտ բարք ստահակին,
Որ զիմաստ ծերոց կոխէ առ ոտին.
Գիտութիւնք խրատք բարոյականին,
Ներհակ են ախտից ներհակ և վատին:
Թէ անուս են միտք գաղտնունք խաւարին,
Չեն մարդոյ գաղտնունք այլ բան անբանին.
Զի այր անխրատ 'ի պատկեր շրջի,
Մարդ անբանական անբան 'ի բանին:

ՀՈՎԻՒ ԵՒ ՇՈՒՆ

Ծանր են զրկանք բարեկամին,
Քան մեծ չարիք դառն ոսոխին:

Շատ գարշելի ապերախտ է,
Բարերարին որ լաւ կընէ:

Մըթ. Հովիւը ոչխարներն իր շանը յանձնեց, որ հոգ տանելով նայի զանոնք. և շատ առատ կը կերակրէր շունն որ լաւ հոգայ. իսկ շունը ամէն օր մէյմէկ ոչխար կը պատռէր կուտէր: Երբոր իմացաւ տէրը բռնեց շունը կապեց որ մեռցընէ, շունը ոտքն ընկաւ կաղաչէր. տէ՛ր իմ կըսէր՝ զիս մի՛ սպաններ. որովհետև քեզի ընտանի ծառայ եմ: Դա

տառապման սրբուն անէրը, Թէ և սուսանել մա-
հապարտ ես դուն, որ ինձի ընտանի ըլլա-
լով հաւատացի քեզի ու ասանկ անիրաւու-
թին ըրիր ինձի. զայս ըսելով զարկաւ մեռ-
ցուց :

Ա-էլի արժանի էն պատուհասի անոնք, որ ի-
րէնց բարէկամին չարութին կընէն. հաւատարիմ կը
յնանան, և անհաւատարիմէն չար գէշութիւն
կընէն :

Քանի՜ անիրաւ գործ գաւաճանէն,
Զընկեր բարեկամ թշնամանողէն.
Որով և կրէ զարժանիս անձին,
Դառն տանջանաց պատուհաս կրկին :
Զի՞նչ դժնդակ կերպք սրտի նենգողին,
Ատել և ատիլ նման գազանին.
Զընկերասիրութիւն մերժեալ է ինքնին,
Որ միակ պարտ է բուն բանականին :

ԵՌԻԻՆ ԵՒ ԿԱՊԻԿ

Չէք ինչ խօսած յեղց կարգին ,
Որ 'ի պիտոյս ինչ ոչ կարգին ։

Ամէն բանէն օգուտ չելլէ ,
Բանը խելքով գործածելն է ։

Յ. Առիւծը չորքոտանիներուն Թագաւոր ըլլալով՝ բոլորը գլխուն ժողվեց պատերազմ ելլաւ Թշնամիներուն դէմ. ուստի բանակ օրփու կազմելով՝ բոլոր կենդանիները կար- գի դրաւ Թշնամիներուն դէմ՝ որ պատերազ- մի ։ Բայց կապիկը նայեցաւ, որ էշն ու նա- պաստակը այն կարգին մէջն են, հարցուց առիւծին Թէ ասոնք հոս ինչո՞ւ են կեցեր, սանկ վախկոտները կրնա՞ն պատերազմ ը- նել ։ Ան ալ պատասխան տըւաւ, Թէ էշը զռալով փողահար Թամբքէքաճի կըլլայ, որ մէկալներուն ծեծ կըլլէն. իսկ նապաստակն ալ արագ փախչելովը սուրհանդակ Թաթար կըլ- լայ, խօսք տանի կը բերէ ։

Աշխարհիս մէջն անօգուտ բան մը չէ ստեղ- ծած. ամէն բան պիտանի է երբոր տեղն ու- նի, և խելքով գործածուի ։

Չքնաղ են ծնունդ մօր նախախնամութեան ,
Չքնաղ 'ի գործ ինչ կարգեալք ըն յատակին.

Ամենայն էակք 'ի գործ պիտանին ,
Քաջ հանդիսանան երբ 'ի հարկ բերին ։
Մի՛ ինչ արհամարհ դատիր և չնչին ,
Զի չիք ինչ անպէտ 'ի գործս արարչին ․
Թէ ուշիւ մտօք կշռես զներքին ,
Զմայլիս ընդ գործ անցնիւր էակին ։

ԲԱՐԵԿԱՄՔ

Քեզ բարեկամ լիցի անզգին ,
Որ ցանգ կցորդ կայ քոյդ անձին ։

Այն բարեկամ տեղի ընտրէ՛ ,
Որ բէ իյնիս տեղ կը բանէ ։

-յա․ Մէկ մեծատուն մը առատասիրտ ըլ-լալով միշտ իր բարեկամներուն հարկիքը կը-նէր ․ որոնք գիշեր ցորեկ քովէն չէին պակ-սեր , և մեծ պատուով կը բարուէին զինքը ։ Օր մը կամեցաւ փորձել այս բարեկամները թէ արդեօք պէտք եղած ատենը կըհասնի՞ն օգնութեն իրեն հարկաւորութեանը ․ ուստի ձևացուց թէ հակառակութիւն ունի թշնամի-ներուն հետ , որ զինքը [illegible] սպաննեն ․ ա-ղաչեց բարեկամներուն որ այս նեղութեան մէջ իրեն օգնեն ։ Տեսաւ որ երկու բարե-կամէն 'ի զատ մէկը չեկաւ ․ անառ մինակ այս երկուսը բարեկամ պահեց իրեն , մէկալ-ները բոլոր վռնտեց ։

Ճշմարիտ բարեկամը և սուտ բարեկամը յախորդութեան մէջ կը յայտնըւին . խիստ դժուար կը գտնըւի ճշմարիտ բարեկամը . անոր համար միշտ ցանկալի է : Աղեքսանդր Թագաւորին հարցուցին թէ ուր է գանձդ . ասաւ բարեկամներս ցուցուց :

Ընտրեա՛լ ՚ի բիւրուց անձկեաւ մտերիմ,
Ի կեանս և ՚ի մահ կայ ընդ մտերմին .
Զոր ընդ գանձս երկրի ՚ի կշիռ եդեն ,
Ծանրեաց ՚ի կշիռ յարգ բարեկամին :
Թէ տիրես գանձուց և հանքաց երկրին ,
Զունիս բարեկամ՝ քեզ հաւատարիմ .
Զարժէն և ոչինչ այն հանք այն ոսկին ,
Որ գան և գնան ըստ բերման բաղդին :

ԱՐՏԱՎԱՐ ԵՒ ԲԱՐԵԿԱՄՔ

Զոր ինչ կարես գործել անձամբ ,
Բարեկամաց մի՛ յանձներ զայն :

Գործէ՛ որչափ ձեռքէդ կուգայ ,
Զի ուրիշէն քեզ շահ չի կայ :

ԼԲ . Պարեզգամաձագը , կամ արտուտ Թռչունը բոյն շիներ էր արտի մը մէջ . օր մը կերակուր բերելու գնաց ձագերուն , պատուիրեց անոնց որ ինչ լսեն իրեն պատմեն : Քիչ մ՚ անցաւ արտին տէրն եկաւ նայեցաւ որ ցորենը հասած է , ըսաց իր զաւկին՝ Թէ

առաւօտուն կանուխ երթայ բարեկամները կանչէ, որ գան միասնել հնձեն։ Երբոր գա-ձաւ Թռչունը՝ վրան Թափեցան ձագերն ապշեցին, որ զիրենք անկէ հանեն. վասն զի բարեկամները վաղը պիտի գան հնձեն ցորենը։ Իսկ մայրը սիրտ կուտար ձագերուն Թէ մի՛ վախնաք, եթէ արտատէրը բարեկամներուն յանձնեց՝ վաղը չի հնձուիր ցորենը. Հանգիստ կեցէք։ Արտատէրը մէկալ օրը նորէն գնաց կերակուր բերելու. ձագերը նայեցան, որ արտին տէրն եկաւ շատ սպասեց, եկող մը չեղաւ. ուստի ըսաւ որդւոյն Թէ երթայ ազգականներուն և դրացիներուն ըսէ, որ վաղը գան կտրեն։ Զայս երբ լսեցին ձագերը վախնալով մօրերնուն պատմեցին. ան ալ մի՛ վախնաք ըսաց բան չի կայ։ Այն օրն ալ տէրն եկաւ սպասեց՝ մարդ մը չեկաւ. ապա ըսաւ որդւոյն Թէ գնա ամէնքը մեզ խաբեցին չեկան. ուրեմն վաղը կանուխ մէյմէկ մանգաղ առնենք մենք գանք հնձենք ցորենը։ Զայս որ լսեց Թռչունը առաւ ձագերը փախաւ՝ ըսելով Թէ հիմա կատարեալ, որ կը հնձուի ցորենը. վասն զի գործքն իրենց ձեռաց։

Առակս կը խրատէ, Թէ այն բանն որ մեր ձեռքէն կուգայ, պէտք չէ ուրիշի յանձնել. վ՜ զի օտարէն ճար չի կայ, ամէն մարդ իր շահը կը նայի։

Այսչափ են խնամք սուտ բարեկամաց,
Որ անդորրն Թողուն զգործ մտերմաց.
Այժմ մեր բարեկամք խնդրեն շահ անձանց,
Ոչ ոք մտադրէ յօգուտ ընկերաց։

Վա՜յ որ ապաստանան ըմպի մահկանաց ,
Զոր անձամբ կարէ՝ Թողուլ օտարաց ·
Օտարք վաստակին միայն առ ինքեանց ,
Մե՛ անխնայողի շահ յայլոց ձեռաց :

ԱՊՈՂՈՆ ԵՒ ՊԱՏԱՆԻ

Այդ մի՛ փորձեր զայր զխոնարհական ,
Մի՛ ծաղրեսցես իբրեւ անբանն :

Հաւատքի բան ըրա՛ ժողջէս ,
Քէնց Գիտնոց գործածոյ կընէս :

յժ․ Մէկ չարամիտ պատանի մը գնաց Դե_ղոս կղզին Ապողոն (Ֆէպոս) կռատունը , և փորձելու համար Թռչուն մը ձեռքն առաւ_լաթին տակը պահեց , ու արձանին մօտե_ցաւ հարցուց , Թէ ձեռքս որ ունիմ գիտցե՞ր շնչաւո՞ր է Թէ անշունչ : Միտքը դրաւ որ եթէ անշունչ ըսէ , Թռչունը ողջ պիտի դուրս հանէ . և Թէ շնչաւոր ըսէ , մէկէն խղդէ ա_նանկ պիտի ցուց տայ : Ապողոնին քուրմին կնիկը բանը հասկընալով պատասխան տը_ւաւ կռուոքին բերնէն . Թէ ինչպէս կամիս անանկ ըրէ՛ . կուզես ողջ հանէ , կուզես մե_ռած , որովհետեւ անոր կեանքը քու ձեռքդ է :

Օրինակ է իմաստասէրներուն , որ իրենց խելքո_վը կուզեն ալ աստուծոյ կառավարութիւնը չափել ,

ու փորձել, և երբեմն իմաստունները արհամար-հել. բայց մէկէն խայթատոյ չըլլան :

Այս վառ խորհուրդ Թերահաւատին ;
Որ փորձել ժայռին զդուժ Նախագիտին .
Անդէն խայտառակ լինի 'ի բանին ,
Մերժի յիմաստնոց վերթ իմաստակին :
Մի' լինիր քննիչ օրինականին ,
Եւ մի' անդունդներ զօծեալս արարչին .
Զի դու չես կարգեալ դատաւոր Նոցին ,
Նա քեզ դատաւոր օրինօք վերին :

ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՃՈՄԿԻ

Գանձ է ոսկի գործի չարին ,
Դիմեն 'ի ձեռս զըկօղ ժանտին :

Գանձին ու ոսկին չարին կերթան ,
Որ չարութէ գործի ըլլան :

ճդ. Առաքինութիւնը երբեմն զարմանալով կըսէր ոսկիններուն, թէ ինչո՞ւ համար առաւել կուզէք չար մարդկանց ձեռքն երթալ, քան թէ բարիներուն : Անոնք ալ պատասխան տուին թէ մեր աշկերտները վաշխ առնելով զըկանք կընեն, սուտ տեղը կերդ-ւըննան, և այլ շատ անօրէն բաներ ընելով կը շահին մեզ. իսկ քու աշկերտներդ ատոնց հակառակը կընեն. անոր համար կը հար-կադրինք առաքինի բարեպաշտներէն փախ-

չիլ և զրկօղ չարերուն ձեռքն երթալ։ Առաքինութեն ալ ըսաւ, թէ որովհետև ’ասանկ է՝ ես ալ աւելի կուզեմ որ իմ աշկերտներս ղքաջ ըլլան, քան թէ փարթամ։

—

Խրատ է անոնց որ զրկողութիւն կուզեն հարստանալ. Շատ աղէկ է աղքատ ըլլալ, քան թէ զրկօղ մեծատուն, վասն զի աղքատութիւնը կանցնի, բայց զրկողութիւնը կը մնայ յաւիտեանս յաւիտենից։ Շատ աղէկ է արդար աղքատը, քան սուտ մեծատունը. կըսէ Սողոմոն։

Ընտրելի մեծնակ գնացք աղքատին,
Անհոգ և անխինչ զմայլօղ յանձին.
Զի ոչ մաշէ կեանս ’ի գիւտ դրամին,
Մաշէ զամենայն ’ի սատանայ բարին։
Նա կեանք անզբաղ գոհար է անգին,
Մի՛ վատներ զիւրաւ ’ի գիւտ կորուսչին.
Առ ի՞նչ մթերել զայն զանձ փտելին,
Երբ մաշէ վատնէ զոսկր և հոգին։

ԳԻՏՈՒՆ ԵՒ ԵՐԿՐԱԳՈՐԾ

Եթէ խնդրես խիղճ զուղղութիւն,
ապա Արդ նախ յանձին խնդրեա զնոյն ։

Թէ կուզես մէկն արդար ըլլայ,
Առաջ նայէ քու քովդ կա՞յ ։

ԺԵ. Երկրագործ մը մէկ հարուստի մը քով տարիներով կաշխատէր, երբոր ատենն եկաւ, որ քովէն ելլէ, ուզեց իր վարձքը ։ Ան ալ պատասխան տուաւ թէ խիստ լաւ. բայց դուն ալ կերածիդ սակը տուր. վասն զի ինչ որ կաշխատէիր եւ քեզի կրկինը կը կերցընէի, որ լաւ գիտես ։ Շատ վիճաբանութիւն ընելէն ետեւ դատաւորին առջին ելան. երկրագործը կըսէր, թէ իրաւունք է որ մշակը եղած տեղն ուտէ, և իր վարձքէն ալ չի զրկուի. իսկ հարուստը կաշառքին ուժով դատաւորն իր կողմն ըրաւ, որ այսպէս վճիռ կտրեց. Թէ որ կերածը աշխատանքէն քիչ է, թող պարտաւորի հարուստը հատուցանելու. իսկ թէ շատ է, ինչպէս կը վկայէր հարուստը, թող երկրագործը աշխատելով հատուցանէ ։ Զայս որ լսեց խեղճը գլխուն զարնելով կըպոռար, թէ արդարութիւն չի կայ, խեղճ [illegible]տանքը մեռաւ ։ Ասոր ասանկ լացը տեսաւ գիտուն մարդ մը, մխիթարելով ըսաց. ինչո՞ւ կըկանչես լալով.

խղճմտանքը չէ մեռած մի՛ լար ․ հապա բո_
լորովին համբարձեր է ․ վա՜յ զի թէ որ մեռած
ըլլար, գէթ մէկ օսկորը կը մնար ։

Արդարութիւնը և խիղճը միշտ դժուարագիւտ
է, մանաւանդ հիմա ․ Բեղեփ ամենքը կը փնտր-
ւէն զայն ուրիշին քով, և իրենց քով ամենևին
չեն փնտրըւէր ։

Քանի՛ պանծալի բառ գիտնականին,
Համարի զուղիղն յանուրնք վայրին ․
Թէ գոյր ուղղութիւն լինէր 'ի նմին,
Որ յայլս որոնէ յօտարաց անձին ։
Զի՞ վայես յիմար զուղիղն ընդ խղճին,
Որք 'ի վաղ դարուց անտեղի շրջին ․
Նա զի չեն հեռի թէ կոչես յանձին,
Անխիղճք միայն զայն յինքեանց մերժեցին ։

ԾԵՐ ՀԱՅՐ ԵՒ ՈՐԴԻ

Վա՜յ որ չար՛ ինչ խորհի ծնողին,
Որդեքն զնոյն առնեն նմին ։

Ինչ որ ընես ծնողիդ դէմ,
Քու զաւակդ կընէ քու դէմ ։

ԺԶ․ Մէկ անզգամ որդի մը իր ծեր հայրը
տնէն դուրս կընէ ․ ան ալ կերթայ հիւանդա_
նոցը կը պառկի, երեսի վրայ կը մնայ խեղ_

Ճուլթէ ։ Օր, մը որդւոյն անկէ կանցնէր կան-չէց ըսաց հայրը, թէ կաղաչեմ, որդի, ինծի ջուխտ մը կապերտ +ի՜+ խորկէ իմ քաներէս, որ վատատակուս գներ եմ ։ Որդին ալ մեղքը-նալով տըւաւ իր որդուն երկու կապերտ՝ խորկեց հօրը ։ Իսկ ծերը մէկն առաւ, մէ-կալը դրաւ որդուն խորկեց. և ըսաւ թո-ռանը թէ կուզեմ որ հայրդ լաւ պահէ այս մէկ կապերտը իրեն համար. մէ զի երբոր ինքն ալ հիւանդանոցը գայ եյնի՝ ինչպէս ես եմ եղեր, պէտք կըլլայ իրեն ։

Զաւակ մը ինչ որ ընէ իր ծնողացը, այն կը գտնէ, թէ բարի ըլլայ, և թէ չար. վասն այն զա-ւակին որ չար ընելով ծնողաց սիրտը կը ցաւցընէ, ան չարաչար կը պատուհասի ։ Սոկրատ փիլիսո-փան կըսէր, թէ պատուեցէք ծնօղներդ, որ ձեր կենաքին պատճառ են, իսկ վարժապետքը՝ որ բա-րի կենաց պատճառ է ։

Ո՛վ զիարդ անգութ սիրտ ժանտ զաւակին,
Դառնանայ ընդդէմ իւրոյ ծնողին.
Անտուն անտեղի առնէ ծերունին,
Որ ինքեան զգոլ քաշխեաց զտուն տեղին ։
Սակայն անյեղլի օրէնք երկնային,
Անձին վերբերեն զոր գործեաց նմին.
Թէ պատուասիրեաց հանդիպի պատուոյն,
Եւ թէ անարգեաց կրկնի չորեքկին ։

ԾԵՐ ԵՒ ՄԱՀ

Զի՞նչ տոկալի կերպ բռնական,
Քան զապաժոյժ երկիւղ մահուան։

Մահէն գող է դաժան ահագին,
Մինչ ծերեր փղոյն կը տաժանքին։

յէ. Օր մը մէկ ծեր մը փայտ կտրելու համար լեռը կերթայ, և կտրած փայտերը կապէ բեռ կը շինէ, որ երբ բարձրցած կըբերէր քաղաքը, ճամբան երկայն ըլլալով խիստ կը յոգնի. մինչև ալ չի դիմանալով բեռը վար կը ձգէ, եւ կըսկըսի մահը կանչել, որ իրեն հասնի։ Նոյնիս յանկարծ մահն երևցաւ իրեն, և հարցուց թէ զիս ինչու համար կանչեցիր։ Պատասխանեց ծերը դողալով. անոր համար կանչեցի, որ գաս բեռս վերաս բարձնես։

Ո՛րչափ մեծ նեղութէ մէջ ըլլայ մարդ, և որչափ ծերութէ չարչարուի, մահէն կը փախչի ու ապրիլ կուզէ. Վասն զի բնութիւնը կուզէր փախչիլ և հոգին մարմինէն զատուելու. որ ստորնագոյն վիճակ մ՚ է և անծանօթ մարդիս. Բայց զգայութիւնը կը խաբէ մարդը՝ հեռու դնելով մահը, որ միշտ մահկանացուաց քովը կը շրջի։

Ո՞հ դժոխերես տեսիլ օրհասին,
Բուռն բռնաւոր դզայականին.
Թշնամի կենաց հատանող Թելին.
Անելի ծերոց մինչ 'ի շունչ վերջին։
Մի՛ գոչեր զմահ 'ի չար արկածին,
Մի՛ 'ի քէն ելցէ յիշատակ նորին.
Զի մահ գիտացեալ չէ մահ այլ բաժին,
Մահ ոչ գիտացեալ մահ է չարածին։

ՄԱՀ ԵՒ ԾԵՐ

Բուռն և ազդու է ձայն մահուան,
Որ ցանգ հնչէ 'ի լուր մարդկան։

Մահն անդադար մեզ յայն կոչայ,
Զինչ արթննար ոչ ինչ յայն կայ։

ԻԸ. Ծերուկին մահն եկաւ յանկարծ ծերու մը վրայ հոգին առնելու. ծերը կապաղատէր ու կաղաչէր, որ քիչ մը ժամանակ տայ իրեն կտակ ընելու համար։ Պատասխանեց մահը թէ չեմ կրնար քեզի ժամանակ տալ. որովհետև շատ անգամ քեզի իմացուցի, դուն ամենևին կտակդ միտքդ չես բերեր։ Ե՞րբ ինձի իմացուցիր ըսաւ ծերը։ Մահն ալ ըսաւ թէ երբոր ընկերներուդ հոգին առի, ինչու միտքդ չես բերեր թէ օր մը ինծի ալ կուգայ. շատ անգամ մանուկներուն և կտրիճներուն հոգին առի՝ տեսար. շատ հեղ լսեցիր, որ դրացիներդ մեռուցի տարի. կը տեսնէիր որ ուժդ պակսեր է, մարմինդ մաշեր գացեր է, և աշխարհք քեզի համար հինցեր է, դուն աշխարհքին փակեր էիր.

Ես տասնեկ բաներով գիշեր ցորեկ քեզի իմա-
ցում կուտայի, դուն ամենևին չէիր պատ-
րաստվէր։ Քեզի պէտք չէ՞ր որ անատենը
մանդ մտածելով կարգաւորէիր բանդ, ու-
այս կէտս չի ձգէիր. ուրեմն ե՛լ եկո պա-
տասխան տուր գործքերուդ։

Պէտք է միշտ որ Աստուած ու պատրաստ կենալ մա-
հին գալստեանը, որ ամեն րոպէ մօտ է մահկա-
նացուաց. որչափ գալը ստոյգ ճշմարիտ է, այն-
չափ ալ անգիտելի է գալուն օրը։ Երանի՜
մարդուն, որ պատրաստ գտնուի մարդ մահուան
պահուն կըլլայ, որ մի միայն խոհեմանն է մարդասո.
որովհետև յաւիտենական կեանքին մէջ կը մտնէ,
որ ծայր չունի։ Ահա այս յաւիտենական կեան-
քին հատուցումներն ալ բանադատութեանց, որ խրատ-
ներով ու օրինակներով չափազանց մարդիկ ատակ-
նի ըլլել ու անմահ. ինչպէս մէկն ալ ողորմելի Ե-
ղբօրանքէր, որոնց խորապէսներն են բարեպաշտ, թէ-
պէտ ինքը կատարեալ։ Այս պահն ու մեր կեանքն,
որ յանկարծակի ծածկէն աշխարհականուլ ատամին
փակել մեր մահուանը ու դատաստանը. որպէս
զի բարի վարքով անցընենք այս անցաւոր կեանքը,
ու երջանիկ ըլլանք։

Զարթի՛ր 'ի քնոյ մարդ եղծանելի,
Ահա աղջամղջն 'ի դուռըն մերձի.
Զայնէ հանապազ հրաժարիլ ասաի,
Գնալ յանխափան և յանդարձ ուղի։
Արթո՛ւն կաց ընդ ձայն զքեզ կոչողի,
Զի մի՛ անպատրաստ հասցէ գիշերի.
Թէ լսես զձայնն յընկեր դրացի,
Մերձ ծանիր զնա 'ի քեն ոչ հեռի։

ՑԱՆԿ

ՎԱՐՈՒՑ ԵԶՈՎԲՈՍԻ



ՑԱՆԿ ԱՌԱԿԱՑ

Ըստ կարգի Այբուբենից։